ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Ժան-Պոլ Սարտր

Սրտխառնոց

1915.info

Անտարես

ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

Ժան-Պոլ
Սարտր

Սրտխառնոց

Երևան
«Անտարես»

ՀՏԴ 821.133.1-31Սարտր
ԳՄԴ 84(4Ֆր)-44
Ս 284

JEAN-PAUL SARTRE
La nausée

Traduit du français par
HAYK FELEQYAN

Avec le soutien du CNL Centre national du livre

Cet ouvrage a bénéficié du soutien des Programmes d'aide à la publication de l'Institut français et du CNL.

Ֆրանսերենից թարգմանեց ՀԱՅԿ ՖԵԼԵՔՅԱՆԸ
Առաջաբանը՝ ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

Ժան-Պոլ Սարտր

Գ 284 Սրտխառնոց: Վեպ / Ժան-Պոլ Սարտր:
Թարգմ.՝ Հայկ Ֆելեքյան: Եր., Անտարես, 2016, 264 էջ:

Շվեդական ակադեմիան 1964-ին գրականության բնագավառի իր Նոբելյան մրցանակը շնորհում է Ժան-Պոլ Սարտրին, սակայն վերջինս հրաժարվում է մրցանակից՝ չցանկանալով պարտական լինել որևէ սոցիալական ինստիտուտի և դրանով վտանգել իր անկախությունը: «Սրտխառնոց»-ը (1938) Սարտրի ամենահայտնի վիպական ստեղծագործությունն է, որն անփոխարինելի օղակ է 19-րդ դարի բալզակյան վեպից դեպի 20-րդ դարի *նոր վեպ* տանող ճանապարհին:

թվագրել է 1915.ին 50 կոյտը

ISBN 978-9939-51-888-6

© Editions Gallimard, Paris, 1938
© Անտարես, 2016

Ժան-Պոլ Սարտրի «Սրտխառնոց» վեպը

Շվեդական ակադեմիան 1964-ին գրականության բնագավառի իր Նոբելյան մրցանակը շնորհում է Ժան-Պոլ Սարտրին, սակայն վերջինս հրաժարվում է մրցանակից՝ չցանկանալով պարտական լինել որևէ սոցիալական ինստիտուտի և դրանով վտանգել իր անկախությունը: Այդուհանդերձ, սա այն դեպքն է, երբ հրաժարվելը չարժանանալ չի նշանակում. այսօր անհնար է գտնել Սարտրի որևէ կենսագրություն, ուր նա որպես Նոբելյան մրցանակակիր չներկայացվի, և Նոբելյան մատենաշարով սույն հրատարակությունն էլ հենց ինստիտուտի պիտակի անջնջելիության փաստումն է: Մյուս կողմից՝ Սարտրն այնքան կարևոր անուն է աշխարհի գրականության պատմության համար, որ դեռ հարց է, թե ով է ում ավելի նշանավորում. Նոբելյան պարգևը Սարտրի՞ն, թե՞ Սարտրը՝ Նոբելյան պարգևին:

«Սրտխառնոց»-ը (1938) անկասկած Սարտրի ամենահայտնի վիպական ստեղծագործությունն է: Այս վեպը աշխարհի կարևոր վեպերի զանազան ցանկերից էլ գրեթե երբեք դուրս չի մնում: Սրանով հանդերձ՝ վեպը մեկ այլ հետաքրքիր ֆենոմեն էլ ունի, օրինակ՝ Ալեն Ռոբ-Գրիեն Ամերիկայի համալսարաններում իր դասավանդման փորձառությունների մասին մի առիթով պատմում է. *«...ամերիկացի ուսանողները շատ լավ էին հանդուրժում «Օտար»-ը, որը կարծես հեշտությամբ ու հաճույքով էին կարդում, սակայն ոչ «Սրտխառնոց»-ը: Երբեք որևէ ուսանողի չեմ հանդիպել, որ այդ գիրքը գոնե որոշ հաճույքով կարդար: Իրականում «Սրտխառնոց»-ը յուրօրինակ հարգանքի տուրք է գրականությանը, հաշվեկշռության պես մի բան, այնինչ «Օտար»-ը ինքնին գրականություն է արդեն»:* Կամյուն («Օտար»-ի հեղինակը) ու Սարտրը, որ սերնդակիցներ էին, փիլիսոփայական նույն շարժման՝ էկզիստենցիալիզմի ներկայացուցիչներ են: Նրանց գեղարվեստական ստեղծագործություններն էլ հաճախ գերհագեցած են էկզիստենցիալիզմի դրույթներով, ինչը գրական ընթերցանության տրամադրված ընթերցողին կարող է և ձանձրացնել: Եթե նայեք Սարտրի վեպի զանազան վերլուծությունները, ապա կնկատեք, որ դրանցում հաճախ ավելի շատ

տեղ է հատկացվում Հուսերլի ֆենոմենոլոգիայի դրսևորումներին, քան վիպական հնարքներին: Սա, անշուշտ, ոչ թե վերլուծողների սուբյեկտիվության արդյունքն է, այլ Սարտրի տեքստի օբյեկտիվ շաղախը: Բայց ես փորձելու եմ հասկանալ «Սրտխառնոց»-ի գրական արժեքը և նրա դերը վեպի զարգացման պատմության մեջ: Այս հարցում էլ օգնության ձեռք մեկնողը հենց նույն Սարտրն է կամ, ավելի ճիշտ, Սարտրի վեպի գլխավոր կերպարը՝ Անտուան Ռոկանտենը:

Ուրեմն, Ռոկանտենը պատմաբան է, որն աշխատում է պատմագիտական մի ուսումնասիրության վրա: Ուսումնասիրությունը դե Ռոլբոն անունով մի մարկիզի մասին է, որ ֆրանսիական լրտես է եղել: Ռոկանտենը զանազան փաստեր է հավաքել նրա գործունեության մասին ու փորձում է դրանք համադրելով վերստեղծել մարկիզի կյանքը, սակայն ինչ-որ պահի հասկանում է, որ փաստերն անհամատեղելի են: Պատմաբանը չի կարողանում վերականգնել անցյալի բեկորների տրամաբանական շղթան: Այս ընթացքն ուղղորդվում է նաև Ռոկանտենի կյանքի բարդացումներով: Վեպը սկսվում է Ռոկանտենի ֆիզիկական վիճակի տարօրինակ փոփոխությամբ, և առաջացած սրտխառնոցի զգացողությունը, որ իրականության և այդ իրականության մեջ սեփական գոյության աբսուրդի գիտակցումն է, ամբողջ ընթացքում տարբեր ուժգնացումներով ուղեկցում է հերոսին:

Ի՞նչ պիտի անի գիտնականը նման իրավիճակում: Երևի պետք է գնա բժշկի կամ դեղատուն՝ համապատասխան բուժում ստանալու կամ հաբ գնելու: Բայց ի՞նչ է անում պատմաբան Ռոկանտենը. դեղատան փոխարեն շտապում է գրադարան, վերցնում Բալզակի վեպերից մեկը՝ «Էժենի Գրանդե»-ն, ու սկսում կարդալ: Հայտնի է, որ Սարտրի վերաբերմունքը բալզակյան գրականության նկատմամբ միանշանակ չի եղել, այսինքն՝ Սարտրը Բալզակի՝ ճշգրտության ձգտող արձակի երկրպագուն չէր: Բայց գիրքը ձեռքն առնողը ոչ թե Սարտրն է, այլ պատմաբան Ռոկանտենը, որը փորձում է ճշգրտումներով վերականգնել ու շարադրել 18-րդ դարի մի մարկիզի կյանքի պատմությունը: Այս խնդիրը պարզելու համար պետք է մի քիչ հետ գնալ:

Այսպես՝ վեպը բացվում է *հրապարակչի* կողմից մի փոքրիկ առաջաբանով, ուր ասվում է, որ ինքը Անտուան Ռոկանտենի օրագիրն է

հայտնաբերել նրա թղթերի մեջ, օրագիրն ընդգրկում է Ռոկանտենի կյանքի տարիները Բուվիլ անունով մի քաղաքում, ուր վերջինս աշխատում էր իր պատմագիտական ուսումնասիրության վրա: Բուն վեպը, ըստ *հրապարակչի*, հենց Ռոկանտենի բուվիլյան օրագիրն է լինելու: Այս փոքրիկ հատվածում մի շատ հետաքրքիր տեղեկություն էլ կա: Պարզվում է՝ Ռոկանտենը մինչ Բուվիլում հաստատվելը երկար տարիներ ճանապարհորդել է Կենտրոնական Եվրոպայում, Հարավային Աֆրիկայում և Հեռավոր Արևելքում: Իրականում վեպի ժամանակը և նյութի ընտրությունը ժանրի զարգացման պատմության շատ հետաքրքիր հանգրվանի մասին են վկայում: Եթե «Սրտխառնոց»-ը լիներ, ասենք, 17-18-րդ դարերի վիպական մեյնսթրիմում, ապա որպես վիպանյութ, անշուշտ, շատ ավելի պահանջված պիտի լիներ Ռոկանտենի ճամփորդությունների օրագիրը (այդ ժամանակների վեպերը հիմնականում աշխարհեաշխարհ ճամփորդությունների պատումներ էին), սակայն *հրապարակիչն* ընտրում է ոչ թե ճամփորդության, այլ քաղաքի պատումը՝ որպես սյուժեաստեղծ միջավայր: Սա, անշուշտ, 19-րդ դարի վեպի գլխավոր մոտիվն է, որի թերևս ամենատիպիկ ներկայացուցիչը հենց Բալզակն էր:

Այսպիսով, ի՞նչ ունենք: Քաղաքային պատում, որի գլխավոր կերպարը պատմաբան է, ով գիտական ուսումնասիրություն է գրում դե Ռոլբոն անունով մեկի մասին, գիտական շարադրանքը չի ամբողջանում, որովհետև փաստերը դրվագային են և չեն մեկտեղվում: Պատմաբանը նաև ֆիզիկական թուլություն է ձեռք բերում այս ընթացքում, որը հաղթահարելու համար ձեռքն է առնում Բալզակի վեպը, ում վեպերի գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք շարադրված են ամենագետ պատմողի անունից, ով ամեն ինչ գիտի իր կերպարի ու այդ կերպարի ապրած միջավայրի մասին և առաջիկա 300-400 էջերում ընթերցողին ամեն ինչ կպատմի, բոլոր խնդիրները կհարթի, և անհասկանալի ու դրվագային ոչինչ չի մնա: Բայց Ռոկանտենի ու Բալզակի դիրքավորումները տարբեր են: Բալզակը գրող է, նա հնարում է իր կերպարներին, սակայն հնարում է այնպիսի ճշգրտությամբ, որ ընթերցանության ընթացքում թե՛ հնարողը և թե՛ ընթերցողը սկսում են մոռանալ, որ այդ կերպարները հնարված են, որովհետև ընթերցանության վերջում հանկարծ հասկանում ես, որ

հայր գորիոների ու ռաստինյակների մասին գուցե ավելի շատ մանրամասներ գիտես, քան ինքդ քո: Ռոկանտենը գրող չէ, պատմաբան է, նա պարտավոր է նույնքան հավաստի ու փաստարկված շարադրել իր նյութը, որքան Բալզակը, սակայն ոչ թե մանրամասները հնարելով, այլ դրանց տիրապետելով: Ռոկանտենի դրության զավեշտն այն է, որ *հրապարակիչը* նրան պատմաբան է *դարձրել,* սակայն որպես պատմաբան՝ վերջինս ստիպված է ուսումնասիրել ու շարադրել մեկի պատմական կենսագրությունը, որն իրականում պատմության մեջ գոյություն չի ունեցել. մարկիզ դե Ռոլբոնը պատմական անձ չէ, նա ամբողջությամբ *հրապարակչի* երևակայության արդյունքն է, որից տեղյակ չէ հրատարակչի գլխավոր կերպարը՝ պատմաբան Անտուան Ռոկանտենը:

Ի՞նչ է ստացվում: Հնարված կերպարը պետք է պատմաբանի դիրքից գիտական ուսումնասիրություն գրի մեկի մասին, որն իր հերթին ևս հնարված է: Այս իրավիճակի անունը կարելի է դնել «բալզակյան թակարդ», երբ հորինվածքը մարմնավորվում է պատմական ճշգրտությամբ՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով բուն պատմական ճշգրտությունն ընդհանրապես...

Ռոկանտենին *հրապարակիչը* ևս մի խաբկանքի մեջ է դրել. նա աշխատում է իր գիտական ստեղծագործության վրա մի քաղաքում (Բուվիլում), որը ևս հնարված տարածություն է (նման քաղաք իրականում գոյություն չունի):

Վեպն ավարտվում է Ռոկանտենի *արթնացումով.* նա որոշում է տեղափոխվել հնարված Բուվիլից դեպի իրական Փարիզ՝ հրաժարվելով նաև պատմաբանի դիրքերից իր խնդիրը լուծելու պատրանքից. *«...բայց միթե չեմ կարող մի ուրիշ ոլորտում... Պիտի գիրք լինի. ուրիշ ոչ մի բան անել չգիտեմ: Բայց պատմական գիրք չէ. պատմությունը խոսում է գոյություն ունեցածների մասին, իսկ գոյություն ունեցողը երբեք չի կարող արդարացնել մեկ ուրիշ գոյություն ունեցողի գոյությունը: Իմ սխալը հենց այն էր, որ ուզում էի մարկիզ դը Ռոլբոնին վերակենդանացնել: Չէ, ուրիշ տեսակի գիրք պիտի լինի: Հաստատ չգիտեմ ինչ տեսակի, բայց այդ գրքի տպագիր բառերի ու էջերի հետևում պիտի ինչ-որ բան նշմարվի, որը գոյություն չի ունենա, որը վեր կլինի գոյությունից: Ասենք՝ ինչ-որ մի պատմություն, որ չի կարող պատահել, մի որևէ արկած: Պիտի գեղեցիկ*

ու ամուր լինի, ինչպես պողպատը, ու մարդկանց սրիպի ամաչել իրենց սեփական գոյությունից»:

Ռոկանտենի գտած ճանապարհը վեպ գրելն է, բայց ոչ թե Բալզակի նման, ում ստեղծագործության *տպագիր բառերի ու էջերի հետևում նշմարվի* այն, ինչը գոյության հավաստիությունն է ամրագրում, այլ ուղիղ հակառակը, որը *գոյություն չի ունենա, որը վեր կլինի գոյությունից*: Հենց սա է ռոբ-գրիեական ձևակերպմամբ՝ գրականության հաշվետվությունը կյանքին, յուրօրինակ հարգանքի տուրքը առ գրականություն, որը որպես գեղարվեստական տեքստ գուցե կատարյալ չէ, բայց անփոխարինելի օղակ է 19-րդ դարի բալզակյան վեպից դեպի 20-րդ դարի *նոր վեպ* տանող ճանապարհին:

ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կուղբին[1]

Այդ տղան կոլեկտիվի համար ոչ մի կարևորություն չունի, ընդամենը անհատ է:

Լ.-Ֆ. Սելին, *«Եկեղեցին»*

---

[1] Սիմոնա դը Բովուարին, ում մականունը Կուղբ էր. անգլերեն կուղբ՝ beaver բառը հնչողությամբ նման է Բովուար ազգանվանը *(Ծ. թ.)*:

Հրատարակչի կողմից

Այս օրագրերը հայտնաբերվել են Անտուան Ռոկանտենի թղթերի մեջ: Մենք դրանք հրապարակում ենք առանց որևէ փոփոխության:

Առաջին էջը թվագրված չէ, սակայն հիմնավոր պատճառներ ունենք հավատալու, որ այն գրի է առնվել օրագրի սկզբից մի քանի շաբաթ առաջ: Այսպիսով, այդ էջն ամենաուշը պիտի գրված լինի 1932-ի հունվարի սկզբին:

Այդ շրջանում Անտուան Ռոկանտենը, վերադառնալով Կենտրոնական Եվրոպայում, Հարավային Աֆրիկայում ու Հեռավոր Արևելքում իր ճանապարհորդություններից, արդեն երեք տարի է, ինչ հաստատվել էր Բուվիլում՝ ավարտին հասցնելու համար մարկիզ դը Ռոլբոնին նվիրված իր պատմական ուսումնասիրությունները:

ԱՌԱՆՑ ԱՄՍԱԹՎԻ ԹԵՐԹԻԿ

Թերևս լավագույն տարբերակն իրադարձությունների մասին ամեն օր գրելն է: Օրագիր պահել՝ ամեն ինչ ավելի պարզ տեսնելու համար: Բաց չթողնել և ոչ մի նրբերանգ, ոչ մի փոքրիկ փաստ, անգամ եթե առաջին հայացքից թվա, թե դրանք ոչ մի նշանակություն չունեն: Պետք է պատմել, թե ինչպես եմ տեսնում այս սեղանը, փողոցը, մարդկանց, ծխախոտիս տուփը, որովհետև հենց *դա* է փոխվել: Հարկավոր է հստակ սահմանել այդ փոփոխության բնույթն ու ծավալը:

Օրինակ՝ հենց այս ստվարաթղթե տուփը, որի մեջ թանաքի շիշն է: Պիտի փորձեմ ասել, թե ինչպես էի դա տեսնում *առաջ* ու ինչպես եմ հիմա[1]

Եվ այսպես՝ սա մի ուղղանկյուն հավասարանիստ է, որ բացվում է... Հիմարություն, ոչինչ էլ չեմ կարող ասել դրա մասին: Հենց սրանից է պետք խուսափել. չի կարելի տարօրինակ բաներ տեսնել այնտեղ, որտեղ իրականում ոչ մի բան էլ չկա: Կարծում եմ՝ օրագիր պահելու վտանգը հենց դա է. անընդհատ ամեն ինչ չափազանցնում ես, անընդհատ փոխում ես ճշմարտությունը: Մյուս կողմից էլ՝ վստահաբար կարելի է ասել, որ ամեն վայրկյան էլ (ու հենց այս տուփի կամ ցանկացած ուրիշ առարկայի նկատմամբ) կարող եմ նորից զգալ երեկ չէ առաջին օրվա զգացածս: Պիտի միշտ պատրաստ լինեմ, թե չէ այդ զգացողությունը կրկին մատներիս արանքով կսահի ու կկորչի: Ոչինչ չի կարելի[2]. պետք է պարզապես խնամքով ու հնարավորինս մանրամասն նկարագրել այն ամենը, ինչ տեղի է ունենում:

Բնականաբար էլ չեմ կարող որևէ հստակ բան գրել շաբաթվա ու երեկ չէ առաջին օրվա պատմությունների մասին. արդեն

---

1 Մի բառ բաց է թողած:

2 Մի բառ ջնջված է (գուցե «կեղծել» կամ «կեղտոտել»), փոխարենն ավելացված է մեկ այլ բառ, որն անընթեռնելի է:

չափազանց շատ ժամանակ է անցել: Կարող եմ միայն ասել, որ ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ դեպքում չկար մի բան, որ կարելի է «իրադարձություն» կոչել: Շաբաթ օրը երեխաները դրսում խաղում էին՝ տափակ քարեր էին նետում ջուրը, ու ես էլ իրենց նման ուզեցի ծովի մեջ քար գցել: Սակայն տեղնուտեղը կանգ առա, ձեռքիցս գցեցի քարն ու հեռացա: Պիտի որ այլայլված տեսք ունենայի, որովհետև երեխաները հետևիցս ծիծաղում էին:

Արտաքին՝ երևացող մասն այսքանն է: Իսկ այն, ինչ ներսումս տեղի ունեցավ, հստակ հետքեր չի թողել: Ինչ-որ մի բան կար, որ տեսա ու նողկանք զգացի, սակայն էլ չգիտեմ՝ այդ պահին ծովի՞ն էի նայում, թե՞ քարին: Քարը տափակ էր, մի կողմը՝ չոր, մյուսը՝ թաց ու ցեխոտ: Եզրերից էի բռնել, մատներս լայն բացած, որ չկեղտոտվեմ:

Երեկ չէ առաջին օրն ամեն ինչ շատ ավելի բարդ էր: Գումարած՝ դրան հաջորդեցին մի ամբողջ շարք համընկնումներ ու թյուրիմացություններ, որ մինչև հիմա էլ ինձ համար անբացատրելի են մնացել: Բայց հիմա չեմ ուզում ժամանակ ծախսել ու դրանք գրի առնել: Կարճ ասած՝ պարզ է մի բան. ես վախեցա կամ դրա նման մի ուրիշ բան զգացի: Եթե գոնե հասկանամ, թե ինչից էի վախեցել, արդեն իսկ մի քայլ առաջ գնացած կլինեմ:

Հետաքրքիր է, որ ես բնավ հակված չեմ ինձ խելագար համարելու, ընդհակառակը՝ պարզ տեսնում եմ, որ խելագար չեմ. ինձ շրջապատող իրերն են փոխվում: Ամեն դեպքում՝ կցանկանայի համոզվել, որ հենց այդպես է:

Տասն անց կես[1]

Վերջիվերջո, գուցեև իրոք ընդամենը խելագարության մի փոքրիկ պահ էր: Հիմա դրա հետքն էլ չի մնացել: Անցած շաբաթվա տարօրինակ զգացումներս հիմա արդեն ծիծաղելի են թվում. էլ

[1] Անկասկած՝ երեկոյան: Հաջորդող հատվածը նախորդներից շատ ավելի ուշ է ավելացվել: Մենք հակված ենք կարծելու, որ այս մասն ամենաշուտը կարող էր հաջորդ օրը գրված լինել:

չեմ հասկանում դրանք: Այս երեկո ինձ շատ լավ եմ զգում, ինչպես ցանկացած սովորական բուրժուա: Ահա իմ սենյակը, որ բացվում է դեպի հյուսիս-արևելք: Ներքևում Մյուտիլեների փողոցն է ու նոր կայարանի շինհրապարակը: Լուսամուտից տեսնում եմ «Ճամփորդների ռանդևու» հյուրանոցի կարմիր ու սպիտակ լույսերը՝ Վիկտոր Նուար բուլվարի անկյունում: Քիչ առաջ ժամանել է Փարիզի գնացքը: Մարդիկ դուրս են գալիս հին կառամատույցից ու ցրվում են փողոցներում: Ձայներ ու քայլեր եմ լսում: Շատերը սպասում են վերջին տրամվային: Նրանք հիմա պիտի որ տխուր-տրտում խմբված լինեն հենց պատուհանիս տակ՝ գազի լապտերի շուրջը: Ստիպված են լինելու դեռ մի քանի րոպե էլ սպասել. տրամվայը տասնմեկին տասնհինգ պակասից շուտ չի գա: Գոնե շրջիկ առևտրականներ չգան այս գիշեր. ահավոր շատ քնել եմ ուզում, արդեն շատ վաղուց քնի կարոտ եմ: Ընդամենը մի գիշերվա լավ քուն, մի գիշեր, ու ամեն ինչ կանցնի:

Տասնմեկ անց քառասունհինգ է: Կարելի է արդեն չվախենալ. եթե գալու լինեին, արդեն եկած կլինեին: Եթե, իհարկե, այսօր այն ռուանցի պարոնի օրը չէ: Ինքն ամեն շաբաթ գալիս է ու վերցնում երկրորդ հարկի համար երկու սենյակը՝ այն, որ բիդե ունի: Այ ինքը դեռ կարող է հայտնվել. քնելուց առաջ սովորաբար «Ճամփորդների ռանդևուում» մի քիչ նստում ու մի բաժակ գարեջուր է խմում: Ասենք, ինքն այնքան էլ շատ չի աղմկում: Փոքրամարմին է, խիստ մաքրասեր, փոքրիկ բեղերով ու կեղծամով: Ահա և ինքը:

Երբ լսեցի, թե ինչպես է աստիճաններով բարձրանում, ամեն ինչ այնքան հանդարտեցնող թվաց, որ սիրտս նույնիսկ մի տեսակ թպրտաց: Ինչի՞ց կարելի է վախենալ այսքա՞ն կանոնակարգված աշխարհում: Ինձ առողջացած զգացի:

Ահա և յոթ համարի տրամվայը՝ «Աբատուար – Գրան Բասեն» երթուղով: Ժամանում է, երկաթե ռելսերն աղմկում են: Նորից է շարժվում: Ճամպրուկներով ու քնած երեխաներով ծանրաբեռնված՝ հեռանում է դեպի Գրան Բասեն, դեպի Ուզին, դեպի խավար արևելք: Նախավերջին տրամվայն է. վերջինը մի ժամից է գալու:

Գնամ պառկեմ: Ես կատարելապես առողջ եմ ու հրաժարվում եմ փոքրիկ աղջկա պես ամեն օր գեղեցիկ ու նոր տետրում տպավորություններս գրել:

Միայն մի դեպքում է, որ օրագիր պահելը կարող է հետաքրքիր լինել. եթե[1]

[1] Թերթիկի տեքստն այստեղ ընդհատվում է:

ՕՐԱԳԻՐ

Երկուշաբթի, հունվարի 25, 1932թ.

Արդեն ոչ մի կասկած չկա. հետս ինչ-որ բան է պատահել: Ամեն ինչ հիվանդության պես սկսվեց՝ դանդաղ ու աստիճանաբար, ոչ թե որպես անհերքելի, ակնհայտ մի բան: Թաքուն, կաթիլ առ կաթիլ տեղավորվեց ներսումս. ինձ ուղղակի մի քիչ տարօրինակ, մի քիչ նեղված էի զգում ու վերջ: Տեղավորվելուց հետո էլ այլևս չշարժվեց, մնաց թաքնված, և ես ինձ համոզեցի, որ ամեն ինչ լավ է, կեղծ տագնապ էր ու վերջ: Իսկ հիմա սկսել է ներսումս ծաղկել:

Չեմ կարծում, որ պատմաբանի մասնագիտությունը տրամադրում է հոգեվերլուծությամբ զբաղվելու: Մեր ոլորտում միայն ամբողջական զգացումների հետ ենք գործ ունենում, որոնց ընդհանուր անուններ ենք տալիս, ասենք՝ հավակնություն կամ շահամոլություն: Այնինչ, եթե ինքնաճանաչման որևէ նշույլ ունենայի, հիմա դրա կարիքը շատ կլիներ:

Օրինակ՝ ինչ-որ նոր բան եմ սկսել նկատել ձեռքերիս մեջ, ինչ-որ նոր ձև, որով բռնում եմ ծխամորճը կամ պատառաքաղը: Կամ գուցե պատառաքաղն է հիմա ինչ-որ այլ կերպ բռնվում, չգիտեմ: Քիչ առաջ, երբ ուզում էի մտնել սենյակ, քարացած կանգ առա, որովհետև ափիս մեջ ինչ-որ սառը առարկա զգացի, որ իր յուրօրինակությամբ լրիվ կլանել էր ուշադրությունս: Ձեռքս բացեցի ու տեսա, որ ընդամենը դռան բռնակն էր: Իսկ այս առավոտ գրադարանում, երբ Ինքնուսը[1] մոտեցավ, որ բարևի, մի տասը վայրկյան չէի կարողանում ճանաչել: Աչքիս առաջ ինչ-որ անծանոթ դեմք էր, որ դեմքի էլ հազիվ էր նման: Ու ձեռքն էլ ափիս

[1] Օգրիե Պ-ն, ով հաճախ է հիշատակվում այս օրագրում: Նա դատական կատարածուի գրասենյակում գրագիր էր: Ռոկանտենը նրա հետ ծանոթացել է 1930-ին՝ Բուվիլի գրադարանում:

մեջ ասես մեծ, սպիտակ որդ լիներ: Տեղնուտեղը բաց թողեցի, ու ձեռքն անուժ կախվեց:

Փողոցներում էլ է նույն բանը. կասկածելի աղմուկներն ու ձայները շատացել են:

Հետևաբար վերջին մի քանի շաբաթվա ընթացքում ինչ-որ փոփոխություն է տեղի ունեցել: Հարց է ծագում՝ որտե՞ղ: Ինչ-որ մի վերացական փոփոխություն է, որ կոնկրետ ոչ մի բանի հետ կապ չունի: Արդյոք ես եմ փոխվել: Եթե ես չէ, ապա այս սենյակը, այս քաղաքը, այս բնությունը: Ընտրել է պետք:

***

Կարծում եմ՝ ես եմ փոխվել. ամենապարզ լուծումը հենց դա է: Ու նաև ամենատհաճը: Բայց ի վերջո ստիպված եմ ընդունել, որ ես հակված եմ այդպիսի հանկարծակի փոփոխությունների: Հարցն այն է, որ ես խիստ հազվադեպ եմ մտքերի մեջ ընկնում. ժամանակի ընթացքում ներսումս բազմաթիվ փոքրիկ փոփոխություններ են կուտակվում, ես ոչինչ չեմ նկատում, իսկ հետո՝ մի գեղեցիկ օր, դրանք իսկական հեղափոխություն են առաջացնում: Հենց դա է պատճառը, որ իմ կյանքն այսքան հակասական ու անհետևողական բնույթ ունի: Օրինակ՝ երբ լքում էի Ֆրանսիան, բազմաթիվ մարդիկ ասացին, որ հեռանալուս պատճառն ակնթարթային քմահաճույքն էր: Իսկ երբ վեց տարի ճամփորդելուց հետո հանկարծ վերադարձա, շատերը դա կրկին քմահաճույք կոչեցին: Դեռ աչքիս առաջ է, թե ինչպես էինք Մերսիեի հետ նստած այն ֆրանսիացի պաշտոնյայի առանձնասենյակում (նա, ով Պետրուի գործից հետո հրաժարական տվեց): Մերսիեն հնագիտական առաքելությամբ Բենգալիա էր մեկնում: Ես նույնպես միշտ ուզել էի Բենգալիայում լինել, ու ինձ համոզում էր, որ մեկնեմ իր հետ: Հիմա եմ ինքս ինձ հարց տալիս, թե ինչու. կարծում եմ՝ չէր վստահում Պորտալին ու ուզում էր, որ իրենց հետ գնամ, որ աչքս վրան պահեմ: Ես մերժելու ոչ մի պատճառ չէի տեսնում: Ու եթե նույնիսկ այն ժամանակ զգացած լինեի Պորտալի հետ կապված այդ փոքրիկ խորամանկությունը, դա խանդավառությամբ համաձայնելու մի լրացուցիչ պատճառ կդառնար: Այնինչ ես

ասես կաթվածահար էի եղել, ոչ մի բառ չէի կարողանում արտաբերել: Հայացքս գամել էի հեռախոսի կողքի կանաչ գորգիկին դրված կխմերական արձանիկին ու չէի շարժվում: Ինձ թվում էր, թե ավիշով կամ գոլ կաթով եմ լցված: Մերսիեն հրեշտակային համբերությամբ (որի հետևում թեթև գրգռվածություն էր զգացվում) համոզում էր ինձ.

– Ախր հասկանում եք, չէ՞, պիտի ամեն ինչ պաշտոնապես ձևակերպեմ: Գիտեմ, որ վերջում մեկ է՝ ասելու եք այո. ավելի լավ է՝ միանգամից համաձայնեք:

Մերսիեն սևակարմիր մորուք ուներ ու վրան միշտ չափազանց շատ օծանելիք էր լցնում: Գլուխն ամեն անգամ շարժելիս օծանելիքի ամպը քթիս էր խփում: Ու հանկարծ արթնացա վեց տարվա քնից:

Արձանիկն ինձ տհաճ ու անիմաստ թվաց, ու զգացի, որ խորապես ձանձրացած եմ: Չէի կարողանում հասկանալ՝ ինչ գործ ունեմ Հնդկաչին թերակղզում: Ի՞նչ եմ անում այստեղ: Ինչո՞ւ եմ խոսում այս մարդկանց հետ: Ինչո՞ւ եմ այսքան տարօրինակ հագնված: Կիրքս հանկարծ մեռավ: Տարիներ ի վեր այն լցրել ու ուղղություն էր տվել ինձ, իսկ հիմա ինձ դատարկ էի զգում: Բայց դա դեռ ամենավատ բանը չէր. իմ առջև մի տեսակ անբռնազբոս հայտնվել էր աղոտ, ծավալուն մի միտք: Դեռ լավ չէի հասկանում, թե ինչ միտք էր, բայց արդեն այնքան զզվելի էր թվում, որ նույնիսկ այդ կողմ նայել չէի կարողանում: Ու այդ ամենը խառնվում էր Մերսիեի օծանելիքի հոտին:

Ինձ բարկացած թափ տվեցի ու չոր տոնով ասացի.

– Շնորհակալ եմ, բայց կարծում եմ՝ արդեն հերիք եղավ, ինչ ճամփորդում եմ: Ֆրանսիա վերադառնալու ժամանակն է:

Երկու օր անց արդեն Մարսել գնացող նավի վրա էի:

Եթե չեմ սխալվում, ու եթե այս բոլոր կուտակվող նշանները կյանքիս մի նոր շրջապտույտի կանխագուշակներն են, ապա պիտի խոստովանեմ, որ վախենում եմ: Հարցն այն չէ, որ իմ կյանքը չափազանց հարուստ է, չափազանց հագեցած կամ թանկ: Ես վախենում եմ այն բանից, որը կծնվի, կգրավի ինձ ու կտանի չգիտեմ թե ուր: Արդյոք կրկին ստիպվա՞ծ պիտի լինեմ հեռանալու, կիսատ թողնելու

ամեն ինչ՝ ուսումնասիրություններս, գիրքս: Արդյոք մի քանի տարի անց կրկին կարթնանա՞մ՝ կոտրված, խաբված, նոր ավերակների մեջ: Ուզում եմ հասկանալ ներսիս ճշմարտությունը, քանի դեռ շատ ուշ չէ:

Երեքշաբթի, հունվարի 26

Ոչ մի նոր բան:

Ժամը իննից մինչև մեկն աշխատում էի գրադարանում: Կարգի բերեցի տասներկուերորդ գլուխն ու այն ամենը, որ վերաբերում է Ռուսաստանում Ռոլբոնի անցկացրած ժամանակին՝ ընդհուպ մինչև Պավել 1-ինի մահը: Աշխատանքիս այս մասն ավարտված է. մինչև վերջնական խմբագրմանն անցնելը սրան վերադառնալու կարիք այլևս չի լինի:

Մեկ անց կես է: «Մաբլի» սրճարանում եմ, սենդվիչ եմ ուտում, ամեն ինչ գրեթե սովորականի պես է: Ասենք՝ սրճարաններում միշտ էլ ամեն ինչ սովորականի պես է, ու հատկապես «Մաբլիում»՝ շնորհիվ տիրոջ՝ պարոն Ֆասկելի, ում դեմքին մի տեսակ դրական ու հանգստացնող կերպով հստակ գրված է «ստահակ»: Մոտենում է նրա ցերեկային քնի ժամը, աչքերն արդեն կարմրում են, բայց կեցվածքը դեռ աշխույժ ու վճռական է: Հիմա քայլում է սեղանների արանքով ու մտերմիկ տեսքով մոտենում է հաճախորդներին.

– Ամեն ինչ լա՞վ է, պարոն:

Ժպտալով նայում եմ, թե ինչքան աշխույժ է. այն ժամերին, երբ հաստատությունը դատարկվում է, իր գլուխն էլ է դատարկվում: Ժամը երկուսից չորսը սրճարանում մարդ չի լինում. այդ ժամանակ պարոն Ֆասկելը մի քանի քնկոտ, երերուն քայլ է անում, մատուցողները հանգցնում են լույսերը, ու նա ընկնում է անգիտակցության գիրկը: Այս մարդը միշտ քնած է, երբ մենակ է ինքն իր հետ:

Սրճարանում դեռ մի քսան հաճախորդ կա. ամուրիներ են, ցածրաստիճան ինժեներներ, քաղծառայողներ: Սովորաբար հապճեպ սնվում են ճաշարաններում ու քանի որ մի քիչ շքեղության կարիք ունեն, ճաշից հետո գալիս են այստեղ, սուրճ են խմում ու զառ

խաղում: Այդ մարդիկ քիչ են աղմկում, ու դա ինձ չի խանգարում: Գոյություն ունենալու համար իրենք պետք է խմբերով լինեն:

Իսկ ես մենակ եմ ապրում, կատարելապես մեն-մենակ: Երբեք չեմ խոսում ոչ ոքի հետ: Ոչինչ չեմ ընդունում, ոչինչ չեմ տալիս: Ինքնուսը հաշիվ չէ: Չնայած, իհարկե, Ֆրանսուազն էլ կա՝ «Ճամփորդների ռանդևուի» տիրուհին: Բայց մի՞թե ես խոսում եմ իր հետ: Երբեմն ընթրիքից հետո, երբ ինձ մի գավաթ գարեջուր է բերում, հարցնում եմ.

– Այս երեկո ազա՞տ եք:

Ինքը երբեք չի մերժում, ու ես հետևից քայլում եմ դեպի երկրորդ հարկի մեծ սենյակներից մեկը, որ ժամավարձով կամ օրավարձով է տալիս: Ես Ֆրանսուազին չեմ վճարում. մենք փոխադարձ կարիքից դրդված ենք սեր անում: Ինքը հաճույք է ստանում (նրան օրական մի տղամարդ է պետք, ու ինձնից բացի շատերը կան), իսկ ես ազատվում եմ մելամաղձության նոպաներից, որոնց պատճառը չափազանց լավ գիտեմ: Ու մենք գրեթե չենք խոսում: Ինչո՞ւ խոսենք: Ամեն մեկս իրենով է զբաղված. իր համար ես առաջին հերթին իր սրճարանի հաճախորդներից մեկն եմ: Շրջազգեստը հանելով՝ ինձ ասում է.

– Լսեք, իսկ դուք հեչ փորձե՞լ եք այդ ապերիտիվը, «Բրիկո» է կոչվում: Այս շաբաթ երկու հաճախորդ դրանից պատվիրեցին: Մատուցողուհիս տեղյակ չէր, եկավ, որ ինձ հարցնի: Ինչ-որ ճանապարհորդներ էին, պիտի որ Փարիզում խմած լինեին: Դե ես էլ չեմ սիրում առանց իմանալու ինչ-որ բան առնել: Եթե դեմ չեք, զուգագուլպաներս չհանեմ:

Մի ժամանակ պատահում էր, որ իր գնալուց հետո դեռ երկար ժամանակ մտածում էի Աննիի մասին: Իսկ հիմա այլևս ոչ ոքի մասին չեմ մտածում, նույնիսկ բառեր չեմ փնտրում: Ամեն ինչ հոսում է մեջս՝ մերթ արագ, մերթ դանդաղ, ու ոչ էլ փորձում եմ ինչ-որ բան կասեցնել. հոսում է, թող հոսի: Ու քանի որ մտքերս բառերիս հիմնականում չեն միանում, այդպես էլ մնում են ներսումս՝ որպես մառախուղի ծվեններ: Դրանք աղոտ ու զարմանալի կերպարանքներ են ստանում, միախառնվում են իրար, ու ես տեղնուտեղը մոռանում եմ հենց նոր մտածածս:

Հիանում եմ այս մարդկանցով. նստած դանդաղ ըմպում են իրենց սուրճը և հստակ ու ճշմարտանման պատմություններ են պատմում իրար: Եթե հանկարծ հարցնես, թե երեկ ինչով են զբաղված եղել, մի վայրկյան անգամ չեն տատանվի ու մի երկու բառով իսկույն ամեն ինչ կբացատրեն: Ես իրենց տեղում լինեի՝ կսկսեի կմկմալ: Արդեն շատ վաղուց է, ինչ ոչ ոք այլևս չի հետաքրքրվում, թե ինչպես եմ անցկացնում իմ ժամանակը: Երբ մենակ ես ապրում, իսպառ մոռանում ես, թե ինչ բան է պատմելը. ճշմարտանման պատմություններն անհետանում են ընկերների հետ մեկտեղ: Իրադարձությունները նույնպես սահում-անցնում են կողքովդ. աչքիդ առաջ ինչ-որ մարդիկ են հայտնվում, խոսում են, հետո կորչում, իսկ դու գլխովին սուզված ես անսկիզբ ու անվերջ պատմությունների մեջ. քեզնից ավելի վատ վկա դժվար է պատկերացնել: Փոխարենն այն ամբողջ ոչ ճշմարտանմանը, այն ամենը, ինչին երբեք չէին հավատա և ոչ մի սրճարանում, լիքն է: Օրինակ՝ շաբաթ օրը՝ ժամը չորսի կողմերը, նոր կառամատույցի շինարարության կողքի փայտե մայթով երկնագույն զգեստով մի կին ծիծաղելով հետ-հետ էր վազում ու թաշկինակ թափ տալիս: Նույն պահին կաթնագույն թիկնոցով, դեղին կոշիկներով ու կանաչ գլխարկով մի նեգր սուլելով թեքվում էր նույն փողոցը: Կինը, շարունակելով հետ-հետ գնալ, ցանկապատից կախված ու ամեն երեկո վառվող լապտերի տակ բախվեց նրան: Այդպիսով միաժամանակ նույն տեղում հայտնվեցին անմշակ փայտի ուժեղ հոտ արձակող ցանկապատը, լապտերն ու այդ գեղեցիկ, շիկահեր կինը նեգրի գրկում՝ շիկացած երկնքի տակ: Եթե չորս-հինգ հոգով լինեինք, կարծում եմ՝ կնկատեինք այդ ընդհարումը, այդ բոլոր նուրբ գույները, գեղեցիկ կապույտ վերարկուն, որ ասես փետուր լիներ, բաց գույնի թիկնոցը, լապտերի կարմիր ապակիները. կծիծաղեինք երկու մանկական դեմքերին հայտնված շփոթության վրա:

Բայց մենակ մարդը հազվադեպ է ծիծաղում. այդ ամենն ինձ համար մեկ այլ իմաստ ստացավ՝ չափազանց ուժեղ, անգամ մոլեգին, բայց և մաքուր: Ապա դա էլ տարրալուծվեց, ու մնացին միայն լապտերը, ցանկապատն ու երկինքը, ու դա էլ էր դեռ բավականին գեղեցիկ: Մեկ ժամ անց լապտերն արդեն վառվում էր, քամի էր փչում, երկինքը սև էր, ու էլ ոչինչ չէր մնացել:

Այս ամենը նորություն չէ. ես երբեք չեմ խուսափել նման անվնաս զգացողություններից, լրիվ ընդհակառակը: Դրանք վերագտնելու համար բավական է ընդամենը մի քիչ մենակ մնալ՝ ուղիղ այնքան, ինչքան պետք է՝ միառժամանակ ազատվելու համար ճշմարտանման ամեն ինչից: Սակայն ես միշտ էլ ինձ մարդկանց մոտ եմ պահել՝ մենակության հենց մակերեսին, ու վճռականորեն համոզված եմ եղել, որ տագնապի դեպքում կկարողանամ ապաստան գտնել իրենց մեջ: Ըստ էության՝ մինչ այս պահը ես ուղղակի սիրող եմ եղել:

Իսկ հիմա չորս կողմս այնպիսի իրեր եմ նկատում, ինչպիսին, օրինակ, սեղանի վրայի գարեջրի ահա այս գավաթն է: Երբ հայացքս վրան է ընկնում, ուզում եմ գոռալ. «Վերջ, էլ չեմ խաղում»: Լրիվ պարզ է, որ բոլոր չափերն արդեն անցել եմ: Ըստ երևույթին՝ մենակության հետ չի կարելի խաղեր խաղալ: Դա, իհարկե, բնավ էլ չի նշանակում, որ հիմա քնելուց առաջ նայում եմ մահճակալիս տակ կամ էլ վախենում եմ, որ գիշերվա կեսին սենյակիս դուռը հանկարծ կրնկի վրա կբացվի: Եվ այնուամենայնիվ, անհանգիստ եմ. արդեն մի ժամ կլինի, ինչ խուսափում եմ *նայել* գարեջրի գավաթին: Վրան եմ նայում, տակն եմ նայում, աջ, ձախ, բայց հենց բուն գավաթն աշխատում եմ չտեսնել: Ու շատ լավ գիտեմ, որ չորս կողմիս այս բոլոր ամուրիներն ինձ ոչ մի բանով չեն կարող օգնել. արդեն չափազանց ուշ է, էլ չեմ կարող նրանց շարքերում պատսպարվել: Իրենք կթփթփացնեն ուսիս ու կասեն. «Դե լավ, հա՛, ի՞նչ է եղել որ. բաժակ է, էլի: Ոչ մի բանով մյուս բաժակներից չի տարբերվում: Անկյունավոր է, բռնակ ունի, վրան գերբ կա, գերբի վրա գրված է «Շպատենբրաու»»: Ես այդ ամենը գիտեմ, բայց նաև գիտեմ, որ բաժակի հետ կապված ինչ-որ մի ուրիշ բան էլ կա: Չնչին, աննշան մի բան: Բայց չեմ կարող բացատրել այն, ինչ տեսնում եմ: Չեմ կարող բացատրել և ոչ ոքի: Ու հիմա հանդարտ ու սահուն սուզվում եմ մինչև հատակը՝ այնտեղ, ուր վախն է:

Ես մեն-մենակ եմ այս բոլոր ուրախ ու ողջամիտ ձայների մեջ: Ինձ շրջապատող մարդիկ անդադար խոսում են ու հիացմունքով պարզում, որ իրենց կարծիքները համընկնում են: Աստված իմ, ախր ինչո՞ւ են այդքան կարևորում այն, որ բոլորով միասին նույն բանն են մտածում: Պետք է միայն տեսնել իրենց դեմքի արտահայտությունը,

երբ իրենց կողքին հանկարծ հայտնվում է ջրից դուրս նետված ձկան աչքերով այն մարդկանցից մեկը, որոնց հայացքն ասես միշտ դեպի ներս է ուղղված, ու որոնց հետ բնավ հնարավոր չէ համակարծիք լինել: Երբ ութ տարեկան էի ու դեռ վազվզում էի Լյուքսեմբուրգյան այգում, այդպիսի մեկը միշտ գալիս-նստում էր Օգյուստ-Կոնտ փողոցի կողմի ցանկապատի ծածկի տակ: Այդ մարդը երբեք չէր խոսում, բայց ժամանակ առ ժամանակ ոտքը ձգում էր ու վախեցած հայացքով նայում էր վրան: Մի ոտքին կոշիկ էր, մյուսին՝ հողաթափիկ: Այգու պահակը քեռուս ասել էր, որ այդ մարդը նախկին դպրոցական տեսուչ է: Իրեն թոշակի էին ուղարկել, որովհետև եռամսյակային գնահատականները հայտնելու համար ակադեմիկոսի կանաչ ֆրակը հագին էր մտել դասարան: Այդ մարդը մեզ սոսկալի վախ էր ներշնչում, որովհետև զգում էինք, որ ինքը մենակ է: Մի օր հեռվից Ռոբերտին ժպտաց ու ձեռքով արեց. Ռոբերտը քիչ էր մնում ուշաթափվեր: Մենք սարսափում էինք այդ մարդուց ոչ թե նրա համար, որ խղճուկ տեսք ուներ կամ էլ որովհետև վզին ուռուցք կար, որ քսվում էր օձիքի եզրին, այլ որովհետև զգում էինք, որ գլխի մեջ խեցգետնի կամ լանգուստի մտքեր են խլրտում: Ու մեզ սարսափեցնում էր, որ այդ ցանկապատի, ծաղկաթմբերի ու մեր խաղալիք օղակների կողքին կարող են խեցգետնի մտքեր խլրտալ:

Մի՞թե ինձ էլ է նույն բանը սպասվում: Կյանքումս առաջին անգամ նեղվում եմ մենակությունից: Կուզեի ինչ-որ մեկի հետ խոսել, թե հետս ինչ է կատարվում, քանի դեռ չափազանց ուշ չէ, քանի դեռ չեմ սկսել փոքրիկ տղաներին վախեցնել: Շատ կուզեի, որ Աննին կողքս լիներ:

Տարօրինակ է. արդեն տասը էջ գրել եմ, սակայն այդպես էլ չեմ ասել ճշմարտությունը կամ ամեն դեպքում ամբողջ ճշմարտությունը: Երբ ամսաթվի տակ գրում էի «Ոչ մի նոր բան», այնքան էլ անկեղծ չէի. իրականում մի փոքրիկ միջադեպ, որ ոչ ամոթալի է, ոչ էլ արտառոց, ասես հրաժարվում էր դուրս գալուց: «Ոչ մի նոր բան»: Ինձ հիացնում է, թե ինչպես է կարելի ստել՝ վկայակոչելով սեփական առողջ տրամաբանությունը: Մեծ հաշվով՝ եթե ուզում եք իմանալ, իրոք ոչ մի նոր բան չի եղել. այս առավոտ՝ ժամը ութ անց տասնհինգ, երբ դուրս էի գալիս «Պրենտանիա» հյուրանոցից,

որ գնայի գրադարան, ցանկացա և չկարողացա գետնից մի թղթի կտոր վերցնել: Վերջ, ընդամենն այսքանը. սրան նույնիսկ միջադեպ էլ չես ասի: Բայց եթե անկեղծ լինեմ, դա ինձ խորապես անհանգստացրեց. այդ պահին մտածեցի, որ այլևս ազատ չեմ: Գրադարանում ապարդյուն փորձում էի ազատվել այդ մտքից: Փորձեցի դրանից փախուստ գտնել «Մաբլի» սրճարանում: Հույս ունեի, որ լույսի տակ կցնդի: Բայց չէ, այդ միտքը՝ տագնապալից ու ճնշող, մնաց ներսումս ինչ-որ տեղ: Ու հենց այդ միտքն էլ ինձ թելադրում էր նախորդ էջերը:

Ինչո՞ւ մինչև հիմա չէի գրում դրա մասին: Կարծում եմ՝ պատճառը հպարտությունս էր, ու գուցե մի քիչ էլ՝ անվստահությունս: Ես սովոր չեմ ինքս ինձ պատմելու, թե հետս ինչ է կատարվում, դրա համար էլ լավ չեմ վերստեղծում իրադարձությունների հաջորդականությունը, չեմ կարողանում կարևորն առանձնացնել անկարևորից: Բայց վերջ, կարդացի, թե ինչ էի գրել «Մաբլի» սրճարանում ու ամաչեցի. այլևս ոչ մի գաղտնիք, ոչ մի հուզմունք, ոչ մի ծածուկ միտք. ես ոչ կույս եմ, ոչ էլ հոգևորական, որ խրվեմ հոգեկան ապրումների այդ խաղի մեջ:

Առանձնապես ասելու բան էլ չկա. ես չկարողացա գետնից վերցնել թղթի կտորը, այսքան բան:

Ընդհանրապես շատ եմ սիրում ընկած կաղիններ, հին շորի ծվեններ ու հատկապես զանազան թղթեր վերցնել գետնից: Ինձ հաճելի է վերցնել դրանք, սեղմել ափիս մեջ. թվում է՝ մի քիչ էլ, ու փոքր երեխայի նման բերանս կդնեմ: Աննին կատաղությունից իրեն կորցնում էր, երբ անկյունից բռնած վերև էի բարձրացնում հաստ ու շքեղ թղթի թերթեր, որոնք ամենայն հավանականությամբ կեղտի ու կղանքի մեջ կորած էին: Ամռանը կամ աշնան սկզբին այգիներում թերթերի կտորներ են թափված լինում՝ արևի տակ խանձված, չոր տերևների նման փշրվող, այնքան դեղին, ասես պիկրինաթթվով մշակած լինեն: Իսկ ձմռանը թղթերը ճմռթված են, տրորված, ցեխոտ. դրանք վերադառնում են հողի գիրկը: Որոշ թղթեր՝ լրիվ նոր ու գուցե անգամ կավճապատ, կարապների նման անբիծ փռված են լինում գետնին, բայց հողն արդեն տակից կպած է դրանց: Այդ թղթերը թպրտում են, պոկվում ցեխից, բայց ընդամենը որպեսզի

մի քանի քայլ այն կողմ նորից փռվեն հողին, ու այս անգամ՝ վերջնականապես: Եվ այդ ամեն ինչը հաճելի է ձեռքդ վերցնել: Երբեմն ուղղակի մոտիկից նայելով ճմռթում եմ թղթերը, երբեմն ճղում ու լսում դրանց երկար ճրթճրթոցը, կամ եթե շատ խոնավ են, վառում եմ, ինչն այնքան էլ հեշտ գործ չէ, հետո կեղտոտ ափերս մաքրում եմ որևէ պատի կամ ծառի բնի վրա:

Մի խոսքով, այսօր դրսում նայում էի զորանոցից դուրս եկող հեծելազորային սպայի կարմրավուն ճտքակոշիկներին: Հայացքով դրանց հետևելով՝ ջրափոսի կողքին ընկած մի թղթի կտոր նկատեցի: Ինձ մի պահ թվաց, որ սպան կրունկով ճզմելու է թուղթը ցեխի մեջ, բայց չէ, մի քայլով անցավ և՛ թղթի, և՛ ջրափոսի վրայով: Մոտեցա. տողած թուղթ էր, անկասկած՝ դպրոցական տետրից էր պոկած: Անձրևի տակ թրջված էր, տրորված, ու վառված ձեռքի նման լրիվ ծածկված էր բշտիկներով ու այտուցներով: Լուսանցքի կարմիր գիծը վերածվել էր վարդագույն բծի, թանաքը տեղ-տեղ լղոզվել էր: Թղթի ներքևի եզրն անհետանում էր չորացած ցեխի տակ: Կռացա, արդեն կանխավայելում էի, թե ինչպես պիտի դիպչեմ այդ նուրբ, թարմ խմորին, ինչպես պիտի գունդ-գունդ գլորվի մատներիս միջև... Ու չկարողացա:

Մի վայրկյան ուղղակի կռացած մնացի, կարդացի. «Թելադրություն. Սպիտակ բուն», հետո դատարկաձեռն վեր կացա: Ես կորցրել եմ իմ ազատությունը, ես այլևս չեմ կարողանում անել այն, ինչ ուզում եմ:

Իրերը չպետք է մեզ *անհանգստացնեն*, դրանք կենդանի արարածներ չեն: Օգտագործում ես, տեղն ես դնում, ապրում ես դրանց մեջ. իրերն օգտակար են՝ ոչ ավել, ոչ պակաս: Իսկ ինձ անհանգստացնում են, ու դա անտանելի է: Այնպես եմ վախենում շփվել իրերի հետ, ասես դրանք կենդանի լինեն:

Հիմա նոր հասկանում եմ. արդեն ավելի լավ եմ հիշում, թե նախորդ անգամ ինչ էի զգում ծովափին՝ քարը ձեռքիս: Մի տեսակ քաղցրավուն զզվանք: Ահավոր տհաճ զգացում էր: Ու դա, համոզված եմ, հենց քարից էր գալիս, քարից ուղղակիորեն փոխանցվում էր ձեռքերիս: Հա, հենց դա է. ձեռքերիս մեջ ասես սրտխառնոց էի զգում:

Հենց նոր հյուրանոցի աստիճաններով իջնելիս լսեցի, թե ոնց է Լյուսին հարյուրերորդ անգամ տրտնջում տիրուհու մոտ՝ զուգահեռ շարունակելով փայլեցնել աստիճանները: Տիրուհին դժկամությամբ ու կարճ նախադասություններով էր պատասխանում, որովհետև ատամների պրոթեզը դեռ չէր դրել. գրեթե մերկ էր, վարդագույն խալաթով ու փափուկ հողաթափիկներով: Լյուսին, ինչպես միշտ, կեղտոտ ու փնթի տեսք ուներ. ժամանակ առ ժամանակ դադարեցնում էր աստիճանները շփելը, ծնկների վրա ուղղվում էր ու նայում տիրուհուն: Ու խոսում էր առանց դադար տալու, ողջամիտ տոնով.

– Ինձ որ մնա՝ հազար անգամ ավելի լավ կլիներ, եթե ուրիշ կնիկների հետևից վազեր. ինձ որ լրիվ մեկ է, մենակ թե ինքն իրեն վնաս չտա:

Խոսքը Լյուսիի ամուսնու մասին է: Այդ սևուկ, կարճլիկ կինը մինչև քառասուն տարեկան դառնալը փող է կուտակել ու ինքն իրեն նվիրել է մի հոյակապ երիտասարդ տղամարդու, ով Լեկուենտի գործարանում խառատ է աշխատում: Լյուսիի ամուսնական կյանքը դժբախտ է: Ամուսինը նրան չի ծեծում, չի դավաճանում, բայց խմում է, ամեն երեկո հարբած է տուն գալիս: Ամուսնու բանը բուրդ է. երեք ամսում աչքի առաջ լրիվ դեղնել ու սմքել է: Լյուսին կարծում է, որ խմելուց է: Իմ կարծիքով՝ ավելի շուտ թոքախտից:

– Պիտի դիմանամ,– ասում է Լյուսին:

Վստահ եմ՝ տանջվում է, բայց դանդաղ, անշտապ: Լյուսին դիմանում է, ինքն ընդունակ չէ ո՛չ ինքն իրեն մխիթարելու, ո՛չ էլ գլխովին հանձնվելու իր ցավին: Իր ցավի մասին քիչ-քիչ է մտածում, կաթիլ-կաթիլ, մի քիչ՝ այսօր, մի քիչ՝ վաղը, խնայողաբար: Ու հիմնականում ուրիշ մարդկանց մոտ, որովհետև մարդիկ իրեն մխիթարում են, ու նաև որովհետև իրեն դուր է գալիս խելամիտ տեսքով դատողություններ անել ցավի մասին այնպիսի տոնով, ասես խորհուրդներ է տալիս: Երբ սենյակում մենակ է, հաճախ եմ լսում, թե ինչպես է քթի տակ ինչ-որ երգ մռմռում, որ հանկարծ չմտածի: Բայց մեկ է՝ ամբողջ օրը մռայլ է, շատ արագ հոգնում է ու ամեն չնչին պատճառից վիրավորվում է ու նեղանում:

– Այ էստեղ ոնց որ մի բան սեղմի,– ասում է՝ ձեռքը կոկորդին դնելով,– բռնել է ու բաց չի թողնում:

Այդ կինը ժլատի պես է ծախսում իր ցավը: Պիտի որ հաճույքների հարցում էլ նույնքան ժլատ լինի: Հետաքրքիր է, արդյոք երբեմն չի՞ ուզում ազատվել այդ միալար ցավից, այդ մռթմռթոցներից, որոնք տեղնուտեղը նորից են սկսվում, հենց որ դադարում է քթի տակ երգել, չի՞ ուզում անմնացորդ տրվել տառապանքին, գլխովին սուզվել հուսահատության մեջ: Չնայած, այսպես թե այնպես, իր դեպքում դա անհնար է. ինքն արդեն խորտակված է:

Հինգշաբթի, կեսօրից հետո

«Մարկիզ դը Ռոլբոնն արտաքնապես սարսափելի տգեղ էր: Մարի-Անտուանետ թագուհին նրան հաճախ կոչում է «իմ սիրելի կապիկ»: Այնուամենայնիվ, նա կարողանում էր տիրանալ արքունի բոլոր կանանց և բնավ էլ ոչ խեղկատակություններ անելով, ինչպես Վուազենոնը, այլ մի այնպիսի ձգողական ուժի շնորհիվ, որը պալատական գեղեցկուհիների ներսում վերջիններիս ամեն տեսակի խելահեղությունների դրդող կիրք էր բորբոքում: Նա խարդավանքներ է նյութում, բավականին մութ դեր է խաղում ապարանջանի գործում և 1790-ին անհետանում է բեմից՝ Միրաբո-Տոննոյի և Ներսիայի հետ բավական երկարատև հարաբերություններ պահպանելուց հետո: Այնուհետև կրկին հայտնվում է արդեն Ռուսաստանում, որտեղ մասնակից է լինում Պավել 1-ինի սպանությանը, ապա մեկնում է ճամփորդության դեպի հեռավոր երկրներ՝ Հնդկաստան, Չինաստան, Թուրքեստան: Զբաղվում է ապօրինի առևտրով, դավադրություններով, լրտեսությամբ: 1813-ին վերադառնում է Փարիզ, իսկ 1816-ին արդեն դառնում է ամենազոր. նա Անգուլեմի դքսուհու միակ վստահված անձն է: Այդ քմահաճ ու կամակոր պառավը, որին մշտապես հալածում են մանկության սարսափելի հիշողությունները, մարկիզին տեսնելիս փափկում է ու սկսում ժպտալ: Դքսուհու հովանավորության ներքո մարկիզը սկսում է արքունիքում եղանակ ստեղծել: 1820թ. մարտին նա ամուսնանում է

տասնութամյա գեղեցկուհի մադմուազել դը Ռոկլորի հետ: Մարկիզ դը Ռոլբոնը յոթանասուն տարեկան է, նա իր փառքի գագաթնակետին է, իր կյանքի բարձունքին: Յոթ ամիս անց նրան մեղադրում են դավաճանության մեջ, ձերբակալում ու բանտ նետում, որտեղ և հինգ տարի անց մահանում է՝ այդպես էլ չարժանանալով պատշաճ դատավարության»:

Թախիծով եմ կարդում Ժերմեն Բերժեի այս գրությունը[1]: Հենց այս մի քանի տողերից էլ սկսվել է իմ ծանոթությունը մարկիզ դը Ռոլբոնի հետ: Ինչպե՞ս գրավեց ինձ, ինչպե՞ս տեղնուտեղը սկսեցի սիրել նրան՝ կարդալով այդ սակավաթիվ բառերը: Հենց այդ մարդու պատճառով էլ հիմա այստեղ եմ: Ճամփորդություններիցս վերադառնալով՝ միևնույն հաջողությամբ կարող էի և՛ Փարիզում հաստատվել, և՛ Մարսելում: Սակայն Ֆրանսիայում մարկիզի անցկացրած երկար ժամանակահատվածին վերաբերող փաստաթղթերի մեծամասնությունը Բուվիլի քաղաքային գրադարանում են: Ռոլբոնը ժառանգաբար տիրում էր Մարոմի դղյակին: Պատերազմից առաջ այդ փոքրիկ քաղաքում դեռ բնակվում էր նրա հետնորդներից մեկը՝ Ռոլբոն-Կամպոյրե անվամբ մի ճարտարապետ, ով 1912 թվին՝ իր մահվանից հետո, Բուվիլի գրադարանին ժառանգեց մարկիզի հարուստ արխիվը՝ նամակներ, օրագրերից հատվածներ, զանազան այլ թղթեր: Մինչև հիմա էլ դեռ ամեն ինչ չէ, որ հասցրել եմ զննել:

Ուրախ եմ, որ գտել եմ նշումներս: Տասը տարի կլինի՝ չէի կարդացել: Ինձ թվում է՝ ձեռագիրս փոխվել է. մի ժամանակ ավելի կոկիկ էի գրում: Ինչքա՞ն էի այդ տարի սիրում մարկիզ դը Ռոլբոնին: Հիշում եմ, մի անգամ երեկոյան (երեքշաբթի երեկո էր) դեռ Մազարինիի գրադարանում էի. ամբողջ օրն աշխատել էի: Ու հիմնվելով 1789-1790 թվերի մարկիզի նամակագրության վրա՝ կարողացել էի հասկանալ, թե ինչ հոյակապ կերպով էր հիմարացրել Նեսիային: Գիշեր էր, ոտքով իջնում էի Մենի պողոտայով ու Գետե փողոցի անկյունից ինձ համար շագանակներ գնեցի: Ի՞նչ երջանիկ էի այդ ժամանակ: Ինքս ինձ բարձր ծիծաղում էի՝ պատկերացնելով Ներսիայի դեմքի

[1] Ժերմեն Բերժե, Միրաբո-Տոնոնն և իր բարեկամները, էջ 406, նշում 2, Շամպիոն, 1906 *(ծ. հրատ.)*:

արտահայտությունը, երբ վերադարձել էր Գերմանիայից: Մարկիզի կերպարը նման է այս թանաքին. ուսումնասիրությունս սկսելուց ի վեր նկատելիորեն խամրել է:

Առաջին հերթին էլ ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ նրա վարքը՝ սկսած 1801-ից: Ու հարցն այն չէ, որ փաստաթղթերը չեն հերիքում. պահպանվել են բազմաթիվ նամակներ, հուշեր, գաղտնի հաշվետվություններ, ոստիկանական արխիվներ: Ընդհակառակը՝ փաստաթղթերը գրեթե չափազանց շատ են: Բայց այդ բոլոր վկայությունները բավարար կերպով հիմնավորված ու անհերքելի չեն: Չէ, դրանք, իհարկե, իրար չեն հակասում, բայց և չեն լրացնում միմյանց. թվում է, թե խոսքը նույն մարդու մասին չէ: Եվ սակայն մյուս պատմաբաններն էլ են նմանատիպ տեղեկությունների հետ աշխատում: Ո՞նց են կարողանում գլուխ հանել: Մի՞թե ես ավելի մանրազնին եմ կամ պակաս խելացի: Չնայած, եթե հարցը նման կերպ եմ ձևակերպում, դա ինձ բնավ չի հուզում: Ի վերջո ես ի՞նչ եմ փնտրում: Գաղափար անգամ չունեմ: Երկար ժամանակ Ռոլբոնը որպես մարդ ինձ շատ ավելի էր հետաքրքրում, քան այն գիրքը, որ պիտի գրեմ: Բայց հիմա այդ մարդը... այդ մարդը սկսում է ինձ ձանձրացնել: Հիմա ավելի շատ գրքիս մասին եմ մտածում. ավարտին հասցնելու ավելի ու ավելի ուժեղ անհրաժեշտություն եմ զգում: Ու թերևս՝ ինչքան ծերանում եմ, այնքան ավելի ուժեղ: 1915.ին50

Մեծ հաշվով կարելի է համարել, որ Ռոլբոնն ակտիվ մասնակցություն է ունեցել Պավել 1-ինի սպանության գործում, ապա համաձայնել է դառնալ արևելքում ցարի լրտեսը, սակայն անընդհատ դավաճանել է Ալեքսանդրին՝ հօգուտ Նապոլեոնի: Միևնույն ժամանակ խիստ հավանական է, որ նաև աշխույժ նամակագրական կապ է պահել կոմս դ'Արտուայի հետ ու պարբերաբար զանազան անկարևոր տեղեկություններ ուղարկել վերջինիս՝ իր հավատարմությունը հավաստիացնելու համար: Այս ամենը միանգամայն ճշմարտանման է թվում: Նույն ժամանակաշրջանում Ֆուշեն էլ էր մի այդպիսի բարդ ու վտանգավոր թատրոն խաղում: Չի բացառվում նաև, որ մարկիզը սեփական շահի համար ասիական իշխանություններին հրացաններ էր վաճառում:

Նա անկասկած կարող էր այդ ամենն անել: Սակայն ոչ մի ապացույց չկա: Ես արդեն սկսում եմ մտածել, որ առհասարակ երբեք ոչ մի բան հնարավոր չէ ապացուցել: Այս ամենը ենթադրություններ են, որոնք հիմնվում են փաստերի վրա, բայց ես հստակ զգում եմ, որ դրանք առաջին հերթին ինձնից են բխում, որ պարզապես իմ տեղեկություններն ընդհանրացնելու միջոց են: Ռոլբոնն ինքը ձկան պես համր է: Փաստերն անշտապ, ծուլորեն ու մռայլ շարվում են իրար հետևից այն կարգով, որ ես եմ դրանց համար որոշում, բայց այդ կարգը դրսից է պարտադրված: Այնպիսի զգացողություն ունեմ, ասես աշխատանքիս ընթացքում անընդհատ տրվում եմ երևակայությանս: Ընդ որում՝ համոզված եմ, որ եթե վեպ գրեի, գրքիս հերոսները շատ ավելի ճշմարտացի կամ ամեն դեպքում ավելի դուրեկան կլինեին:

Ուրբաթ

Ժամը երեքն է: Ժամը երեքին միշտ արդեն կա՛մ շատ ուշ է, կա՛մ էլ դեռ շատ շուտ, ինչ էլ որ ուզենաս անել: Օրվա ամենատարօրինակ պահերից մեկն է, իսկ այսօր՝ ուղղակի անտանելի:

Լուսամուտի ապակիների փոշին սպիտակել է արևի սառը լույսի տակ: Վերևում դժգույն, մառախլապատ երկինքն է: Առվակներն առավոտյան սառցակալել էին:

Կալորիֆերի կողքին նստած՝ ծանր մարսում եմ ճաշս: Գիտեմ, որ օրս կորած է: Այսօր այլևս ոչ մի կարևոր բան չեմ անի. գուցե միայն մթնելուց հետո, չգիտեմ: Մեղավորն արևն է. թույլ ոսկեգույն է ներկում շինարարության վրա կախված կեղտասպիտակավուն մառախուղը, հոսում է սենյակումս՝ դեղնավուն, գունատ, ու սեղանիս վրա չորս փայլատ ու խաբուսիկ արտացոլանքներ է փռում:

Ծխամորճս պատված է ոսկեգույն լաքով, այն սկզբում գրավում է հայացքդ իր թվացյալ կենսուրախությամբ, հետո, երբ երկար ես նայում, լաքը հալվում է ու մնում է միայն մի կտոր փայտ՝ վրան մեծ, անփայլ բիծ: Եվ այդ նույն պատմությունը կրկնվում է ամեն ինչի հետ՝ ընդհուպ մինչև սեփական ձեռքերս: Երբ արևն այսպիսին է, ավելի

լավ է միանգամից գնալ քնելու: Ուղղակի նախորդ գիշեր շատ խորն եմ քնել, ու հիմա քունս ընդհանրապես չի տանում:

Մի ժամանակ այնքա՜ն շատ էի սիրում ձմեռվա նեղ, անձրևից սևացած երկինքը, որ դրսից սեղմվում էր ապակիներին՝ ասես ծիծաղելի ու հուզիչ մի դեմք: Բայց այս արևը բնավ էլ ծիծաղելի չէ, լրիվ հակառակը: Եվ այն ամեն ինչի վրա, որ սիրում եմ՝ շինարարության ժանգոտ երկաթների վրա, մայթի փտած տախտակների վրա, մի տեսակ ժլատ ու սթափ լույս է գցում՝ նման այն հայացքին, որ անքուն գիշերից հետո գցում ես նախորդ օրը խանդավառությամբ կայացրած որոշումների կամ մի շնչով ու առանց ուղղումների գրած էջերի վրա: Վիկտոր-Նուար բուլվարի չորս սրճարանները, որոնք գիշերը կողք կողքի շողարձակելիս ասես շատ ավելին են, քան սովորական սրճարանները (ակվարիումներ են, նավեր, աստղեր կամ հսկայական սպիտակ աչքեր), նույնպես կորցրել են իրենց երկիմաստ հմայքը:

Անթերի օր է ինքնաքննադատության ու ինքնավերլուծության համար: Սառը շողերը, որ արևն անգութ դատավորի նման գցում է բոլոր կենդանի արարածների վրա, աչքերիս միջով թափանցում են իմ մեջ. ես ներսից ողողված եմ աղքատացնող լույսով: Գիտեմ՝ ինձ տասնհինգ րոպեն էլ է հերիք, որ հասնեմ ինքս իմ հանդեպ զզվանքի գերագույն աստիճանին: Չէ, շատ շնորհակալ եմ: Ինձ դա պետք չէ: Ու ոչ էլ նորից կընթերցեմ Սանկտ Պետերբուրգում Ռոլբոնի անցկացրած ժամանակի մասին երեկվա գրածներս: Մնում եմ նստած՝ ձեռքերս կախ, կամ մի քանի խղճուկ, վախվորած բառեր եմ գրում, հորանջում եմ՝ սպասելով գիշերվան: Երբ մթնի, իրերն ու ես դուրս կգանք մշուշից:

Արդյոք Ռոլբոնը մասնակցե՞լ է Պավել 1-ինի սպանությանը: Հիմա ամենակարևոր հարցը սա է: Հասել եմ դրան ու մինչև պատասխան չգտնեմ, չեմ կարողանա առաջ շարժվել:

Ըստ Չերկովի՝ մարկիզը ծախված էր կոմս Պալենին: Չերկովը գրում է, որ դավադիրների մեծ մասի համար հերիք կլիներ, եթե ցարն ուղղակի գահընկեց արվեր ու բանտարկվեր (կարծես թե Ալեքսանդրն ինքն էլ էր կողմ այդ լուծմանը): Բայց Պալենն ուզում էր մեկընդմիշտ ազատվել Պավելից: Մարկիզ դը Ռոլբոնին

հանձնարարված էր դավադիրներին առանձին-առանձին դրդել սպանության:

«Նա այցելում է յուրաքանչյուրին ու անզուգական հզորությամբ ու արտահայտչականությամբ նրանց առջև խաղում այն տեսարանը, որ շուտով պիտի տեղի ունենար: Այդպիսով մարկիզը նրանց մեջ սերմանում կամ բորբոքում է սպանության ծարավը»:

Բայց ես Չերկովին չեմ վստահում: Նա ոչ թե սթափ վկա է, այլ կիսախելագար սադիստ ու մոգ և ի վերջո միշտ ամեն ինչ հանգեցնում է դևերին ու դիվականությանը: Ոչ մի կերպ չեմ կարողանում մարկիզ դը Ռոլբոնին պատկերացնել այդ թատերական դերում: Ի՞նչ, սպանության տեսարա՞ն է խաղացել: Լավ էլի: Մարկիզը երբեք ցույց չի տալիս, նա ներշնչում է, և ազդեցության այդ անգույն ու անարտահայտիչ եղանակը կարող է հաջողություն ունենալ միայն իր տեսակի մարդկանց՝ սառնասիրտ դավադիրների ու հաշվենկատ քաղաքական գործիչների մոտ:

«Ադեմար դը Ռոլբոնը,– գրում է մադամ դը Շարիերը,– խոսելիս պատկերներ չէր ստեղծում, ժեստեր չէր անում, չէր փոխում ինտոնացիան: Աչքերը կիսափակ էր խոսում, այնպես, որ բիբերի գորշ շրջանակները կոպերի տակից հազիվ էին երևում: Ընդամենը մի քանի տարի առաջ եմ համարձակվել ինքս ինձ խոստովանել, որ աննկարագրելիորեն ձանձրացնում էր ինձ: Այնպես էր խոսում, ինչպես աբբա «Մաբլին» գրում է»:

Եվ մի՞թե այս մարդն իր դերասանական տաղանդով ընդունակ է եղել... Չնայած այդ դեպքում ինչպե՞ս էր կարողանում կանանց գայթակղել: Բացի դրանից, Սեգյուրը մի հետաքրքիր դիպված է նկարագրում, որն ինձ ճշմարտացի է թվում.

«1787-ին Մուլենի մոտակայքի օթևաններից մեկում մահանում էր մի ծերունի, որ Դիդրոյի ընկերն էր ու փիլիսոփայական ոգով կրթություն էր ստացել: Շրջակայքի բոլոր հոգևորականներն արդեն ուժասպառ էին եղել՝ ապարդյուն փորձելով նրան ինչ-որ բան համոզել. ծերուկը հրաժարվում էր վերջին հաղորդությունն ընդունելուց, քանի որ պանթեիստ էր: Մարկիզ դը Ռոլբոնը, ով պարզապես անցնում էր այդտեղով և չէր հավատում ո՛չ Աստծուն, ո՛չ էլ սատանային, Մուլենի կյուրեի հետ գրազ եկավ, որ իրեն երկու ժամից էլ

քիչ ժամանակ պետք կգա հիվանդին կաթոլիկ եկեղեցու գիրկը վերադարձնելու համար: Կյուրեն ընդունեց գրազը և պարտվեց: Երբ մարկիզը սկսեց զբաղվել հիվանդով, գիշերվա երեքն էր. գիշերվա հինգին ծերուկը խոստովանեց իր բոլոր մեղքերը, իսկ յոթին մահացավ: «Մի՞թե դուք այդքան հմուտ եք բանավեճի արվեստում,– հարցրեց կյուրեն,– դուք գերազանցեցիք մեզ բոլորիս»: «Ես չէի բանավիճում,– պատասխանեց մարկիզ դը Ռոլբոնը,– ուղղակի նրան դժոխքով վախեցրի ու վերջ»:

Այսպիսով, արդյոք ճի՞շտ է, որ մարկիզը մասնակից է եղել ցարի սպանությանը: Այդ օրը երեկոյան՝ ժամը ութին, իր ընկեր սպաներից մեկը մարկիզին ուղեկցել է մինչև վերջինիս տան մուտքը: Եթե անգամ նորից դուրս եկած լինի, ինչպե՞ս է կարողացել անարգել քայլել Սանկտ Պետերբուրգի փողոցներով: Այդ ժամանակ արդեն կիսախելագար Պավելը հրամայել էր գիշերվա ինից հետո ձերբակալել բոլոր անցորդներին, բացի մանկաբարձուհիներից ու բժիշկներից: Հավատա՞մ արդյոք այն անհեթեթ առասպելին, որ Ռոլբոնը պալատ հասնելու համար մանկաբարձուհու շորեր է հագել: Մարկիզը, ճիշտն ասած, միանգամայն ընդունակ էր նման բան անելու: Այսպես թե այնպես, գրեթե ապացուցված է, որ սպանության գիշերը նա տանը չէր: Ալեքսանդրը պիտի որ շատ լուրջ կասկածելիս լիներ նրան, քանի որ գահ բարձրանալուց հետո շտապեց ինչ-որ աղոտ պատրվակով մարկիզին ուղարկել Հեռավոր Արևելք:

Մարկիզ դը Ռոլբոնն ինձ մահու չափ ձանձրացրել է: Վեր եմ կենում: Շարժվում եմ այս խավար լույսի մեջ ու տեսնում, թե ինչպես է այն փոխվում ձեռքերիս ու վերնաշապիկիս թևերի վրա. բառերով անհնար է նկարագրել, թե ինչքան եմ դրանից զզվում: Հորանջում եմ: Վառում եմ սեղանի լապտերը. գուցե դրա լույսը կարողանա խեղդել ցերեկվա լույսին: Բայց չէ, լապտերն իր ոտքի մոտ լույսի մի խղճուկ ջրափոս է գցում ու վերջ: Հանգցնում եմ, կրկին վեր եմ կենում: Պատի վրա սպիտակ, մեծ անցք կա. հայելին է: Հայելին ծուղակ է: Գիտեմ, որ ընկնելու եմ մեջը: Դե իհարկե: Հայելու մեջ ինչ-որ մոխրագույն ուրվագիծ է հայտնվում: Մոտենում եմ, սկսում նայել ու էլ չեմ կարողանում հեռանալ:

Դեմքիս արտացոլանքն է: Այսպիսի կորած օրերին հաճախ եմ ինձ զննում: Բան չեմ հասկանում այս դեմքից: Մյուսների դեմքերը իմաստ ունեն: Իմը՝ ոչ: Նույնիսկ չեմ կարողանում որոշել՝ գեղեցի՞կ է, թե՞ տգեղ: Կարծում եմ՝ տգեղ է, որովհետև ինձ այդպես են ասել: Բայց դա ինձ չի հուզում: Ըստ էության՝ ես նույնիսկ ապշում եմ, որ դեմքին առհասարակ կարելի է այդպիսի հատկություններ վերագրել. նույնն է, եթե գեղեցիկ կամ տգեղ կոչես մի բուռ հողը կամ քարի կտորը:

Չնայած հայելու մեջ գոնե մի բան կա, որ աչք է շոյում. այտերիս ներս ընկած հատվածներից վեր, ճակատիցս վեր՝ գանգս ոսկեզօծում է մազերիս գեղեցիկ շիկակարմիր բոցը: Այ դրան հաճելի է նայելը: Այդ մեկը գոնե հստակ ու մաքուր գույն է, ու ես շատ գոհ եմ, որ կարմրահեր եմ: Հայելու մեջ դա հատկապես լավ է երևում. մազերս շողարձակում են: Բախտս բերել է. եթե հանկարծ գլուխս զարդարված լիներ այն խամրած մազերով, որ ոչ մի կերպ չեն կարողանում կողմնորոշվել՝ շագանակագո՞ւյն են, թե՞ շեկ, դեմքս կտարրալուծվեր անգույն բծի մեջ, ու ամեն անգամ ինձ նայելով սարսափելի գլխապտույտ կզգայի:

Հայացքս դանդաղ ու դժկամությամբ սահում է ներքև՝ դեպի ճակատս ու այտերս, ու չհանդիպելով և ոչ մի ամուր բանի՝ խրվում-մնում է՝ ասես սորուն ավազների մեջ: Բնականաբար քիթս, աչքերս ու բերանս տեղում են, բայց այդ ամենը զուրկ է որևէ իմաստից, զուրկ է անգամ մարդկային արտահայտությունից: Եվ սակայն Աննին ու Վելինն ասում էին, որ ես կենսախինդ դեմք ունեմ. հնարավոր է, որ ուղղակի չափազանց շատ եմ վարժվել դեմքիս: Երբ փոքր էի, մորաքույր Բիժուան ասում էր. «Եթե շատ երկար նայես հայելու մեջ, կապիկ կտեսնես»: Ես պիտի որ դրանից շատ ավելի երկար նայած լինեմ, որովհետև այն, ինչ հիմա տեսնում եմ, շատ ավելի ցածր է, քան կապիկը. բուսական աշխարհի սահմանագծին մոտ կանգնած ինչ-որ բան է՝ պոլիպների մակարդակի վրա: Չեմ ժխտում, որ մեջը կյանք կա, բայց Աննին այդ կյանքի մասին չէր խոսում: Տեսածս ինչ-որ թույլ թրթիռներ են, խամրած մարմին, որ անսանձ թպրտում ու տրոփում է: Այսքան մոտիկից հատկապես աչքերն են զզվելի: Ապակյա

փայլով, առաձգական, կոյր, կարմիր եզրերով. ձկան թեփուկներ են, ոչ ավել, ոչ պակաս:

Ամբողջ մարմնով հենվում եմ հախճապակե շրջանակին ու դեմքս այնքան եմ մոտեցնում հայելուն, մինչև հպվեմ ապակուն: Աչքերս, քիթս ու բերանս անհետանում են. այլևս ոչ մի մարդկային բան չի մնում: Դարչնագույն կնճիռներ տենդագին ուռած շուրթերիս երկու կողմերում, ճաքեր ու ելուստներ: Այտերիս զառիվայրները ծածկված են սպիտակ մետաքսանման աղվամազով, քթանցքներիցս երկու մազեր են դուրս ցցվել. ոչ թե դեմք է, այլ երկրաբանական ռելիեֆային քարտեզ: Եվ այնուամենայնիվ, անկախ ամեն ինչից, այս ուրվականային աշխարհն ինձ ծանոթ է: Չեմ կարող ասել, որ ճանաչում եմ բոլոր մանրամասները, բայց այս ամենն իմ մեջ ինչ-որ դեժավյուի զգացում է առաջացնում, ու ես դրանից ընդարմանում եմ ու հանդարտ սահում քնի գիրկը:

Ուզում եմ սթափվել. որևէ վառ, սուր զգացողություն կօգներ ինձ: Ձախ ափս սեղմում եմ այտիս ու մաշկս ներքև եմ ձգում՝ դիտելով հայելու մեջ հայտնված ծամածռությունը: Դեմքիս կեսը այլայլված է, բերանիս ձախ անկյունը ծռվել ու փքվել է՝ մերկացնելով ատամներիցս մեկը, ակնակապիճս բացվել է՝ երևան հանելով սպիտակ գունդն ու տակի վարդագույն, արնածոր միսը: Չէ, ուրիշ բանի էի փորձում հասնել. այս անգամ էլ ոչ մի ամուր ու հաստատուն բան, ոչ մի նորություն չկա. ամեն ինչ փափուկ է, հոսուն, ամեն ինչ արդեն տեսել եմ: Աչքերս բաց քնում եմ, ու դեմքս մեծանում ու մեծանում է հայելու մեջ՝ վերածվելով արևի լույսի մեջ լողացող ահռելի, գունատ լուսապսակի...

Հանկարծ արթնանում եմ այն բանից, որ քիչ էր մնում հավասարակշռությունս կորցնեի: Զգում եմ, որ հեծել եմ աթոռին ու դեռ լրիվ ընդարմացած եմ: Մի՞թե մյուս մարդիկ էլ են նույնքան դժվարությամբ դիտում իրենց սեփական դեմքերը: Ինձ թվում է, որ ես իմ դեմքն ընկալում եմ այնպես, ինչպես ամբողջ մարմինս՝ ինչ-որ օրգանական, մոռացված զգայարանով: Իսկ ուրիշնե՞րը: Օրինակ՝ մարկիզ դը Ռոլբոնը: Մի՞թե ինքն էլ էր նույն թմբիրի մեջ ընկնում, երբ հայելիների մեջ տեսնում էր այն, ինչի մասին մադամ դը Ժանլիսը գրում է. «...նրա փոքրիկ, կնճռոտ դեմքը՝

մաքուր ու սպիտակ, ամբողջովին ծածկված ծաղկի սպինեռով, որի վրա հստակ կարդացվում էր ինչ-որ մի յուրահատուկ խորամանկություն, որ միշտ աչքի էր զարնում, ինչքան էլ որ փորձում էր դա թաքցնել: Նա նաև հատուկ խնամքով էր վերաբերվում իր սանրվածքին,– ավելացնում է մադամ դը Ժանլիսը,– ես երբեք նրան առանց կեղծամի չեմ տեսել: Բայց այտերը մի տեսակ կապտավուն էին, սևով ստվերված, քանի որ մարկիզը շատ խիտ մորուք ուներ և ցանկանում էր անձամբ սափրվել, ինչը չափազանց վատ էր անում: Նա սովորություն ուներ Գրիմի ոճով շպարվելու արձձի սպիտակով: Պարոն դը Դանժըվիլն ասում էր, որ սպիտակի ու կապույտի այդ խառնուրդի պատճառով մարկիզն ասես ռոկֆոր լինի»:

Կարծում եմ՝ մարկիզը բավականին հետաքրքիր անձնավորություն է եղել: Եվ այնուամենայնիվ, մադամ դը Շարիերի վրա նա լրիվ ուրիշ տպավորություն է թողել: Ինչքան հասկանում եմ՝ Ռոլբոնը նրա համար մի տեսակ մարած, անգույն կերպար էր: Գուցե իրո՞ք անհնար է հասկանալ քո սեփական դեմքը: Կամ գուցե պատճառն այն է, որ ես մենա՞կ եմ: Հասարակության գրկում ապրող մարդիկ սովոր են հայելու մեջ իրենց տեսնել այնպես, ինչպես երևում են իրենց ընկերների աչքին: Ես ընկերներ չունեմ. գուցե հենց դրանի՞ց է, որ մարմինս այսքան մերկ է: Ինչպես, օրինակ... Դե իհարկե, ինչպես մարդկանցից ազատ բնությունը:

Աշխատելու ցանկություն չունեմ, այլևս ոչ մի բան անելու ընդունակ չեմ. կսպասեմ, մինչև մթնի:

Հինգ անց կես

Վիճակս վատ է: Վիճակս ահավոր վատ է: Անիծված Սրտխառնոցն ի վերջո բռնեց ինձ: Ու այս անգամ ինչ-որ նոր բան կա. ամեն ինչ սրճարանում սկսվեց: Մինչև հիմա սրճարաններն իմ միակ ապաստանն էին, որովհետև միշտ լիքն են ու վառ լուսավորված: Հիմա դրանից էլ եմ զրկվել. երբ մյուս անգամ սենյակումս ինձ բռնացնի, այլևս չեմ իմանա՝ ուր փախչեմ:

Եկել էի, որ տիրուհու հետ քնեմ, բայց հազիվ էի դուռը բացել, երբ Մադլենը՝ մատուցողուհին, ձայն տվեց.

– Տիրուհին էստեղ չի, գնացել է քաղաք՝ գնումների:

Փորիս ներքևում սուր, տհաճ հիասթափություն զգացի՝ մի տեսակ նողկալի ծակծկոց: Միևնույն ժամանակ զգացի, թե ինչպես է վերնաշապիկս քսվում պտուկներիս, ու գույնզգույն շրջապտույտը դանդաղ կլանեց ինձ. մառախուղը գալարվեց ու լցվեց չորս կողմս, ծխի մեջ կորած լույսերը սկսեցին պտտվել հայելիների արտացոլանքների ու սրահի խորքում թույլ առկայծող նստարանների հետ մեկտեղ, ու դադարեցի հասկանալ՝ ինչու է և որտեղից է այս ամենը: Դռան շեմին կանգնած սառել էի, հետո անհասկանալի մի բան տեղի ունեցավ. առաստաղի վրայով ինչ-որ ստվեր սահեց, ու զգացի, թե ինչպես եմ իմ կամքից անկախ ներս հրվում: Ամեն ինչ լողում էր. շշմել էի միանգամից ամեն կողմից մեջս լցվող լուսավոր մշուշից: Մադլենը մոտ լողաց, որ օգնի՝ վերարկուս հանեմ, նկատեցի, որ մազերը հավաքել է հետ ու ականջօղեր է գցել, ու չճանաչեցի իրեն: Աչքերս հառել էի ահռելի այտերին, որ անվերջ հոսում էին դեպի ականջներն ու չէին ավարտվում: Այտոսկրերի վրա երկու մեկուսի բծեր վարդագույնին էին տալիս, ու թվում էր՝ սպիտակ մաշկի վրա ձանձրույթից մեռնում են: Այտերը հոսում ու հոսում էին դեպի ականջները, ու Մադլենը ժպտում էր.

– Ի՞նչ կխմեք, պարոն Անտուան:

Ու հենց այդ պահին էլ Սրտխառնոցը բռնեց ինձ: Փլվեցի նստարանի վրա ու դադարեցի հասկանալ՝ որտեղ եմ: Սրահի բոլոր գույները դանդաղ պտտվում էին շուրջս, որձկալու անհագ ցանկություն էի զգում: Այդ պահից սկսած Սրտխառնոցն ինձ այլևս բաց չի թողնում, ես դրա տիրապետության տակ եմ:

Վճարեցի, Մադլենը ափսես տարավ: Գավաթիս տակ՝ մարմարե սեղանին, ճզմված է գարեջրի լճակը, վրան պղպջակ կա: Այն մասում, ուր նստած եմ, նստարանը փոս է ընկած, ու չընկնելու համար ստիպված եմ ներբաններս ամուր սեղմել հատակին: Ցուրտ է: Աջ կողմում՝ մահուդե սփռոցով ծածկված սեղանի վրա, թուղթ են խաղում: Մտնելիս խաղացողներին չեմ նայել. պարզապես զգացի, որ մասամբ նստարանի, մասամբ էլ հեռվի սեղանի վրա ինչ-որ

գաղջ զանգված կա՝ մի քանի զույգ շարժվող ձեռքերով: Հետո Մադ-լենը նրանց համար խաղաթղթեր, սփռոց ու փայտե թասով ժետոն-ներ բերեց: Խաղացողները կա՛մ երեք հոգին են, կա՛մ հինգ, չգիտեմ, վախենում եմ իրենց կողմը նայել: Ներսումս ինչ-որ զսպանակ է պոկվել. աչքերս կարողանում եմ շարժել, գլուխս՝ չէ: Գլուխս փափ-կել է, մի տեսակ առաձգական է դարձել, ասես ուղղակի դրված լինի վզիս վրա. թվում է՝ հենց շարժվեմ, կընկնի: Այնուամենայնիվ, լսում եմ խաղացողների հևոցն ու աչքի պոչով մեկ-մեկ սպիտակ խավով ծածկված ինչ-որ կարմրավուն ցոլք եմ նկատում: Ձեռք է:

Երբ տիրուհին դուրս է գալիս գնումներ անելու, սեղանիկի հետևում նրան փոխարինում է զարմիկը: Անունն Ադոլֆ է: Նստե-լիս աչքս ընկավ վրան, ու հիմա շարունակում եմ նայել, որովհետև չեմ կարողանում գլուխս շրջել: Երկարաթև վերնաշապիկով է, մանուշակագույն շալվարակալներով, վերնաշապիկի թևերը ծալել է արմունկներից վերև: Կապույտ վերնաշապիկի վրա մանուշակա-գույն շալվարակալները հազիվ են երևում, լրիվ հանգել, թաղվել են կապույտի մեջ, բայց այդ խոնարհությունը խաբուսիկ է. իրականում դրանք թույլ չեն տալիս, որ մոռանամ իրենց մասին, էշի համառու-թյամբ շարունակում են ինձ նյարդայնացնել, ասես նախ որոշել են մանուշակագույն լինել, հետո ճանապարհի կեսից կանգ են առել, բայց մտադրությունները չեն փոխել: Ուզում ես ասել. «Դե շուտ արեք, մանուշակագույն *դառեք*, ու էլ ոչ մի ձայն չլսեմ»: Բայց չէ, ոնց կային, այդպես էլ մնում են լռված-կանգնած իրենց անավարտ ջան-քի վրա: Երբեմն շրջապատող կապույտը սահում ու լրիվ ծածկում է դրանց, ու գոնե մի քանի ակնթարթ աչքիցս կորչում են: Բայց դա ժամանակավոր ալիք է. շուտով կապույտը տեղ-տեղ գունատվում է, ու անվստահ մանուշակագույնի կղզյակները նորից հայտնվում են աչքիս առաջ, հետո աստիճանաբար մեծանում են, միանում իրար ու կրկին շալվարակալներ են դառնում: Ադոլֆ զարմիկն աչքեր չունի. ուռած, կկոցած կոպերի տակից հազիվ սպիտակուցներն են մի քիչ երևում: Ադոլֆը քնկոտ ժպտում է, ժամանակ առ ժամանակ փնչաց-նում, վնգստում ու թեթև ցնցվում, ասես երազ տեսնող շուն լինի:

Բամբակյա վերնաշապիկի կապույտ բիծը զվարթ առանձնանում է շոկոլադագույն պատի ֆոնից: Ու ես դրանից էլ եմ Սրտխառնոց

զգում: Կամ ավելի ճիշտ Սրտխառնոցը հենց դա է: Սրտխառնոցն իմ ներսում չէ. ես դա զգում եմ դիմացի պատի վրա, շալվարակալների վրա, շուրջս ամեն տեղ: Այն սրճարանի հետ մեկ ամբողջություն է, ու ես ինքս եմ դրա ներսում:

Աջ կողմիս գաղջ զանգվածը սկսել է աղմկել ու զույգ-զույգ թափահարել ձեռքերը: «Էս էլ քեզ քո կոզրը»: «Ի՞նչ կոզր, ի՞նչ բան»: Մեծ, սև ողնաշարը կռացել է խաղի վրա. «Հա հա հա՛»: «Հա ի՞նչ: Ասում եմ՝ էս էլ կոզրը, հենց նոր խաղաց»: «Չգիտեմ, ես որ բան չեմ տեսել»: «Ոնց թե չես տեսել, հենց նոր գցեցի»: «Լավ, ուրեմն սրտի կոզր»: Երգում է. «Կոզր, կոզր, սրտի կոզր»: Խոսում է. «Էս ի՞նչ եք անում, պարո՛ն: Չէ, ասում եմ՝ էս ի՞նչ եք անում, պարո՛ն: Ես տարա»:

Ու կրկին լռություն: Կոկորդումս զգում եմ օդի քաղցրավուն համը: Հոտերը: Շալվարակալները: Ջարմիկը վեր է կենում, մի քանի քայլ է անում, ձեռքերը տանում մեջքի հետևը, ժպտալով ձգվում, բարձրացնում գլուխն ու կրունկներին հենված՝ թեքվում է հետ: Ու այդ դիրքով քնում է: Կանգնած է դիմացս ու ճոճվում է, ժպիտը դեմքից չի իջնում, այտերը ցնցվում են: Հիմա կընկնի: Թեքվում է հետ, ավելի ու ավելի է թեքվում՝ դեմքը լրիվ դեպի առաստաղը, հետո վերջին պահին ճարպկորեն բռնվում է սեղանիկի եզրից ու վերականգնում հավասարակշռությունը: Ու հետո ամեն ինչ նորից է սկսում: Վերջ, հերիք եղավ. կանչում եմ մատուցողուհուն.

– Մադլեն, խնդրում եմ, մի ձայնասկավառակ դրեք, էլի: Իմ սիրածը, դե դուք գտեք. «Some of these days»:

– Հիմա: Ուղղակի կարող է այս պարոններին խանգարել: Պարոնները չեն սիրում, երբ իրենց խաղալու ժամանակ երաժշտություն է լինում: Ասենք՝ ի՞նչ եմ խոսում, ավելի լավ է՝ հարցնեմ:

Ես գերագույն ջանք եմ գործադրում ու կարողանում եմ գլուխս շրջել: Չորս հոգի են: Մադլենը կռանում է քթի ծայրին սև շրջանակով պենսնե դրած կարմրադեմ ծերուկի վրա: Ծերուկը խաղաթղթերը կրծքին սեղմելով թաքցնում է ու հայացքը կլոր ապակիների հետևից ուղղում է վրաս.

– Խնդրեմ, պարոն:

Ժպիտներ: Ատամները փտած են: Կարմիր ձեռքը ոչ թե նրանն է, այլ հարևանինը՝ սև բեղերով ոմն անձնավորությանը: Բեղավորը

հսկայական քթածակեր ունի, որ բարեհաջող կարող էին մի ամբողջ ընտանիքի օդ մատակարարել ու որ գրավում են դեմքի կեսը, բայց մեկ է՝ բերանով է շնչում, ու կարծես շունչն էլ դեռ մի քիչ կտրվում է: Կողքին նստած է շան գլխով մի երիտասարդ: Չորրորդ խաղացողին չեմ նշմարում:

Խաղաթղթերը հերթով ընկնում են մահուդե սփռոցին: Հետո մատներին մատանիներ շարած ձեռքերը վերցնում են դրանք ու եղունգներով քերում սփռոցը: Ձեռքերը սփռոցի վրա սպիտակ հետքեր են թողնում, դրանք ուռած ու փոշոտ տեսք ունեն: Անընդհատ նորանոր խաղաթղթեր են ընկնում, ձեռքերն անընդհատ գնում-գալիս են: Տարօրինակ զբաղմունք է. ո՛չ խաղի է նման, ո՛չ ծեսի, ո՛չ էլ սովորության: Ինձ թվում է՝ դրանով են զբաղվում, որ ուղղակի ժամանակը լցնեն: Բայց ժամանակը չափազանց մեծ է, այն չես լցնի: Մեջն ինչ էլ գցես՝ փափկում է ու տարածվում: Օրինակ՝ հենց այդ կարմիր ձեռքի շարժումը, որ հիմա գայթելով հավաքում է խաղաթղթերը. մի տեսակ թորշոմած է: Պետք է քանդել ու կարերը ներսից պնդացնել:

Մադլենը պտտում է պատեֆոնի բռնակը: Միայն թե էլի չսխալվի ու անցած անգամվա պես «Cavalleria Rusticana»-ի արիան չդնի: Բայց չէ, ճիշտ է միացնում, հենց առաջին իսկ նոտաներից ճանաչում եմ մեղեդին: Հին ռեգթայմ է՝ վոկալ կրկներգով: 1917-ին ամերիկացի զինվորներն այս երգն էին սուլում Լա Ռոշելի փողոցներում: Պիտի որ նախապատերազմյան գործ լինի: Այս մի ձայնագրությունը, իհարկե, շատ ավելի նոր է: Ու չնայած դրան՝ սա այստեղի հավաքածուի ամենահին սկավառակն է, «Պաթե» ֆիրմայի ձայնասկավառակ շափյուղե ասեղի համար:

Հիմա կրկներգը կսկսվի: Երգի մեջ ամենաշատը դա եմ սիրում. սիրում եմ, թե ինչպես է կտրուկ առաջ նետվում ջրի մեջ խրվող ծովափնյա ժայռերի նման: Այս պահին դեռ ջազ է հնչում. մեղեդի չկա, ուղղակի նոտաներ են, փոքրիկ ցնցումների ամպեր: Դրանք հանգիստ չունեն. անբեկանելի մի օրինաչափություն կյանքի է կոչում դրանց ու տեղնուտեղն էլ ոչնչացնում՝ այդպես էլ ժամանակ չտալով ուշքի գալու, ինքնին գոյություն ունենալու համար: Նոտաները վազում են, հրմշտում իրար, կողքովս անցնելիս կարճ հարվածում

են ինձ ու իսկույն ոչնչանում: Շատ կուզեի դրանց պահել մոտս, բայց գիտեմ, որ եթե կարողանամ մեկնումեկին կանգնեցնել, մատներիս միջև միայն գռեհիկ ու անուժ մի ձայն կմնա: Պիտի հաշտվեմ դրանց մահվան հետ, ավելին՝ պիտի նույնիսկ *ցանկանամ*, որ մեռնեն. շատ քիչ զգացողություններ գիտեմ, որ ավելի սուր ու ուժեղ են:

Սկսում եմ տաքանալ, մի քիչ ավելի լավ եմ զգում ինձ: Ոչ մի արտառոց բան չկա, ընդամենը մի փոքրիկ երջանկություն է՝ Սրտխառնոցի աշխարհում: Երջանկությունը թաքնվում է այս մածուցիկ ջրափոսի հատակում, թաքնվում է մեր ժամանակի, մանուշակագույն շալվարակալների ու փոս ընկած նստարանների ժամանակի խորքում և բաղկացած է խոշոր ու փափուկ ակնթարթներից, որոնք յուղի բծերի նման տարածվում են աջ ու ձախ: Այս երջանկությունը դեռ չծնված՝ արդեն ծեր է, ու ինձ թվում է, որ արդեն քսան տարի է՝ ճանաչում եմ դրան:

Մի ուրիշ երջանկություն էլ կա. ամեն ինչից դուրս գոյություն ունի պողպատե ժապավենը՝ երաժշտության նեղ տևողությունը, որ պատռում-անցնում է մեր ժամանակը ծայրից ծայր՝ մերժելով ու իր կարճ խայթոցներով ծվատելով այն: Գոյություն ունի մի ուրիշ ժամանակ:

– Պարոն Ռանդյուն սիրտ է խաղացել, մեկնոցդ գցիր:

Ձայնը սահում է ու անհետանում: Պողպատե ժապավենին ոչինչ չի հուզում՝ ո՛չ դռան բացվելը, ո՛չ ծնկներիս փչող սառը քամին, ո՛չ էլ իր փոքրիկ աղջկա հետ ներս մտնող անասնաբույժը. երաժշտությունը ծակում-անցնում է այդ աղոտ ձևերի միջով՝ շարունակելով հոսել ու տարածվել: Դեռ լրիվ չտեղավորված՝ աղջիկն արդեն տարվել է երաժշտությամբ. ձգվել է, լայն բացել է աչքերն ու ուշադիր լսում է՝ բռունցքով սեղանը տրորելով:

Մի քանի վայրկյան էլ, ու Նեգրուհին կերգի: Կրկներգը հիմա այնքան անհրաժեշտ է, որ անխուսափելի է թվում. ոչինչ չի կարող կասեցնել երգը, ոչ մի բան, որ սերում է այս ժամանակից, ուր փլվել է աշխարհը. երաժշտությունը կդադարի ինքն իրեն՝ ենթարկվելով միայն իր օրինաչափությանը: Հենց դրա համար էլ այդքան շատ եմ սիրում այդ չքնաղ ձայնը. սիրում եմ ոչ թե իր խորության կամ տխրության համար, այլ որովհետև դրա հայտնվելն այդքան երկար

նախապատրաստվել էր հազարավոր նոտաների կողմից, որոնք մահացել էին, որպեսզի ձայնը ծնվի: Եվ այնուամենայնիվ, անհանգիստ եմ. չափազանց քիչ բան է պետք, որպեսզի ձայնասկավառակը կանգ առնի. գուցե հանկարծ ինչ-որ մի զսպանակ կկտրվի, կամ, ասենք, զարմիկ Ադոլֆը կորոշի երգը փոխել: Ինչ տարօրինակ է, ինչ հուզիչ, որ այս կարծրությունն այդքան փխրուն է: Ոչինչ ի զորու չէ այն ընդհատելու, և ամեն ինչ կարող է այն փշրել:

Անէանում է վերջին ակորդը: Հաջորդող կարճ լռության մեջ իմ ամբողջ էությամբ զգում եմ, որ ինչ-որ բան է եղել, *ինչ-որ բան է պատահել*:

Լռություն:

Some of these days
You'll miss me honey!

Իսկ պատահել է այն, որ Սրտխառնոցն էլ չկա: Երբ ձայնը մարեց, ու լռություն տիրեց, զգացի, թե ինչպես է մարմինս ամրանում, իսկ Սրտխառնոցը՝ անհետանում: Ամեն ինչ այնքան անսպասելի ու արագ տեղի ունեցավ, որ գրեթե տանջալից էր գիտակցելը, թե հանկարծ ինչ ամուր ու շողշողուն եմ դարձել: Միևնույն ժամանակ երաժշտությունը ձգվում էր, տարածվում, մրրիկի նման ահագնանում: Այն իր մետաղական թափանցիկությամբ լցնում էր դահլիճը՝ պատերին ճզմելով մեր թշվառ ժամանակը: Ես երաժշտության ներսում եմ: Հայելիների մեջ կրակե գնդեր են գլորվում, ծխի օղակները պարուրում են դրանք ու պտտվում՝ մերթ քողարկելով, մերթ մերկացնելով լույսի դաժան ժպիտը: Գարեջրիս գավաթը պրկվել ու կծկվել է սեղանի վրա, դարձել խիտ, սեղմ, անհրաժեշտ: Ուզում եմ գավաթս վերցնել, զգալ ծանրությունը, ձեռքս մեկնում եմ... Աստվա՛ծ իմ: Ահա թե ինչն է ամենաշատը փոխվել՝ շարժումներս: Ձեռքս այնպես բացվեց, ասես վսեմ մեղեդի լիներ, ու սահեց Նեգրուհու երգի երկայնքով. ինձ թվաց, թե պարում եմ:

Ադոլֆի դեմքը դեռ այնտեղ է՝ շոկոլադագույն պատի վրա, ու շատ մոտ է թվում: Այն պահին, երբ ափս հպվեց գավաթին, նկատեցի Ադոլֆի գլուխը. դրա մեջ վախճանի ակնհայտություն ու

անխուսափելիություն կար: Սեղմում եմ ապակե գավաթն ու նայում եմ Ադոլֆին. ես երջանիկ եմ:

– Ըհը՛:

Ինչ-որ մեկի ձայնն առանձնանում է ընդհանուր ժխորից: Հարևանս է՝ կիսահարբած ծերուկը: Այտերը նստարանի շագանակագույն կաշվի վրա մանուշակագույն բծեր են թվում: Ծերուկը խաղաքարտը ճտտացնում է սեղանին: Աղյուսի տուզ:

Շան գլխով երիտասարդը ժպտում է: Կարմրադեմ խաղացողը սեղանին սեղմված ուշադիր հետևում է նրան՝ ասես պատրաստվելով ցատկի:

– Իսկ ես՝ էսպե՛ս:

Երիտասարդի ձեռքը դուրս է գալիս ստվերից, սպիտակ, ալարկոտ՝ մի ակնթարթ կախված է մնում օդում, հետո հանկարծ բազեի նման կտրուկ ընկնում է ներքև ու խաղաքարտը սեղմում սեղանին: Ճարպոտ կարմրադեմը վեր է թռչում.

– Գրո՛ղը տանի, խփե՛ց:

Կծկված մատների արանքում ուրվագծվում է սրտի թագավորը, հետո խաղաքարտը թարս են շուռ տալիս, ու խաղը շարունակվում է: Ինչքա՞ն հեռվից էր եկել ազնիվ թագավորը, քանի՞ համադրություններ ու անհետացած շարժումներ էին նախապատրաստել իր գալուստը: Բայց ահա ինքն էլ է իր հերթին անհետանում, որ ծնվեն ուրիշ համադրություններ ու ուրիշ շարժումներ, ուրիշ հարձակումներ ու պաշտպանություններ, ճակատագրի շրջադարձեր ու անթիվ-անհամար փոքրիկ արկածներ:

Հուզված եմ, մարմինս ասես ճշգրիտ մեխանիզմ լինի, որ այս պահին անջատված է: Ես որ գիտեմ՝ իսկական արկածներն ինչ են: Հիմա արդեն ոչ մի մանրամասնություն չեմ հիշում, բայց դեռ ունակ եմ իրադարձությունների անշեղ հաջորդականությունը մտքումս վերստեղծելու: Ես կտրել-անցել եմ ծովեր, քաղաքներ եմ թողել հետևումս, բարձրացել եմ գետերի հոսանքներն ի վեր, խորացել անտառների թավուտներում ու միշտ շարժվել դեպի նորանոր քաղաքներ: Իմ կյանքում կանայք են եղել, ես կռվել եմ տղամարդկանց հետ ու երբեք չեմ կարողացել հետ վերադառնալ, այնպես, ինչպես ձայնասկավառակը չի կարող հետ պտտվել: Եվ *ուր* էր

տանում ինձ այդ ամենը: Դեպի հենց այս րոպեն, դեպի այս նստարանը, դեպի երաժշտությամբ լեցուն այս պայծառ պղպջակը:

And when you leave me.

Այո, ես, որ այդքան սիրում էի Հռոմում նստել Տիբրի ափին, Բարսելոնում երեկոյան հարյուր անգամ բարձրանալ ու իջնել Ռամբլասով, ես, որ Անկգորի մոտ՝ Պրահ-Խանի կղզու վրա, տեսել եմ արմատներով սրբազան օձերի տաճարին փաթաթված բանյանը, ես այստեղ եմ, ապրում եմ նույն ակնթարթում, ինչ թուղթ խաղացողները, լսում եմ, թե ինչպես է երգում Նեգրուհին, իսկ դրսում թափառում է թույլ գիշերը:

Զայնասկավառակը կանգ առավ:

Գիշերը՝ քաղցրավուն ու վարանոտ, մտավ ներս: Չի երևում, բայց այստեղ է, շղարշում է լամպերը: Օդում ինչ-որ թանձր բան է զգացվում. գիշերն է: Ցուրտ է: Խաղացողներից մեկը սեղանին շաղ եկած քարտերը հրում է մյուսի կողմը, ով դրանք հավաքում է: Քարտերից մեկը սեղանին է մնում: Չե՞ն տեսնում: Սրտի իննոցն է: Խաղացողներից մեկը վերջապես այն վերցնում ու մեկնում է շան գլխով երիտասարդին:

– Հա՛: Էս էլ սրտի իննոցը:

Վերջ, դուրս եմ գալիս: Մանուշակագույն ծերուկը, մատիտի ծայրը կրծելով, կռանում է թղթի կտորի վրա: Մադլենը թափանցիկ, դատարկ հայացքն ուղղել է վրան: Երիտասարդը սրտի իննոցը պտտում է մատների արանքում: Աստվա՛ծ իմ...

Մի կերպ վեր եմ կենում. դիմացիս հայելու մեջ՝ անասնաբույժի գանգի վերևում, մի անմարդկային դեմք է սահում:

Կինո եմ ուզում գնալ:

Դրսում ինձ լավ եմ զգում. օդում ո՛չ շաքարի քաղցրավուն համը կա, ո՛չ էլ վերմուտի արբեցնող հոտը: Բայց ի՞նչ սառնամանիք է, Աստվա՛ծ իմ:

Ցոթ անց կես է, սոված չեմ, ու կինոներն էլ ժամը իննին են սկսվում. հիմա ի՞նչ անեմ: Պիտի քայլերս արագացնեմ, որ տաքանամ: Չեմ կողմնորոշվում. հետևիս բուլվարը տանում է

դեպի քաղաքի կենտրոնը, դեպի լայն փողոցների վառ լույսերը, դեպի «Պալե Պարամաունտ», «Իմպերիալ», դեպի «Ժաան» հսկայական խանութները: Այդ ամենն ինձ բնավ չի գրավում. հիմա ապերիտիվի ժամն է, իսկ ես արդեն մինչև կոկորդս կուշտ եմ այդ բոլոր վառ, կենդանի իրերից, շներից, մարդկանցից, կամայական շարժվող ու խլրտացող այդ ամբողջ փափուկ զանգվածից:

Թեքվում եմ ձախ, ավելի լավ է խորանամ ահա այն անցքի մեջ, որտեղ ավարտվում է գազի լապտերների շարքը: Հետո Նուար բուլվարով կքայլեմ մինչև Գալվանիի պողոտա: Անցքից սառցաշունչ քամի է փչում. այնտեղ քարերից ու հողից բացի ուրիշ ոչինչ չկա: Իսկ քարերը կարծր են ու չեն շարժվում:

Ճանապարհի սկիզբը բավականին ձանձրալի է. աջ մայթին ծխապատ, գորշ զանգված է՝ վրան այստեղ-այնտեղ ցրված լույսերով, ու խեցիների կույտի աղմուկ է գալիս. հին կառամատույցն է: Դրա ներկայությունը բեղմնավորել է Նուար բուլվարի առաջին հարյուր մետրը՝ Ռըդուտ բուլվարից մինչև Պարադի փողոց՝ ծնունդ տալով մոտ հարյուր լապտերների ու կողք կողքի շարված չորս սրճարանների՝ «Ճամփորդների ռանդևուին» ու ևս երեք ուրիշների, որոնք ցերեկները հանգած են, բայց երեկոյան լուսավորվում են ու սալահատակին լույսի ուղղանկյուններ են գցում: Եվս երեք անգամ սուզվում եմ դեղին լույսի մեջ, հետո տեսնում եմ, թե ինչպես մի ծեր կին դուրս է գալիս «Ռաբաշ» մանրախանութից, գլխաշորը փաթաթում գլխին ու սկսում վազել: Առայժմ՝ վերջ: Ես կանգնած եմ վերջին լապտերի տակ՝ Պարադի փողոցի մայթեզրին: Ասֆալտի ժապավենն այստեղ կտրուկ ընդհատվում է: Փողոցի մյուս կողմում մթություն է ու ցեխ: Անցնում եմ Պարադի փողոցը: Աջ ոտքս ընկնում է ջրափոսի մեջ, գուլպաս լրիվ թաց է: Զբոսանքը սկսվեց:

Մարդիկ Նուար բուլվարի այս հատվածում *չեն ապրում*: Այստեղի կլիման չափազանց դաժան է, իսկ հողը՝ չափազանց անշնորհակալ, որպեսզի կյանքն արմատ գցել ու զարգանալ կարողանա: Սոլեյ եղբայրների երեք սղոցարանները (հենց Սոլեյ եղբայրներն էին փայտ մատակարարում Սեն-Սեսիլ-դը-լա-Մեր եկեղեցու տախտակադրվագ կամարների համար. եկեղեցին ի վերջո հարյուր հազար ֆրանկ նստեց) իրենց բոլոր դռներով ու պատուհաններով նայում են

արևմուտք՝ դեպի Ժան-Բերթ-Կյորուա խաղաղ փողոցը, ու այնտեղ էլ լցնում են իրենց աղմուկն ու հռնդյունը: Իսկ Վիկտոր-Նուար բուլվարին դեմ են տվել իրենց թիկունքները, որոնց արանքներում պարիսպներից բացի ուրիշ ոչինչ չկա: Այդ երեք կառույցները ձախ մայթով ձգվում են չորս հարյուր մետր, ու այս կողմի վրա ոչ լուսամուտ կա, ոչ էլ նույնիսկ գոնե մի օդանցք:

Այս անգամ երկու ոտքով ընկա կեղտաջրի առվի մեջ: Անցնում եմ փողոցը. մյուս կողմում մի մենավոր լապտեր աշխարհի ծայրին կանգնած փարոսի նման լուսավորում է խարխուլ, տեղ-տեղ քանդված ցանկապատը:

Ցանկապատի տախտակներին դեռ պաստառների ծվեններ են կպած: Աստղաձև պատռված կանաչ թղթի վրա ատելությունից ծամածռված գեղեցիկ դեմք է երևում. քթի տակ ինչ-որ մեկը կլոր բեղեր է նկարել: Մի ուրիշ ծվենի վրա դեռ կարելի է վերծանել սպիտակ տառերով գրված մաքրավուն բառը, վրան՝ կարմիր կաթիլներ. գուցեև արյուն է: Չի բացառվում, որ այդ դեմքն ու բառը նույն պաստառից են: Հիմա պաստառը պատառոտված է, ու ըստ սկզբնական մտադրության՝ դրանց միավորող պարզ կապերն անհետացել են, բայց այդ ծռված բերանի, արյան կաթիլների, սպիտակ տառերի ու «ավուն» վերջավորության միջև ինքնըստինքյան առաջացել է մի ուրիշ կապ, ասես ինչ-որ հանցավոր ու անդուլ կիրք փորձում է այդ խորհրդավոր նշանների միջոցով ինքն իրեն արտահայտել: Տախտակների արանքներից փայլում են երկաթուղու լույսերը: Ցանկապատի կողքին մի երկար պատ է ձգվում՝ առանց անցքերի, առանց դռների ու լուսամուտների մի պատ, որ ավարտվում է երկու հարյուր մետր այն կողմ՝ տան կողքին: Ես անցել եմ լապտերի ազդեցության գոտին ու մտնում եմ սև անցքի մեջ: Ստվերս ոտքերիս տակ ճուլվում է փողոցի խավարին, ու ինձ թվում է, թե սուզվում եմ սառցապատ ջրի մեջ: Առջևումս՝ անցքի ամենախորքում՝ խավարի սև շերտերից այն կողմ, աղոտ նշմարվում է վարդագույն մի բիծ. Գալվանի պողոտան է: Հետ եմ նայում. գազի լապտերից այն կողմ՝ շատ հեռվում, դեռ կարելի է լույսի նշույլներ նկատել. կառամատույցն է իր չորս սրճարաններով: Առջևումս ու հետևումս մարդիկ գարեջրատներում խմում ու թուղթ են խաղում: Իսկ այստեղ խավարից բացի ոչինչ չկա:

Քամին ինչ-որ հեռուներից մերթընդմերթ ինձ է հասցնում զանգակի մենավոր, թույլ զրնգոցը: Տների աղմուկը, մեքենաների հռնդյունը, ճիչերն ու հաչոցները երբեք չեն պոկվում լուսավոր փողոցներից, դրանք մնում են տաքության գրկում: Բայց այդ զրնգոցը ծակում-անցնում է մթությունն ու հասնում մինչև այստեղ. այն ավելի ամուր է ու պակաս մարդկային, քան մյուս աղմուկները:

Կանգնում եմ, որ լսեմ: Մրսում եմ, ականջներս ցրտից ցավում են, պիտի որ լրիվ կարմրած լինեն: Բայց ես ինձ մաքուր եմ զգում, շրջապատող մաքրությունը կլանել է ինձ. շուրջս ոչ մի կյանք չկա, քամին փչում է, ուղիղ գծերը կորչում են գիշերվա խորքում: Նուար բուլվարը զուրկ է այն անպարկեշտ տեսքից, որ հատուկ է անցորդների հետ սեթևեթող բուրժուական փողոցներին: Ոչ ոքի մտքով անգամ չի անցել զարդարել այն. այս բուլվարն աստառից բացի ուրիշ ոչինչ չունի: Սա Ժան-Բերթ-Կյորուա փողոցի ու Գալվանի պողոտայի աստառն է: Կայարանի տարածքում բուվիլցիները դեռ ինչ-որ կերպ խնամում են բուլվարը, հազարից մեկ մաքրում են ուղևորների համար: Բայց մի քիչ այն կողմ արդեն լրիվ լքում են դրան, ու բուլվարը կուրորեն մղվում է առաջ՝ ի վերջո բախվելով Գալվանի պողոտային: Քաղաքը մոռացել է այս բուլվարի մասին: Երբեմն միայն որևէ հողագույն բեռնատար է դղրդոցով ու ինչքան հնարավոր է արագ սլանում այստեղով: Այստեղ նույնիսկ ոչ ոքի չեն սպանում, քանի որ ո՛չ մարդասպաններ կան, ո՛չ էլ զոհեր: Նուար բուլվարն անկենդան է, անմարդկային: Քարի նման: Եռանկյունու նման: Բախտս բերել է, որ Բուվիլում այսպիսի բուլվար կա: Սովորաբար նման բաներ միայն մայրաքաղաքներում են հանդիպում. Բեռլինում՝ Նոյքյոլնի կողքին կամ Ֆրիդրիխսհայնի մոտ, Լոնդոնում՝ Գրինվիչի հետևում: Երկար, կեղտոտ, լայն ու անծառ մայթերով միջանցքներ, որտեղ ազատ խաղում է քամին: Դրանք գրեթե միշտ հեռու են կենտրոնից ու սովորաբար այն տարօրինակ թաղամասերում են, որտեղ արտադրվում է քաղաքը՝ բեռնափոխադրումների կառամատույցների, տրամվայների դեպոների, սպանդանոցների ու գազի կայանների մոտ: Անձրևից երկու օր հետո, երբ ամբողջ քաղաքը փռված է արևի ճառագայթների տակ ու պարուրված է խոնավ տաքությամբ, դրանք դեռ սառն են մնում՝ պահպանելով իրենց ամբողջ ցեխն ու

բոլոր ջրափոսերը: Այնտեղ նույնիսկ այնպիսի ջրափոսեր կան, որ երբեք չեն չորանում, բացի տարվա մեջ մի ամսից՝ օգոստոսից:

Սրտխառնոցը մնացել է այնտեղ՝ դեղին լույսի մեջ: Ես երջանիկ եմ. այնքան մաքուր է այս ցուրտը, այս գիշերն այնքան մաքուր է: Արդյոք ես ի՞նքս էլ սառը օդի մի ալիք չեմ: Չունենալ ո՛ք արյուն, ո՛չ ավիշ, ո՛չ մարմին: Հոսել այս երկար ջրանցքով դեպի հեռվում երևացող գունատ բիծը: Լինել ոչ այլ ինչ, քան սառնություն:

Մարդիկ: Երկու ստվեր: Ի՞նչ են կորցրել այստեղ:

Ցածրահասակ կինը քաշում է տղամարդու թևքից: Ու խոսում է արագ, կցկտուր ձայնով: Քամի է, չեմ հասկանում՝ ինչ է ասում:

– Ձայնդ կտրելու ե՞ս, թե՞ չէ,– ասում է տղամարդը:

Կինը շարունակում է խոսել: Հանկարծ տղամարդը նրան հրում է: Վարանելով մի պահ նայում են իրար, հետո տղամարդը ձեռքերը մտցնում է գրպաններն ու առանց հետ նայելու հեռանում է:

Տղամարդն անհետացել է: Հիմա իմ ու կնոջ արանքում ընդամենը մի երեք մետր է մնացել: Ու հանկարծ խռպոտ, ցածր ձայները ներսից պատռում են կնոջը, դուրս են հորդում, պոկվում նրանից ու անասելի ծանրությամբ լցնում ամբողջ փողոցը.

– Շառլ, խնդրում եմ, չէի՞ր լսում՝ ինչ էի ասում: Շառլ, հետ արի, էլի, ես էլ չեմ դիմանում, ախր այնքա՞ն դժբախտ եմ:

Այնքան մոտիկից եմ անցնում, որ կարող եմ դիպչել կնոջը: Մի՞թե... Բայց ո՞նց կարող եմ հավատալ, որ այս բոցկլտացող մարմինը, ցավից վառող այս դեմքը... Եվ այնուամենայնիվ, ճանաչում եմ շարֆը, վերարկուն ու աջ ձեռքի մուգ կարմիր խալը: Իրոք ինքն է. Լյուսին է՝ մեր հավաքարարը: Չեմ համարձակվում օգնություն առաջարկել, բայց ուզում եմ, որ կարիքի դեպքում օգնություն խնդրելու հնարավորություն ունենա, ու առանց հայացքս թեքելու դանդաղ անցնում եմ դիմացով: Լյուսին ակնապիշ նայում է ինձ, բայց կարծես թե չի տեսնում. թվում է՝ ցավից լրիվ իրեն կորցրել է: Մի քանի քայլ էլ եմ անում: Շրջվում եմ...

Հա էլի, Լյուսին է: Ինքն է, բայց կերպարանափոխված, ինքն իրենից դուրս եկած, ու տառապում է՝ խելահեղ շռայլությամբ ծախսելով իր ցավը: Նախանձում եմ իրեն: Ահա կանգնած է փողոցի մեջտեղում՝ ձիգ, ձեռքերը տարածած, ասես սպասելով, թե երբ են դրանց

վրա ստիգմատներ հայտնվելու. բացում է բերանը, սկսում է անձայն խեղդվել: Ինձ թվում է, թե փողոցի երկու կողմերում պատերը մեծանում ու մոտենում են իրար. թվում է, թե Լյուսին ջրհորի հատակին է: Մի քանի վայրկյան սպասում եմ՝ վախենալով, որ Լյուսին հանկարծ կփլվի գետնին. ինքը չափազանց տկար է՝ դիմանալու համար այդ արտառոց ցավին: Բայց չէ, մնում է անշարժ, քարացած իրեն շրջապատող ամեն ինչի նման: Մի պահ մտքովս անցնում է, որ թերևս սխալ կարծիք էի կազմել իր մասին, որ գուցե իր իսկական բնույթը նոր է բացվում իմ առջև...

Լյուսին թույլ հառաչում է: Ձեռքը տանում է կրծքին՝ լայն բացելով զարմացած աչքերը: Չէ, այսքան տառապելու ուժն ինքն իր ներսից չի ստանում: Ուժն իրեն դրսից է տրվել՝ այս բուլվարից: Պետք է բռնել Լյուսիի ուսերից, տանել լույսի տակ, մարդկանց մեջ, ուղեկցել դեպի հարմարավետ, վարդագույն փողոցները. այնտեղ անհնար է այսքան ուժգին տառապել, ու ինքը կփափկի, կվերագտնի իր խոհեմ տեսքն ու կվերադառնա տառապանքների իր սովորական մակարդակին:

Մեջքով եմ շրջվում Լյուսիին: Ի վերջո իր բախտը բերել է: Իսկ ես արդեն երեք տարի է, ինչ չափազանց հանգիստ եմ: Այս ողբերգական միայնության մեջ միակ բանը, որ դեռ կարողանում եմ քաղել, մի քիչ դատարկ մաքրությունն է: Ու հեռանում եմ:

Հինգշաբթի, փասնմեկ անց կես

Երկու ժամ աշխատեցի ընթերցասրահում: Հետո իջա Հիպոտեկային բանկի բակ՝ ծխամորճ ծխելու: Փոքրիկ հրապարակը սալարկված է վարդագույն աղյուսով: Բուվիլցիները հպարտանում են դրանով, որովհետև 18-րդ դարում է կառուցվել: Շամանդ ու Սյուսպեդար փողոցների կողմից հին շղթաներն արգելում են մեքենաների մուտքը: Իրենց շնիկներին զբոսանքի հանած սևազգեստ տիկնայք պատերին կպած սահում են հրապարակի կամարների տակ: Հազվադեպ են ցերեկները դրսում լինում, բայց անցնելիս աղջնակների պես թաքուն ու բավարարված հայացքներ են գցում Գուստավ

Էմպետրազի արձանի վրա: Այդ կանայք հազիվ թե գիտեն պատվանդանին կանգնած բրոնզե հսկայի անունը, բայց հագի ռեդինգոտից ու ցիլինդրից հասկանում են, որ հաստատ բարձրաշխարհիկ մեկն է: Արձանը ձախ ձեռքում բռնել է ցիլինդրը, աջը հանգչում է հաստափոր գրքերի կույտի վրա: Կանայք նրան այնպես են նայում, ասես պատվանդանին իրենց հարազատ պապի բրոնզաձույլ արձանն է վեր խոյանում: Կարիք չունեն երկար նայելու, որպեսզի հասկանան, որ այդ մարդն իրենց պես էր մտածում, ճիշտ և ճիշտ իրենց պես՝ առանց բացառության ամեն ինչի մասին: Իր ողջ հեղինակությունն ու անչափելի գիտելիքները, որ քաղել է ծանր ձեռքի տակ ճզմված գրքերից, այդ մարդը նվիրել է նրանց նեղ, կարծրացած գաղափարներին ծառայելու գործին: Սևազգեստ տիկնայք կարող են հանգիստ շունչ քաշել, թեթև սրտով զբաղվել տնային հոգսերով ու զբոսանքի հանել իրենց շնիկներին. իրենք ուսերից թոթափել են իրենց հայրերից ժառանգած սուրբ ու բարեպաշտ գաղափարները պաշտպանելու բեռը. դրանց պաշտպանի դերը ստանձնել է բրոնզե աժդահան:

«Մեծ հանրագիտարանը» մի քանի տող է նվիրել այդ անձնավորությանը. ես դրանք անցած տարի եմ կարդացել: Հանրագիտարանը դրել էի լուսամուտագոգին ու կարդալիս ապակու միջով նայում էի Էմպետրազի կանաչ գանգին: Իմացա, որ իր գործունեության ամենաածաղկուն շրջանը 1890-ականներն էին: Եղել է ակադեմիայի վերահսկիչ: Նկարել է սքանչելի կտավներ, հրատարակել երեք գիրք՝ «Հռչակը և հին հույները» (1887), «Ռոլենի մանկավարժությունը» (1891) և մի բանաստեղծական ավետարան՝ 1899-ին: Մահացել է 1902-ին՝ դառը վիշտ պատճառելով իր ենթականերին և բարձրաձաշակ անձանց:

Հենվում եմ գրադարանի ճակատային պատին ու խորը քաշում եմ ծխամորճս, որ սպառնում է մարել: Նայում եմ, թե ինչպես մի ծեր տիկին վախվորած դուրս է գալիս կամարների տակից ու համառ, խորաթափանց հայացքով սկսում է նայել Էմպետրազին: Հետո հանկարծ հավաքում է իր ունեցած ամբողջ խիզախությունն ու այն ողջ արագությամբ, որին ընդունակ են հետևի թաթիկները, կտրումանցնում է հրապարակն ու մի պահ կանգ է առնում արձանի առաջ՝

անձայն շարժելով ծնոտները: Ապա փախուստի է դիմում ու վարդագույն սալահատակին ընկած սև ստվերի նման անհետանում է պատի ճեղքերից մեկի մեջ:

Չի բացառվում, որ վարդագույն աղյուսներով սալարկված ու տներով շրջապատված այս հրապարակը 1800-ականներին ուրախ տեսք է ունեցել: Հիմա այստեղ ինչ-որ չոր, տհաճ, անգամ անըմբռնելիորեն սարսափելի բան կա: Մեղավորն իր պատվանդանին կանգնած մարդն է: Բրոնզից ձուլելով այս գիտնականին՝ նրան վերածել են չար կախարդի:

Նայում եմ Էմպետրազի դեմքին: Աչքեր չունի, քիթը հազիվ է երևում, մորուքը ծածկված է այն տարօրինակ խոցերով, որոնք երբեմն համաճարակի նման վարակում են որևէ թաղամասի բոլոր արձանները: Սառել է ողջույնի դիրքում. ժիլետի վրա՝ սրտի հատվածում, վառ կանաչ բիծ կա: Հիվանդոտ, նվազ տեսք ունի: Չէ, ողջ չէ, սակայն անկենդան էլ չես ասի: Նրանից ինչ-որ աղոտ հզորություն է ճառագում՝ ուժեղ քամու նման հրելով ինձ. Էմպետրազը շատ կուզենար ինձ վռնդել Հիպոտեկային բանկի հրապարակից: Բայց ես չեմ հեռանա, քանի դեռ մինչև վերջ չեմ ծխել այս ծխամորճը:

Հանկարծ մեջքիս հետևում մի մեծ, նիհար ստվեր է հայտնվում: Ցնցվում եմ:

– Ներեցեք, պարոն, չէի ուզում ձեզ խանգարել: Նկատեցի, որ ձեր շուրթերը շարժվում են: Անկասկած ձեր գրքից նախադասություններ եք կրկնում:– Ծիծաղում է: – Երևի ուզում եք ալեքսանդրյան հանգերը հեռու վանել:

Շշմած հայացքս հառում եմ Ինքնուսի դեմքին: Զարմացած է, որ զարմացած եմ.

– Պարոն, չէ՞ որ արձակ գրականության մեջ հարկավոր է ջանասիրաբար խուսափել ալեքսանդրյան հանգերից:

Մի թեթև աչքից ընկնում եմ: Հարցնում եմ, թե ինչ է անում այստեղ այս ժամին: Ղեկավարն այսօր արձակուրդ է տվել, բացատրում է Ինքնուսը, ու ինքն ուղիղ եկել է այստեղ. որոշել է ճաշի չգնալ ու մինչև գրադարանի փակվելը կարդալու է: Դադարում եմ լսել, բայց ինքը երևի արդեն շեղվել է նախնական թեմայից, որովհետև հանկարծ ականջիս է հասնում.

– ...Ձեզ նման գիրք գրելու երջանկություն ունենալ:

Ինչ-որ բան է պետք պատասխանել:

– Երջանկություն...– կասկածով լի տոնով ասում եմ ես:

Սխալ ընկալելով պատասխանիս իմաստը՝ Ինքնուսը շտապում է ինքն իրեն ուղղել.

– Պիտի ասեի «տաղանդ ունենալ», պարոն:

Բարձրանում ենք աստիճաններով: Աշխատելու ցանկություն չունեմ: Ինչ-որ մեկը սեղանին «Էժենի Գրանդեն» է թողել, քսանյոթերորդ էջն է բաց: Մեքենայաբար վերցնում եմ գիրքը, սկսում եմ կարդալ քսանյոթերորդ էջը, հետո՝ քսանութերորդը. քաջությունս չի հերիքում սկզբից սկսեմ: Ինքնուսն առույգ քայլերով ուղղվում է դեպի պատի տակի գրապահարանները, երկու հատոր է բերում ու ոսկոր գտած շան տեսքով դնում է սեղանին:

– Ի՞նչ եք կարդում:

Ոնց որ թե խուսափում է պատասխանելուց. մի պահ տատանվում է, շփոթված փախցնում աչքերը, հետո դժկամությամբ ինձ է մեկնում գրքերը: Լարբալետիեի «Տորֆը և տորֆագոյացումն» է ու Լաստեքսի «Հիտոպադեսա կամ օգտակար խրատները»: Եվ ի՞նչ: Չեմ հասկանում՝ ինչից է քաշվում. լրիվ անմեղ գրականություն է: Խիղճս հանգստացնելու համար համենայնդեպս մի քիչ թերթում եմ «Հիտոպադեսա»-ն ու վսեմ ճառերից բացի ուրիշ ոչինչ չեմ տեսնում:

Ժամը երեքը

Մի կողմ դրեցի «Էժենի Գրանդեն» ու գործի անցա, չնայած առանց առանձնակի խանդավառության: Ինքնուսը, նկատելով, որ գրում եմ, պատկառանքով հետևում է ինձ: Ժամանակ առ ժամանակ գլուխս մի քիչ բարձրացնում եմ ու տեսնում այդ անչափելի լայն, բարձր օձիքը, որտեղից ցցված է նրա՝ ճտին վայել վիզը: Հագի շորերը մաշված ու տրորված են, բայց սպիտակեղենը կուրացուցիչ ճերմակ է: Հենց նոր գնաց ու նույն դարակից մի ուրիշ գիրք էլ բերեց. հասցրի կարդալ գլխիվայր շրջված վերնագիրը՝ «Կոդըբեկի նետը», նորմանդյան ժամանակագրություն, հեղինակ՝ օրիորդ Ժյուլի

Լավերն: Գրական դաշտում Ինքնուսի կատարած ընտրությունները չեն դադարում ապշեցնել ինձ:

Հանկարծ վերհիշում եմ այն բոլոր հեղինակների ազգանունները, ում գրքերը վերջերս վերցնում է՝ Լամբեր, Լանգլուա, Լարբալետիե, Լաստեքս, Լավերն: Միտքս պայծառանում է. ես հասկացել եմ Ինքնուսի մեթոդը. նա կրթվում է այբբենական կարգով:

Մի տեսակ հիացմունքով նայում եմ նրան: Ի՞նչ կամք պիտի ունենա, որպեսզի քայլ առ քայլ, համառորեն իրականացնի այդքան ահռելի մի նախաձեռնություն: Մի օր՝ յոթ տարի առաջ (ինձ ասել է, որ արդեն յոթ տարի է, ինչ ինքնակրթությամբ է զբաղվում), հանդիսավոր մտել է այս դահլիճ: Հայացքը սահեցրել է պատերի երկայնքով շարված անթիվ-անհամար հատորների վրայով ու ասել է՝ գրեթե ինչպես Ռաստինյակը. «Դե, մարդկային գիտելիքներ, տեսնենք, թե ով ում»: Հետո գնացել-վերցրել է ամենաաջ կողմի գրապահարանի ամենաառաջին գիրքն ու իրար միախառնված պատկառանքի, վախի ու անսասան վճռականության զգացումով բացել է առաջին էջը: Հիմա հասել է Լ տառին: Յ-ին հաջորդել է Կ-ն, Կ-ին հաջորդել է Լ-ն: Կարծրաթևավորների ուսումնասիրությունից դաժանաբար անցել է քվանտային տեսությանը, Թամերլանի մասին աշխատությունից՝ դարվինիզմը ծաղրող կաթոլիկական մի պամֆլետի, և վայրկյան անգամ շփոթության չի մատնվել: Ու կարդացել է ամեն ինչ. իր գլխում տեղավորել է պարթենոգենեզի մասին գիտությանը հայտնի ամեն ինչի ուղիղ կեսը, կենդանահատման դեմ ուղղված փաստարկների ուղիղ մեկ երկրորդը: Նրա հետևում ու առջևում մի ամբողջ տիեզերք է: Ու մոտենում է այն օրը, երբ նա, փակելով ամենաձախ դարակի ամենավերջին գիրքը, ինքն իրեն կհարցնի. «Իսկ հիմա՞ ինչ»:

Ինքնուսի ընդմիջման ժամն է. պարզամիտ տեսքով նստած՝ հաց ու մի սալիկ «Գալա Պետեր» շոկոլադ է ծամում: Կոպերը կիսափակ են, ու ես հանգիստ կարող եմ հիանալ նրա գեղեցիկ, կոր թարթիչներով, որ ասես կնոջ թարթիչներ լինեն: Վրայից հին ծխախոտի հոտ է գալիս, որին, երբ շնչում է, խառնվում է շոկոլադի քաղցր բույրը:

Քիչ էր մնում նորից ընկնեի հայելու թակարդը: Հայելուց խուսափեցի, բայց փոխարենն ընկա լուսամուտի ծուղակի մեջ: Անգործ, ձեռքերս թափ տալով մոտենում եմ պատուհանին: Շինհրապարակը, Ցանկապատը, Հին Կայարանը. Հին Կայարանը, Ցանկապատը, Շինհրապարակը: Այնքան ուժեղ եմ հորանջում, որ աչքերս արցունքոտվում են: Աջ ձեռքումս ծխամորճս է, ձախում՝ ծխախոտատուփս: Պիտի ծխամորճս լցնեմ, բայց քաջությունս չի հերիքում: Ձեռքերս կախ են ընկում, ճակատս սեղմում եմ ապակու շրջանակին: Այն ծեր կինն ինձ ջղայնացնում է: Համառորեն, մոլորված աչքերով, դանդաղ քայլում է առաջ: Երբեմն վախեցած տեսքով կանգ է առնում, ասես ինչ-որ անտեսանելի վտանգ է զգացել: Արդեն պատուհանիս տակ է. քամին շրջազգեստը փաթաթել է ծնկներին: Կանգ առավ, փորձում է ուղղել գլխաշորը: Ձեռքերը դողում են: Շարժվում է առաջ. հիմա մենակ մեջքն եմ տեսնում: Պառավ ջադու: Ենթադրում եմ, որ թեքվելու է աջ՝ Նուար բուլվար: Մինչև խաչմերուկ դեռ մի հարյուր մետր էլ ունի. այս արագությամբ մի տասը րոպեից հազիվ էլ հասնի: Դեռ տասը րոպե էլ մնալու եմ այսպես կանգնած՝ ճակատս կպցրած պատուհանին, ու նայելու եմ իրեն: Ու դեռ մի քսան անգամ էլ կկանգնի, կշարժվի առաջ, նորից կկանգնի...

Ես *տեսնում եմ* ապագան: Հենց այստեղ է՝ փողոցում՝ ընդամենը մի քիչ ավելի խամրած, քան ներկան: Ապագայի ինչի՞ն է պետք իրականանալը: Դրանից ի՞նչ օգուտ կունենա: Պառավը կաղին տալով հեռանում է, կանգ է առնում, ուղղում գլխաշորի տակից դուրս եկած մոխրագույն մազերը: Քայլում է առաջ, մի քիչ առաջ այստեղ էր, հիմա՝ այնտեղ... Արդեն չեմ հասկանում, թե հետս ինչ է կատարվում. տեսնո՞ւմ եմ արդյոք նրա շարժումները, թե՞ *կանխատեսում*: Ներկան ապագայից այլևս չեմ տարբերում, և այնուամենայնիվ, ինչ-որ բան *տևում* է, իրականանում է կամաց-կամաց. պառավը առաջ է քայլում դատարկ փողոցում՝ հերթով մայթին դնելով իր մեծ, տղամարդկային կոշիկները: Հենց սա է ժամանակը, մերկ ժամանակը, այն դանդաղ է գոյանում, ստիպում է երկար սպասել իրեն ու երբ վերջապես գալիս է, սիրտդ սկսում է խառնել, որովհետև հասկանում

ես, որ արդեն վաղուց այստեղ էր: Պառավը մոտենում է փողոցի անկյունին. հիմա ոչ այլ ինչ է, քան սև ցնցոտիների կծիկ: Լավ, ես դեմ չեմ, թող լինի, էլի ինչ-որ նորություն է, մի քիչ առաջ դա էլ չկար: Բայց այդ նորությունը խամրած է, տրորված, այն երբեք չի կարող զարմացնել: Հիմա անկյունից կթեքվի մյուս փողոց: Սկսում է թեքվել: Անցնում է մի ամբողջ հավերժություն:

Պոկվում եմ լուսամուտից ու սկսում երերալով քայլել սենյակում. կպչում եմ հայելուն, նողկանքով նայում ինձ. անցնում է ևս մեկ հավերժություն: Վերջապես ազատվում եմ իմ պատկերից ու փլվում անկողնուս վրա: Նայում եմ առաստաղին. լավ կլիներ՝ քնեի:

Հանգիստ: Հանգիստ: Արդեն չեմ զգում, թե ինչպես է ժամանակը կողքովս սահում՝ թեթևակի հպվելով ինձ: Առաստաղի վրա պատկերներ եմ տեսնում: Սկզբում լույսի օղակներ, հետո՝ խաչեր: Պատկերները ճախրում են օդում: Ապա մի ուրիշ պատկեր է հայտնվում, այս անգամ՝ փակ աչքերիս խորքում: Ինչ-որ հսկայական, ծնկաչոք կենդանի է: Տեսնում եմ առջևի թաթերն ու թամբը: Մնացած ամեն ինչ մառախուղով է ծածկված: Այնուամենայնիվ ճանաչում եմ պատկերը. քարից կապած այն ուղտն է, որ Մարակեշում եմ տեսել: Կենդանին վեց անգամ իրար հետևից ծնկեց ու ոտքի կանգնեց, իսկ երեխաները չորս կողմից ծիծաղում ու ճիչերով խրախուսում էին նրան:

Երկու տարի առաջ ամեն ինչ հրաշալի էր. հերիք էր՝ աչքերս փակեի, ու գլուխս իսկույն սկսում էր փեթակի նման բզզալ, աչքիս առաջ էին գալիս տեսածս դեմքերը, ծառերը, տները, Կամայիշիի այն ճապոնուհին, որ մերկ լողանում էր տակառում, սպանված ռուսը՝ ահռելի բաց վերքը կրծքին, կողքին՝ իր արյան լճակը: Կրկին զգում էի մուսկուսի համը, շնչում էի այն յուղի հոտը, որով կեսորին ցողում են Բուրգոսի փողոցները, զգում էի Տետուանի փողոցներում տարածվող սամիթի բույրը, լսում էի հույն հովիվների սուլոցները, և այդ ամենը հուզում էր ինձ: Բայց այդ ուրախությունս վաղուց արդեն հնացել ու մաշվել է: Մի՞թե այսօր ամեն ինչ նորից է ծնվելու:

Բարկ արևը կախարդական լապտերի նման սահում է գլխիս մեջ: Արևին հաջորդում է մի կտոր կապույտ երկինք: Մի քանի անգամ

ցնցվելուց հետո պատկերն անշարժանում է: Ներսս լրիվ ոսկեզօծ է: Արդյոք ո՞ր մարոկկոյան (կամ ալժիրյան, կամ սիրիական) կեսօրից է հանկարծ պոկվել այս բռնկումը: Ես սուզվում եմ դեպի անցյալը գլորվող հոսանքների մեջ:

Մեկնես: Ի՞նչ տեսք ուներ այն լեռնցին, որ վախեցրեց մեզ նրբանցքում՝ Բերդենի մզկիթի ու թթենու ստվերում ծվարած այն գողտրիկ հրապարակի միջև: Ուղիղ մեզ վրա էր գալիս: Աննին իմ աջ կողմում էր: Թե՞ ձախ:

Արևն ու կապույտ երկինքն ընդամենը խաբկանք էին: Արդեն երևի հարյուրերորդ անգամ եմ նույն թակարդն ընկնում: Հիշողություններս ասես սատանայի քսակում զրնգացող ոսկեդրամներ լինեն. երբ քսակը բացում ես, մեջը չոր տերևներից բացի ոչինչ չես գտնում:

Լեռնցուն հիմա այլևս չեմ տեսնում. տեսնում եմ միայն մի կաթնագույն բիծ կույր ու դուրս պրծած աչքի տեղում: Չնայած՝ արդյոք դա իրո՞ք նրա աչքն է: Բաքվում վիժումների պետական հիվանդանոցների գործունեության սկզբունքն ինձ բացատրող բժշկի մի աչքն էլ էր կույր, ու երբ փորձում եմ դեմքը հիշել, կրկին նույն սպիտակավուն բիծն է հայտնվում: Նորերի պես այդ երկուսն էլ ընդամենը մեկ ընդհանուր աչք ունեն, որ հերթով փոխանցում են միմյանց:

Իսկ Մեկնեսի հրապարակի հարցը, չնայած որ ժամանակին ամեն օր գնում էի այնտեղ, շատ ավելի պարզ է. ես այդ հրապարակն այլևս երբեք չեմ տեսնում: Իմ մեջ միայն մի աղոտ զգացում է մնացել, որ այն գողտրիկ էր, և անքակտելիորեն իրար ձուլված այս երեք բառերը՝ Մեկնեսի գողտրիկ հրապարակը: Իհարկե, եթե փակեմ աչքերս կամ թափառող հայացքս ուղղեմ առաստաղին, կկարողանամ մտքումս վերստեղծել այդ տեսարանը. հեռվում երևացող ծառի ֆոնին ինչ-որ մութ ստվեր վազում է վրաս: Բայց գիտեմ, որ այդ ամենը ես եմ հորինում, որպեսզի հասնեմ իմ ուզած արդյունքին: Մարոկկացին բարձրահասակ ու ոսկրոտ էր, և սակայն ես իրեն տեսա միայն այն պահին, երբ արդեն դիպչում էր ինձ: Հետևաբար *գիտեմ*, որ նա բարձրահասակ էր ու ոսկրոտ. որոշ համառոտ տեղեկություններ դեռ չեն ջնջվել հիշողությունիցս: Բայց ես այլևս ոչինչ չեմ տեսնում: Ու հիմա ինչքան էլ որ քրքրում եմ

անցյալս, ընդամենը պատկերների ծվեններ եմ երևան հանում, ու նույնիսկ չգիտեմ էլ, թե դրանք ինչ են նշանակում՝ հիշողությունն՞ր են, թե՞ հորինվածք:

Ու հաճախ այդ ծվեններն էլ են արդեն անհետ կորել. մնացել են միայն բառեր, ուրիշ ոչինչ: Ես դեռ կարող եմ պատմություններ պատմել, ընդ որում՝ շատ լավ (ինչ վերաբերում է հետաքրքիր պատմություններին, ինձ հետ ոչ ոք չի կարող ոտք մեկնել, բացի երևի ծովային սպաներից ու պրոֆեսիոնալ պատմիչներից), բայց դրանք ընդամենը դատարկ ձևեր են: Դրանք ինչ-որ մեկի մասին են, որ այսինչ կամ այնինչ բաներն է անում: Բայց այդ մարդը ես չեմ, ես իր հետ ոչ մի ընդհանուր բան չունեմ: Ինքը թափառում է այնպիսի երկրներում, որոնց մասին այլևս գրեթե ոչ մի տեղեկություն չունեմ, ոչ ավել, քան եթե երբեք այդ երկրներում եղած չլինեի: Երբեմն պատմություններիս մեջ արտաբերում եմ զանազան գեղեցիկ անուններ, որ կարելի է կարդալ քարտեզներում, օրինակ՝ Արանխես կամ Քենթրբերի: Այդ անուններն իմ մեջ լրիվ նոր պատկերներ են արթնացնում, ինչպես այն ընթերցողների մոտ, ովքեր երբեք չեն ճանապարհորդել. բառերը խթանում են երևակայությունս, ուրիշ ոչինչ:

Եվ սակայն հարյուր մեռած պատմությունների դիմաց մեկ-երկու ողջ պատմություն դեռ պահպանվել է: Ես խիստ զգույշ եմ դրանց արթնացնում հիշողությանս մեջ, խիստ հազվադեպ, որ հանկարծ չմաշվեն: Մտքումս որսում եմ դրանցից մեկը, վերանայում եմ միջավայրը, գործող անձանց, իրենց վարքը: Ու հանկարծ դադարեցնում եմ ամեն ինչ. մաշվածություն եմ զգում, տեսնում եմ, թե ինչպես է զգացումների շերտի տակից դուրս ցցվում ինչ-որ մի բառ: Կանխազգում եմ, որ այդ բառը շուտով գրավելու է ինձ համար թանկ բազմաթիվ պատկերների տեղը: Եվ տեղնուտեղը կանգ եմ առնում, աշխատում եմ արագ ինչ-որ ուրիշ բանի մասին մտածել. չեմ ուզում հյուծել հիշողություններս: Բայց ապարդյուն. հաջորդ անգամ, երբ փորձեմ արթնացնել նույն հիշողություններս, դրանց մի զգալի մասն արդեն մեռած կլինի:

Թույլ, անհաստատ փորձում եմ կանգնել, ուզում եմ սեղանի տակի արկղից հանել Մեկնեսի լուսանկարներս: Ի՞նչ իմաստ ունի:

Այդ բոլոր խթանիչ միջոցներն այլևս ոչ մի ազդեցություն չունեն հիշողությանս վրա: Վերջերս մի հին, խամրած լուսանկար էի գտել: Ժպտացող կին էր՝ ավազանի դիմաց: Երկար նայում էի ու չէի ճանաչում: Հետո շրջեցի լուսանկարն ու կարդացի. «Աննի: Պորտսմութ, ապրիլի 7, 27թ.»:

Դեռ երբեք այսօրվա պես ուժգին չէի զգացել, որ զուրկ եմ գաղտնի չափումներից, որ պարփակված եմ ինքս իմ մարմնի մեջ, սահմանագծված եմ դրա խորքերից պղպջակների պես բարձրացող թեթև մտքերով: Ես իմ հիշողություններն իմ ներկայից եմ կառուցում: Ես արկանված ու լքված եմ ներկայի մեջ: Փորձում եմ միավորվել անցյալիս հետ, բայց ապարդյուն. ես անկարող եմ փախչել ինքս ինձնից:

Դուռը ծեծում են: Ինքնուսն է. լրիվ մոռացել էի նրա մասին: Խոստացել էի, որ ճամփորդական լուսանկարներս ցույց կտամ: Գրողը դրան տանի:

Նստում է աթոռին. լարված հետույքը հպվում է թիկնակին, չոր, չծալվող կուրծքը թեքել է առաջ: Մահճակալիցս ցատկում եմ ներքև ու վառում եմ լույսը:

– Ի՞նչ կարիք կար, պարոն: Առանց դրա էլ էր շատ հարմար:

– Մութ է, լուսանկարները չեն երևա:

Չի կողմնորոշվում, թե գլխարկն ինչ անի. ձեռքից վերցնում եմ:

– Իրո՞ք, պարոն: Իսկապե՞ս ուզում եք ցույց տալ ձեր լուսանկարները:

– Իհարկե:

Չոր հաշվարկ է. հույս ունեմ, որ քանի դեռ նկարներս է նայում, գոնե լուռ կմնա: Սուզվում եմ սեղանի տակ, արկղը հրում եմ Ինքնուսի լաքապատ կոշիկների մոտ ու մի խուրձ լուսանկարներ ու փոստային բացիկներ եմ լցնում ծնկներին. Իսպանիան է ու Իսպանական Մարոկկոն:

Եվ սակայն նրա ծիծաղկոտ ու բաց դեմքն ինձ հստակ ցույց է տալիս, որ չարաչար սխալվում էի՝ հուսալով բերանն այդքան հեշտ փակել: Մի արագ հայացք է նետում Իգուելդո լեռան վրայից նկարված Սան Սեբաստիանին, լուսանկարը զգուշորեն դնում է սեղանին ու մի քանի վայրկյան լռում: Հետո հոգոց է հանում.

– Է՛հ, պարոն, գիտե՞ք ձեր բախտն ինչքան է բերել: Եթե մարդիկ ճիշտ են ասում, ճամփորդությունները լավագույն դպրոցն են: Իսկ դուք համաձա՞յն եք, պարոն:

Ես ինչ-որ անորոշ շարժում եմ անում: Բարեբախտաբար ինքը դեռ չի վերջացրել:

– Ճամփորդելուց երևի ամբողջ կյանքդ տակնուվրա է լինում: Եթե հանկարծ մի օր կարողանայի ճամփորդության մեկնել, ինձ թվում է՝ ուղևորվելուց առաջ գրի կառնեի բնավորությանս բոլոր՝ նույնիսկ ամենաչնչին գծերը, որպեսզի վերադառնալուց հետո համեմատեի՝ ինչ էի ու ինչ եմ դարձել: Գիտեք, ես կարդացել եմ, որ որոշ ճանապարհորդներ այնքան էին արտաքնապես ու հոգեպես փոխվում, որ վերադառնալիս նույնիսկ ամենամոտ հարազատները չէին ճանաչում:

Ձեռքի մեջ լուսանկարների մի հաստ տրցակ է ցրված պտտում: Հետո մեկը վերցնում ու առանց նայելու դնում է սեղանին: Ապա հանկարծ կենտրոնանում է ու հայացքը հառում Բուրգոսի տաճարի ամբիոններից մեկի վրա քանդակած սուրբ Հերոնիմուսի լուսանկարին:

– Իսկ դուք Բուրգոսում տեսե՞լ եք գազանների կաշվից սարքած Քրիստոսին: Մի շատ հետաքրքիր գիրք կա, որ պատմում է գազանների կամ նույնիսկ մարդու կաշվից սարքած արձանների մասին, պարոն: Իսկ սև Աստվածամո՞րը: Բայց կարծեմ այդ մեկը ոչ թե Բուրգոսում էր, այլ Սարագոսայում, չէ՞: Թե՞ Բուրգոսում էլ կա: Ու ուխտագնացներն էլ այդ արձանը համբուրում են, չէ՞: Նկատի ունեմ՝ Սարագոսայինը: Իսկ ճի՞շտ է, որ հատակի սալիկներից մեկի վրա դեռ պահպանվել է նրա ոտնահետքը: Ու որ սալիկը փոսի մեջ է: Իսկ մայրերն իրո՞ք իրենց երեխաներին հրում են այդ փոսի մեջ:

Ինքնուսն առանց թեքվելու երկու ձեռքով հրում է երևակայական երեխային: Այնպիսի տեսք ունի, ասես Արտաքսերքսեսի ընծաներն է մերժում:

– Ա՛խ, պարոն, սովորույթներն այնքան... Այնքա՜ն հետաքրքիր բաներ են:

Մի թեթև շնչակտուր եղած՝ իմ կողմ է ցցում էշին վայել իր մեծ ծնոտը: Վրայից ծխախոտի ու ճահճացած ջրի հոտ է գալիս:

Գեղեցիկ, թափառող աչքերը վառվում են կրակի գնդերի պես, ցանցառ մազերից բարձրացող գոլորշին լուսապսակի նման փաթաթվել է գանգին: Այդ գանգի ներսում սամոյեդները, նյամ-նյամ ցեղի մարդիկ, Մադագասկարի բնիկները, Հրո երկրի վայրենիները հանդիսավոր զբաղվում են ամենատարօրինակ ծեսերով, ուտում են իրենց ծեր հայրերին ու իրենց երեխաներին, ուշագնաց լինելու չափ պտտվում են տամտամի ձայների տակ, ընկնում ամոկի[1] կատաղության մեջ, վառում իրենց մեռելներին, փռում կտուրների վրա, ջահով լուսավորված նավակով հանձնում գետի հոսանքին, կենակցում ում հետ պատահի՝ մայրը որդու հետ, հայրը աղջկա, եղբայրը քրոջ, խեղում ու ամորձատում են իրենք իրենց, շուրթերից սկավառակներ են կախում ու ձգում ներքև, հրեշավոր կենդանիներ են խարանում թիկունքներին:

– Կարո՞ղ ենք արդյոք կրկնել Պասկալի այն խոսքերը, որ սովորույթը մարդու երկրորդ բնույթն է:

Իր սև աչքերի հայացքը մեխել է աչքերիս մեջ. պատասխան է աղաչում:

– Նայած,– ասում եմ:

Շունչը տեղն է բերում.

– Ես էլ էի ինքս ինձ այդպես ասում, պարոն: Բայց ինձ դեռ չեմ վստահում. դրա համար պիտի ամեն ինչ կարդացած լինես:

Հաջորդ լուսանկարը նրան էքստազի է հասցնում.

– Սեգովիա՜: Սեգովիա՜ն է,– ցնծությամբ ճչում է նա:– Ես Սեգովիայի մասին մի գիրք եմ կարդացել:

Հետո որոշակի արժանապատվությամբ ավելացնում է.

– Հեղինակի անունը չեմ հիշում, պարոն: Երբեմն հիշողության նման կորուստներ եմ ունենում: Ն... Նո... Նոդ...

– Հնարավոր չէ,– աշխույժ պատասխանում եմ ես,– դուք դեռ ընդամենը Լավերնին եք հասել:

Տեղնուտեղը զղջում եմ ասածիս համար: Ի վերջո ինձ երբեք չի պատմել իր ընթերցանության սկզբունքի մասին. երևի գաղտնի է պահում իր այդ մոլուցքը: Եվ իրոք այլայլվում է, լացակումած տեսքով

---

[1] Մալայա - ինդոնեզական ցեղերին բնորոշ հոգեկան հիվանդագին վիճակ. կատաղի, կույր զայրույթ *(ծ. թ.)*:

առաջ է ցցում հաստ շուրթերը: Հետո գլուխը կախում է ու մոտ տասը բացիկ նայում է կատարյալ լռության մեջ:

Սակայն կես րոպե հետո արդեն հստակ տեսնում եմ, որ ներսում ահագնանում է խանդավառությունը. եթե չխոսի, կպայթի.

– Երբ կրթությունս ավարտեմ (ես դեռ մի վեց տարի էլ նախատեսում եմ դրա համար), ուզում եմ միանալ, եթե թույլ տան, այն ուսանողներին ու դասախոսներին, ովքեր ամեն տարի ուղևորվում են Մերձավոր Արևելք: Պիտի մի քանի տեղեկություն ճշտեմ,– ավելացնում է մեղրածոր ձայնով,– ու նաև շատ կուզեի, որ հետս ինչ-որ անսպասելի բան կատարվեր, ինչ-որ նոր բաներ ապրեի, արկածներ, մի խոսքով:

Ձայնն իջեցրել է ու խորամանկ տեսք է ընդունել:

– Ի՞նչ արկածներ,– զարմացած հարցնում եմ ես:

– Ինչ տեսակ ասես, պարոն: Սխալ գնացք ես նստում, իջնում անծանոթ քաղաքում, կորցնում դրամապանակդ, քեզ սխալմամբ ձերբակալում են, գիշերը բանտում ես անցկացնում: Պարոն, կարծում եմ, որ արկածը կարելի է սահմանել այսպես. իրադարձություն, որը դուրս է սովորականի սահմաններից, սակայն պարտադիր չէ, որ արտասովոր լինի: Ոմանք խոսում են արկածների կախարդանքի մասին: Ձեր կարծիքով այդ արտահայտությունը ճի՞շտ է: Կուզեի ձեզ մի հարց տալ, պարոն:

– Ի՞նչ հարց:

Կարմրում է ու ժպտում.

– Գուցե անհամեստ թվա...

– Ոչինչ, ասեք:

Կռանում է դեպի ինձ ու աչքերը կիսափակ հարցնում.

– Դուք շա՞տ արկածներ եք ունեցել, պարոն:

Մեքենայորեն պատասխանում եմ «մի քանի» ու ընկրկում, որ խուսափեմ նրա հոտած շնչառությունից: Իրոք որ մեքենայորեն պատասխանեցի՝ առանց մտածելու: Առհասարակ, իրականում նույնիսկ բավականին հպարտ եմ, որ այդքան շատ արկածներ եմ ունեցել: Բայց այսօր այդ բառերն արտասանելուն պես զգացի, որ սոսկալի զայրանում եմ ինքս ինձ վրա. ինձ հիմա թվում է, որ ստում եմ, որ ամբողջ կյանքումս արկածի նշույլ անգամ չեմ ունեցել կամ

ավելի շուտ, որ այլևս գաղափար անգամ չունեմ, թե այդ բառն ինչ է նշանակում: Միևնույն ժամանակ ուսերիս վրա ծանրանում է նույն վիատությունը, որ ճնշում էր ինձ չորս տարի առաջ՝ Հանոյում, երբ Մերսիեն ինձ ստիպում էր իր հետ գնալ, իսկ ես առանց պատասխանելու սևեռվել էի կխմերական արձանիկի վրա: Ու կողքիս կրկին հայտնվում է ՄԻՏՔԸ՝ նույն թանձր, սպիտակ զանգվածը, որ այն ժամանակ այդքան նողկալի էր ինձ համար: Չորս տարի է՝ չէի տեսել:

– Կարո՞ղ եմ արդյոք խնդրել...– ասում է Ինքնուսը:

Գրողը տանի: Հիմա էլ ուզում է, որ այդ փառավոր արկածներից մեկը պատմեմ: Չէ, այդ մասին այլևս բառ անգամ արտասանելու ցանկություն չունեմ:

– Նայեք,– ասում եմ՝ կռանալով նրա նեղ ուսերի վրայով ու մատս դնելով լուսանկարներից մեկի վրա,– իսկ այս մեկը Սանտիլիանան է՝ Իսպանիայի ամենասիրուն գյուղերից մեկը:

– Ժիլ Բլազի Սանտիլիանա՞ն: Ես չէի էլ հավատում, որ իրոք գոյություն ունի: Ա՜խ, պարոն, ինչքա՜ն ուսանելի բան է ձեզ հետ զրուցելը: Միանգամից երևում է, որ շատ եք ճանապարհորդել:

Դուռը փակեցի Ինքնուսի դեմքին՝ նախապես գրպանները լցնելով բացիկներով ու լուսանկարներով: Խանդավառված հեռացավ, ու լույսը անջատեցի: Հիմա մենակ եմ: Բայց լրիվ մենակ չէ: Այն միտքը դեռ այստեղ է՝ դիմացս, ու սպասում է: Պարարտ կատվի նման կծկվել-պառկել է տեղում, ոչինչ չի բացատրում, բնավ չի շարժվում ու միայն ասում է «ոչ»: Ոչ, ես արկածներ չեմ ունեցել:

Ծխամորճս լցնում եմ, վառում, պառկում եմ մահճակալին ու վերարկուս գցում ծնկներիս: Չեմ հասկանում՝ ինչու եմ այսքան տխուր ու հոգնած զգում ինձ: Եթե նույնիսկ ճիշտ լիներ, որ ես երբեք ոչ մի արկած չեմ ունեցել, դրանից ինձ ի՞նչ: Առաջին հերթին՝ կարծում եմ, որ սա միայն ու միայն բառերի ընտրության հարց է: Ասենք օրինակ՝ Մեկնեսում պատահած այն դեպքը, որի մասին հենց նոր մտածում էի. վրաս մի մարոկկացի էր հարձակվել ու ուզում էր հսկայական դանակով խփել: Ես խաբս տվեցի ու բռունցքով հարվածեցի քունքի տակ: Ինքը սկսեց արաբերեն գոռգռալ, ձայնի վրա հայտնվեց քրջոտ մուրացկանների մի ամբողջ բանակ, ովքեր մեզ

հետապնդեցին մինչև Ատարենի շուկա: Ահա, խնդրեմ. սրան ինչ անուն ուզում ես տուր, բայց ամեն դեպքում սա իրադարձություն է, որ *տեղի է ունեցել ինձ հետ:*

Լրիվ մութ է. արդեն չգիտեմ՝ ծխամորճս դեռ վառվո՞ւմ է, թե՞ չէ: Տրամվայ է անցնում. կարմիր ցոլքեր՝ առաստաղիս վրա: Դրան հաջորդում է մի ծանր մեքենա, ու շենքը ցնցվում է: Պիտի որ ժամը վեցը լինի:

Ես արկածներ չեմ ունեցել: Ինձ հետ պատմություններ են պատահել, իրադարձություններ, դեպքեր, ինչ ուզում ես՝ ասա: Բայց ոչ արկածներ: Ու արդեն սկսում եմ հասկանալ, որ սա բառերի ընտրության հարց չէ: Մի ժամանակ ինչ-որ բան կար, որ ամեն ինչից ավելի թանկ էր ինձ համար, չնայած դա լրիվ չէի գիտակցում: Չէ, սերը չէր, Աստված իմ, ոչ. ոչ էլ փառքը, ոչ էլ հարստությունը: Դա... Մի խոսքով, ես երևակայում էի, որ որոշ պահերի իմ կյանքը կարող էր հազվագյուտ ու թանկարժեք իմաստ ստանալ: Ու դրա համար ինչ-որ բացառիկ իրավիճակների կարիք չկար. ինձ ընդամենը մի քիչ հստակություն էր պետք: Իմ ներկայիս կյանքն այնքան էլ շլացուցիչ չէ, բայց ժամանակ առ ժամանակ, օրինակ՝ երբ սրճարաններում երաժշտություն էին միացնում, մտովի վերադառնում էի հետ ու ինքս ինձ ասում. այ մի ժամանակ Լոնդոնում, Մեկնեսում, Տոկիոյում սքանչելի պահեր եմ ապրել, ես արկածներ եմ ունեցել: Հիմա ինձնից հենց դա են խլում: Հանկարծ առանց որևէ ակնհայտ պատճառի հասկացել եմ, որ վեց տարի անընդմեջ խաբել եմ ինձ: Արկածները գրքերում են: Բնականաբար այն ամենը, ինչի մասին պատմում են գրքերում, կարող է իսկապես պատահել, բայց ոչ լրիվ նույն կերպ: Իսկ ինձ համար թանկ էր հենց այն, թե ինչպես է այդ ամենը պատահում:

Նախևառաջ սկիզբը պիտի իսկական սկիզբ լինի: Ավա՜ղ. հիմա այնքան լավ եմ հասկանում, թե ժամանակին ինչ էր ուզածս: Իսկական սկիզբը հայտնվում է շեփորի հնչյունների նման, ջազի առաջին նոտաների նման՝ կտրուկ ցրելով ձանձրույթը, կարծրացնելով ժամանակը. նման երեկոների մասին հետո ասում են. «Զբոսնում էի. մայիսյան երեկո էր»: Զբոսնում ես, լուսինը նոր է ծագել, պարապ ես, անզբաղ, մի քիչ դատարկ: Ու հետո հանկարծ մտքովդ անցնում

է. «Ինչ-որ բան է պատահել»: Կարևոր չէ, թե ինչ. գուցե մթության մեջ ինչ-որ բան է ճռռացել, կամ հեռվում մի աղոտ ստվեր հատել է փողոցը: Բայց այդ չնչին իրադարձությունը նման չէ մյուսներին. դու իսկույն հասկանում ես, որ դրան հաջորդելու է ինչ-որ մեծ բան, որի ուրվագծերը դեռ կորած են մառախուղի մեջ, ու ինքդ քեզ ասում ես. «Ինչ-որ բան է սկսվում»:

Ինչ-որ բան սկսվում է, որպեսզի ավարտվի. արկածը չի հանդուրժում, երբ իրեն ձգձգում ես, այն միայն իր վախճանից հետո է իմաստավորվում: Ես անդառնալիորեն ձգտում եմ դեպի այդ վախճանը, որ գուցե նաև իմն է լինելու: Թվում է՝ յուրաքանչյուր ակնթարթը հայտնվում է՝ միայն հետևից բերելու համար իրեն հաջորդող մյուս ակնթարթները: Ու յուրաքանչյուր ակնթարթն անսահման թանկ է ինձ համար. ես գիտեմ, որ այն անկրկնելի է, անփոխարինելի, և այնուամենայնիվ, մատս մատիս էլ չեմ խփի, որպեսզի թույլ չտամ, որ այն անհետանա: Այս վերջին րոպեն, որ անցկացնում եմ Բեռլինում կամ Լոնդոնում՝ մի կնոջ գրկում, ում հանդիպել եմ երեկ չէ առաջին օրը, այս րոպեն, որ սիրում եմ կրքոտ սիրով, կինը, ում պատրաստ եմ սիրել, ամեն ինչ վերջանալու է, ու ես դա գիտեմ: Շուտով մեկնելու եմ ուրիշ երկիր: Ու էլ երբեք չեմ տեսնի այս կնոջը, ու ոչ էլ այս գիշերը կկրկնվի: Ես հակվում եմ յուրաքանչյուր վայրկյանի վրա՝ ձգտելով քամել այն մինչև վերջին կաթիլը, որսում եմ ամեն բան, որ տեղի է ունենում, առհավետ զետեղում եմ իմ ներսում ամեն ինչ՝ այս գեղեցիկ աչքերի հպանցիկ քնքշանքը, փողոցի աղմուկը, լուսաբացի խաբուսիկ լույսը, և սակայն րոպեն թռչում է, ու ես չեմ փորձում այն պահել. ինձ դուր է գալիս, որ այն ավարտվում է:

Իսկ հետո ինչ-որ բան փշուր-փշուր է լինում: Արկածն ավարտված է, ժամանակը վերադառնում է իր ամենօրյա կակուղ վիճակին: Շրջվում եմ. հետևումս այդ գեղեցիկ, մեղեդային ձևն ամբողջովին սուզվում է անցյալի մեջ: Այն նվազում, կծկվում է անկման ընթացքում, ու հիմա ավարտն արդեն միաձուլված է սկզբի հետ: Եվ հայացքով հետևելով այդ ոսկե կետին՝ մտածում եմ, որ եթե անգամ ստիպված լինեի մեռնելու, սնանկանալու կամ ընկերոջս կորցնելու վտանգի տակ հայտնվել, միևնույն է, կհամաձայնեի վերապրել ամեն

ինչ լրիվ նույն հանգամանքներում, ծայրից ծայր: Բայց արկածը ո՛չ կրկնվում է, ո՛չ էլ ձգվում:

Այո, ժամանակին հենց դա էր ուզածս: Ավա՜ղ, ես հիմա էլ եմ նույն բանն ուզում: Երբ Նեգրուհին երգում է, մեծագույն երջանկություն եմ ապրում: Ի՞նչ բարձունքների կարող էի հասնել, եթե իմ սեփական կյանքն էլ մեղեդու նյութից կազմված լիներ:

Իսկ Միտքը դեռ այստեղ է՝ անանուն ու անարտահայտելի: Այն համբերատար սպասում է: Ու հիմա կարծես թե ուզում է ասել.

«Հա՞: Ուրեմն *դա՞* էր ուզածդ: Դե ուրեմն իմացիր, որ դա հենց այն է, ինչ դու երբեք չես ունեցել (հիշի՛ր. դու խաբում էիր ինքդ քեզ, խաղում էիր բառերի հետ ու արկածներ էիր կոչում ճամփորդությունների պաճուճանքները, կանանց սերը, փողոցային կռիվները, էժանագին խաղալիքները) ու երբեք էլ չես ունենա ո՛չ դու, ո՛չ էլ ուրիշ որևէ մեկը»: Բայց ինչո՞ւ: *Ինչո՞ւ*:

Շաբաթ կեսօր

Ինքնուսը չտեսավ, թե ինչպես մտա ընթերցասրահ: Նստած էր սրահի ամենախորքի սեղանի ծայրին, դիմացը գիրք էր դրել, բայց չէր կարդում: Ժպտալով նայում էր աջ կողմի հարևանին՝ քոլեջի մի գզգզված աշակերտի, որ հաճախ է գրադարան գալիս: Սա մի որոշ ժամանակ հանդուրժեց, որ իրենով հիանում են, հետո հանկարծ լեզու ցույց տվեց ու դեմքը ծամածռեց: Ինքնուսը կարմրեց, քիթը հապճեպ խրեց իր գրքի մեջ ու սուզվեց ընթերցանության գիրկը:

Ես վերադարձա նախորդ օրվա մտորումներիս: Ինձ լրիվ քամված էի զգում: Չէ, ինձ համար միևնույն էր՝ արկածներ եղել են, թե չեն եղել: Ինձ ուրիշ բան էր հետաքրքրում. ուղղակի ուզում էի հասկանալ՝ կարո՞ղ էին արդյոք դրանք ընդհանրապես տեղի ունենալ:

Ահա թե ինչ էի մտածում. որպեսզի ամենասովորական իրադարձությունը արկած դառնա, ընդամենը պետք է այն *պատմել*: Հենց սա է մարդկանց խաբում: Մարդը միշտ էլ պատմություններ պատմող է. մարդն ապրում է՝ շրջապատված իր ու ուրիշների

պատմություններով, պատմությունների միջով է տեսնում այն, ինչ պատահում է իր հետ, ու ձգտում է իր կյանքն ապրել այնպես, ասես պատմում է այն:

Բայց պետք է ընտրել. կա՛մ ապրում ես, կա՛մ պատմում: Օրինակ՝ երբ Համբուրգում էի, բավականին տարօրինակ գոյություն էի քարշ տալիս Էռնա անունով մի կնոջ հետ, ում չէի վստահում, ու ով ինձ-նից վախենում էր: Բայց ես այդ կյանքի ներսում էի ու դրա մասին չէի մտածում: Հետո մի երեկո Սան Պաուլիի փոքրիկ սրճարաններից մեկում կողքիցս վեր կացավ ու գնաց զուգարան: Ես մենակ մնա-ցի, պատեֆոնը «Blue Sky» էր նվագում: Ու սկսեցի ինքս ինձ պատ-մել այն ամենը, ինչ հետս տեղի էր ունեցել Համբուրգ գալուց հետո: Ինձ ասացի. «Երրորդ օրվա երեկոյան մտա «Կապույտ քարանձավ» պարասրահ ու նկատեցի մի բարձրահասակ, կիսահարբած կնոջ: Իսկ հիմա նստած «Blue Sky» եմ լսում ու սպասում եմ հենց այդ կնո-ջը, ու ինքը մի քիչ հետո գալու է, նստելու է կողքս ու երկու ձեռքով փաթաթվելու է վզիս»: Ու հանկարծ շատ սուր զգացի, որ արկածի մեջ եմ: Բայց հետո Էռնան հետ եկավ, նստեց կողքիս, փաթաթվեց վզիս, ու ես տեղնուտեղը ատեցի նրան՝ առանց առանձնապես հաս-կանալու, թե ինչու: Հիմա նոր հասկանում եմ. որովհետև պետք է կրկին սկսեի ապրել, ու որովհետև արկածի զգացումն անհետացել էր:

Քանի դեռ ապրում ես, ոչինչ չի պատահում: Դեկորացիաներն են փոխվում, մարդիկ գալիս-գնում են ու վերջ: Սկիզբ երբեք չկա: Օրերն անկապ ու անիմաստ գումարվում են իրար, ու ամեն ինչ շարունակվում է՝ անդադար ու միապաղաղ: Ժամանակ առ ժամա-նակ ընթացիկ ամփոփում ես անում, ասում ես՝ արդեն երեք տարի է՝ ճամփորդում եմ, երեք տարի է՝ Բուվիլում եմ: Ու ոչ էլ վերջ կա. երբեք մեկընդմիշտ չես բաժանվում կնոջից, ընկերոջից, քաղա-քից: Ու հետո ամեն ինչ սկսում է նմանվել իրար. ուզում է Շանհայը լինի, ուզում է Մոսկվան կամ Ալժիրը, տասնհինգ տարի հետո ոչ մի տարբերություն չի մնում: Երբեմն՝ հազարից մեկ, մի պահ կանգ ես առնում ու նկատում, որ կապվել ես ինչ-որ կնոջ հետ կամ խրվել որևէ կեղտոտ պատմության մեջ: Բայց դա մի ակնթարթ է տևում: Իսկ հետո հոսքը վերսկսվում է, ու դու կրկին իրար ես գումարում

ժամերն ու օրերը: Երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի: Ապրիլ, մայիս, հունիս: 1924, 1925, 1926:

Հենց դա էլ կյանքն է: Բայց երբ պատմում ես կյանքդ, ամեն ինչ փոխվում է. պարզապես այդ փոփոխությունը ոչ ոք չի նկատում: Դրա ապացույցն այն է, որ մարդիկ խոսում են իրական պատմությունների մասին: Իբր թե առհասարակ հնարավոր է, որ պատմություններն իրական լինեն. իրադարձությունները կատարվում են մի ուղղությամբ, իսկ մենք դրանք լրիվ հակառակ ուղղությամբ ենք պատմում: Թվում է, թե սկզբից ես սկսում. «1922 թիվն էր, մի գեղեցիկ աշնանային երեկո: Այդ ժամանակ ես Մարոմի նոտարի մոտ գրագիր էի աշխատում»: Իսկ իրականում վերջից ես սկսել: Վերջն այդտեղ է, ներկա է, բայց անտեսանելի. հենց այդ վերջն է բառերին այնպիսի հանդիսավորություն ու արժեք տալիս, ասես դրանք սկիզբ են: «Դուրս էի եկել զբոսնելու ու չնկատեցի՝ ինչպես հայտնվեցի գյուղից դուրս: Դրամական խնդիրներիս մասին էի մտածում»: Այս նախադասությունն առանձին վերցրած նշանակում է, որ տվյալ անձնավորությունը մռայլ էր, մտամոլոր ու հարյուրավոր մղոններով հեռու էր ցանկացած արկածից, այսինքն՝ հենց այնպիսի տրամադրության մեջ էր, երբ բոլոր իրադարձությունները կողքովդ են անցնում ու դու ոչինչ չես նկատում: Բայց ախր վերջն արդեն այստեղ է՝ մեր կողքին, ու դա փոխում է ամեն ինչ: Մեզ համար այդ անձնավորությունն արդեն իսկ պատմության հերոսն է: Նրա մռայլ տրամադրությունն ու դրամական խնդիրներն անհամեմատ ավելի արժեքավոր են, քան մերը. գալիք կրքերի լույսը ոսկեզօծել է դրանք: Ու պատմությունը թարս է շրջվում. ակնթարթները դադարում են պատահականորեն կուտակվել իրար վրա, պատմության ավարտը որսացել է դրանք ու ձգում է դեպի իրեն, և յուրաքանչյուրն իր հերթին իր հետևից քարշ է տալիս նախորդ ակնթարթը. «Գիշեր էր, փողոցը դատարկ էր»: Նախադասությունն ասես անփութորեն նետված լինի, այն երկրորդական է թվում. բայց մեզ դրանով չես խաբի, ու մենք մտապահում ենք դա. այդ տեղեկության արժեքը մենք շուտով կհասկանանք: Ու այնպիսի զգացում ունենք, ասես հերոսն այդ գիշերվա բոլոր մանրամասներն ապրել է որպես հայտնություններ, որպես խոստումներ, կամ նույնիսկ որ ինքն ապրում էր

միայն այն մանրամասները, որոնք խոստումներ էին՝ կույր ու խուլ մնալով մնացած ամեն ինչի հանդեպ, որոնք արկած չէին ազդարարում: Մենք մոռանում ենք, որ ապագան դեռ այնտեղ չէր. այդ անձնավորությունն ուղղակի գիշերով զբոսնում էր՝ առանց որևէ նախանշանների, գիշերը խառնիխուռն նրան էր առաջարկում իր միօրինակ գանձերը, ու նա չէր ընտրում:

Ես ուզում էի, որ կյանքիս ակնթարթներն իրար հաջորդեին ու դասավորվեին այնպես, ինչպես կդասավորվեին վերհիշվող կյանքի ակնթարթները: Նույն հաջողությամբ կարող էի փորձել բռնել ժամանակի պոչից:

Կիրակի

Առավոտյան մոռացել էի, որ այսօր կիրակի է: Դուրս եկա ու սկսեցի սովորականի պես քայլել փողոցներով: Հետս «Էժենի Գրանդեն» էի վերցրել: Հետո հանկարծ զբոսայգու դռնակը հրելիս թվաց, թե ինչ-որ բան ինձ նշան է անում: Այգին դատարկ ու մերկ էր: Բայց... Ո՞նց բացատրեմ: Ինչ-որ տարօրինակ տեսք ուներ՝ ժպտում էր ինձ: Մի պահ մնացի դռնակին հենված-կանգնած, հետո հանկարծ հասկացա, որ կիրակի է: Կիրակին ծառերի մեջ էր, խոտերի վրա՝ հազիվ նկատելի ժպիտի պես: Անհնար էր դա նկարագրել, երևի պիտի ուղղակի արագ-արագ արտասանեիր. «Զբոսայգի է, ձմեռ, կիրակի առավոտ»:

Դռնակը բաց թողեցի, շրջվեցի քաղաքի շենքերի ու փողոցների կողմը ու կիսաձայն ասացի. «Կիրակի է»:

Կիրակի է. նավամատույցների հետևում, ծովի ողջ երկայնքով, բեռնատար գնացքների կայարանի մոտ, քաղաքի չորս կողմում պահեստները դատարկ են, իսկ մեքենաները քարացել են մթի մեջ: Բոլոր տներում տղամարդիկ պատուհանների մոտ կանգնած սափրվում են. գլուխները հետ են գցել ու մե՛կ հայելու մեջ են նայում, մե՛կ պաղ երկնքին՝ հասկանալու համար, թե այսօր ինչ եղանակ է լինելու: Հասարակաց տները բացում են դռներն առաջին հաճախորդների՝ գյուղից եկածների ու զինվորների առաջ: Եկեղեցում՝ մոմերի

լույսի ներքո, մի տղամարդ գինի է խմում ծնկաչոք կանանց առջև: Բոլոր արվարձաններում՝ գործարանների անծայրածիր պատերի միջև, երկար, սև շղթաները սկսել են իրենց ընթացքն ու շարժվում են դեպի քաղաքի կենտրոնը: Նրանց դիմավորելու համար փողոցներն այնպիսի տեսք են ընդունել, ինչպիսին դառնում են խռովությունների ժամանակ. բոլոր խանութները, բացի Տուրնբրիդ փողոցի վրայի խանութներից, իջեցրել են երկաթե վարագույրները: Շուտով սև շարասյունները լուռումունջ գրավելու են մեռած ձևացող այդ փողոցները. նախ կժամանեն Տուրվիլի երկաթուղայինները Սեն Սեմֆորենի օճառի գործարաններում աշխատող իրենց կանանց հետ, հետո՝ Ժուքստբուվիլ արվարձանի մանր բուրժուաները, հետո՝ Պինոյի մանածագործարանների բանվորները, հետո՝ Սեն Մաքսանս թաղամասի շինարարները. վերջում ժամը տասնմեկի տրամվայով կգան Տիերաշի բնակիչները: Եվ շուտով կողպած խանութների ու փակ դռների միջև կծնվի կիրակնօրյա ամբոխը:

Ժամացույցը խփում է ժամը տասն անց կեսը, ու ես ճամփա եմ ընկնում. կիրակի օրն այս ժամին Բուվիլում կարելի է մի շատ հետաքրքրիր տեսարանի հանդիսատես լինել, բայց պիտի առավոտյան ժամերգության ավարտից շատ չուշանաս:

Ժոզեֆին-Սուլարի փոքրիկ փողոցը մեռած է, այստեղից դամբարանի հոտ է գալիս: Բայց ինչպես և ամեն կիրակի, հիմա այն լի է մակընթացության շառաչ հիշեցնող մի ճոխ աղմուկով: Թեքվում եմ Պրեզիդան-Շարման փողոց. այստեղի տները չորսհարկանի են ու երկար սպիտակ խլափեղկեր ունեն: Կիրակնօրյա խուլ ժխորը ծայրից ծայր պատել է նոտարների այս փողոցը: Ժիլեի նրբանցքում աղմուկն ուժեղանում է, ու ես ճանաչում եմ դա. մարդկանց բարձրացրած աղմուկն է: Հետո հանկարծ ձախ կողմում լույսն ու ձայներն ասես պայթում են: Տեղ եմ հասել. ահա և Տուրնբրիդ փողոցը, ինձ մնում է միայն խառնվել ինձ նմանների ամբոխին ու նայել, թե ինչպես են այդ պարոնայք գլխարկները բարձրացնելով ողջունում միմյանց:

Դեռ վաթսուն տարի առաջ ոչ ոք նույնիսկ չէր էլ համարձակվի կանխատեսել, թե ինչ զարմանալի ճակատագիր է սպասում

Տուրբրիդ փողոցին, որին բուվիլցիներն այսօր անվանում են փոքրիկ Պրադո: Ես տեսել եմ քաղաքի 1873 թվի հատակագիծը, ու այնտեղ այս փողոցը նույնիսկ նշված էլ չէր: Այդ թվերին այստեղ երևի մութ ու հոտած ինչ-որ նրբանցք էր, ուր սալաքարերի արանքով կեղտաջրի առվակ էր հոսում, մեջը՝ ձկների գլուխներ ու փորոտիք: Բայց 1873-ի վերջին Ազգային ժողովը հայտարարեց, որ հանրային շահերից է բխում, որ Մոնմարտրի բլրի վրա եկեղեցի կառուցվի: Դրանից մի քանի ամիս անց Բուվիլի քաղաքապետի կինը տեսիլք ունեցավ. տեսիլքում սուրբ Սեսիլը՝ իր պահապանն ու հովանավորը, հայտնվեց ու նախատեց նրան: Ինչպե՞ս կարելի է հանդուրժել, որ վերնախավն ամեն կիրակի ցեխերի միջով հասնի Սեն Ռընե կամ Սեն Կլոդիեն՝ հասարակ խանութպանների կողքին կանգնած ժամերգություն լսելու: Մի՞թե Ազգային ժողովն օրինակ չի ծառայում: Աստծու ողորմությամբ Բուվիլն այժմ փայլուն տնտեսական դրության մեջ է. ուրեմն արդյոք ճիշտ չի՞ լինի շնորհակալ լինել Տիրոջն ու Բուվիլում եկեղեցի կառուցել:

Տեսիլքն ընդունվեց բարեհաճությամբ. քաղաքային խորհուրդը պատմական ժողով գումարեց, իսկ եպիսկոպոսը համաձայնեց նվիրաբերությունների հանգանակություն կազմակերպել: Մնում էր միայն տեղն ընտրել: Վաճառականների ու նավատերերի հին ընտանիքները պնդում էին, որ եկեղեցին կառուցվի Կոտո Վեր բլրի գագաթին՝ այնտեղ, ուր իրենք են ապրում, «որպեսզի սուրբ Սեսիլը վեր խոյանա Բուվիլի վրա այնպես, ինչպես Հիսուսի Սակրե Կյորը՝ Փարիզի վրա»: Մարիտիմ բուլվարի նորահայտ պարոնայք, որոնք այն ժամանակ դեռ քիչ էին, բայց արդեն շատ հարուստ, գլուխները թափ տվեցին. ինչքան փող պետք է՝ կտան, բայց եկեղեցին պիտի կառուցվի Մարինյան հրապարակում. եթե իրենք վճարում են եկեղեցու համար, ուրեմն նաև ակնկալում են, որ պիտի կարողանան այն օգտագործել: Նրանք բնավ դեմ չէին իրենց հզորությունը ցույց տալու քթերը ցցած այդ բուրժուաներին, ովքեր նրանց դուրսպրծուկներ էին համարում: Եպիսկոպոսն առաջարկեց փոխզիջման գնալ. եկեղեցին կառուցվեց Կոտո Վեր բլրի ու Մարիտիմ բուլվարի միջև՝ Ալ-օ-Մոր հրապարակում, որը հետագայում վերանվանվեց Սեն Սեսլիլ-դը-լա-Մեր հրապարակ: Այդ հրեշավոր կառույցի

շինարարությունն ավարտվեց 1887-ին ու քաղաքի վրա նստեց տասնչորս միլիոն ֆրանկից ոչ պակաս:

Լայն, բայց վատ համբավ ունեցող Տուրնբրիդ փողոցը ստիպված եղան ծայրից ծայր վերակառուցել, իսկ դրա բնակիչներին հարկադրաբար տեղահանեցին ու տարան Սեն Սեսիլ հրապարակից այն կողմ. փոքրիկ Պրադոն դարձավ, հատկապես կիրակի առավոտներին, վերնախավի ու պերճաշուք դեմքերի հանդիպման վայրը: Վերնախավի զբոսանքի ճանապարհին մեկը մյուսի հետևից սկսեցին շքեղ խանութներ բացվել: Դրանք միշտ բաց են՝ Զատկի երկուշաբթիին, Սուրբծննդյան գիշերը, ամեն կիրակի՝ մինչև կեսօր: Երշիկագործ Ժուլիենի կողքին, ով հայտնի է իր տաք կարկանդակներով, հրուշակագործ Ֆուլոնը ցուցադրում է իր հռչակավոր խմորեղենները՝ սքանչելի բրգաձև թխվածքներ՝ զարդարված մանուշակագույն կրեմով ու շաքարե մանուշակներով: Գրավաճառ Դյուպատիի ցուցափեղկում կարելի է տեսնել Պլոն հրատարակչության նոր գրքերը, մի քանի տեխնիկական աշխատություններ, ասենք՝ «Նավաշինության տեսություն» կամ «Տրակտատ առագաստների մասին», Բուվիլի ահռելի պատկերազարդ պատմությունն ու գեղեցիկ դասավորված մի քանի շքեղ հրատարակություններ՝ կապույտ կաշվե կազմով «Ջյոնիգսմարկը»[1] կամ Պոլ Դումերի «Իմ զավակների գիրքը» բաց շագանակագույն կաշվե կազմով, վրան՝ ալ կարմիր ծաղիկներ: Գիզլենի «Նորաձևություն, փարիզյան մոդելները» բաժանում է Պիեժուայի ծաղկի կրպակը Պակենի հնառոճ իրերի խանութից: Գուստավի վարսավիրանոցն իր չորս մատնահարդարներով զբաղեցնում է նորակառույց դեղին շենքի երկրորդ հարկը:

Երկու տարի առաջ Մուլեն-Ժեմո փակուղու ու Տուրնբրիդ փողոցի անկյունում մի փոքրիկ անպատկառ կրպակ դեռ գովազդում էր «Տու-պու-նե» կոչվող իր միջատասպան հեղուկը: Կրպակը ծաղկում ու բարգավաճում էր այն տարիներին. երբ Սեն Սեսիլ հրապարակում դեռ ձուկ էին վաճառում, այն հարյուր տարեկան էր:

---

[1] Ֆրանսիական ակադեմիայի անդամ Պիեռ Բենուայի առաջին վեպը երիտասարդ ֆրանսիացի պրոֆեսորի և մի դքսուհու սիրո պատմության մասին: Գիրքը լույս է տեսել 1918-ին և հսկայական հաջողություն ունեցել *(Ծ. թ.)*:

Ցուցափեղկերի ապակիները հազարից մեկ էին լվանում. որոշ ջանք թափելով կարելի էր փոշու ու կեղտի միջից նշմարել փոքրիկ մոմե կերպարների մի ողջ ամբոխ, որոնք մարմնավորում էին կարմիր կամզոլներ հագած առնետների ու մկների: Այդ կենդանիները, ձեռնափայտերին հենվելով, նավի տախտակամածից իջնում էին ափ, բայց հենց հասնում էին ցամաք, սեթևեթ շրջազգեստով, բայց մեռելադեմ ու կեղտի մեջ կորած մի գյուղացի աղջիկ նրանց փախուստի էր մատնում՝ վրանները «Տու-պու-նե» սրսկելով: Շատ էի սիրում այդ կրպակը. այն ցինիկ ու համառ տեսք ուներ և լկտիաբար հիշեցնում էր կրծողների ու կեղտի իրավունքների մասին՝ Ֆրանսիայի ամենաթանկ եկեղեցուց երկու քայլ այն կողմ:

Թունանյութեր վաճառող ծեր կինն անցած տարի մահացավ, ու նրա զարմիկը տունը վաճառեց: Բավական էր ընդամենը ներսի պատերից մի քանիսը քանդել, ու խնդրեմ՝ հիմա սա դասախոսությունների փոքրիկ սրահ է, անունը՝ «Բոնբոնիեր»: Նախորդ տարի Անրի Բորդոն այստեղ ալպինիզմի մասին դասախոսություն կարդաց:

Տուրնբրիդ փողոցում չի կարելի շտապել. հարգարժան ընտանիքները դանդաղ են քայլում: Երբեմն, երբ դիմացից ընթացող մի ողջ ընտանիք մտնում է Ֆուլոնի կամ Պիեժուայի մոտ, հաջողացնում ես մի երկու քայլ առաջ անցնել: Բայց երբեմն էլ ստիպված ես լինում կանգ առնել ու տեղում դոփել, որովհետև երկու ընտանիքներ, որոնցից մեկը բարձրանում է փողոցով, իսկ մյուսը՝ իջնում, հանդիպել են ու հիմա ջերմորեն իրար ձեռք են սեղմում: Դանդաղ առաջ եմ գնում: Ես մի ամբողջ գլուխ բարձր եմ երկու հանդիպակաց հոսքերից էլ ու հիմա գլխարկներ եմ տեսնում, գլխարկների մի ամբողջ ծով: Մեծ մասը սև ու կոշտ են: Ժամանակ առ ժամանակ կարելի է տեսնել, թե ինչպես գլխարկներից մեկնումեկը ձեռքի ծայրին թռչում է վերև՝ բացելով ճաղատ գանգի նուրբ փայլը, ապա մի քանի ակնթարթ տևող սահուն անկումից հետո իջնում է տեղը: Տուրնբրիդ փողոցի համար 16 տան վրա գլխարկագործ, կեպիների մասնագետ Ցուրբենը որպես խորհրդանիշ մի ահռելի արքեպիսկոպոսական կարմիր վեղար է կախել, որի ոսկեգույն ծոպերը ճոճվում են գետնից երկու մետրի վրա:

Կանգառ. հենց ծոպերի տակ խումբ է ձևավորվել: Հարևանս ձեռքերը կախ է գցել ու համբերատար սպասում է. եթե չեմ սխալվում, այս գունատ ու ճենապակու նման փխրուն ծերուկը Կոֆիեն է՝ Առևտրի պալատի նախագահը: Ինձ թվում է՝ ինքն այդքան սարսափազդու է, որովհետև երբեք ոչինչ չի ասում: Ապրում է Կոտո Վեր բլրի գագաթին՝ մի մեծ աղյուսե տան մեջ, որի պատուհանները միշտ լայն բաց են: Վերջ. խումբը ցրվեց, շարունակում ենք քայլել: Առջևում մի ուրիշ խումբ է ձևավորվել, բայց այս մեկն ավելի քիչ տեղ է զբաղեցնում. դեռ լրիվ չկազմավորված՝ արդեն մոտենում է Գիզլենի ցուցափեղկին: Շարասյունը կանգ չի առնում, այլ ուղղակի մի քիչ կողք է քաշվում. մենք ընթանում ենք վեց անձի կողքով, ովքեր իրար ձեռք են սեղմում. «Բարև ձեզ, պարոն, բարի օր, թանկագին պարոն, ինչպե՞ս եք. դրեք, դրեք ձեր գլխարկը, պարոն, կմրսեք. շնորհակալություն, տիկին, իրոք՝ բավականին ցուրտ է: Թանկագինս, ծանոթացիր բժիշկ Լըֆրանսուայի հետ. անչափ ուրախ եմ ձեզ հետ ծանոթանալու համար, բժիշկ, ամուսինս անընդհատ պատմում է դոկտոր Լըֆրանսուայի մասին, ով իրեն այդքան լավ է բուժել. դրեք ձեր գլխարկը, բժիշկ, կմրսեք-կհիվանդանաք այս ցրտին: Ոչինչ, բժիշկն ինքն իրեն արագ կբուժի. ավա՜ղ, տիկին, ամենավատը հենց բժիշկներին են բուժում: Բժիշկը հոյակապ երաժիշտ է: Աստված իմ, բժիշկ, ես անգամ չգիտեի, որ դուք ջութակ եք նվագում: Բժիշկը բացառիկ տաղանդավոր մարդ է»:

Կողքիս ծերուկը հաստատ Կոֆիեն է. խմբի կանանցից մեկը՝ թխահերը, աչքերով ուտում է նրան՝ շարունակելով ժպտալ բժշկի ուղղությամբ: Այնպիսի տեսք ունի, ասես մտածում է. «Ահա և պարոն Կոֆիեն՝ Առևտրի պալատի նախագահը. ինչ սարսափազդու տեսք ունի, վրայից սառնություն է փչում»: Բայց պարոն Կոֆիեն չի բարեհաճում որևէ բան նկատել. այս մարդիկ Մարիտիմ բուլվարից են, նրանք իր աշխարհին չեն պատկանում: Ինչ սկսել եմ գալ այս փողոց՝ նայելու կիրակի օրերին վեր թռչող գլխարկներին, սովորել եմ տարբերել Մարիտիմ բուլվարի բնակիչներին Կոտո Վեր բլրի բնակիչներից: Երբ մեկի հագին լրիվ նոր վերարկու է, փափուկ ֆետրե գլխարկ, շլացուցիչ ճերմակ վերնաշապիկ, ու երբ այնպիսի տեսք ունի, ասես խիստ զբաղված է, կասկած չկա՝ հաստատ Մարիտիմ

բուլվարից է: Կոտո Վեր բլրի մարդիկ առանձնանում են ինչ-որ անորոշ թշվառությամբ ու ընկճվածությամբ: Իրենց ուսերը նեղ են, իսկ մաշված դեմքերից չի իջնում ամբարտավանության կնիքը: Կարող եմ երդվել, որ երեխայի ձեռքից բռնած այս հաստլիկը Կոտոյից է. դեմքը լրիվ մոխրագույն է, իսկ փողկապը պարանի պես է կապել:

Հաստլիկը մոտենում է մեզ. հիմա ուշադիր նայում է պարոն Կոֆիեին: Բայց հանդիպումից մի քիչ առաջ շրջվում է ու սկսում է հայրաբար կատակել իր փոքրիկ տղայի հետ: Մի քանի քայլ էլ է առաջ գալիս՝ շարունակելով կռացած մնալ դեպի տղան, աչքերն աչքերից չկտրելով, իսկ և իսկ սիրող հայր. հետո հանկարծ աշխուժորեն շրջվում է մեր կողմը, արագ հայացք է գցում ծերուկի վրա ու ձեռքը կորացնելով՝ լայն ու կտրուկ ողջունում է: Շփոթված տղան գլխարկը չի բարձրացնում. սրանք մեծական գործեր են:

Բաս-դը-Վիեյ փողոցի անկյունում մեր շարասյունն ընդհարվում է ժամերգությունից դուրս եկող հավատացյալների շարասյանը. հորձանուտի մեջ ընկած մի տասը մարդ բախվում են իրար ու հապճեպ ողջունում միմյանց. այստեղ սակայն գլխարկները չափազանց արագ են բարձրանում-իջնում, որպեսզի կարողանամ մանրամասները նկատել: Ճարպոտ ու գունատ ամբոխի գլխավերևում ծառացել է Սեն Սեսիլ եկեղեցու հրեշավոր ճերմակ զանգվածը. կավճային սպիտակություն՝ սև երկնքի ֆոնի վրա. կուրացուցիչ ճերմակ պատերի հետևում եկեղեցին իր մեջ մի քիչ գիշերային խավար ունի պահած: Մի թեթև խառնված կարգով շարժվում ենք առաջ: Պարոն Կոֆիեն հետևումս է հայտնվել: Կապույտ զգեստով մի տիկին սեղմվել է ձախ կողիս: Տիկինը ժամերգությունից է դուրս գալիս: Աչքերը կկոցած են, մի քիչ շշմել է դրսի պայծառ լույսից: Դիմացից քայլող բարակ վզով պարոնն ամուսինն է:

Մյուս մայթին կնոջը թևանցուկ քայլող պարոնը հենց նոր ինչ-որ բան շշնջաց նրա ականջին ու ժպտաց: Վերջինս տեղնուտեղը իր սերուցքանման դեմքից խնամքով սրբում է բոլոր արտահայտություններն ու կուրորեն մի երկու քայլ առաջ է գնում: Անհերքելի նշաններ են. հիմա պիտի մեկին ողջունեն: Եվ իրոք, մի քանի վայրկյան անց պարոնը բարձրացնում է ձեռքը: Մատները, հասնելով

թվագրված է 1915.10.50 կարմիր

ֆետրե գլխարկին, մի ակնթարթ վարանում են, ապա նուրբ իջնում են եզրին: Մինչ պարոնը զգուշորեն բարձրացնում է գլխարկը՝ միաժամանակ գլուխը մի քիչ կախելով, որ գլխարկը հեշտ դուրս գա, կինը մի թեթև վեր է թռչում՝ դեմքին երիտասարդի ժպիտ ձևացնելով: Ինչ-որ ստվեր գլուխ է տալիս ու անցնում իրենց կողքով, բայց երկվորյակ ժպիտները միանգամից չեն անհետանում, այլ ինչ-որ մնացորդային մագնիսականության ուժով շարունակում են դեռ մի քանի ակնթարթ էլ մնալ երկուսի շուրթերին: Երբ պարոնն ու տիկինը հասնում են ինձ, դեմքներին արդեն կրկին նույն անվրդով արտահայտությունն է, բայց բերանների շուրջը դեռ մի տեսակ ուրախություն է նկատվում:

Ահա և վերջ. ամբոխը նոսրանում է, ողջույններն ավելի հազվադեպ են դառնում, խանութների ցուցափեղկերն արդեն այնքան էլ նրբաճաշակ չեն. ես հասել եմ Տուրնբրիդ փողոցի ծայրին: Գուցե անցնեմ մյուս մայթը ու նույն ճանապարհով հե՞տ գնամ: Չէ, արդեն կուշտ եմ, հերիք է՝ ինչքան նայեցի այդ բոլոր վարդագույն գանգերին, այդ բոլոր չնչին, բարեկիրթ, վերացած դեմքերին: Ավելի լավ է քայլեմ դեպի Մարինյան հրապարակ: Մինչ փորձում եմ զգուշորեն անջատվել մարդկանց հոսքից, կողքիս սև գլխարկի միջից դուրս է պրծնում մի իսկական բարձրաշխարհիկ պարոնի գլուխ: Կապույտ զգեստով տիկնոջ ամուսինն է: Ա՛խ, դոլիխոցեֆալի այդ հոյակապ երկարավուն գանգը՝ վրան ցցված կարճ ու խիտ մազերով, այդ խնամված, տեղ-տեղ ալեխառն ամերիկյան բեղերը... Իսկ ամենալավը ժպիտն է՝ սքանչելի, խնամված ժպիտը: Բացի դրանից, քթին լոռնետ է դրել:

Պարոնը շրջվում է դեպի իր կինն ու ասում.

– Մեր գործարանի նոր գծագրիչներից է: Չեմ հասկանում՝ ինչ կարող է այստեղ անել: Լավ տղա է, ուղղակի մի քիչ ամաչկոտ է: Նայում եմ, ծիծաղս գալիս է:

Երշիկագործ Ժուլիենի ցուցափեղկի մոտ երիտասարդ գծագրիչը, որ հենց նոր է կրկին դրել գլխարկն ու դեռ կաս-կարմիր է, կախել է աչքերը, աննկուն տեսք է ընդունել ու ցուցաբերում է ակնհայտ բերկրանքի բոլոր նշանները: Անկասկած այս կիրակի առաջին անգամ է համարձակվել երևալ Տուրնբրիդ փողոցում: Այնպիսի տեսք

ունի, ասես հենց նոր սուրբ հաղորդություն է ընդունել: Ձեռքերը խաչել է մեջքի հետևում, խանդավառ ամոթխածության արտահայտությունը դեմքին քաշած՝ շրջվել է դեպի ցուցափեղկն ու հիմա առանց տեսնելու նայում է յուղի մեջ ճպճպացող չորս բարակ, փայլուն երշիկներին, որ փռված են մաղադանոսի խավարտի մեջ:

Երշիկեղենի խանութից մի կին է դուրս գալիս ու մտնում է գծագրիչի թևը: Իր կինն է. շատ երիտասարդ է, չնայած անհարթ մաշկ ունի: Այ նա ինչքան ուզում է՝ կարող է թափառել Տուրնբրիդ փողոցի շրջակայքում, մեկ է՝ ոչ ոք նրան բարձրաշխարհիկ տիկնոջ տեղ չի դնի. աչքերի անպատկառ փայլն ու ողջախոհ, բանիմաց տեսքը մատնում են իրեն: Իսկական տիկնայք ոչ մի բանի գինը չգիտեն ու սիրում են իրենց սիրունիկ շռայլություններ թույլ տալ. նրանց աչքերը գեղեցիկ, բարեհոգի ծաղիկներ են՝ ջերմոցի ծաղիկներ:

Ժամը մեկին հասնում եմ «Վեզըլիզ» գարեջրատուն: Ինչպես միշտ, ծերուկներն արդեն այստեղ են: Նրանցից երկուսն արդեն ճաշում են: Չորս հոգի թուղթ են խաղում ու ապերիտիվ խմում: Մյուսները սպասում են, մինչև իրենց սեղանն էլ կգցեն, ու կանգնած հետևում են խաղին: Փարթամ մորուքով այն բարձրահասակը բորսայական միջնորդ է: Այս մյուսը Ծովային վարչության պաշտոնաթող հսկիչ է: Այնպես են ուտում-խմում, ասես քսան տարեկան լինեն: Կիրակի օրերը թթու կաղամբով ճաշ են պատվիրում: Ուշ եկածները հարցաքննում են նրանց, ովքեր արդեն ուտում են.

– Հը՛, էլի ձեր կիրակի օրվա թթուն եք ուտո՞ւմ:

Հետո նստում ու թեթևացած շունչ են քաշում.

– Մարիետ, աղջիկ ջան, ինձ կես գավաթ առանց փրփուրի գարեջուր ու մի հատ էլ ձեր թթու կաղամբով ճաշից:

Մարիետը կրակի կտոր է: Մինչ ես տեղավորվում եմ խորքի սեղանի մոտ, բոսորագույն ծերուկը, ում ինքը վերմուտ է մատուցում, սկսում է կատաղի հազալ.

– Դե դու էլ լրիվ լցրու, էլի,– հազալով պոռթկում է նա:

Բայց այստեղ արդեն Մարիետն է ափերից դուրս գալիս. ինքը դեռ չի վերջացրել լցնելը.

– Դե դուք էլ թողեք՝ մինչև վերջ լցնեմ: Ձեզ ո՞վ բան ասաց: Ոնց որ աղջիկ լինեք. ձեռ չգցած՝ արդեն ձայններդ գլուխներդ եք գցում:

Մյուսները սկսում են ծիծաղել.

– Մեկ-զրո:

Բորսայական միջնորդն իր սեղանի մոտ գնալիս գրկում է Մարիետի ուսերը.

– Կիրակի է, Մարիետ: Հաստատ էլի ընկերոջդ հետ կինո ես գնալու, չէ՞:

– Բա չէ, կգնամ: Այսօր Անտուանետի ազատ օրն է: Համ էլ ի՞նչ ընկեր, ի՞նչ բան. ինձ միակ տեղ տանողը ես եմ:

Բորսայական միջնորդը նստում է մաքուր սափրված ու դժբախտ տեսք ունեցող մի ծերուկի դիմաց: Սափրված ծերուկն իսկույն սկսում է ոգևորված ինչ-որ բան պատմել: Բորսայական միջնորդը չի լսում. նստած ծամածռում է դեմքն ու մորուքը քաշքշում: Նրանք առհասարակ երբեք իրար չեն լսում:

Ճանաչում եմ կողքիս նստած զույգին. ինձնից ոչ հեռու ապրող մանր առևտրականներն են: Իրենց աղախինը կիրակի օրերը չի աշխատում, դրա համար էլ ամեն կիրակի գալիս են այստեղ ու միշտ նույն սեղանն են վերցնում: Ամուսինը հորթի վարդագույն մսից շքեղ տապակա է ուտում: Ուտելիս մոտիկից ուշադիր նայում է մսին ու երբեմն-երբեմն հոտ է քաշում: Կինն իր ափսեն է քչփորում: Մոտ քառասուն տարեկան թանձրամարմին շիկահեր է՝ կարմիր, աղվամազոտ այտերով: Ատլասե բլուզի տակից հստակ ընդգծվում են երկու պիրկ կրծքերը: Ամեն անգամ ճաշելիս տղամարդու պես մի շիշ բորդո է գլուխը քաշում:

Մի քիչ «Էժենի Գրանդեն» կարդամ: Ճիշտ չի լինի ասելը, որ դրանից մեծագույն հաճույք եմ ստանում, բայց դե պիտի ինչ-որ բանով զբաղվեմ: Պատահական էջ եմ բացում. մայր ու աղջիկ խոսում են Էժենիի նորահայտ սիրո մասին.

Էժենին նրա ձեռքը համբուրեց՝ ասելով.

– Որքա՜ն բարի ես, իմ սիրելի մայր:

Այս բառերից ճառագայթեց մոր ծերացած դեմքը, որ թոշնած էր անվերջ տառապանքներից:

– Նրան լա՞վ ես գտնում,– հարցրեց Էժենին:

Տիկին Գրանդեն միայն ժպիտով պատասխանեց, ապա մի վայրկյան լռելուց հետո ցած ձայնով ասաց.

– Միթե արդեն սիրում ես նրան: Այդ լավ չէր լինի:

– Լավ չէր լինի,– շարունակեց Էժենին,– ինչո՞ւ: Դու հավանում ես նրան, Նանոնն էլ է հավանում: Ինչո՞ւ ես չպիտի հավանեմ: Լավ, մայրիկ, նրա նախաճաշի սեղանը պատրաստենք:

Նա մի կողմ դրեց իր աշխատանքը. նույնն արեց և մայրը՝ ասելով.

– Դու գժվել ես:

Բայց նա հարմար գտավ արդարացնել իր աղջկա խենթությունը՝ մասնակից լինելով դրան:

Էժենին կանչեց Նանոնին:

– Ուրիշ ի՞նչ եք ցանկանում, օրիորդ:

– Նանոն, անհրաժեշտ է կեսօրվա համար սերուցք ունենալ:

– Ա՜, կեսօրվա՜ համար. լավ,– պատասխանեց պառավ սպասուհին:

– Լավ, նրան թանձր սուրճ տուր, ես դը գրասեններից լսել եմ, որ սուրճը Փարիզում թանձր են պատրաստում: Շատ սուրճ լցրու:

– Բայց որտեղի՞ց ճարեմ:

– Գնիր:

– Իսկ եթե պարոնը ինձ հանդիպի՞:

– Նա իր մարգագետիններում է[1]:

Ինչ ներս եմ մտել, հարևաններս լուռ են, բայց հանկարծ ամուսնու ձայնն ինձ շեղում է ընթերցանությունից.

– Չէ, բայց դու տեսա՞ր,– կիսազվարթ, կիսախորհրդավոր տոնով հարցնում է:

Կինը վեր է թռչում ու երազներից մի կերպ կտրվելով՝ հայացքն ուղղում է ամուսնուն: Վերջինս մի քիչ էլ է ուտում-խմում, հետո նույն խորհրդավոր տոնով շարունակում.

– Հա հա՜:

Լռություն. կինը նորից ընկել է երազների գիրկը: Հետո հանկարծ ցնցվում է ու հարցնում.

---

1 Թարգմ.՝ Լ. Փոթուկյան:

– Ինչ ասացի՞ր:

– Սյուզանը, երեկ:

– Հա՛,– ասում է կինը,– հետո գնաց Վիկտորի մոտ:

– Բա ես ի՞նչ էի ասում:

Կինը նյարդայնացած մի կողմ է հրում ափսեն.

– Վատ համ է գալիս:

Ափսեի եզրերը զարդարված են կնոջ հետ թքած մսի մոխրագույն գնդիկներով: Ամուսինը շարունակում է զարգացնել իր միտքը.

– Կնիկ եմ ասել, է՛...

Հետո անորոշ ժպտում է ու լռում: Դիմացի սեղանին ծեր բորսայական միջնորդը մի թեթև փնչացնելով շոյում է Մարիետի թևը: Անցնում է մի երկու վայրկյան.

– Այն օրն ասում էի, չէ՞:

– Ի՞նչ էիր ասում:

– Որ կգնա Վիկտորի մոտ: Քեզ ի՞նչ եղավ,– հանկարծ հարցնում է տագնապահար տոնով,– դուրդ չի գալի՞ս:

– Վատ համ է գալիս:

– Հա, լրիվ փչացրել են,– հեղինակավոր տեսքով ասում է ամուսինը,– էկարի ժամանակ ուրիշ էր: Չգիտե՞ս՝ հիմա էկարն ուր է:

– Դոմռեմիում չի՞:

– Հա էլի, հա: Բա քեզ ո՞վ է ասել:

– Դու ես ասել, անցած կիրակի էիր ասում:

Կինը բերանն է դնում թղթե սփռոցին ընկած հացի փափուկ միջուկը: Հետո ձեռքով հարթելով սեղանի եզրի թուղթը՝ անվստահ սկսում է.

– Չէ, բայց գիտես, երևի սխալվում ես, Սյուզանն այնքան էլ...

– Չի բացառվում, ճուտիկս, չի բացառվում,– ցրված պատասխանում է ամուսինը: Հայացքով փնտրում է Մարիետին, նշան է անում, որ մոտենա.

– Շոգ է:

Մարիետն անբռնազբոս հենվում է սեղանին:

– Հա՛, շատ շոգ է,– տրտնջում է կինը,– նստած խեղդվում ենք, համ էլ հորթի միսը լավը չէ, ես ձեր տիրոջն էլ կասեմ, առաջ լրիվ ուրիշ էր, օդանցքը մի քիչ բացեք, էլի, Մարիետ, ինչ կլինի:

Ամուսինը զվարճացող տեսքով իրենն է շարունակում.

– Բա դու տեսա՞ր՝ ինչ աչքերով էր նայում:

– Ե՞րբ տեսա, քաղցրս:

Անհամբերությամբ ծաղրում է կնոջը.

– Ե՛րբ տեսա, քաղցրս: Լրիվ դու ես, է: Երբ ամռանը ձյուն էր գալիս:

– Հա՛: Ուզում ես ասել՝ երե՞կ:

Ամուսինը ծիծաղում է, նայում է հեռուներն ու արագ-արագ, որոշակի ջանասիրությամբ արտաբերում.

– Ինչ որ մարմանդ կրակի վրա միզող կատվի աչքեր լինեին:

Այնքան գոհ է իր սրամտությունից, որ կարծես մտքից թռել էր՝ ինչ էր ուզում ասել: Կինն էլ իր հերթին է սկսում բարեհոգաբար ծիծաղել.

– Հա հա հա՛, ավազակի մեկը:

Թփթփացնում է ամուսնու ուսին.

– Ավազակի մեկը, ավազակ:

Ամուսինն ավելի վստահ կրկնում է.

– Մեկին մեկ՝ մարմանդ կրակի վրա միզող կատվի աչքեր:

Բայց կինն արդեն չի ծիծաղում.

– Չէ, լուրջ, գիտես, ինքը լուրջ կին է:

Ամուսինը կռանում է ու կնոջ ականջին ինչ-որ երկար պատմություն է փսփսում: Կինը մի պահ լարված ու ուրախացած դեմքով մնում է բերանը բաց, ասես մեկը, ով հազիվ է փոթկոցը զսպում, հետո կտրուկ հետ է ընկնում ու ճանկերը խրում է ամուսնու ձեռքերի մեջ.

– Չեմ հավատում, չեմ հավատում:

– Լսիր, եթե ասել է, ուրեմն մի բան գիտի,– հավասարակշիռ ու լուրջ տոնով պատասխանում է ամուսինը,– եթե ճիշտ չլիներ, ինչո՞ւ պիտի ասեր:

– Դե բայց չէ, էլի, չէ:

– Հա բայց ասում է, չէ՞: Լսիր, պատկերացրու...

Կինը սկսում է ծիծաղել.

– Ծիծաղս գալիս է, որ Ռընեի մասին եմ մտածում:

– Իմն էլ:

Ամուսինն էլ է ծիծաղում: Կինը կիսաձայն ու բազմանշանակ շարունակում է.

– Փաստորեն, երեքշաբթի նկատել էր, էլի:

– Հինգշաբթի:

– Չէ, երեքշաբթի, որովհետև...

Կինն էլիպս հիշեցնող ինչ-որ բան է օդում նկարում:

Երկար լռություն: Ամուսինը թաթախում է հացի միջուկը սոուսի մեջ: Մարիետը փոխում է ափսեներն ու թխվածք է բերում: Ես էլ եմ ուզում թխվածք վերցնել: Հանկարծ կինը, հպարտ ու մի քիչ էլ հանդիմանող ժպիտը շուրթերին, երազկոտ ձայնով ծոր է տալիս.

– Դե գիտես, դու արդեն լրիվ...

Ձայնի մեջ այնքան ցանկասիրություն կա, որ ամուսինն իրար է խառնվում ու ճարպոտ ձեռքով շոյում է կնոջ ծոծրակը:

– Շառլ, դե վերջացրու, արևս, գրգռվում եմ,– ժպտալով շշնջում է՝ բերանը լիքը:

Ես փորձում եմ վերադառնալ գրքիս.

– Բայց որտեղի՞ց ճարեմ:

– Գնիր:

– Իսկ եթե պարոնը ինձ հանդիպի՞:

Բայց նորից լսում եմ կնոջ ձայնը.

– Մարթային որ պատմեմ, ծիծաղից կմեռնի...

Հարևաններս լռել են: Թխվածքից հետո Մարիետը սալոր է մատուցել, ու կինը խիստ զբաղված է. գդալի մեջ բերանով նազելիորեն կորիզներ է ածում: Ամուսինը, աչքերն առաստաղին հառած, սեղանի վրա ինչ-որ քայլերգ է թխկթխկացնում: Այնպիսի տպավորություն է, ասես իրենց բնականոն վիճակը լռությունն է, իսկ խոսակցությունը տենդի կարճատև նոպա է, որ երբեմն-երբեմն է վրա հասնում:

– Բայց որտեղի՞ց ճարեմ:

– Գնիր:

Փակում եմ գիրքը. գնամ մի քիչ զբոսնեմ:

Երբ «Վեզըլիզ» գարեջրատնից դուրս եկա, համարյա ժամը երեքն էր. իմ ողջ ծանրացած մարմնով զգում էի, թե ինչպես է սկսվում օրվա երկրորդ կեսը: Իմ օրվա չէ, իրենց՝ այն բոլոր հարյուր հազար բուվիլցիների, ովքեր միահամուռ ապրելու են այս նույն օրը: Հենց այս ժամին իրենք կիրակնօրյա երկար ու կուշտ ճաշից հետո վեր են կենում սեղաններից, ու իրենց համար ինչ-որ բան արդեն մեռած է: Կիրակին արդեն սպառել է իր անհոգ ջահելությունը: Հիմա պետք է մարսել կերած հավն ու թխվածքը, հագնվել ու դուրս գալ:

Օդում հնչեց «Էլդորադո» կինոսրահի զանգը: Օրը ցերեկով լսվող այդ զրնգոցը կիրակի օրվա սովորական ձայներից է: Մոտ հարյուր հոգի հերթ էին կանգնել կանաչ պատի տակ ու ագահաբար սպասում էին հանդարտ մթնշաղի ժամին, երբ կարելի կլինի թուլանալ ու մոռանալ ամեն ինչ այն ժամին, երբ էկրանը, ստորջրյա ճերմակ քարի պես շողալով, կխոսի ու կերազի իրենց փոխարեն: Սին հույսեր. մեկ է՝ ինչ-որ բան իրենց մեջ մնալու է կծկված, որովհետև չափազանց շատ են վախենում, որ ինչ-որ մեկը հանկարծ կփչացնի իրենց սիրելի կիրակին: Ու շատ շուտով, ինչպես և յուրաքանչյուր կիրակի, բոլորը մնալու են հիասթափված. ֆիլմն ապուշություն կլինի, հարևանն անդադար ծխամորճ կծխի ու կթքի ոտքերի տակ, կամ Լյուսիենն այնքան անտրամադիր կլինի, որ ամբողջ ընթացքում մի քաղցր խոսք չի ասի, կամ էլ, ոնց որ դիտմամբ, հենց այսօր, երբ հազիվ հաջողացրել ենք կինո գնալ, էլի միջկողային նյարդի ցավը կբռնի: Շատ շուտով, ինչպես յուրաքանչյուր կիրակի, կիսախավար սրահում կսկսեն աճել զայրույթի փոքրիկ, համր նոպաները:

Ճանապարհս շարունակեցի ավելի խաղաղ Բրեսան փողոցով: Արևը ցրել էր ամպերը, լավ եղանակ էր: Քիչ առաջ «Լա Վագ» վիլլայից դուրս էր եկել այնտեղ բնակվող ընտանիքը: Աղջիկը, մայթին կանգնած, ձեռնոցներն էր կոճկում: Տեսքից մի երեսուն տարեկան կլիներ: Մայրը, շքամուտքի առաջին աստիճանին ցցված, վստահորեն նայում էր ուղիղ իր առջև ու լիաթոք շունչ քաշում: Հայրն իր անընդգրկելի մեջքով շրջվել էր դեպի ինձ, կռացել կողպեքի վրա ու դուռն էր կողպում: Մինչև նրանց վերադարձը տունը դատարկ ու մութ կմնա: Հարևան՝ արդեն կողպված ու ամայի տներում

հանդարտ ճրթճրթում են կահույքն ու հատակները: Դուրս գալուց առաջ տանտերերը հանգցրել են ճաշասրահի օջախի կրակը: Հայրը միացավ երկու կանանց, ու ընտանիքն առանց մի բառ ասելու առաջ անցավ: Տեսնես ո՞ւր են գնում: Կիրակի օրը բուվիլցիներն այցելում են քաղաքի փառահեղ գերեզմանատունը, գնում են բարեկամների տուն կամ, եթե լրիվ ազատ են, գնում են ծովապատնեշի վրա զբոսնելու: Ես ազատ էի ու շարունակեցի քայլել Բրեսան փողոցով, որը հենց մինչև ծովապատնեշ էլ հասնում է:

Երկինքը բաց կապույտ էր. այստեղ-այնտեղ ծխի քուլաներ ու մի երկու փետրավոր ամպեր էին լողում: Երբեմն-երբեմն ինչ-որ պատահական ամպ ծածկում էր արևը: Հեռվից արդեն տեսնում էի ծովապատնեշի ամբողջ երկայնքով ձգվող սպիտակ ցեմենտից բազրիքը. ճաղերի արանքից երևում էր ծովի փայլը: Դիմացիս ընտանիքը թեքվեց աջ՝ դեպի Օմոնիե-Իլեր փողոց, որ բարձրանում է մինչև Կոտո Վեր բլրի գագաթը: Հայացքով հետևեցի, թե ինչպես են դանդաղ քայլելով բարձրանում վերև երեք սև կետ փայլփլուն ասֆալտի վրա: Հետո թեքվեցի ձախ ու խառնվեցի ծովափին զբոսնող ամբոխին:

Ամբոխն ավելի խայտաբղետ ու բազմազան էր, քան առավոտյան: Թվում էր, թե այս մարդիկ այլևս ուժ չունեին պահելու այն անթերի սոցիալական հիերարխիան, որով այդքան հպարտանում էին ճաշից առաջ: Հիմա առևտրականներն ու պաշտոնյաները քայլում էին կողք կողքի. նրանք արդեն հանդուրժում էին, որ իրենց կողքով կարող են անշուք տեսքով մանր ծառայողներ էլ քայլել՝ արմունկով իրենց դիպչելով կամ նույնիսկ բախվելով ու առաջ անցնելով: Այդ գաղջ զանգվածի մեջ տարրալուծվել էին արիստոկրատությունը, վերնախավին պատկանելը կամ տարբեր մասնագիտական խմբերից լինելը: Մնացել էին միայն մարդիկ, որոնք այլևս ոչինչ չէին ներկայացնում:

Հեռվում ծփացող լույսի ջրափոսը ծովն էր տեղատվության ժամանակ: Ջրից գրեթե չբարձրացող մի քանի խութեր գագաթով ծակում էին այդ վձիտ մակերևույթը: Ավազի մեջ մի երկու ձկնորսական նավակներ էին խրված, մի քիչ այն կողմ լպրծուն քարե խորանարդներ էին, որ խառնիխուռն լցված էին ծովապատնեշի

ստորոտին ալիքներից պաշտպանելու համար. դրանց արանքներում եռում էր ջուրը: Նավահանգստի մուտքի մոտ՝ արևից սպիտակած երկնքի ֆոնին, ուրվագծվում էր ավազահան նավի ստվերը: Ամեն օր այն մինչև կեսգիշեր ոռնում ու տնքում է՝ սատանայական թափով շարժվելով առաջ: Բայց կիրակի օրը բանվորներն ափ են իջնում, ծովում մնում է միայն պահակը, ու նավը լռում է:

Արևը մաքուր ու թափանցիկ էր՝ ասես մի բաժակ սպիտակ գինի: Լույսը հազիվ հպվելով սահում էր մարդկանց մարմինների վրայով ու ո՛չ ստվեր էր տալիս, ո՛չ էլ ծավալ. դեմքերն ու ձեռքերը վերածվել էին բաց ոսկեգույն բծերի: Թվում էր, թե այդ բոլոր վերարկուավոր մարդիկ հանդարտ լողում են գետնից մի քանի մատնաչափ բարձրության վրա: Ժամանակ առ ժամանակ քամին ջրի պես ալեկոծվող ստվերներ էր քշում մեզ վրա, ու դեմքերը մի պահ մարում էին՝ դառնալով կավճի պես սպիտակ:

Կիրակի էր. ճաղաշարի ու ամառանոցների միջև սեղմված ամբոխը փոքրիկ ալիքներով հոսում էր առաջ, ապա հազարավոր առվակների բաժանվելով՝ անհետանում Անդրատլանտյան ընկերության հյուրանոցի հետևում: Ինչքա՜ն երեխաներ կային: Երեխաներին մեքենաներով ինչ-որ տեղ էին տանում, գրկած ման էին տալիս, ձեռքները բռնած զբոսնում էին, կամ երեխաներն էին զույգերով ու եռյակներով ծնողներից առաջ ընկած փքված տեսքով քայլում: Ընդամենը մի քանի ժամ առաջ, երբ կիրակնօրյա առավոտը դեռ թարմ էր, նայում էի այդ բոլոր դեմքերին ու ամեն տեղ գրեթե հաղթական արտահայտություն էի տեսնում: Իսկ հիմա, երբ հոսում են արևի տակ, դրանց վրա միայն փափուկ հանդարտություն ու մի տեսակ հաստատամտություն է երևում, ուրիշ ոչինչ:

Շարժումները քիչ էին. մարդիկ դեռ բարձրացնում էին գլխարկները, բայց առավոտվա եռանդն ու նյարդային ուրախությունն արդեն չկային: Գլուխները բարձր, հայացքները հեռուներին ուղղած՝ մարդիկ իրենց թույլ էին տվել մի քիչ դանդաղեցնել ընթացքն ու տրվել էին քամուն, որ ուռեցնում էր վերարկուների փեշերն ու իրենց հետ էր քշում: Ժամանակ առ ժամանակ կարճ, տեղնուտեղը խեղդվող ծիծաղ էր լսվում կամ մոր կանչ՝ «Ժանո, Ժանո, խելոք մնա»:

Իսկ հետո՝ լռություն: Դեղին ծխախոտի թույլ հոտ. դրանից շրջիկ առևտրականներն են ծխում: «Սալամբո», «Աիշա»՝ կիրակնօրյա սիգարետներ: Մի պահ թվաց, թե որոշ՝ առավել անկաշկանդ դեմքերի վրա ասես մի քիչ տխրություն եմ նկատում. բայց չէ, այդ մարդիկ ո՛չ տխուր էին, ո՛չ էլ ուրախ. հանգստանում էին: Մարդկանց լայն բացած, սառն աչքերն անվրդով արտացոլում էին ծովն ու երկինքը: Շուտով վերադառնալու են տուն, իրենց ընտանիքների հետ նստելու են ճաշասեղանի շուրջը ու մի բաժակ թեյ են խմելու: Իսկ հիմա ուզում են ինչքան հնարավոր է՝ քիչ ծախսել իրենց, խնայել շարժումները, բառերը, մտքերը, ուզում են լողալ հոսանքի ուղղությամբ. ընդամենը մեկ օր ունեն՝ ուղղելու համար իրենց կնճիռները, բռնված ոտքերը, բերանների դառը ծալքերը, որ առաջանում են աշխատանքային շաբաթվա ընթացքում: Ընդամենը մեկ օր: Զգում էին, թե ինչպես են բոպեները հոսում իրենց մատների արանքով. կհասցնե՞ն արդյոք բավականաչափ երիտասարդություն հավաքել, որպեսզի երկուշաբթի առավոտ կարողանան կրկին տնից դուրս գալ: Լիաթոք շունչ էին քաշում, որովհետև ծովի օդն աշխուժացնում է. միայն քնած մարդու շնչառության նման կանոնավոր ու խորը շնչառությունն էր վկայում, որ դեռ ողջ են: Ես ոտքերիս մատների վրա էի քայլում՝ չիմանալով, թե ինչ անեմ իմ պիրկ ու թարմ մարմինն այդ ողբերգական ամբոխում, որ հանգստանում էր:

Ծովն արդեն կապտամոխրագույն թերթաքարի գույնի էր դարձել. դանդաղ մակընթացություն էր սկսվում: Գիշերը ջուրը կբարձրանա. այս գիշեր ծովապատնեշն ավելի ամայի կլինի, քան Վիկտոր-Նուար բուլվարը: Առջևում ու ձախ կողմում կվառվեն նավուղիների կարմիր լապտերները:

Արևը դանդաղ իջնում էր ծովի վրա՝ ընթացքում հրդեհելով նորմանդական ամառանոցի լուսամուտի ապակիները: Ցոլքերից շլացած մի կին ձեռքն ուժասպառ տեսքով տարավ աչքերին ու գլուխը թափ տվեց.

– Կուրանում եմ, Գաստոն,– ասաց անվստահ ծիծաղելով:

– Չէ հա, իսկական աչք շոյող արև է,– ասաց ամուսինը,– արդեն չի տաքացնում, բայց մեկ է՝ հաճելի է:

Կինը շարունակեց՝ շրջվելով ծովի կողմը.

– Ինձ թվում էր՝ կերևար:

– Հույս չունենաս,– ասաց տղամարդը,– հիմա լրիվ արևի մեջ է:

Երևի Կայբոտ կղզու մասին էին խոսում, որի հարավային ափը հիմա պիտի որ երևար ավազահան նավի ու արտաքին նավահանգստի նավամատույցների միջև:

Լույսը մեղմացավ: Այդ անկայուն ժամին ինչ-որ բան ազդարարում էր երեկոյի գալուստը: Կիրակին արդեն անցյալում էր: Թվում էր, թե ամառանոցներն ու մոխրագույն ճաղաշարն արդեն թարմ հիշողություններ էին: Դեմքերը մեկը մյուսի հետևից սկսեցին կորցնել իրենց տոնական արտահայտությունները, մի քանիսն արդեն գրեթե նուրբ էին թվում:

Մի հղի կին հենվել էր կոպիտ տեսքով շեկ երիտասարդի վրա.

– Տես, տես, նայիր,– ասում էր կինը:

– Ի՞նչ նայեմ:

– Տես, ճայերը:

Երիտասարդը թոթվեց ուսերը. ոչ մի ճայ էլ չկար: Երկինքը գրեթե լրիվ մաքրվել էր ու հորիզոնի վրա մի թեթև վարդագունել:

– Ճայները լսեցի: Լսիր՝ ոնց են ճչում:

– Ուղղակի ինչ-որ բան է ճռռում,– պատասխանեց երիտասարդը:

Գազի լամպը փայլեց: Ինձ թվաց, թե այստեղով լապտերավառն անցավ: Երեխաները միշտ հետևում են լապտերավառին, որովհետև նրա գալուստը նշանակում է, որ տուն գնալու ժամանակն է: Բայց չէ, ընդամենը արևի վերջին ցոլքերից էր: Երկինքը դեռ լուսավոր էր, բայց երկիրն արդեն փաթաթվել էր մթնշաղի մեջ: Ամբոխը սկսեց ցրվել. հստակ լսվում էր ծովի աղմուկը: Մի երիտասարդ կին, երկու ձեռքով հենվելով ճաղաշարին, դեպի երկինք բարձրացրեց շրթներկի սևով եզրագծված իր կապույտ դեմքը: Ու ես մի պահ մտածեցի, որ գուցե կսկսեմ սիրել մարդկանց: Բայց վերջիվերջո, սա իրենց կիրակին էր, ոչ թե իմը:

Առաջին լույսը, որ վառվեց, Կայբոտ կղզու փարոսն էր: Մի փոքրիկ տղա կանգ առավ կողքիս ու հիացմունքով շշնջաց. «Վա՛յ, փարո՛սը»:

Ու ես զգացի, որ սիրտս լցվում է արկածի բուռն կանխազգացումով:

***

Թեքվում եմ ձախ ու Վուալիերների փողոցով վերադառնում եմ Փոքրիկ Պրադո: Ցուցափեղկերի երկաթե վարագույրները փակ են: Տուրնբրիդ փողոցը լուսավոր է, բայց դատարկ, այն կորցրել է առավոտվա կարճատև շուքը. այս ժամին այս փողոցն այլևս ոչնչով չի տարբերվում հարևան փողոցներից: Բավական ուժեղ քամի է բարձրացել: Լսում եմ, թե ինչպես է ճռնչում արքեպիսկոպոսի թիթեղյա վեղարը:

Մենակ եմ. մարդկանց մեծ մասը վերադարձել է իրենց տները, երեկոյան թերթն է կարդում ու ռադիո է լսում: Ավարտվող կիրակին մարդկանց բերաններում մոխրի համ է թողել, ու բոլորի մտքերն արդեն ուղղվում են դեպի երկուշաբթին: Բայց ինձ համար ո՛չ կիրակի կա, ո՛չ էլ երկուշաբթի. կան միայն օրեր, որոնք անկարգ հիմշտում են իրար, ու երբեմն էլ՝ հանկարծակի փայլատակումներ, ինչպես այս մեկը:

Ոչինչ չի փոխվել, և այնուամենայնիվ, ամեն ինչ ինչ-որ այլ կերպ գոյություն ունի: Չեմ կարող նկարագրել, ասես նույն Սրտխառնոցն է, սակայն՝ լրիվ հակառակը: Ինձ հետ վերջապես արկած է պատահում, ու երբ ինքս ինձ հարց եմ տալիս, թե ի՞նչ արկած, տեսնում եմ, որ *պատահել է այն, որ ես ես եմ ու ես այստեղ եմ. ես* եմ հիմա կտրում-անցնում գիշերը, ու ես վեպի հերոսի պես երջանիկ եմ:

Շուտով ինչ-որ բան է տեղի ունենալու. ինչ-որ բան ինձ է սպասում Բաս-դը-Վիեյ փողոցի ստվերում. այնտեղ՝ հենց այդ խաղաղ փողոցի անկյունում էլ սկսվելու է իմ կյանքը: Ու ես անդառնալիության զգացումով շարժվում եմ առաջ: Փողոցի անկյունում ինչ-որ սպիտակավուն ուղեսյուն կա: Հեռվից լրիվ սև էր թվում, բայց հիմա ամեն հաջորդ քայլիս հետ ավելի ու ավելի է սպիտակում: Կամաց-կամաց լուսավորվող այդ մութ մարմինն արտառոց տպավորություն է թողնում վրաս. երբ լրիվ սպիտակ դառնա, ես կանգ կառնեմ ուղիղ կողքին, ու հենց այդ ժամանակ էլ կսկսվի արկածը: Ստվերից դուրս եկող այդ սպիտակ փարոսը հիմա արդեն այնքան մոտ է, որ գրեթե սարսափում եմ. մի պահ նույնիսկ մտքովս անցնում է հետ դառնալ:

Բայց կախարդանքը կոտրելն անհնար է: Քայլում եմ առաջ, պարզում եմ ձեռքս, դիպչում սյանը:

Առջևումս Բաս-դը-Վիեյ փողոցն է ու ստվերում կծկված Սեն Սեսիլի ահռելի զանգվածը: Թիթեղյա գլխարկը ճռնչում է: Չգիտեմ՝ արդյոք աշխա՞րհն է հանկարծ սեղմվել, թե՞ ես եմ այնքան անքակտելիորեն իրար ձուլել ձայներն ու ձևերը, որ այլևս անգամ ունակ չեմ ընկալելու, որ այն, ինչ ինձ շրջապատում է, կարող է ինչ-որ ուրիշ բան էլ լինել, քան կա:

Մի պահ կանգ եմ առնում, սպասում եմ, զգում, թե ինչպես է սիրտս խփում. աչքերով պրպտում եմ դատարկ հրապարակը: Ու ոչինչ չեմ տեսնում: Բավական ուժեղ քամի է բարձրացել: Սխալվել եմ, Բաս-դը-Վիեյ փողոցն ուղղակի հերթական կանգառն էր. *այն, ինչ պիտի լինի,* ինձ սպասում է Դյուկոտոն հրապարակի խորքում:

Չեմ շտապում նորից ճանապարհ ընկնել: Ինձ թվում է, թե շոշափել եմ երջանկությանս գագաթնակետը: Մի ժամանակ ինչե՛ր ասես, որ չէի անում Մարսելում, Շանհայում կամ Մեկնեսում այդքան լիարժեք զգացողության հասնելու համար: Իսկ այսօր, երբ այլևս ոչինչ չեմ ակնկալում ու դատարկ կիրակիից հետո պարզապես վերադառնում եմ տուն, այն արդեն այստեղ է:

Շարունակում եմ քայլել: Քամին ինձ հասցնում շչակի ճիչը: Ես մեն-մենակ եմ, բայց քայլում եմ քաղաք մտնող զորքի պես: Հենց այս պահին ծովի վրա նավերից հնչող երաժշտություն է տարածվում, Եվրոպայի բոլոր քաղաքներում վառվում են լույսերը, Բեռլինի փողոցներում կոմունիստներն ու նացիստները կրակում են իրար վրա, գործազուրկները թափառում են Նյու Յորքի մայթերով, կանայք տոթ սենյակներում իրենց զարդասեղանների առաջ նստած ներկում են թարթիչները: Իսկ ես այստեղ եմ՝ այս դատարկ փողոցում, ու Նոյքյոլնի լուսամուտներից հնչող յուրաքանչյուր կրակոց, պատգարակին պառկած վիրավորների յուրաքանչյուր արնաթաթախ զկրտոց, շպարվող կանանց յուրաքանչյուր ճշգրիտ ու նուրբ շարժում արձագանքում է իմ ամեն մի քայլի, սրտիս ամեն մի հարվածի մեջ:

Հասել եմ Ժիլե նրբանցք ու այլևս չգիտեմ՝ ինչ անեմ: Արդյոք նրբանցքի խորքում ինձ չե՞ն սպասում: Բայց չէ՞ որ Դյուկոտոն

հրապարակում էլ՝ Տուրնբրիդ փողոցի վերջում, ինչ-որ բան կա, որն իմ կարիքն ունի ծնվելու համար: Տագնապով լի եմ. ամենաչնչին շարժումս անգամ պարտավորեցնում է ինձ: Չեմ կարողանում գուշակել՝ ինձնից ինչ են ուզում: Եվ այնուամենայնիվ՝ պետք է ընտրել. ես զոհում եմ Ժիլե նրբանցքը, այլևս երբեք չեմ իմանա՝ ինչ էր ինձ համար այնտեղ պահված:

Դյուկոտոն հրապարակը դատարկ է: Մի՞թե սխալվել եմ: Ինձ թվում է՝ չեմ դիմանա այդ հարվածին: Մի՞թե իրոք ինձ հետ ոչինչ չի պատահելու: Դանդաղ մոտենում եմ «Մաբլի» սրճարանի լույսերին: Ինձ կորած եմ զգում, չգիտեմ՝ մտնեմ ներս, թե չէ: Լուսամուտի քրտնած ապակիների միջով նայում եմ ներս:

Սրահը լեփ-լեցուն է: Օդը կապտել է ծխախոտների ծխից ու խոնավ հագուստներից բարձրացող գոլորշուց: Գանձապահուհին նստած է իր սեղանի մոտ: Իրեն լավ եմ ճանաչում. ինձ նման կարմրահեր է ու փորի մեջ ինչ-որ հիվանդություն ունի: Հիմա ինքը հանդարտ փտում է իր շրջազգեստների տակ, ու դեմքին սառել է մելամաղձոտ ժպիտը, որ նման է մանուշակների այն հոտին, որ երբեմն քայքայվող դիակներն են տարածում: Մարմնովս դող է անցնում. ինքն է... ինքն էր ինձ սպասողը: Այս ամբողջ ընթացքում անշարժ նստած է եղել այստեղ՝ իր սեղանի հետևում, ու ժպտացել է: Սրճարանի խորքից ինչ-որ բան վերադառնում է հետ՝ դեպի այս կիրակիի ցիրուցան իրադարձություններն ու դրանք ձուլում իրար, դրանց իմաստ տալիս. ես այս ամբողջ օրն ապրել եմ, որպեսզի ի վերջո հասնեմ այստեղ, ճակատս հենեմ ապակուն ու հիանամ այս նուրբ դեմքով, որ փթթում է նռնագույն վարագույրի ֆոնին: Ամեն ինչ կանգ է առել. կյանքս կանգ է առել. այս մեծ ապակին, ծանր, ջրի պես կապույտ օդը, ճարպոտ ու սպիտակ բույսը ջրի խորքում ու ես ինքս անշարժ ու ավարտուն մի ամբողջություն ենք կազմում. ես երջանիկ եմ:

Երբ վերադարձա Ռիդուտ բուլվար, արդեն դառը հիասթափությունից բացի ուրիշ ոչինչ չէի զգում: Ինքս ինձ ասում էի. «Աշխարհում երևի ուրիշ ոչ մի բան այնքան թանկ չէ ինձ համար, ինչքան արկածի այդ կանխազգացումը: Բայց դա գալիս է, երբ ուզում է, հետո տեղնուտեղը լքում է ինձ, ու երբ արդեն հեռացել է, այնքա՞ն

չոր ու դատարկ եմ մնում: Մի՞թե դեռ շարունակում է իր այդ կարճ, ծաղրական այցելությունները, որովհետև ուզում է ինձ ցույց տալ, որ կյանքս վատնել եմ»:

Իսկ իմ հետևում՝ քաղաքի մեծ, ուղիղ փողոցներում, լապտերների սառը լույսի տակ հոգեվարք էր ապրում մի հոյակապ հասարակական երևույթ. կիրակին մոտենում էր իր ավարտին:

Երկուշաբթի

Ինչպե՞ս կարող էի երեկ գրել այս անհեթեթ ու ճոռոմ նախադասությունը. «Ես մեն-մենակ եմ, բայց քայլում եմ քաղաք մտնող զորքի պես»:

Ես նախադասություններ հորինելու կարիք չունեմ: Ուղղակի գրում եմ որոշ հանգամանքներ պարզաբանելու համար: Պետք է խուսափել գեղարվեստականությունից: Պետք է առանց բառեր փնտրելու գրել այն, ինչ գալիս է գրչի ծայրին:

Ներսումս ինչ-որ տեղ խոր նողկանք եմ զգում, որ երեկ երեկոյան այդքան վեհ էի: Երբ քսան տարեկան էի, հարբում էի ու հետո սկսում բացատրել, որ ես դեկարտյան տեսակի մարդ եմ: Շատ լավ հասկանում էի, որ փքվում ու ինձ հերոս եմ ձևացնում, բայց շարունակում էի ինձ նույն կերպ պահել, դա ինձ դուր էր գալիս: Իսկ հաջորդ օրն ինձ արդեն այնքան զզվելի էի զգում, ասես փսխանքով ծածկված անկողնում արթնացած լինեի: Ես հարբած ժամանակ հետ չեմ տալիս, բայց ավելի լավ կլիներ, եթե հետ տված լինեի: Իսկ հիմա նույնիսկ արդարանալու տեղ չունեմ, որ երեկ հարբած եմ եղել: Ուղղակի վերջին ապուշի նման ոգեշնչվել էի: Հիմա ինքս ինձ մաքրելու կարիք եմ զգում՝ վերացական, ջրի պես թափանցիկ մտքերով:

Արկածի զգացումն անկասկած կապ չունի իրադարձությունների հետ. սա արդեն ապացուցված է: Ավելի շուտ՝ դա այն ձևն է, որով ակնթարթները շարվում են իրար հետևից: Կարծում եմ՝ տեղի է ունենում հետևյալը. հանկարծ սկսում ես զգալ, որ ժամանակը հոսում է, որ յուրաքանչյուր ակնթարթ քեզ հանգեցնում է մի ուրիշ ակնթարթի, իսկ այդ մեկն իր հերթին բերում է հաջորդին և այդպես

շարունակ, որ յուրաքանչյուր ակնթարթ տեղնուտեղը ոչնչանում է, ու չարժի ապարդյուն փորձել այն հետ պահել և այլն: Իսկ հետո այդ հատկությունը վերագրում ես նաև այն իրադարձություններին, որ տեղի են ունենում այդ ակնթարթների *մեջ*. այն, ինչ պատկանում է ձևին, մակագրում ես բովանդակության վրա: Մեծ հաշվով մարդիկ չափազանց շատ են խոսում ժամանակի հոսքի մասին, բայց ոչ ոք երբեք այն չի տեսնում: Ասենք՝ տեսնում ես մի կնոջ, մտածում ես, որ մի օր ծերանալու է, սակայն չես *տեսնում*, թե ինչպես է ծերանում: Բայց որոշ պահերի քեզ թվում է, թե *տեսնում* ես, թե ինչպես է ծերանում, ու զգում ես, որ դու էլ ես ծերանում իր հետ. հենց դա էլ արկածի զգացումն է:

Եթե ճիշտ եմ հիշում, դա կոչվում է ժամանակի անդառնալիություն: Թերևս արկածի զգացումը պարզապես հենց այդ ժամանակի անդառնալիության զգացումն է: Բայց այդ դեպքում ինչո՞ւ միշտ չենք դա զգում: Մի՞թե ժամանակը միշտ չէ, որ անդառնալի է: Երբեմն թվում է, թե ինչ ուզես՝ կարող ես անել, առաջ գնալ, հետ վերադառնալ, կարևոր չէ. երբեմն էլ օղակները պրկվում են, ու այդ պահերին արդեն ոչինչ բաց թողնել չի կարելի, որովհետև նորից սկսելն արդեն անհնար է լինելու:

Աննին կարողանում էր առավելագույնը քաղել ժամանակից: Մի ժամանակ, երբ ինքը Ջիբութիում էր, իսկ ես՝ Ադենում, ու ես քսանչորս ժամով գնում էի իրեն տեսնելու, Աննին հաջողացնում էր այնքան բազմապատկել մեր խնդիրներն ու տարաձայնությունները, մինչև իմ գնալուն կմնար ուղիղ վաթսուն րոպե: Վաթսուն րոպե՝ ուղիղ այնքան, ինչքան պետք է, որպեսզի զգաս, թե ինչպես են վայրկյանները մեկը մյուսի հետևից անցնում: Հիշում եմ այդ ահավոր երեկոներից մեկը: Կեսգիշերին պիտի հետ գնայի: Գնացել էինք բացօթյա կինո. երկուսս էլ հուսահատության եզրին էինք՝ ես էլ, ինքն էլ: Ուղղակի խաղն ինքն էր վարում: Ժամը տասնմեկին՝ ինչ-որ երկար ֆիլմի սկզբում, Աննին բռնեց ձեռքս ու առանց մի բառ ասելու սեղմեց ափերի մեջ: Ես զգացի, թե ինչպես է սուր երջանկության զգացումը կլանում ինձ, ու առանց ժամացույցին նայելու հասկացա, որ արդեն ժամը տասնմեկն է: Այդ պահից սկսած սկսեցինք զգալ, թե ինչպես են րոպեները հոսում: Այդ անգամ բաժանվեցինք

երեք ամսով: Ինչ-որ մի պահի էկրանին լրիվ սպիտակ պատկեր հայտնվեց, խավարը ցրվեց, ու տեսա, որ Աննին լաց է լինում: Հետո՝ կեսգիշերին, ձեռքս ամբողջ ուժով սեղմեց ու բաց թողեց, ու ես վեր կացա ու առանց մի բառ ասելու գնացի: Անթերի աշխատանք էր:

Երեկոյան յոթը

Աշխատանքային օր էր: Այնքան էլ վատ չստացվեց. վեց էջ գրեցի, նույնիսկ որոշակի հաճույքով: Առավել ևս, որ դրանք վերացական մտորումներ էին Պավել 1-ի իշխանության մասին: Երեկվա սանձարձակ խրախճանքից հետո այսօր ամբողջ օրը գոտիս ձգած եմ պահել: Սրտիս դիմելն անիմաստ էր: Փոխարենը ինձ շատ լավ էի զգում՝ տնտղելով ռուսական արիստոկրատիային գործի գցող զսպանակները:

Ուղղակի այդ Ռոլբոնն ինձ արդեն նյարդայնացնում է: Ամենաչնչին բաներից անգամ գաղտնիք է սարքում: Օրինակ՝ ի՞նչ գործ ուներ Ուկրաինայում 1804-ի օգոստոսին: Իր ճամփորդության մասին քողարկված բառերով է պատմում.

«Թող սերունդները դատեն, թե արդյոք իմ ջանքերը, որոնք, ավա՜ղ, հաջողությամբ չպսակվեցին, արժանի՞ չէին ավելիին, քան բիրտ դավաճանությունն էր ու ստորացումները, որոնց ստիպված եղա անմռունչ դիմանալ, չնայած հոգուս խորքում պահում էի այն, ինչը կստիպեր ինձ ծաղրողներին լռել ու նրանց կնետեր սարսափի անդունդը»:

Մի անգամ արդեն ընկել եմ այդ ծուղակը. մարկիզը վերամբարձ խուսափողականությամբ նկարագրում էր 1790-ին դեպի Բուվիլ կատարած իր կարճ ուղևորությունը: Մի ամբողջ ամիս ծախսեցի՝ փորձելով ստուգել իր բոլոր քայլերն ու արարքները: Վերջում պարզվեց, որ արդյունքում ընդամենը հղիացրել էր իր ֆերմերներից մեկի աղջկան: Մի՞թե ոչ այլ ինչ է, քան հասարակ երեսպաշտ:

Սարսափելի բարկացած եմ այդ փոքրիկ, սուտասան պճնամոլի վրա: Երևի սրտնեղությունից է. ինձ հիացնում էր այն, թե ինչպես էր ինքը ստում ուրիշներին, բայց նաև շատ էի ուզում, որ իմ դեպքում

բացառություն աներ. ինձ թվում էր, թե մենք կկարողանայինք իրար հասկանալ այդ բոլոր մահացածների գլուխների վրայով, ու որ վերջիվերջո ինձ, գոնե ի՛նձ կասեր ողջ ճշմարտությունը: Բայց ինքը ոչինչ, բացարձակապես ոչինչ չասաց, համենայնդեպս ոչ ավելին, քան ասում էր Ալեքսանդրին կամ Լուի 18-րդին, ում հիմարացնում էր: Ինձ համար հիմա շատ կարևոր է, որ Ռոլբոնն իրոք արժանի մեկը դուրս գա: Ինքը, իհարկե, երեսպաշտ է, բայց դե ո՞վ երեսպաշտ չէ: Հարցն այն է՝ խոշո՞ր երեսպաշտ է, թե՞ մանր: Ես այնքան բարձր չեմ գնահատում պատմական ուսումնասիրությունները, որ ժամանակս վատնեմ մի մահացածի վրա, ում ձեռքը, եթե ողջ լիներ, ես չէի էլ բարեհաճի սեղմել: Ի՞նչ գիտեմ մարկիզի մասին: Անհնար է երազել ավելի վառ ու գեղեցիկ կյանքի մասին, քան իր ապրածն է, բայց արդյոք ի՞նքն է դրա ստեղծողը: Եթե միայն նամակներն այդքան ճոռոմ չլինեին... Է՜հ, ինչքան կուզեի հայացքը տեսնել. գուցե խոսելիս գլուխը կողքի թեքելու հմայիչ սովորություն ուներ կամ գուցե սիրում էր խորամանկ տեսք ընդունել ու երկար ցուցամատը կպցնել քթին, կամ էլ երբեմն երկու բարեկիրթ ստերի միջև մի ակնթարթ պոռթկում էր բուռն ու վայրի խառնվածքը, որ իսկույն ճնշում էր: Բայց մարկիզը մեռած է և իրենից հետո թողել է միայն մի «Տրակտատ ստրատեգիայի մասին» ու մի «Մտորումներ առաքինության շուրջ»:

Եթե ինձ մի քիչ ազատություն տայի, այնքան հստակ կպատկերացնեի նրան. փայլուն հեգնանքի քողի տակ, որի զոհն այնքան շատերն են դարձել, թաքնված է պարզ, գրեթե միամիտ մարդը: Քիչ է մտածում, բայց միշտ, շնորհիվ ինչ-որ խորքային ունակությունների, անում է հենց այն, ինչ պետք է անել: Խարդախությունները սրտաբաց են, ինքնաբուխ, անմիջական, նույնքան անկեղծ, որքան առաքինության հանդեպ տածած իր սերը: Իր բարեգործներին ու ընկերներին դավաճանելուց հետո ամենայն լրջությամբ կրկին անդրադառնում է կատարված իրադարձություններին այդ ամենից բարոյականության խրատներ քաղելու համար: Համարում է, որ իրավունքի նշույլ անգամ չունի ուրիշների վրա, ինչպես և ուրիշները՝ իր վրա. կարծում է, որ ինքն արժանի չէ այն ընծաներին, որ կյանքն է իրեն անհատույց մատուցում: Կրքոտ ու ամուր կապվում է

ամեն ինչին, բայց շատ հեշտ էլ կտրվում է ամեն ինչից: Իսկ իր բոլոր նամակներն ու աշխատություններն ինքը չի գրել, այլ պատվիրել է ինչ-որ մի վարձու գրչակի:

Եվ սակայն, եթե ի վերջո պիտի հասնեի հենց սրան, ավելի լավ կլիներ, եթե մարկիզ դը Ռոլբոնի մասին վեպ գրեի:

Երեկոյան ժամը փասնմեկը

Ընթրեցի «Ճամփորդների ռանդևուում»: Տիրուհին այնտեղ էր, ստիպված եղա հետը քնել, բայց դա ընդամենը քաղաքավարությունից դրդված արարք էր: Մի քիչ զզվում եմ իրենից. չափազանց սպիտակ է ու վրայից նորածին երեխայի հոտ է գալիս: Ընկել էր բուռն կրքի մեջ ու գլուխս սեղմել կրծքին. կարծում է, թե ճիշտը դա է: Ծածկոցի տակ ցրված շոյում էի իրեն, հետո ձեռքս թմրեց: Մտածում էի մարկիզը դը Ռոլբոնի մասին. ի վերջո ի՞նչն է ինձ խանգարում նրա մասին վեպ գրել: Թողեցի, որ ձեռքս սահի տիրուհու կոնքի վրայով, ու հանկարծ տեսա մի փոքրիկ այգի՝ ցածր, լայնասաղարթ ծառերով, որոնց ճյուղերից ահռելի մեծ ու մազակալած տերևներ էին կախված: Ամեն տեղ մրջյուններ, հազարոտնուկներ ու ցեցեր էին վխտում: Ավելի զզվելի արարածներ էլ կային. դրանց մարմիններն այն տապակած հացի շերտերից էին, որոնցով աղավնու կանապե են պատրաստում. սրանք կողքանց էին շարժվում՝ հենվելով ծովախեցգետնի չանչերի վրա: Լայն տերևները լրիվ սևացել էին վրաները ծեփված միջատներից: Կակտուսի ու տատասկաթզենու հետևում կանգնած էր Հանրային զբոսայգու Վելլեդայի[1] արձանն ու մատնացույց էր անում իր սեռական օրգանները: «Այս այգուց որձկանքի հոտ է գալիս», գոռացի ես:

– Չէի ուզում ձեզ արթնացնել,– ասաց տիրուհին,– բայց սավանի ծալքը խրվել էր հետևիս մեջ, ու համ էլ պիտի իջնեմ ներքև, որ Փարիզի գնացքով եկած հաճախորդներիս սպասարկեմ:

---

[1] Կելտ կամ գերմանացի կույս գուշակուհի, որի առասպելը ոգեշնչել է բազմաթիվ արվեստագետների *(ծ. թ.)*:

Ես ծեծեցի Մորիս Բարեին[1]: Երեք զինվորներ էինք, ու մեզնից մեկի դեմքի մեջտեղում ծակ կար: Մորիս Բարեն մոտեցավ մեզ ու ասաց՝ կեցցեք, ու ամեն մեկիս մի փունջ մանուշակ տվեց: «Հիմա սա ո՞ւր դնեմ»,- ասաց ծակ դեմքով զինվորը: Մորիս Բարեն ասաց. «Մտցրեք ձեր դեմքի ծակի մեջ»: Զինվորը պատասխանեց. «Քամա՛կդ կմտցնեմ»: Ու մենք շուռ տվեցինք Մորիս Բարեին ու շալվարը քաշեցինք ներքև: Շալվարի տակից հագին կարդինալական կարմիր պատմուճան էր: Մենք պատմուճանն էլ բարձրացրինք վերև, ու Մորիս Բարեն սկսեց գոռալ. «Զգո՛ւյշ, տաբատակալներով եմ»: Բայց մենք ճիպոտով արյունլվիկ արեցինք նրան ու հետույքի վրա մանուշակի թերթիկներով նկարեցինք Դերուլեդի[2] գլուխը:

Վերջերս չափազանց հաճախ եմ երազներս հիշում: Ու երևի քնի մեջ շատ եմ շուռումուռ գալիս, որովհետև ամեն առավոտ վերմակս հատակին է հայտնված լինում: Այսօր մեծ պասի նախօրեն է, բայց Բուվիլում դա գրեթե ոչինչ չի նշանակում. ամբողջ քաղաքում հազիվ մի հարյուր հոգի հավաքվի, ովքեր դիմակահանդեսային հագուստներ են հագնելու:

Երբ աստիճաններով իջնում էի, տանտիրուհին ձայն տվեց.

– Նամակ ունեք:

Նամակ: Վերջին նամակը ստացել էի Ռուանի գրադարանավարից անցած տարվա մայիսին: Տանտիրուհին ինձ ուղեկցում է իր աշխատասենյակն ու մեկնում մի երկար, դեղին ու ուռած ծրար. Աննին է գրել ինձ: Արդեն հինգ տարի է՝ իրենից ոչ մի լուր չունեմ: Նամակը նախ ուղարկված է եղել Փարիզի իմ հին հասցեով, վրան փետրվարի 1-ով կնիք կա:

Դուրս եմ գալիս. ծրարը սեղմել եմ մատներիս արանքում ու չեմ համարձակվում բացել: Աննին դեռ նույն տեսակի թղթի վրա է գրում իր նամակները: Տեսնես՝ մինչև հիմա էլ Պիկադիլիի այն նույն փոքրիկ գրախանութի՞ց է գնում: Մտածում եմ՝ սանրվածքն էլ է նույնը թողել. նույն խիտ, շեկ մազերն են, որ այդքան չէր ուզում

---

1 Ֆրանսիացի վիպասան, լրագրող, քաղաքական գործիչ, ֆրանսիական ազգայնականության առանցքային կերպարներից *(ծ. թ.)*:

2 Ֆրանսիացի պոետ, դրամատուրգ, վիպասան, ազգայնական գործիչ *(ծ. թ.)*:

կտրել: Հիմա երևի հայելիների դիմաց նստած համբերատար պայքար է մղում՝ դեմքը փրկելու համար, բայց դա ո՛չ պչրամոլությունից է, ո՛չ էլ ծերանալու վախից. ուղղակի Աննին ուզում է միշտ մնալ այնպիսին, ինչպիսին որ է, հենց այնպիսին, ինչպիսին որ կա: Գուցե հենց դա էլ ամենաշատն էի հավանում իր մեջ՝ այդ իշխող, խստակամ հավատարմությունն իր կերպարի անգամ ամենաչնչին գծերին:

Մանուշակագույն թանաքով գրված հասցեի սեղմ տառերը (թանաքն էլ է նույնը) դեռ մի քիչ փայլում են:

«Պրն Անդրուան Ռոկանտենին»:

Ինչքա՞ն եմ սիրում այս ծրարների վրա կարդալ իմ անունը: Ասես մառախուղի միջից տեսա նրա ժպիտը, նշմարեցի աչքերը, կողքի թեքած գլուխը: Երբ նստած էի լինում, ժպտալով գալիս-կանգնում էր դիմացս: Դեմքս գոտկատեղի բարձրությանն էր լինում, Աննին երկու ձեռքով ամուր բռնում էր ուսերիցս ու սկսում էր ցնցել:

Ծրարը ծանր է. նամակը պիտի որ առնվազն վեց էջ լինի: Նախորդ տանտիրուհուս ագռավի ճանկերը բարձրացել են Աննիի գեղեցիկ ձեռագրի վրա.

««Պրենտանիա» հյուրանոց, Բուվիլ»

Այդ մանր տառերը չեն փայլում:

Նամակը բացելիս հիասթափությունից վեց տարով երիտասարդանում եմ.

«Չեմ հասկանում՝ ոնց է Աննին հաջողացնում միշտ այսպես ուռեցնել իր ծրարները. մեջները երբեք ոչինչ չկա»:

1924-ի գարնանը հարյուր անգամ կրկնել եմ այս նախադասությունը՝ այսօրվա պես փորձելով ծրարի աստառից դուրս կորզել չորս տակ ծալված թղթի կտորը: Աստառը շքեղության մարմնացում է. մուգ կանաչ, ոսկեգույն աստղիկներով, ասես խիտ, օսլայած կտոր լինի: Հենց միայն դա արդեն ծրարի քաշի երեք չորրորդն է կազմում:

Աննին մատիտով է գրել.

«Մի քանի օրից Փարիզում եմ լինելու: Փետրվարի 20-ին արի ինձ մոտ՝ «Էսպանյա» հյուրանոց: Խնդրում եմ («խնդրում եմ» բառն ավելացրել է տողի վրա ու մի զարմանալի պարույրով միացրել է «ինձ մոտ» բառերին): Ես *պետք է* քեզ տեսնեմ: Աննի»:

Մեկնեսում, Տանժերում երեկոյան տուն վերադառնալիս երբեմն մահճակալիս վրա գրություն էի գտնում. «Ուզում եմ քեզ հենց հիմա տեսնել»: Վազելով գնում էի, Աննին հոնքերը բարձրացրած, զարմացած տեսքով բացում էր դուռը. ինձ ասելու էլ ուրիշ ոչինչ չուներ, նույնիսկ մի քիչ նյարդայնացած էր լինում, որ եկել էի: Կգնամ. գուցեև հրաժարվի ինձ ընդունել: Կամ գուցե հյուրանոցի ընդունարանում կասեն. «Մեզ մոտ այդ անունով մարդ չկա»: Չնայած չեմ կարծում, որ այդպես կվարվի: Ուղղակի կարող է մի շաբաթ հետո գրել, որ միտքը փոխել է, թող մնա մի ուրիշ անգամ:

Մարդիկ աշխատանքի են: Զգացվում է, որ անհրապույր պասի նախօրե է լինելու: Մյուտիլե փողոցից թաց փայտի սուր հոտ է գալիս, ինչպես ամեն անգամ, երբ անձրև է գալու: Չեմ սիրում սրա նման տարօրինակ օրերը. կինոներում առավոտյան սեանսներ են, դպրոցականներն արձակուրդի մեջ են. փողոցներում տոնի ինչ-որ աղոտ, աննշմար զգացում կա, որն անդադար պահանջում է, որ իր վրա ուշադրություն դարձնես, բայց հենց սկսում ես նկատել, անէանում է:

Անկասկած գնալու եմ Աննիին տեսնելու, բայց չեմ կարող ասել, որ այդ միտքն ինձ որոշակի ուրախություն է պատճառում: Ինչ նամակը ստացել եմ, տեղս չեմ գտնում: Բարեբախտաբար արդեն կեսօր է. սոված չեմ, բայց կգնամ մի բան ուտելու, որ ժամանակ անցնի: Մտնում եմ Օրլոժեր փողոցի վրայի «Կամիլի մոտ» բիստրոն:

Փոքրիկ տեղ է. այստեղ ամբողջ գիշեր թթու կաղամբով ապուր կամ ռագու են մատուցում: Մարդիկ թատրոն գնալուց հետո այստեղ են գալիս ընթրելու, ոստիկաններն այստեղ են ուղարկում գիշերային գնացքների քաղցած ուղևորներին: Ութ մարմարե սեղան: Պատերի երկայնքով կաշեպատ նստարաններ են դրած: Կարմրավուն բծերով ծածկված երկու հայելի: Երկու պատուհանների ու դռան վրա փայլատ ապակիներ են: Խորքում դրամարկղն է: Մի ուրիշ սենյակ էլ կա՝ կողքի վրա: Բայց այնտեղ երբեք չեմ եղել. զույգերի համար է:

– Ինձ խոզապուխտով ձվածեղ:

Մատուցողուհին՝ մի հսկայամարմին, կարմրաթուշ աղջիկ, տղամարդկանց հետ խոսելիս չի կարողանում ծիծաղը զսպել.

– Իրավունք չունեմ: Կարտոֆիլով ձվածեղ կուզե՞ք: Խոզապուխտը փակի տակ է. միայն բիստրոյի տերն է կտրում:

Ռագու եմ պատվիրում: Տիրոջ անունը Կամիլ է. կոպիտ անտաշի մեկն է:

Մատուցողուհին հեռանում է: Ես մենակ եմ այս հին, մութ սենյակում: Թղթապանակումս Աննիի նամակն է: Ինչ-որ կեղծ ամոթ ինձ թույլ չի տալիս այն վերընթերցել: Փորձում եմ մեկ առ մեկ հիշել նախադասությունները.

«Իմ թանկագին Անտուան»:

Ժպտում եմ. ոչ, դե իհարկե ոչ, Աննին երբեք «իմ թանկագին Անտուան» չէր գրի:

Վեց տարի առաջ մենք հենց նոր էինք փոխադարձ համաձայնությամբ բաժանվել, ու ես որոշել էի մեկնել Տոկիո: Այնտեղից մի քանի բառ գրեցի իրեն: Արդեն չէի կարող գրել «իմ սեր», ու կատարյալ միամտությամբ գրեցի «իմ թանկագին Աննի»:

«Հիանում եմ քո անկաշկանդությամբ,– պատասխանեց,– ես երբեք չեմ եղել ու չեմ էլ լինի քո թանկագին Աննին: Ու խնդրում եմ՝ դու էլ երբեք չկարծես, թե դու իմ թանկագին Անտուանն ես: Եթե չգիտես, թե ինձ ինչպես դիմես, ընդհանրապես մի դիմիր, այդպես շատ ավելի լավ կլինի»:

Թղթապանակիցս հանում եմ նամակը: «Իմ թանկագին Անտուան» չի գրել: Նամակի ներքևում նույնպես ոչ մի քաղաքավարական ձևակերպում չկա. «Ես պետք է քեզ տեսնեմ: Աննի»: Ոչ մի բան, որ կարող է ինձ ստիպել մտածել իր զգացմունքների մասին: Բողոքելու տեղ չունեմ. այստեղ նույնպես ակնհայտորեն տեսնում եմ իր սերը կատարելության հանդեպ: Աննին միշտ ուզում էր «կատարյալ ակնթարթներ» իրականացնել: Եթե ակնթարթը չէր հանձնվում, Աննին իսպառ կորցնում էր հետաքրքրությունն ամեն ինչի նկատմամբ, աչքերը դառնում էին անկյանք, սկսում էր անցումային

տարիքում գտնվող մեծ աղջկա տեսքով ծուլորեն այս ու այն կողմ քայլել: Կամ հետս կռվելու առիթ էր փնտրում.

«Քիթդ այնքան հանդիսավոր ես մաքրում, ասես բուրժուա լինես, ու հազալիս էլ բերանդ ինքնագոհ տեսքով թաշկինակով ծածկում ես»:

Պետք էր ոչ թե պատասխանել, այլ ուղղակի սպասել. հանկարծ ինձ համար անընկալելի ինչ-որ ազդանշանից Աննին կծկվում էր, քարացնում էր գեղեցիկ դեմքի նվաղուն դիմագծերն ու վերսկսում իր քրտնաջան աշխատանքը: Իր կախարդանքը հրամայական էր ու առինքնող. շուրջը նայելով կիսաձայն ինչ-որ բան էր երգում, հետո ժպտալով վեր էր կենում, մոտենում էր ինձ ու ուսերիցս բռնած ցնցում ու մի քանի ակնթարթ թվում էր, թե հրամաններ է տալիս իրեն շրջապատող իրերին: Հետո ցածրաձայն ու արագ բացատրում էր, թե ինչ է ակնկալում ինձնից.

«Լսիր, չե՞ս ուզում գոնե մի քիչ ջանք թափել: Ուզում ես, չէ՞: Անցած անգամ քեզ ահավոր հիմարի պես էիր պահում: Չե՞ս տեսնում՝ այս պահն ինչքան սիրուն կարող էր լինել: Նայիր երկնքին, նայիր գորգի վրայի արևի գույնին: Իսկ ես կանաչ զգեստս եմ հագել ու ընդհանրապես շպարված չեմ, իսկականից լրիվ գունատ եմ: Տեղիցդ շարժվիր, գնա ստվերում նստիր: Հասկանում ես, չէ՞, ինչ պիտի անես: Դե տեսնենք: Բայց ի՞նչ հիմարն ես: Դե մի բա՛ն ասա»:

Ես զգում էի, որ նախաձեռնության հաջողությունն ինձնից է կախված. ակնթարթն ինչ-որ մութ իմաստ ուներ, որ հարկավոր էր մշակել ու հասցնել կատարելության. պետք էր որոշակի շարժումներ անել, որոշակի բառեր արտասանել: Ես խորտակվում էի պատասխանատվությանս բեռի տակ, աչքերս լայն բացում էի ու ոչինչ չէի տեսնում, թպրտում ու պատեպատ էի զարկվում այդ բոլոր ծեսերի մեջ, որ Աննին էր հընթացս հորինում, ու նուրբ սարդոստայնների նման դրանք պատառոտում էի իմ կոպիտ ձեռքերով: Այդ պահերին նա ինձ ատում էր:

Դե իհարկե կգնամ Աննիին տեսնելու: Ես մինչև հիմա էլ հարգում ու ամբողջ սրտով սիրում եմ իրեն: Ու հույս ունեմ, որ մի ուրիշն ինձնից ավելի հաջողակ ու ճարպիկ է եղել կատարյալ ակնթարթների այդ խաղում:

«Քո այդ գրողի տարած մազերն ամեն ինչ փչացնում են,– ասում էր ինքը:– Ի՞նչ անես կարմրահեր տղամարդու հետ»:

Ժպտում էր: Առաջինը կորցրի իր աչքերի մասին հիշողությունը, հետո՝ սլացիկ մարմնի: Ամենաշատը, ինչքան կարող էի, երկար մտապահեցի ժպիտը, հետո՝ երեք տարի առաջ, դա էլ կորավ: Քիչ առաջ, երբ նամակը վերցնում էի տանտիրուհուս ձեռքից, ամեն ինչ հանկարծ հետ եկավ. ինձ թվաց, թե տեսնում եմ՝ ինչպես է Աննին ժպտում: Մինչև հիմա էլ փորձում եմ հիշել այդ ժպիտը. ես կարիք ունեմ զգալու այն ողջ քնքշանքը, որ Աննին էր ինձ ներշնչում. այդ քնքշանքն այստեղ է՝ շատ մոտ, հենց կողքիս, ուր որ է՝ կծնվի: Բայց ժպիտը հետ չի գալիս. վերջ: Ու ես մնում եմ դատարկ ու չոր:

Ինչ-որ մեկը սրթսրթալով մտնում է ներս.

– Բարև ձեզ, տիկնայք և պարոնայք:

Առանց խունացած վերարկուն հանելու նստում է: Երկար մատները միահյուսելով՝ իրար է շփում ափերը:

– Ձեզ ի՞նչ մատուցեմ:

Մարդը վեր է թռչում, անհանգիստ նայում է շուրջը.

– Հը՞: Հա, ինձ ջրով «Բիրր» բերեք, էլի:

Մատուցողուհին տեղից չի շարժվում: Հայելու մեջ դեմքի արտացոլանքն ասես խոր քնած լինի: Իրականում աչքերը բաց են, բայց դրանք ընդամենը նեղ ճեղքեր են: Ինքն այդպիսինն է. երբեք չի շտապում հաճախորդներին սպասարկել, միշտ պիտի մի պահ կանգ առնի ու մտածի նրանց պատվերների մասին: Պիտի պատկերացնի այն շիշը, որ հիմա կվերցնի սեղանիկի հետևից, շշի սպիտակ պիտակն ու վրայի կարմիր տառերը, միջի թանձր, սև օշարակը, որ լցնելու է, մի տեսակ ասես խմողը մի քիչ էլ ինքը լինի:

Աննիի նամակը սահեցնում եմ թղթապանակիս մեջ. արդեն ինչ կարող էր՝ տվել է ինձ. ես չեմ կարողանում դրա միջոցով հասնել այն կնոջը, որ թուղթը վերցրել է ձեռքը, ծալել, դրել է ծրարի մեջ: Արդյոք միայն անցյալ ժամանակո՞վ է հնարավոր մտածել ինչ-որ մեկի մասին: Քանի դեռ իրար սիրում էինք, թույլ չէինք տալիս, որ մեր ամենաչնչին ակնթարթը, ամենաթեթև ցավն անգամ պոկվի մեզնից ու մնա հետևում: Ամեն ինչ՝ ձայները, բույրերը, օրվա նրբերանգները, նույնիսկ բարձրաձայն չասած մտքերը կրում էինք մեզ

հետ, ու ամեն ինչ կենդանի էր մնում, ու հիմա էլ ենք շարունակում դրանք վայելել ու դրանից տառապել: Ոչ մի հիշողություն, միայն անողոք, կիզիչ սեր, ու չկա ստվեր, չկա նահանջի տեղ, չկա ապաստան: Երեք միաժամանակ ներկա տարիներ: Հենց դրա համար էլ բաժանվեցինք. մենք այդ ամբողջ բեռը կրելու ուժ այլևս չունեինք: Իսկ հետո, երբ Աննին ինձ լքեց, այդ երեք տարիներն ակնթարթորեն ու միանգամից գահավիժեցին անցյալի մեջ: Ես նույնիսկ չէի էլ տառապում, ես ինձ դատարկ էի զգում: Իսկ հետո ժամանակը շարունակեց իր հոսքը, ու դատարկությունը մեծացավ: Ապա Սայգոնում, երբ արդեն որոշել էի վերադառնալ Ֆրանսիա, այն ամենը, ինչ դեռ մնում էր՝ օտար դեմքերը, վայրերը, կառամատույցները՝ երկար գետերի ափերին, ամեն ինչ անէացավ: Ու հիմա իմ անցյալը ոչ այլ ինչ է, քան մի ահռելի անդունդ: Իսկ իմ ներկան ահա այս սև բլուզով մատուցողուհին է՝ հենց այս մարդը, ով սեղանիկի կողքին կանգնած՝ երազների գիրկն է ընկել: Թվում է՝ այն ամենը, ինչ գիտեմ կյանքիս մասին, գրքերում եմ կարդացել: Բենարեսի պալատները, Բորոտ արքայի դարավանդը, Ճավա կղզու տաճարները իրենց քարուքանդ եղած հսկայական աստիճաններով մեն-մի պահ արտացոլվել են աչքերումս, բայց մնացել են այնտեղ՝ նույն տեղում: Երեկոյան «Պրենտանիա» հյուրանոցի առջևով անցնող տրամվայն իր ապակիների մեջ արտացոլված նեոնե ցուցանակի լույսերը հետը չի տանում, ընդամենը մի ակնթարթ վառվում է ու հետո հեռանում սև ապակիներով:

Տղամարդը հայացքն ինձնից չի կտրում. արդեն սկսում եմ նյարդայնանալ: Շատ է երևակայում իրեն: Մատուցողուհին վերջապես որոշում է նրան սպասարկել: Ծուլորեն բարձրացնում է մեծ, մուգ ձեռքը, վերցնում շիշն ու բաժակի հետ բերում է տղամարդուն:

– Խնդրեմ, պարոն:

– Պարոն Աշիլ,– քաղաքավարի պատասխանում է վերջինս:

Մատուցողուհին առանց պատասխանելու լցնում է խմիչքը. հանկարծ տղամարդն արագ քաշում է մատը քթի վրայից ու երկու ձեռքերը՝ ափերը ներքև, դնում է սեղանին: Գլուխը հետ է գցել, աչքերը փայլում են: Հետո սառը տոնով ասում է.

– Խեղճ աղջիկ:

Մատուցողուհին ցնցվում է ու ես էլ եմ ցնցվում. տղամարդն ինչ-որ անորոշ, թերևս զարմացած տեսք է ընդունել, ասես հենց նոր ինքը չէր խոսողը, այլ ուրիշ մեկը: Երեքս էլ մեզ անհարմար ենք զգում:

Առաջինն ուշքի է գալիս գիրուկ մատուցողուհին. ինքն իսպառ զուրկ է երևակայությունից: Արժանապատվությամբ ոտքից գլուխ չափում է պարոն Աշիլին. շատ լավ գիտի, որ կարող է ընդամենը մի ձեռքով նրան տեղից պոկել ու շպրտել դուրս:

– Էդ ինչո՞ւ եմ խեղճ աղջիկ:

Տղամարդը տատանվում է: Իրար խառնված նայում է մատուցողուհուն, հետո սկսում է ծիծաղել: Դեմքը ճմռթվում, ծածկվում է հազարավոր կնճիռներով, թույլ պտտում է դաստակը.

– Նեղացավ: Բան էր, ասացի, էլի, հենց էնպես ստացվեց: Դիտմամբ հո չէի ասում:

Բայց մատուցողուհին շրջվում ու հեռանում է սեղանիկի հետևը. իրոք լուրջ վիրավորված է: Տղամարդը շարունակում է ծիծաղել.

– Հա հա՛: Դե լա՛վ, ուղղակի բերանիցս թռավ, էլի: Ջղայնացար՞: Ջղայնացած է,– փաստում է՝ հարևանցի դիմելով ինձ:

Գլուխս շրջում եմ: Մի քիչ բարձրացնում է բաժակը, բայց խմելու մտադրություն չունի. զարմացած ու նեղված տեսքով աչքերն է կկոցում, ասես ինչ-որ բան է ուզում հիշել: Մատուցողուհին նստել է դրամարկղի հետևում ու շյուղերը ձեռքն առել: Ամեն ինչ կրկին լուռ է, սակայն սա այլևս նույն լռությունը չէ: Ահա և անձրևն էլ սկսվեց. թույլ թակում է փայլատ ապակիները: Եթե դրսում դեռ դիմակահանդեսային հագուստներով երեխաներ են մնացել, ստվարաթղթե դիմակներն անձրևից թրջվելու են ու կեղտոտվեն:

Մատուցողուհին վառում է լամպերը. դեռ ժամը երկուսը չկա, բայց երկինքը լրիվ սև է, չի կարողանում մթի մեջ գործել: Մեղմ լույս է. մարդիկ հիմա նստած են իրենց տներում, անկասկած՝ իրենք էլ են լույսերը վառել: Կարդում են կամ պատուհանից նայում երկնքին: Իրենց համար... Իրենց համար ամեն ինչ այլ է: Իրենք այլ կերպ են ծերացել: Ապրում են ժառանգած բարիքների ու ստացած նվերների մեջ, ու կահույքի կտորներից յուրաքանչյուրը մի հիշողություն է: Պատի ժամացույցներ, մեդալիոններ, դիմանկարներ, խեցիներ,

պրեսս-պապյեներ, վարագույրներ, շալեր: Իրենց պահարանները լիքն են շշերով, կտորներով, հին շորերով, ամսագրերով. իրենք պահել են ամեն ինչ: Անցյալը սեփականատիրոջ շքեղություն է:

Ե՞ս որտեղ պիտի պահեի անցյալս: Անցյալը գրպանդ չես դնի. պիտի տուն ունենաս, որտեղ ամեն ինչ կտեղավորես: Իսկ ես միայն իմ մարմինն ունեմ. միայնակ մարդն իր միայնակ մարմնով չի կարող կասեցնել հիշողությունները, դրանք անցնում են իր միջով: Բայց դե բողոքելու տեղ էլ չունեմ. ես միայն մի բան էի ուզում՝ ազատ լինել:

Կարճահասակ տղամարդը տեղում անհանգիստ շարժվում ու հոգոց է հանում: Լրիվ գունդուկծիկ է եղել վերարկուի մեջ, բայց ժամանակ առ ժամանակ ուղղվում ու ամբարտավան տեսք է ընդունում: Ինքը նույնպես անցյալ չունի: Եթե լավ փնտրես, կարող ես հիարկե ինչ-որ բարեկամների մոտ, ովքեր իրեն այլևս չեն այցելում, գտնել որևէ հարսանիքի ժամանակ արված իր լուսանկարը՝ օսլայած օձիքով, կրծքակալով վերնաշապիկով ու երիտասարդի կոշտ բեղիկներով: Ինձնից ամենայն հավանականությամբ դա էլ չի մնացել:

Կրկին ինձ է նայում: Այս անգամ հաստատ հետս խոսելու է. ինձ փշերի վրա եմ զգում: Մենք միմյանց նկատմամբ ոչ մի համակրանք չենք զգում. ուղղակի նման ենք իրար ու վերջ: Ինքն էլ է ինձ նման մենակ, բայց ինձնից ավելի խոր է խրված իր մենակության մեջ: Հավանաբար ինքն էլ իր Սրտխառնոցին է սպասում կամ էլ դրա նման մի ուրիշ բանի: Փաստորեն, արդեն այնպիսի մարդիկ կան, ովքեր ինձ *ճանաչում են*, նայում են ինձ ու մտածում. «Մերոնցից մեկն է»: Եվ ի՞նչ: Ի՞նչ է ուզածը: Պիտի որ լավ իմանա, որ մենք իրար համար բացարձակապես ոչ մի բան չենք կարող անել: Ընտանիքներն իրենց տներում են՝ շրջապատված իրենց հիշողություններով: Իսկ մենք՝ հիշողությունից զուրկ երկու նավաբեկորներս, այստեղ ենք: Եթե հիմա հանկարծ տեղից վեր կենա ու ինձ դիմի, կպայթեմ:

Դուռը շրխկոցով բացվում է. դոկտոր Ռոժեն է:

– Բարև բոլորին:

Մտնում է ներս՝ կատաղի, կասկածամիտ. մի քիչ երերում է մարմնի բեռան տակ հազիվ դիմացող երկար ոտքերի վրա: Կիրակի օրերին իրեն հաճախ եմ տեսնում «Վեզըլիզ» գարեջրատանը, բայց

ինքն ինձ չի ճանաչում: Ժուանվիլի պաշտոնաթող մարզիչների կառուցվածքն ունի. թևերը՝ ազդրերի չափ հաստ, կրծքի շրջանագիծը՝ հարյուր տասը, ու հազիվ է ոտքի վրա մնում:

– Ժաննա, Ժաննա, փոքրիկս:

Շորորալով քայլում է կախիչի մոտ ու ֆետրե գլխարկը կախում է կեռիկից: Մատուցողուհին ծալել է գործվածքն ու անշտապ, քնկոտ մոտենում է դոկտորին՝ վերջինիս իր անջրանցիկ վերարկուից դուրս կորզելու համար:

– Ի՞նչ կխմեք, դոկտոր:

Վերջինս խստորեն զննում է մատուցողուհուն: Այ սա է տղամարդու գեղեցիկ գլուխը: Մաշված, կյանքից ու կրքերից ակոսված: Բայց դոկտորը հասկացել է կյանքի իմաստը, սանձել է իր կրքերը:

– Գաղափար անգամ չունեմ՝ ինչ եմ ուզում,– ասում է բամբ ձայնով:

Փլվում է դիմացիս նստարանին, սրբում է ճակատը: Երբ ոտքի վրա չի, իրեն հոյակապ է զգում: Մեծ, սև ու հրամայող աչքերը վախ են ներշնչում:

– Ինձ... Ինձ, ինձ, ինձ կալվադոս բեր, զավակս:

Մատուցողուհին առանց տեղից շարժվելու դիտում է դոկտորի վիթխարի, կնճռոտ դեմքը: Էլի երազների գիրկն է ընկել: Կարճահասակ տղամարդը բարձրացրել է գլուխն ու թեթևացած ժպտում է: Եվ իսկապես հսկան մեզ փրկեց: Քիչ առաջ այստեղ ինչ-որ չարագուշակ բան կար, որ ուր որ է՝ հարձակվելու էր մեզ վրա: Իսկ հիմա կարող եմ խոր շունչ քաշել. մենք մարդկանց միջավայրում ենք:

– Հիմա բերո՞ւմ ես կալվադոսս, թե՞ չէ:

Մատուցողուհին ցնցվում ու գնում է: Դոկտորը տարածել է իր հաստ ձեռքերն ու երկու կողմից ամուր բռնել է սեղանի եզրերը: Պարոն Աշիլը երջանկության մեջ է. շատ կուզեր գրավել դոկտորի ուշադրությունը: Բայց դե իզուր է ոտքերը ճոճում ու թռվռում նստարանի վրա. մեկ է՝ այնքան փոքր է, որ չի կարողանում աղմուկ հանել:

Մատուցողուհին բերում է կալվադոսը: Հետո գլխի շարժումով դոկտորին ցույց է տալիս իր հարևանին: Դոկտոր Ռոժեն ամբողջ մարմնով դանդաղ շրջվում է կարճահասակ տղամարդու կողմը. վիզը չի թեքվում:

– Այ ծեր տակա՞նք, դո՛ւ ես,– գոռում է,– դեռ չե՞ս մեռել: Ու դուք սրա նմաններին նե՞րս եք թողնում,– դիմում է մատուցողուհուն:

Գիշատչի աչքերը հառել է փոքրիկ մարդու վրա: Այդ ուղիղ հայացքն ամեն ինչ իր տեղն է դնում: Բացատրում է.

– Եղած-չեղածը ծեր խփնվածի մեկն է:

Դոկտորը նույնիսկ նեղություն չի քաշում ցույց տալու, որ կատակ է անում: Ինքը գիտի, որ ծեր խփնվածը չի բարկանա, այլ ընդամենը կժպտա: Եվ իրոք, հլու-հնազանդ ժպտում է: Ծեր խփնվածը թուլանում է, իրեն պաշտպանված է զգում ինքն իրենից. այսօր իր հետ այլևս ոչինչ չի պատահի: Եվ ամենասարսափելին այն է, որ ես էլ եմ հանդարտվում: Փաստորեն, ընդամենը ծեր խփնվածի մեկն էր, ընդամենը, ուրիշ ոչինչ:

Դոկտորը ծիծաղում է, հետո դավադիր ու հրավիրող հայացք է նետում իմ ուղղությամբ. անկասկած հասակիս, ինչպես նաև մաքուր վերնաշապիկիս շնորհիվ ինքը պատրաստ է ինձ մասնակից դարձնելու իր կատակներին:

Ես չեմ ծիծաղում ու չեմ պատասխանում իր նշաններին. այդժամ ինքը, շարունակելով ծիծաղել, ինձ վրա է փորձարկում իր աչքերի սահմռկեցուցիչ կրակը: Մի քանի վայրկյան լուռ նայում ենք իրար. ձևացնելով, թե կարծատես է՝ դոկտորը կկոցած աչքերով վերից վար չափչփում է ինձ. մտածում է, թե ինձ ուր դասակարգի: Խփնվածների դասակարգո՞ւմ: Գուցե սրիկաների՞:

Եվ սակայն առաջինն ինքն է հայացքը թեքում. տեսար դու, փուքսը մի քիչ թողեց մենակ նստած ու ոչ մի հասարակական կարևորություն չունեցող ինչ-որ մեկի առաջ, իմաստ էլ չունի դրա մասին խոսել, տեղնուտեղը մոռացվող բան է: Ծխախոտ է փաթաթում, կպցնում, հետո անշարժանում է, ինչպես ծերունիներն են անշարժանում՝ կոպիտ աչքերը նույն կետին հառած:

Լավ կնճիռներ են. ինչ տեսակի կնճիռ ասես ունի. ճակատին՝ հորիզոնական ակոսներ, աչքերի անկյուններում՝ սագի տոտիկներ, բերանի երկու կողմերում՝ դառը ծալքեր, էլ չասած դնչի տակ կախված դեղին լարերի մասին: Խնդրեմ՝ ահա մեկը, ում բախտը բերել է. նույնիսկ հեռվից տեսնելիս միանգամից մտքովդ անցնում է, որ այս մարդը շատ է տանջվել ու ապրել է հագեցած կյանքով: Ասենք՝ դոկտորը

լրիվ արժանի է իր դեմքին, որովհետև գեթ մի վայրկյան անգամ չի տատանվել, թե ինչպես է պետք պահել ու օգտագործել իր անցյալը. ուղղակի լցրել է ծղոտով ու դարձրել խրտվիլակ, որ կանայք ու երիտասարդները կարողանան դրանից փորձ քաղել:

Պարոն Աշիլն այնքան երջանիկ է, ինչքան երևի վաղուց չի եղել: Հիացմունքից բերանը բաց է մնացել. նստած փոքրիկ կումերով խմում է իր «Բիրրն» ու թշերն է փքում: Դե իհարկե՝ դոկտորը վաղուց արդեն հասկացել է, թե ինչպես է պետք նրա հետ վարվել: Դոկտորն այն մարդկանցից չէ, ովքեր նեղվում են նյարդային նոպայի եզրին գտնվող ծեր խփնվածներից. մի լավ քոթակ, մի քանի կոշտ, ճաղկող բառեր, դրանց նմաններին ուրիշ բան պետք էլ չի: Դոկտորը փորձ ունի: Ինքը պրոֆեսիոնալ փորձ ունեցող է. բժիշկները, հոգևորականները, դատավորներն ու սպաները մարդուն այնքան լավ են ճանաչում, ասես իրենք են արարել:

Ամաչում եմ պարոն Աշիլի փոխարեն: Ախր ես ու ինքը նույն տեսակի ենք, մենք պետք է միավորվեինք նրանց դեմ: Բայց ինքն ինձ դավաճանել ու անցել է նրանց կողմը. ինքն էլ է անկեղծորեն հավատում Փորձին: Բայց ոչ իր փորձին, ոչ էլ իմ: Դոկտոր Ռոժեի փորձին է հավատում: Մի քիչ առաջ պարոն Աշիլն իրեն խորթ էր զգում, կարծում էր, թե լրիվ մենակ է, իսկ հիմա արդեն հաստատ գիտի, որ իր նման մարդիկ լիքն են. դոկտոր Ռոժեն հանդիպել է նրանց, կարող է պարոն Աշիլին պատմել նրանցից յուրաքանչյուրի պատմությունն ու ասել, թե վերջում ինչ եղավ: Պարոն Աշիլն ընդամենը մասնավոր դեպք է, որը հեշտությամբ կարելի է հանգեցնել որոշ ընդհանուր գաղափարների:

Ինչքա՞ն կուզեի ասել, որ իրեն մոլորեցնում են, որ ինքը հիմա միամտորեն մտել է ամբարտավանների հորինած խաղի մեջ: Պրոֆեսիոնալ փորձ ունեցողնե՞ր: Չէ մի չէ. դրանք թմրած ու կիսաքուն մի կերպ քարշ են տվել իրենց ամբողջ կյանքը, անհամբերությունից գլխապատառ ամուսնացել ու պատահական երեխաներ են ունեցել: Սրճարաններում, հարսանիքներում ու թաղումներում հանդիպել են ուրիշ մարդկանց: Ժամանակ առ ժամանակ ընկնելով հորձանուտի մեջ՝ թպրտացել են ու դուրս պրծել՝ առանց հասկանալու, թե գլխներին ինչ է եկել: Ամեն ինչ, որ տեղի է ունեցել իրենց շուրջը,

սկսվել ու ավարտվել է իրենց կյանքի սահմաններից դուրս. ինչ-որ երկարավուն, մութ մարմիններ, հեռվից եկող ինչ-որ իրադարձություններ հպանցիկ ու արագ դիպել են նրանց, իսկ երբ շրջվել են, որ տեսնեն ինչ էր, ամեն ինչ արդեն վերջացած է եղել: Ու հետո՝ քառասունին մոտ, այդ մարդիկ իրենց փոքրիկ կամակորություններն ու իմացած մի քանի ասացվածքները կնքում են «փորձ» անվամբ ու սկսում են գործել ավտոմատ վաճառող սարքի պես. մետաղադրամը գցում ես ձախ ճեղքի մեջ՝ ահա քեզ մի բուռ ուսանելի պատմություններ՝ փաթաթված փայլուն թղթի մեջ. մետաղադրամը գցում ես աջ ճեղքի մեջ՝ համեցեք-ստացեք մի երկու անգին խորհուրդ, որ թաց կարամելի նման կպչում են ատամներիդ ու պոկ չեն գալիս: Եթե այդպես վերցնենք, ես էլ կարող էի շատերի համար ցանկալի հյուր դառնալ, ու իմ մասին կասեին, որ ես հռչակավոր ճանապարհորդ եմ: Միանգամայն ճիշտ է, մուսուլմանները պպզած են միզում. հնդիկ մանկաբարձուհիները արյունը կանգնեցնելու համար աթարի մեջ փշրած ապակի են օգտագործում. Բոռնեոյում, երբ աղջկա ամսականները սկսվում են, երեք օր ու գիշեր մնում է տան կտուրին: Վենետիկում գոնդոլաներով թաղում եմ տեսել, Սևիլիայում՝ Սուրբ շաբաթվա տոնակատարությունները, տեսել եմ Օբերամերգոյի միստերիան: Բնականաբար այդ ամենն իմ իմացությունների ընդամենը մի փոքրիկ նմուշն է. ես կարող էի հարմար տեղավորվել բազկաթոռի մեջ ու ծիծաղկոտ տոնով սկսել.

«Թանկագին տիկին, իսկ դուք լսե՞լ եք Ջիհլավայի մասին: Դա մի գողտրիկ ու հետաքրքիր քաղաք է Մորավիայում, ուր ես բախտ ունեցա լինելու 1924-ին...»:

Իսկ դատարանի նախագահը, ով իր կյանքի ընթացքում բազմաթիվ նման դեպքերի հետ առնչված կլիներ, պատմությանս վերջում ձայնի իրավունք կվերցներ ու կշարունակեր.

«Դուք իրավացի եք, թանկագին պարոն, այդ ամենն այնքա՞ն հատուկ է մարդկանց: Ես ինքս էլ նման մի դեպքի եմ հանդիպել, երբ դեռ նոր էի սկսում իմ կարիերան: 1902 թիվն էր: Ես Լիմոժում դատավորի տեղակալ էի...»:

Ուղղակի հարցն այն է, որ դեռ երիտասարդ տարիքում արդեն հասցրել էի մինչև կոկորդս կշտանալ այդ ամենից: Ու ես դեռ

պրոֆեսիոնալների ընտանիքում չեմ մեծացել: Բայց դե սիրողներ էլ կան: Քարտուղարներն են, ծառայողները, առևտրականները, բոլոր նրանք, ովքեր սրճարաններում լսում են ուրիշներին. քառասունի կողմերը սրանք սկսում են զգալ, որ բերնեբերան լիքն են փորձով, որը չեն կարող իրացնել ուրիշների վրա: Բարեբախտաբար իրենք արդեն բազմացել ու երեխաներ են ծնել, որոնց էլ ստիպում են տեղում սպառել իրենց ողջ փորձը: Այս մարդիկ շատ կուզեին մեզ հավատացնել, որ իրենց անցյալն իզուր չի կորել, որ իրենց հիշողությունները կամաց-կամաց խտացել են ու սահուն փոխակերպվել Իմաստնության: Հարմարավետ անցյալ է, չէ՞: Գրպանի անցյալ՝ փոքրիկ, ոսկեզօծ կազմով գրքույկ՝ մեջը լիքը ասույթներ ու խրատներ: «Հավատացեք ինձ, իմ փորձից եմ ասում, իմ իմացած ամեն ինչը ես կյանքից եմ սովորել»: Իբր թե կյանքը երբևէ իր վրա կվերցներ նրանց փոխարեն մտածելու բեռը: Սրանք ամեն նոր բան բացատրում են հնով, իսկ հինը՝ է՛լ ավելի հին իրադարձություններով, ինչպես այն պատմաբանները, ովքեր Լենինին ներկայացնում են որպես ռուս Ռոբեսպիեռ, իսկ Ռոբեսպիեռին՝ որպես ֆրանսիացի Կրոմվել: Այդ մարդկանց ամբարտավան տեսքի հետևում նշմարվում է խոժոռ ծուլության ստվերը. տեսնելով, թե ինչպես են երևույթները հերթով հաջորդում միմյանց, սրանք հորանջում ու մտածում են, որ ոչինչ նոր չէ այս երկնքի տակ: «Ծեր խփնվածի մեկը», ու դոկտոր Ռոժեն աղոտ մտաբերում է իր տեսած մյուս բոլոր ծեր խփնվածներին, որոնցից ոչ մեկին էլ առանձին վերցրած չի հիշում: Սրանից հետո պարոն Աշիլն ինչ էլ որ անի, միևնույն է, մենք անակնկալի չենք գա, *քանի որ* ինքն ընդամենը ծեր խփնվածի մեկն է:

Բայց ինքը բնավ էլ ծեր խփնվածի մեկը չէ. ինքը վախենում է: Ինչի՞ց է վախենում: Երբ ուզում ես ինչ-որ բան հասկանալ, կանգնում ես դրան դեմ հանդիման՝ միայնակ, առանց որևէ օգնության, ու աշխարհի ամբողջ անցյալը միասին վերցրած քեզ ոչնչով օգնել չի կարող: Ու հետո հանկարծ դա անհետանում է՝ իր հետ տանելով այն ամենը, որ հասցրել էիր հասկանալ:

Ընդհանուր գաղափարները շատ ավելի դյուրամարս են ու քիմք շոյող: Բացի դրանից, պրոֆեսիոնալներն ու նույնիսկ սիրողները

վերջում միշտ ճիշտ են դուրս գալիս: Նրանց իմաստությունը խորհուրդ է տալիս հնարավորինս քիչ աղմկել, հնարավորինս քիչ ապրել, թույլ տալ, որ քո մասին մոռանան: Իրենք ամենաշատը սիրում են պատմել անխոհեմ ու տարօրինակ մարդկանց մասին, ովքեր ի վերջո ստանում են իրենց պատիժը: Դե իհարկե, ամեն ինչ հենց այդպես էլ լինում է, ոչ ոք չի էլ փորձում հակառակը պնդել: Գուցե պարոն Աշիլի խիղճն այնքան էլ հանգիստ չէ: Գուցե հիմա մտածում է, որ եթե հոր կամ մեծ քրոջ խորհուրդները լսած լիներ, այստեղ չէր հասնի: Դոկտորը խոսելու իրավունք ունի. ինքն էլ հո իր կյանքն իզուր չի՞ ապրել, կարողացել է, չէ՞, օգտակար մարդ դառնալ: Ու հիմա հանդարտ ու հզոր ժայռի պես վեր է խոյանում այս փոքրիկ նավաբեկորի վրա:

Դոկտոր Ռոժեն խմել-վերջացրել է կալվադոսը: Հզոր մարմինը կակղել է, ծանր կոպերը փակվել են: Առաջին անգամ եմ դեմքն առանց աչքերի տեսնում. ասես ստվարաթղթե դիմակ լինի, նրանցից, որ այսօր կրպակներում էին վաճառում: Այտերն ինչ-որ զարհուրելի վարդագույն են... Ու հանկարծ ինձ համար պարզ է դառնում ճշմարտությունը. այս մարդը շուտով մեռնելու է: Ինքն էլ դա հաստատ գիտի, հայելու մեջ նայի՝ հերիք է. ամեն օր մի քիչ ավելի է նմանվում իր ապագա դիակին: Ահա թե որն է դրանց փորձը, ահա թե ինչու եմ ինքս ինձ այդքան հաճախ կրկնում, որ դրանից լեշի հոտ է գալիս. փորձն իրենց վերջին ապաստանն է: Դոկտորը շատ կուզեր հավատալ իր այդ փորձին, շատ կուզեր ինքն իրենից թաքցնել անտանելի իրականությունը. այն, որ ինքը մենակ է, առանց փորձառության ու առանց անցյալի, ու որ միտքը գնալով թանձրանում է, իսկ մարմինն ավելի ու ավելի է քայքայվում: Ու հենց դրա համար էլ ջանասիրաբար կառուցել, բարեկարգել ու երեսպատել է հավասարակշռության մասին իր փոքրիկ զառանցանքը. ինքն իրեն համոզում է, իբր առաջադիմում է: Հիշողության կորուստնե՞ր ունի, ուղեղը երբեմն չի՞ աշխատում: Բան չկա, ուղղակի խուսափում է ջահելների նման հապճեպ դատողություններ անելուց: Այլևս չի՞ հասկանում, թե գրքերում ինչ են գրում: Ինչ արած, ուղղակի վաղուց արդեն թարգել է գիրք կարդալը: Այլևս չի կարողանում սե՞ր անել: Բայց չէ՞ որ մի ժամանակ այնքա՜ն շատ

է արել: Անցյալում սեր արած լինելը շատ ավելի լավ բան է, քան դեռ անել շարունակելը. կարողանում ես հեռվից հանգիստ դատել, համեմատել ու մտորել: Ու որպեսզի ուժը հերիքի դիմանալու հայելիների միջից իրեն նայող դեմքի մեռելակերպ տեսքին, ինքն իրեն ստիպում է հավատալ, թե իբր այդ դեմքի վրա փորձի դասերն են փորագրված:

Դոկտորը մի թեթև թեքում է գլուխը: Կոպերը բացվում են, քնից կարմրած աչքերով նայում է ինձ: Ժպտում եմ: Շատ կուզենայի, որ այս ժպիտն իր համար բացահայտեր այն ամենը, ինչ ինքը փորձում է իրենից թաքցնել: Ախր տեղնուտեղը կարթնանար, եթե կարողանար ինքն իրեն ասել. «Այ սա գիտի, որ շուտով սատկելու եմ»: Բայց կոպերը կրկին փակվում են. էլի քնեց: Ու ես դուրս եմ գալիս, թող պարոն Աշիլը հսկի նրա քունը:

Անձրևը կտրվել է, օդը մաքուր է, երկնքում գեղեցիկ, սև պատկերներ են հանդարտ լողում. կատարյալ ակնթարթի համար ավելի լավ շրջանակ անհնար է պատկերացնել: Այդ պատկերներն արտացոլելու համար Աննին մեր սրտերում փոքրիկ խավար ալեկոծություններ էր առաջացնում: Բայց ես հարմար առիթներից օգտվել չգիտեմ ու հիմա անխռով ու դատարկ քայլում եմ ուր պատահի այս իզուր կորած երկնքի տակ:

Չորեքշաբթի

Պետք չէ վախենալ:

Հինգշաբթի

Հինգ էջ: Հետո՝ երջանկության մի երկար պահ: Շատ չմտածել Պատմության արժեքի մասին: Այլապես դրանից զզվելու վտանգ է առաջանում: Չմոռանալ, որ մարկիզ դը Ռոլբոնն այս պահին իմ գոյության միակ արդարացումն է:

Ուղիղ մի շաբաթից տեսնելու եմ Աննիին:

Ոլդուտ բուլվարում այնքան թանձր մառախուղ էր, որ գերադասեցի զորամասի պատերին կպած քայլել. աջ կողմում մեքենաներն իրենց առջևում լույսի թաց բծեր էին գցում, ու անհնար էր հասկանալ, թե որտեղ է մայթը վերջանում: Շուրջս մարդիկ կային. քայլերի ձայները կամ երբեմն խոսակցությունների թույլ բզզոցը հասնում էին ականջիս, բայց ոչ ոքի չէի տեսնում: Մի անգամ ուսիս բարձրության վրա մի կնոջ դեմք հայտնվեց ու տեղնուտեղը կուլ գնաց մշուշին. մի ուրիշ անգամ ինչ-որ մեկն ուժեղ փնչալով անցավ կողքովս ու դիպավ ինձ: Չգիտեի՝ ուր եմ գնում, ուշադրությունս լրիվ կենտրոնացած էր ուրիշ բանի վրա. պետք էր շատ զգույշ առաջ շարժվել՝ ոտքիդ ծայրով շոշափելով գետինն ու նույնիսկ առաջ պարզելով ձեռքերդ: Այդ բոլոր վարժություններն ինձ բացարձակապես ոչ մի հաճույք չէին պատճառում: Եվ սակայն մտքովս էլ չէր անցնում հետ գնալ. արդեն թակարդն էի ընկել: Ի վերջո՝ մի կես ժամ անց, հեռվում ինչ-որ կապտավուն գոլորշի նկատեցի: Ուղղություն բռնելով այդ կողմը՝ շուտով հասա լույսի մի լայն շերտի. դրա կենտրոնում՝ մառախուղը ծակող շողերի մեջ, ճանաչեցի «Մաբլի» սրճարանը:

«Մաբլի» սրճարանը տասներկու էլեկտրական լամպ ունի, բայց հիմա ընդամենը երկուսն էին վառվում, մեկը՝ դրամարկղի վրա, մյուսը՝ առաստաղին: Միակ մատուցողն ինձ հրեց դեպի մի մութ անկյուն.

– Այս կողմ, պարոն, մաքրություն եմ անում:

Մատուցողը բաճկոնով էր, առանց ժիլետի ու դնովի օձիքի, հագին սպիտակ ու մանուշակագույն գծերով վերնաշապիկ էր: Դժգոհ տեսքով նայում էր ինձ, հորանջում ու մատներով խառնում մազերը:

– Սև սուրճ ու կրուասաններ:

Առանց պատասխանելու աչքերը տրորեց ու հեռացավ: Ես մինչև աչքերս խրված էի կեղտոտ ու սառցակալած ստվերի մեջ: Ջեռուցումն անկասկած չէին միացրել:

Մենակ չէի: Դիմացս նստած էր մոմագույն դեմքով մի կին ու անընդմեջ շարժում էր ձեռքերը՝ մերթ բլուզն էր հարդարում, մերթ սև գլխարկն էր ուղղում: Հետը մի խոշոր, շիկահեր տղամարդ կար,

ով առանց մի բառ արտաբերելու բրիոշ էր ուտում: Լռությունը ծանրացել էր վրաս: Ուզում էի ծխամորճ վառել, բայց չէի ցանկանում լուցկու չրթոցով գրավել իրենց ուշադրությունը:

Հեռախոսը զանգում է: Ձեռքերը կանգ են առնում՝ մնալով բլուզին հպված: Մատուցողը չի շտապում: Հանգիստ վերջացնում է ավլելը, հետո նոր գնում է վերցնելու: «Ալո՞: Պարոն Ժո՞րժն է: Բարև ձեզ, պարոն Ժորժ... Լսում եմ, պարոն Ժորժ... Տերն այստեղ չէ... Հա, պիտի արդեն իջած լիներ... Դե գիտեք՝ ինչ մառախուղ է... Ընդհանրապես՝ սովորաբար ժամը ութին է իջնում... Շատ լավ, պարոն Ժորժ, կփոխանցեմ: Ցտեսություն, պարոն Ժորժ»:

Մառախուղը թավշե ծանր ու մոխրագույն վարագույրի նման կախվել էր լուսամուտներից: Մի ակնթարթ ինչ-որ մեկի դեմքը հպվեց ապակուն ու իսկույն կորավ:

Կինը լացակումած ձայնով ասաց.

– Կոշիկիս թելերը կապիր:

– Քանդված չեն,– առանց նայելու ասաց տղամարդը:

Կինը սկսեց նյարդայնանալ: Ձեռքերը խոշոր սարդերի նման վազեցին բլուզի ու պարանոցի վրայով:

– Քանդված են, կապիր, էլի:

Տղամարդը համբերությունից դուրս եկած տեսքով կռացավ ու սեղանի տակ մի թեթև հպվեց կնոջ ոտքին.

– Կապեցի:

Կինը բավարարված ժպտաց: Տղամարդը ձայն տվեց մատուցողին.

– Հաշիվն ինչքա՞ն է:

– Իսկ դուք քանի՞ բրիոշ եք վերցրել,– հարցրեց մատուցողը:

Աչքերս կախեցի, որ հանկարծ չթվա, թե ուշադիր իրենց եմ զննում: Մի քանի վայրկյան անց ճռռոց լսեցի ու տեսա շրջազգեստի մի եզր ու չորացած ցեխով ծածկված մի զույգ կոշիկ: Դրանց հետևեցին տղամարդու կոշիկները՝ լաքապատ ու սուր քթերով: Կոշիկները մոտեցան ինձ, անշարժացան, հետո շրջվեցին. տղամարդը վերարկուն էր հագնում: Նույն պահին փայտացած դաստակով մի ափ շրջազգեստի երկայնքով սահեց ներքև, մի քիչ տատանվեց ու թափ տվեց փեշը:

– Պատրա՞ստ ես,– ասաց տղամարդը:

Ափը բացվեց, դիպավ աջ կոշիկի վրա ցեխի թողած մեծ աստղին, հետո կորավ:

– Ո՛ւֆ,– ասաց տղամարդը:

Տղամարդը կախիչի տակից վերցրեց ճամպրուկը: Հետո դուրս եկան ու անհետացան մառախուղի մեջ:

– Արտիստներ են,– սուրճս բերելիս ասաց մատուցողը,– «Պալաս» կինոթատրոնում էին ընդմիջումների ժամանակ ելույթ ունենում: Կինը կապում է աչքերն ու գուշակում է հանդիսատեսների անուններն ու տարիքը: Այսօր մեկնում են, որովհետև հինգշաբթի օրերին ծրագիրը փոխվում է:

Գնաց, որ բերի հենց այն սեղանի վրայի կրուասանների ափսեն, որտեղ հենց նոր արտիստներն էին նստած:

– Թող մնա, ոչինչ:

Այդ կրուասաններն ուտելու ոչ մի ցանկություն չէի զգում:

– Լույսը պիտի մարեմ: Երկու լամպ մի հաճախորդի համար, այն էլ առավոտյան ժամը իննին. տերը շան լափը գլխիս կլցնի:

Սրճարանում կիսախավար տիրեց: Դրսի թույլ, կեղտամոխրագույն լույսը սկսեց բարձր լուսամուտներից լցվել ներս:

– Կարո՞ղ եմ տեսնել պարոն Ֆասկելին:

Չնկատեցի, թե ինչպես պառավը մտավ ներս: Սառն օդի հոսանքն ինձ ստիպեց ամբողջ մարմնով դողալ:

– Պարոն Ֆասկելը դեռ չի իջել:

– Տիկին Ֆլորանն է խնդրել, որ գամ,– շարունակեց պառավը,– իրեն լավ չի զգում: Այսօր գործի չի գալու:

Տիկին Ֆլորանը կարմրահեր գանձապահուհին է:

– Այս եղանակներին փորը միշտ բռնում է,– ասաց պառավը:

Մատուցողը բազմանշանակ տեսք ընդունեց.

– Հաստատ մառախուղից է: Նույնն էլ պարոն Ֆասկելն է. զարմանում եմ՝ ոնց մինչև հիմա դեռ չի իջել: Մի քիչ առաջ էլ զանգել էին, էլի իրեն էին ուզում: Սովորաբար ժամը ութին արդեն ներքևում է լինում:

Պառավն աչքերը մեքենայորեն ուղղեց առաստաղին.

– Հիմա վերևո՞ւմ է:

– Դե հա, ննջարանն այնտեղ է:

Պառավը ծորացող ձայնով, կարծես ինքն իր հետ խոսելով շշնջաց.

– Բա որ հանկարծ մեռած լինի...

– Չէ մի չէ՛,– մատուցողի դեմքին ամենաանկեղծ վրդովմունք հայտնվեց,– չէ մի չէ՛: Էդ էր պակաս մնացել:

Բա որ հանկարծ մեռած լինի... Իմ մտքով էլ էր նույն բանն անցել: Մառախուղի ժամանակ հենց այդ տեսակի մտքեր են գալիս:

Պառավը դուրս եկավ: Ես էլ պիտի հետևած լինեի իր օրինակին. սրճարանում ցուրտ ու մութ էր: Մառախուղը դռան տակից սողում էր ներս, շուտով բարձրանալու էր ու ամեն ինչ խորտակեր: Քաղաքային գրադարանում լուսավոր ու տաք կլիներ:

Ինչ-որ մեկի դեմքը դրսից կրկին հպվեց ապակուն ու սկսեց ծամածռություններ անել:

– Հիմա քեզ կասեմ,– ջղայնացած ասաց մատուցողն ու վազեց դուրս:

Դեմքն անհետացավ, մնացի մենակ: Ինձ դառնորեն հանդիմանում էի սենյակիցս դուրս եկած լինելու համար: Հիմա մառախուղը երևի արդեն լրիվ լցվել է ներս. վախենում էի հետ գնալուց:

Դրամարկղի հետևում՝ ստվերի մեջ, ինչ-որ բան ճռռաց: Աստիճանների կողմից էր. մի՞թե սրճարանի տերն է վերջապես ներքև իջնում: Բայց չէ, մարդ չկա. աստիճաններն իրենք իրենց էին ճռռում: Պարոն Ֆասկելը դեռ քնած է: Կամ գուցե մեռել է գլխիս վերևում: «Մահացած են գտել անկողնում մառախլապատ առավոտյան»: Ու ենթավերնագիր «Սրճարանի հաճախորդները հանգիստ նախաճաշում էին առանց կասկածելու, որ...»:

Իսկ արդյոք դեռ անկողնու մե՞ջ է: Գուցե ընկել է ներքև, վերմակն էլ քաշել է հետևից ու գլխով խփվել է հատակի՞ն: Պարոն Ֆասկելին շատ լավ եմ ճանաչում. երբեմն հետաքրքրվում է, թե ինձ ոնց եմ զգում: Ջվարճասեր, թանձրամարմին մարդ է, խնամված մորուք ունի. եթե մեռել էլ է, ուրեմն հաստատ սրտի կաթվածից: Դեմքը դարձել է սմբուկի գույնի, լեզուն բերանից դուրս է ընկել, մորուքը ցցվել է երկինք, վիզը խճճված մազերի տակ մանուշակագույն է դարձել:

Աստիճանը կորչում էր մթության մեջ: Հազիվ կարողանում էի բազրիքի գլուխը նշմարել: Ստիպված պիտի անցնեմ այդ խավարի միջով: Աստիճանը կճռռա: Վերևում կհասնեմ սենյակի դռանը...

Դիակն այնտեղ է՝ գլխավերևումս: Լույսը կվառեմ, համոզվելու համար կհպվեմ սառչող մաշկին... Վերջ, էլ չեմ դիմանում, վեր եմ կենում: Եթե հանկարծ մատուցողն ինձ աստիճանների վրա բռնացնի, կասեմ, որ աղմուկ եմ լսել:

Մատուցողը հանկարծ շնչակտուր վերադարձավ ներս:

– Լսում եմ, պարոն,– ձայն տվեց նա:

Ապուշի մեկը: Հետո մոտեցավ ինձ:

– Ձեր հաշիվը երկու ֆրանկ է:

– Վերևից ինչ-որ աղմուկ լսեցի,– ասացի ես:

– Վաղուց ժամանակն է:

– Հա, բայց ինձ թվում է՝ ինչ-որ բան է եղել. ոնց որ մեկը խռխռար, հետո էլ ինչ-որ խուլ ձայն եկավ:

Մառախուղի մեջ կորած այդ մութ սրահում խոսքերս միանգամայն բնական հնչեցին: Երբեք չեմ մոռանա, թե մատուցողի աչքերն ինչ եղան:

– Երևի ճիշտ կանեք՝ բարձրանաք-ստուգեք,– նենգորեն ավելացրի:

– Դե չէ՛,– ասաց նա, հետո ավելացրեց,– բա որ հանկարծ ձեռքն ընկնեմ: Ժամը քանի՞սն է:

– Տասը:

– Եթե մինչև տասն անց կես չիջնի, կգնամ-կնայեմ:

Քայլեցի դեպի դուռը:

– Արդեն դռուրս եք գալիս: Չե՞ք ուզում մի քիչ էլ մնալ:

– Չէ:

– Ասում եք՝ իրո՞ք խռխռում էր:

– Չգիտեմ,– ասացի դուրս գալիս,– ինձ այդպես թվաց, կարող է՝ տրամադրությունիցս է:

Մառախուղը մի քիչ ցրվել էր: Շտապեցի դեպի Տուրնբրիդ փողոց. այնտեղի լույսերն էի ուզում: Ինձ հիասթափություն էր սպասում: Լույսերն իհարկե իրենց տեղում էին ու լուսավորում էին

խանութների ցուցափեղկերը: Բայց ուրախ լուսավորություն չէր. լույսը մառախուղից լրիվ գունատվել էր ու սառը ցնցուղի նման լցվում էր վրադ:

Լիքը մարդ կար, հիմնականում կանայք՝ սպասուհիներ, տնտեսուհիներ ու նաև տանտիրուհիներ՝ նրանցից, ովքեր ասում են. «Իմ առևտուրը ես եմ անում, այդպես ավելի հաստատ է»: Կանգնած մի քիչ տնտղում էին ցուցափեղկերն ու հետո մտնում ներս:

Կանգ առա Ժուլիենի երշիկի խանութի մոտ: Ժամանակ առ ժամանակ ապակուց այն կողմ երևում էր ինչ-որ մեկի ձեռքն ու լցոնած տոտիկներ կամ նրբերշիկ էր մատնացույց անում: Ապա պարարտ ու շիկահեր մի աղջիկ կռանում էր՝ ի ցույց դնելով կուրծքը, ու մատների ծայրերով վերցնում էր այդ մեռած մսի կտորը: Իսկ իր սենյակում՝ այդտեղից հինգ րոպեի ճանապարհի վրա, պառկած էր մեռած պարոն Ֆասկելը:

Շուրջս որևէ ամուր հենարան փնտրեցի, որևէ պատնեշ, որի հետևում կկարողանայի պատսպարվել մտքերիցս: Ոչինչ չգտա. մառախուղի վարագույրն արդեն կամաց-կամաց պատռվել էր, բայց ինչ-որ տագնապալից բան դեռ մնացել էր օդում կախված: Վտանգը թերևս իրական չէր, այլ մի տեսակ աղոտ, թափանցիկ: Բայց ինձ հենց դա էլ վախեցնում էր: Ճակատս հենեցի ցուցափեղկի ապակուն: Լցոնած ձվի մայոնեզի վրա մուգ կարմիր կաթիլ նկատեցի. արյուն էր: Դեղինի վրա այդ կարմիրի տեսքից սիրտս սկսեց խառնել:

Հանկարծ տեսիլք ունեցա. ինչ-որ մեկն արնահոսող դեմքով ընկել էր այդ ուտելիքների մեջ: Ձուն գլորվել էր արյան մեջ, վրայի լոլիկի շերտը պոկվել-ընկել էր, կարմիր՝ կարմիրի վրա: Մայոնեզը դուրս էր ծորացել. դեղնավուն կրեմի բիծը արյան առվակը բաժանում էր երկու ճյուղի:

«Ապուշ մտքեր. ուշքի գալ է պետք: Գնամ գրադարանում աշխատելու»:

Աշխատե՞լ: Շատ լավ գիտակցում էի, որ ոչ մի տող էլ չեմ գրելու: Հերթական կորած օրը: Ձբոսայգով անցնելիս այն նստարանի վրա, ուր սովորաբար նստում եմ, մի մեծ, անշարժ, կապույտ թիկնոց նկատեցի: Գոնե ինչ-որ մեկը չի մրսում:

Երբ մտնում էի ընթերցասրահ, Ինքնուսն արդեն դուրս էր գալիս: Միանգամից իրեն նետեց իմ կողմը.

– Ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեզ, պարոն: Ձեր լուսանկարների շնորհիվ մի քանի անմոռանալի ժամեր անցկացրի:

Երբ իրեն տեսա, ներսումս մի պահ հույսի նշույլ ծագեց. գուցե երկուսով ավելի հեշտ կլինի այս օրն անցկացնել: Բայց Ինքնուսի հետ քեզ միայն թվում է, թե դու մենակ չես:

Թփթփացրեց ձեռքի in-quarto հատորին: «Կրոնների պատմությունն» էր:

– Նուսապիեից լավ ոչ ոք չէր կարող այսպիսի համընդգրկուն աշխատություն ձեռնարկել: Համաձայն չե՞ք, պարո՛ն:

Հոգնած տեսք ուներ, ձեռքերը դողում էին:

– Հեչ լավ տեսք չունեք,– ասացի:

– Է՛հ, պարոն, հազիվ էլ, էլի: Սարսափելի պատմության մեջ եմ ընկել:

Գրադարանի հսկիչը մոտենում էր մեզ: Կարճահասակ, ջղային կորսիկացի է՝ բանակային թմբկահարի բեղերով: Ժամերով քայլում է գրասեղանների արանքներում ու կրունկներն աղմուկով շրխկացնում է հատակին: Ձմռանը խորխը թքում է թաշկինակների մեջ, հետո դրանք չորացնում է վառարանի վրա:

Ինքնուսն ընդհուպ մոտեցավ ինձ ու սկսեց շնչել դեմքիս.

– Չեմ ուզում այս մարդու մոտ ինչ-որ բան ասել, – շշնջաց վստահությամբ լի ձայնով: – Բայց եթե դեմ չեք...

– Ինչի՞ն:

Կարմրեց, նազելիորեն ճռճեց ազդրերը.

– Պարոն, ա՜խ, պարոն... Լավ, ինչ լինում է՝ լինի: Պատիվ չե՞ք անի ինձ՝ համաձայնելով այս չորեքշաբթի միասին ընթրել:

– Հաճույքով:

Հետն ընթրելու նույնքան ցանկություն ունեի, ինչքան, ասենք, կախվելու:

– Դուք պարզապես երջանկացնում եք ինձ,– ասաց Ինքնուսն ու արագ ավելացրեց,– եթե դեմ չեք, կգամ ձեր հետևից,– ու տեղնուտեղը չքվեց՝ հաստատ վախենալով, որ եթե մի քիչ էլ ձգձգի, կարող է միտքս փոխեմ:

Տասնմեկ անց կես էր: Մինչև երկուսին տասնհինգ պակաս աշխատեցի: Չնայած ի՞նչ աշխատելու մասին է խոսքը. նայում էի գրքին, բայց մտովի անընդհատ վերադառնում էի «Մաբլի» սրճարան: Տեսնես պարոն Ֆասկելն արդեն իջե՞լ է, թե՞ չէ: Հոգուս խորքում այնքան էլ չէի հավատում, որ իրոք մեռել է, ու ամենաշատը հենց դրանից էլ նյարդայնանում էի: Ինչ-որ հեղհեղուկ միտք էր, որ ոչ կարողանում էի հաստատել, ոչ էլ հեռու վանել: Կորսիկացու կոշիկները թխկթխկում էին հատակի վրա: Մի քանի անգամ եկավ-ցցվեց դիմացս, ընդ որում՝ այնպիսի տեսք ուներ, ասես ուզում էր հետս ինչ-որ բան խոսել: Բայց ամեն անգամ փոշմանում էր ու շարունակում ետուառաջ քայլել:

Մոտավորապես ժամը մեկին վերջին ընթերցողներն էլ գնացին: Սոված չէի, ու աշխարհում վերջին բանը, որ ուզում էի, դուրս գալն էր: Մի քիչ էլ աշխատեցի, հետո հանկարծ ցնցվեցի ու վեր թռա. զգացի, որ զնդանված եմ լռության մեջ:

Գլուխս բարձրացրի. մենակ էի: Կորսիկացին պիտի որ իջած լիներ կնոջ՝ գրադարանի դռնապանուհու մոտ: Ուզում էի գոնե իր քայլերի աղմուկը լսել, բայց միակ բանը, որ ականջիս հասավ, վառարանի մեջ փլվող ածուխի թույլ ճարճատյունն էր: Սրահը մառախուղի մեջ կորել էր: Չէ, ոչ թե իսկական մառախուղն էր (այն վաղուց էր ցրվել), այլ մյուսը, որով դեռ լի էին փողոցները, որը պատերից ու սալահատակից էր ծորում: Իրերը մի տեսակ անհաստատ ու երերուն էին դարձել: Գրքերը, անշուշտ, մնացել էին իրենց տեղում՝ դարակների վրա այբբենական հերթականությամբ շարված, պիտակները սև կամ շագանակագույն կազմերին՝ ՀՕ ֆ.գ. 7996 (հանրային օգտագործման, ֆրանսիական գրականություն) կամ ՀՕ բ.գ. (հանրային օգտագործման, բնական գիտություններ): Բայց... Ո՞նց ասեմ: Սովորաբար այդ բոլոր խիտ ու ամրակազմ գրքերը վառարանի, կանաչ լապտերների, բարձր լուսամուտների ու աստիճանների հետ մեկտեղ սահմանագծում են ապագան: Քանի դեռ այս պատերի մեջ ես, ինչ էլ տեղի ունենա՝ կա՛մ վառարանի աջ կողմում է տեղի ունենալու, կա՛մ ձախ: Եթե նույնիսկ անձամբ սուրբ Դընին իր սեփական կտրած գլուխը ձեռքին բռնած մտնի ներս, մեկ է՝ ստիպված է լինելու մտնել աջ կողմից ու անցնել ֆրանսիական գրականությանը նվիրված

գրապահարանների ու ընթերցողուհիների համար ամրագրված սեղանի արանքով: Ու եթե առանց հատակին դիպչելու ճախրի գետնից քսան սանտիմետր բարձրության վրա, արնածոր վիզն անպայման կհայտնվի ուղիղ երրորդ գրադարակի դիմաց: Այսպիսով, այդ բոլոր իրերը գոնե ինչ-որ կերպ ամրագրում են հնարավորի սահմանները:

Իսկ այսօր դրանք առհասարակ ոչինչ չէին ամրագրում. թվում էր, թե դրանց գոյությունն իսկ հարցականի տակ էր դրվել, ու հիմա գերագույն դժվարությամբ էին կարողանում դիմանալ մինչև հաջորդ ակնթարթը: Ինչքան ուժ ունեի, սեղմեցի կարդացածս հատորը, բայց ամենասուր զգացողություններն անգամ բթացել էին: Ամեն ինչ անիրական էր թվում. ինձ ստվարաթղթե դեկորացիաների մեջ էի զգում, որոնք ամեն վայրկյան կարող էին տեղափոխվել ուրիշ տեղ: Աշխարհը կծկվել էր ու շունչը պահած սպասում էր, սպասում էր իր ճգնաժամին՝ իր Սրտխառնոցին, ինչպես պարոն Աշիլն էր նախորդ օրը սպասում:

Վեր կացա. այլևս չէի կարողանում մնալ այդ թուլացած իրերի մեջ: Գնացի պատուհանից նայելու Էմպետրազի գանգին: Մրմնջում էի. «*Ամեն ինչ* կարող է պատահել, *ամեն ինչ* կարող է տեղի ունենալ»: Բնականաբար այն սարսափների հետ չէի, որ մարդիկ են հնարում. Էմպետրազը հանկարծ չէր սկսելու իր պատվանդանի վրա պարել. չէ, լրիվ ուրիշ բան է լինելու:

Երկյուղով նայեցի այդ բոլոր անկայուն գոյություններին, որոնք մի ժամից կամ մի րոպեից գուցե սկսելու էին փլվել: Ես ինքս իհարկե այստեղ էի, ապրում էի գիտելիքներով լեցուն այս բոլոր գրքերի միջև, որոնցից մի քանիսը նկարագրում էին կենդանական աշխարհի չփոխվող տեսակները, մյուսները բացատրում էին, որ տիեզերքում էներգիայի քանակը միշտ անփոփոխ է մնում. այստեղ էի՝ կանգնած մի պատուհանի առջև, որի ապակիները ճշգրիտ սահմանված բեկման ցուցիչ ունեին: Բայց ի՞նչ փխրուն էին այդ բոլոր պատնեշները: Աշխարհը, կարծում եմ, ամեն օր նույնն է մնում, որովհետև ուղղակի ծուլանում է: Բայց այսօր աշխարհն այնպիսի տեսք ուներ, ասես ուզում էր փոխվել: Եվ ուրեմն, *ամեն ինչ*, անխտիր *ամեն ինչ* կարող էր պատահել:

Չի կարելի ժամանակ կորցնել. այս ամբողջ տագնապի հիմքում «Մաբլի» սրճարանի պատմությունն է: Պիտի վերադառնամ այնտեղ, համոզվեմ, որ պարոն Ֆասկելը ողջ է, եթե պետք լինի՝ դիպչեմ ձեռքին կամ մորուքին: Գուցե գոնե դրանից հետո ազատվեմ տագնապից:

Հապճեպ ճանկեցի վերարկուս, առանց հագնելու գցեցի ուսերիս ու փախա դուրս: Զբոսայգով անցնելիս նույն նստարանի վրա նորից նկատեցի կապույտ թիկնոցով մարդուն. ահռելի, գունատ դեմքը սպիտակին էր տալիս սառնամանիքից բոսորագույն դարձած ականջների արանքում:

Հեռվում առկայծում էր «Մաբլի» սրճարանը. այս անգամ երևի բոլոր տասներկու լամպերն էլ վառել են: Քայլերս արագացրի. այս ամենին վերջ տալ է պետք: Մտնելուց առաջ պատուհանից նայեցի ներս. սրահը դատարկ էր: Ոչ գանձապահուհին էր ներսում, ոչ մատուցողը, ու ոչ էլ պարոն Ֆասկելը:

Ստիպված եղա ահռելի մեծ ջանք գործադրել ներս մտնելու համար: Չնստեցի: Ձայն տվեցի. «Մատուցո՛ղ»: Պատասխան չեղավ: Դատարկ բաժակ՝ սեղաններից մեկի վրա: Մի կտոր շաքար՝ ափսեի մեջ:

– Մարդ կա՞:

Կախիչից վերարկու էր կախած: Կլոր սեղանիկին սև ստվարաթղթե տուփերով ամսագրեր էին լցված: Շունչս պահած փորձում էի գոնե ինչ-որ չնչին ձայն որսալ: Ննջարանի աստիճանը թույլ ճռռաց: Դրսից նավի շչակի ձայն լսվեց: Հետ-հետ քայլելով, առանց հայացքս աստիճաններից կտրելու՝ դուրս եկա:

Հասկանում եմ. ժամը երկուսին հազարից մեկ է հաճախորդ լինում: Պարոն Ֆասկելը մրսել-հիվանդացել է, մատուցողին էլ երևի գնումների է ուղարկել կամ գուցե բժշկի հետևից: Գիտեմ, բայց միևնույն է, ինձ *անհրաժեշտ էր* տեսնել պարոն Ֆասկելին: Տուրնբրիդ փողոցի անկյունում շրջվեցի ու նողկանքով նայեցի լուսավոր ու դատարկ սրճարանին: Երկրորդ հարկի լուսամուտների խլափեղկերը փակ էին:

Ես ամենաիսկական խուճապի մատնվեցի: Այլևս չէի գիտակցում՝ ուր եմ գնում: Վազեցի կառամատույցների երկայնքով, թեքվեցի

դեպի Բովուազի թաղամասի դատարկ փողոցները. տներն իրենց մռայլ հայացքներով հետևում էին, թե ինչպես եմ փախչում: Ինքս ինձ տագնապահար կրկնում էի. «Ո՞ւր գնամ: Ո՞ւր գնամ»: *Ամեն ինչ* կարող է պատահել: Ժամանակ առ ժամանակ թպրտացող սրտով կտրուկ հետ էի շրջվում. ի՞նչ է կատարվում մեջքիս հետևում: Գուցե հենց հետևումս էլ կսկսվի, ու երբ հանկարծ շրջվեմ, արդեն շատ ուշ կլինի: Քանի դեռ ի վիճակի եմ իրերը տեսադաշտումս պահելու, ոչինչ չի կարող տեղի ունենալ: Աչքերով խժռում էի սալահատակը, տները, գազի ծորակները, հայացքս ցատկում էր մեկից մյուսի վրա՝ փորձելով դրանց անակնկալի բերել ու սառեցնել կերպարանափոխության ընթացքում: Ամեն ինչ մի տեսակ անբնական տեսք էր ստացել, բայց ես շարունակում էի ինքս ինձ պնդել «սա գազի ծորակ է, սա ցայտաղբյուր է», ու փորձում էի հայացքիս ուժով դրանց վերադարձնել իրենց ամենօրյա տեսքին: Ճանապարհիս հաճախ բարեր էին հանդիպում՝ «Բրետոնյան սրճարանը», «Մարինյան բարը»: Կանգ էի առնում, ոտքս տատանվելով կախ էի գցում դրանց վարդագույն շղարշե վարագույրների առաջ. գուցե կերպարանափոխությունը խնայե՞լ է այս ամուր խցանված գինետները, գուցե սրանք դեռ իրենց մեջ պարփակո՞ւմ են երեկվա աշխարհի մի մասնիկը՝ մեկուսի ու մոռացված: Բայց համոզվելու համար պետք էր դուռը բացել ու մտնել ներս: Ու ես չէի համարձակվում ու շարունակում էի ճանապարհս: Ամենաշատը տների դռներից էի սարսափում: Վախենում էի, որ հանկարծ իրենք իրենց կբացվեն: Ի վերջո սկսեցի ճանապարհի ուղիղ մեջտեղով քայլել:

Հանկարծ հայտնվեցի Բասեն դյու Նոր կառամատույցներում: Ձկնորսական նավակներ, փոքրիկ զբոսանավեր: Ոտքս դրեցի քարի մեջ մեխած մետաղյա օղակին: Այստեղ՝ տներից հեռու, դռներից հեռու, գուցե կարողանամ մի վայրկյան շունչ քաշել: Հանդարտ, սև բծերով ծածկված ջրի վրա խցան էր լողում:

«Իսկ ջրի *տա՞կ*: Չես մտածե՞լ, թե ջրի *տակ* ինչ կարող է լինել»:

Ասենք՝ ինչ-որ հրեշ: Ցեխի մեջ կիսաթաղված ահռելի զրահապատյան: Տասներկու զույգ ճանկերը դանդաղ խլրտում են տիղմի մեջ: Ժամանակ առ ժամանակ հրեշը մի քիչ բարձրացնում է մարմինը:

Զրի խորքում: Մոտեցա ափին՝ փորձելով ինչ-որ ալեկոծություն կամ գոնե թույլ ծփանք նկատել: Բայց խցանը սև բծերի մեջ անշարժ էր:

Այդ պահին ձայներ լսեցի: Արդեն վաղուց ժամանակն էր: Կտրուկ շրջվեցի հետ ու շարունակեցի փախչել:

Կաստիլիոն փողոցում բախվեցի դանդաղ զբոսնող ու զրուցող երկու տղամարդկանց: Քայլերիս աղմուկից երկուսն էլ միաժամանակ վեր թռան ու շրջվեցին: Հասցրի նկատել իրենց տագնապահար աչքերը, որ նախ դեպի ինձ ուղղվեցին, հետո՝ այնտեղ, ինչն իմ հետևում էր՝ տեսնելու համար, թե արդյոք ինչ-որ ուրիշ բան էլ չի՞ գալիս: Փաստորեն, նման էինք իրար. ուրեմն իրենք է՞լ էին վախեցած: Երբ այդ տղամարդկանց շրջանցում էի, նայեցինք իրար: Մի քիչ էլ, ու կսկսեինք իրար հետ խոսել: Բայց հայացքների մեջ հանկարծ անվստահություն հայտնվեց. այսպիսի օրերին ամեն պատահածի հետ չեն խոսում:

Ուշքի եկա արդեն Բուլիբե փողոցում. շունչս կտրվում էր: Շատ լավ, վիճակը նետված է. վերադառնամ գրադարան, ինչ-որ վեպ վերցնեմ, փորձեմ կարդալ: Զբոսայգու ցանկապատի կողքով անցնելիս նկատեցի թիկնոցով մարդուն: Դեռ անշարժ նստած էր դատարկ զբոսայգում. քիթն էլ էր արդեն ականջների պես կասկարմիր դարձել:

Արդեն ուզում էի դարպասը բացել, բայց դեմքի արտահայտությունից տեղումս սառեցի. աչքերը կկոցում էր ու տխմարի քաղցրավուն տեսքով քմծիծաղ տալիս: Ու միևնույն ժամանակ այնքան ծակող ու լարված հայացքով էր սևեռվել ուղիղ իր դիմացը գտնվող ինչ-որ բանի վրա, ինչը ես չէի տեսնում, որ կտրուկ ընկրկեցի:

Դիմացը մոտ տասներկու տարեկան մի աղջիկ՝ մի ոտքի վրա կանգնած ու բերանը բաց, հմայված նայում էր այդ մարդուն՝ նյարդայնացած քաշքշելով գլխաշորն ու առաջ ձգելով սուրուլիկ դեմքը:

Մարդն ինքն իրեն այնպես էր ժպտում, ասես ուր որ է՝ ինչ-որ մեկի գլխին խաղ էր խաղալու: Հանկարծ վեր կացավ՝ ձեռքերը մինչև կոճերը իջնող թիկնոցի գրպաններում պահած: Երկու քայլ առաջ եկավ. աչքերը շաղված էին: Ինձ թվաց՝ հիմա կընկնի: Բայց չէ, շարունակում էր քնաթաթախ տեսքով ժպտալ:

Ու հանկարծ հասկացա. թիկնո՛ցը: Ուզեցի խանգարել դրան: Ընդամենը պիտի հազայի կամ դարպասը հրեի: Բայց իմ հերթին ես էլ էի տեղում քարացել՝ աղջկա դեմքի արտահայտությամբ հմայված: Դեմքը վախից ճգվել էր, սիրտը պիտի որ հիմա խելագար արագությամբ խփելիս լիներ, բայց դրա հետ մեկտեղ այդ առնետի մռութի վրա ինչ-որ իշխող ու չար բան էր կարդացվում: Ոչ թե հետաքրքրասիրություն էր, այլ մի տեսակ երաշխավորված սպասում: Զգացի, որ անզոր եմ. ես դրսում էի՝ զբոսայգու ծայրին, դուրս էի իրենց միջև ծավալվող փոքրիկ դրամայից, իսկ իրենք իրենց մութ ցանկությունների զորությամբ իրար էին գամված, իրենք զույգ էին կազմում: Շունչս պահեցի. ուզում էի տեսնել, թե ինչ կնկարվի այդ պառավական դեմքի վրա, երբ մարդը բացի թիկնոցի փեշերը:

Բայց հանկարծ փոքրիկը ուշքի եկավ, գլուխը թափ տվեց ու վազելով փախավ: Թիկնոցավորը նկատեց ինձ. հենց դա էլ իրեն հետ պահեց: Մի պահ ծառուղում կանգնած մնաց, հետո մեջքը կռացած հեռացավ: Թիկնոցը սրունքներին էր խփում:

Դարպասը հրեցի ու մի ցատկով հասա իրեն:

– Է՛, սպասե՛ք,– ձայն տվեցի:

Սկսեց դողալ:

– Քաղաքի վրա սոսկալի վտանգ է կախված,– նրբակիրթ նկատեցի ես ու առաջ անցա:

Մտա ընթերցասրահ ու սեղաններից մեկի վրայից վերցրի «Պարմի մենաստանը»: Փորձեցի խորասուզվել ընթերցանության մեջ, ապաստան գտնել Ստենդալի պայծառ Իտալիայում: Մեկընդմեջ՝ երևակայությանս կարճատև բռնկումից բռնկում, մի քիչ ստացվում էր, հետո նորից սուզվում էի այս սպառնալից օրվա մեջ: Դիմացս ինչ-որ ծերուկ կոկորդն էր մաքրում, իսկ մի երիտասարդ, աթոռի թիկնակին հենված, ընկել էր երազների գիրկը:

Ժամերն անցնում էին, լուսամուտներն արդեն մթնել էին: Մնացել էինք չորս հոգով՝ չհաշված Կորսիկացուն, ով, իր գրասեղանի մոտ նստած, գրադարանի ստացած վերջին գրքերն էր կնքում: Փոքրիկ ծերուկն էր, երիտասարդ շիկահերը, դիսերտացիա գրող մի երիտասարդ կին ու ես: Ժամանակ առ ժամանակ մեզնից մեկնումեկը

գլուխը բարձրացնում էր ու մյուս երեքի վրա արագ ու անվստահությամբ լի հայացք էր գցում, ասես մյուսներից վախենում էր: Ինչ-որ մի պահի փոքրիկ ծերուկը սկսեց ծիծաղել. նկատեցի, թե ինչպես երիտասարդ կինը ոտքից գլուխ ցնցվեց: Բայց ես արդեն հաջողացրել էի կարդալ ծերուկի ձեռքի գրքի շուռ եկած վերնագիրը. հումորային վիպակ էր:

Յոթին տասն էր պակաս: Հանկարծ մտքովս անցավ, որ գրադարանը յոթին փակվում է: Ինձ էլի դուրս են նետելու քաղաք: Ո՞ւր պիտի գնամ: Ի՞նչ պիտի անեմ:

Ծերուկը կարդացել-վերջացրել էր իր վեպը: Բայց դուրս չէր գալիս: Նստած մատներով չոր ու կցկտուր թխկթխկացնում էր սեղանին:

– Պարոնայք,– ասաց Կորսիկացին,– շուտով փակվում ենք:

Երիտասարդը վեր թռավ ու հպանցիկ հայացք նետեց վրաս: Կինը շրջվեց դեպի Կորսիկացին, հետո կրկին անցավ իր գրքին. մի պահ թվաց, թե լրիվ սուզվել է մեջը:

– Փակվում ենք,– հինգ րոպե անց հայտարարեց Կորսիկացին:

Ծերուկն անորոշ տեսքով տմբտմբացրեց գլուխը: Կինը հետ հրեց գիրքը, բայց մնաց նստած:

Կորսիկացին խառնվեց իրար: Մի քանի անվստահ քայլ արեց, հետո պտտեց անջատիչը: Ընթերցասեղանների լապտերները մարեցին: Միայն սրահի կենտրոնի լամպը մնաց վառված:

– Պիտի գնա՞նք,– կամաց հարցրեց ծերուկը:

Երիտասարդը դանդաղ, դժկամությամբ վեր կացավ: Մի պահ մրցում էինք, թե մեզնից ով ավելի դանդաղ կհագնի վերարկուն: Երբ դուրս էի գալիս, կինը դեռ նստած էր՝ ափը գրքի վրա:

Ներքևում մուտքի դուռը բացվում էր գիշերվա վրա: Առջևիցս քայլող երիտասարդը կանգ առավ, հետ նայեց, ապա դանդաղ իջավ աստիճաններով, կտրեց-անցավ նախասրահը, մի պահ մնաց շեմին կանգնած, հետո իրեն գցեց գիշերվա մեջ ու կորավ:

Աստիճանների ներքևում շրջվեցի ու նայեցի վերև: Քիչ անց ծերուկն էլ վերարկուն կոճկելով դուրս եկավ ընթերցասրահից: Երբ արդեն առաջին երեք աստիճաններն իջել էր, թափ հավաքեցի, աչքերս ամուր փակեցի ու սուզվեցի գիշերվա մեջ:

Դեմքիս վրա թեթև, թարմացնող փաղաքշանք զգացի: Հեռվում ինչ-որ մեկը սուլում էր: Աչքերս բացեցի. անձրև էր գալիս: Մեղմ, հանդարտ անձրև: Չորս լապտերները խաղաղ լուսավորում էին հրապարակը: Գավառական քաղաքի հրապարակ՝ անձրևի տակ: Երիտասարդը լայն քայլերով հեռանում էր. ինքն էր սուլողը: Ուզում էի ձայն տալ մյուս երկուսին, ովքեր դեռ ոչինչ չգիտեին, որ կարող են առանց վախենալու դուրս գալ, որ վտանգն արդեն անցել է:

Շեմին երևաց ծերուկը: Շփոթված տրորեց դեմքը, հետո լայն ժպտաց ու բացեց անձրևանոցը:

Շաբաթ երեկո

Սքանչելի արևն ու թեթև մեգը խոստանում են, որ ամբողջ օրը լավ եղանակ է լինելու: Նախաճաշեցի «Մաբլի» սրճարանում:

Գանձապահուհին՝ տիկին Ֆլորանը, ինձ լայն ժպտաց: Սեղանիս մոտից ձայն տվեցի.

– Պարոն Ֆասկելը հիվա՞նդ է:

– Հա, պարոն, ծանր գրիպ է. դեռ մի քանի օր էլ պառկած է մնալու: Աղջիկն է առավոտյան եկել Դյունկերկից: Մնալու է այստեղ, որ հորը խնամի:

Աննիից նամակ ստանալուց ի վեր առաջին անգամ անկեղծորեն ուրախ եմ, որ կրկին տեսնելու եմ իրեն: Ինչո՞վ էր զբաղված այս վեց տարվա ընթացքում: Արդյոք անհարմար կզգա՞ք, երբ կրկին հանդիպենք: Աննին չգիտի, թե ինչ է նշանակում անհարմար զգալը: Ինձ այնպես կդիմավորի, ասես երեկ ենք բաժանվել: Մենակ թե ինձ հիմարի նման չպահեմ ու հենց սկզբից իմ դեմ չտրամադրեմ: Պիտի ուշադիր լինեմ, որ հանդիպելիս հանկարծ ձեռքս իրեն չմեկնեմ. ինքը դա ատում է:

Քանի՞ օր միասին կմնանք: Գուցե իրեն կբերեմ Բուվիլ: Թող գոնե մի քանի ժամ մնա այստեղ, գոնե մի գիշեր քնի «Պրենտանիա» հյուրանոցում: Հետո արդեն ամեն ինչ կփոխվի. ես այլևս չեմ վախենա:

Անցած տարի, երբ առաջին անգամ էի այցելում Բուվիլի թանգարան, ապշել էի՝ տեսնելով Օլիվիե Բլևինի դիմանկարը: Չգիտեմ՝ ինչն էր խախտված. համամասնությունն՞ը: Հեռապատկե՞ը: Չէի հասկանում, բայց մեկ է, ինչ-որ բան ինձ ճնշում էր. պատգամավորն իր կտավի վրա մի տեսակ անհաստատ տեսք ուներ:

Այդ օրվանից մի քանի անգամ նորից գնացել եմ այդ դիմանկարը նայելու: Բայց ճնշվածությունս չէր անցնում: Չէի ուզում հավատալ, որ Հռոմի մրցանակի դափնեկիր ու վեց մեդալի արժանացած Բորդյուրենը կարող էր գեղանկարչական սխալ թույլ տված լինել:

Եվ ահա այս առավոտ, երբ թերթում էի «Բուվիլյան սատիրիկի» հին համարները (շանտաժով զբաղված թերթ, որի տերը պատերազմի տարիներին դատապարտվել էր պետական դավաճանության համար), հանկարծ սկսեցի ճշմարտությունը նշմարել: Տեղնուտեղը դուրս եկա գրադարանից ու ուղղվեցի դեպի թանգարան:

Արագ անցա կիսամութ նախասրահը: Սև ու սպիտակ սալիկների վրա ոտնաձայներս չէին լսվում: Շուրջս գիպսե մի ամբողջ ամբոխ օդում գալարում էր ձեռքերը: Երկու լայն դռների կողքով անցնելիս հպանցիկ նկատեցի մի քանի ճաքած սափորներ, սկուտեղներ, իր պատվանդանին կանգնած մի կապույտ-դեղին սատիր: Խեցեգործությանն ու դեկորատիվ արվեստներին նվիրված «Բերնար-Պալիսի» սրահն էր: Բայց խեցեգործությունն ինձ չի զվարճացնում: Ներսում մի պարոն ու մի սևազգեստ տիկին ակնածանքով դիտում էին այդ խանձված առարկաները:

Մեծ (կամ Բորդյուրեն-Ռընոդա) սրահի մուտքի վերևում, անկասկած ոչ շատ վաղուց մի ահռելի կտավ էր կախված, որ դեռ չէի տեսել: Կտավը պատկանում էր ոմն Ռիշար Սևբրանի վրձնին ու կոչվում էր «Ամուրու մահը»: Թանգարանն այդ կտավը պետությունից էր նվեր ստացել:

Մինչև գոտկատեղը մերկ ու դիակին վայել կանաչավուն մարմնով ամուրին պառկած էր ճմռթված անկողնու վրա: Գունդուկծիկ եղած ծածկոցներն ու սավանները վկայում էին, որ հոգեվարքը երկար է տևել: Հիշեցի պարոն Ֆասկելին ու ժպտացի: Այ ինքը հաստատ մենակ չէ. խնամող աղջիկ ունի: Կտավի վրա ամուրու

սպասուհին՝ սիրուհի-աղախինը, ում դեմքին հստակ անառակություն էր կարդացվում, արդեն բացել էր գրապահարանի դարակն ու մահացածի փողերն էր հաշվում: Բաց դռնից երևում էր, որ դրսի կիսախավարում ինչ-որ տղամարդ է սպասում՝ կլոր գլխարկը գլխին, սիգարետը ներքևի շրթունքից կախ: Պատի տակ կատուն անտարբեր տեսքով կաթ էր լակում:

Այդ մարդը միայն իր համար էր ապրել: Նա արժանացել էր իր դաժան պատժին. մահվան մահճում ոչ ոք չէր եկել փակելու նրա կոպերը: Այդ կտավն ինձ ուղղված վերջին նախազգուշացումն էր. դեռ ուշ չէ, դեռ կարող եմ հետ դառնալ: Իսկ եթե անտեսեմ նախազգուշացումն ու շարժվեմ առաջ, թող հայտնի լինի ինձ, որ այն ընդարձակ սրահում, ուր մուտք կգործեմ, պատերից ավելի քան հարյուր հիսուն դիմանկարներ են կախված, ու եթե չհաշվենք իրենց ընտանիքներից անժամանակ հեռացած մի երկու երիտասարդների ու որբանոցի վերակացու միանձնուհուն, դիմանկարներին պատկերվածներից, և ոչ ոք ամուրի չի մեռել, ոչ ոք կյանքից չի հեռացել անժառանգ, առանց կտակ թողնելու, առանց ընդունելու վերջին հաղորդությունը: Այդ օրը, ինչպես և մնացած բոլոր օրերին, պահպանելով Աստծու և մերձավորների հանդեպ պատշաճության բոլոր կանոնները՝ այդ մարդիկ հանդարտ սահել են մահվան գիրկը՝ պահանջելու համար հավիտենական երանության իրենց բաժինը, որի իրավունքն անկասկած ունեին:

Որովհետև իրենք իրավունք ունեին ունենալու ամեն ինչ՝ կյանք, աշխատանք, հարստություն, իշխանություն և, ի վերջո, անմահություն:

Մի պահ կանգ առա, ինքս ինձ հավաքեցի ու մտա ներս: Հսկիչը պատուհանի մոտ քնած էր: Լուսամուտներից կտավների վրա լույսի գունատ բծեր էին ընկնում: Ընդարձակ, ուղղանկյուն սրահում կենդանության ոչ մի նշույլ չկար, բացի մի կատվից, որն ինձ տեսնելով վախեցավ-փախավ: Եվ սակայն զգացի, որ հարյուր հիսուն զույգ աչքեր իրենց հայացքներն ուղղել են վրաս:

Բոլոր նրանք, ովքեր 1875-1910-ը բուվիլյան վերնախավի մաս էին կազմում, բոլոր այդ կանայք ու տղամարդիկ անխտիր այստեղ էին՝ խնամքով պատկերված Ռընոդայի կամ Բորդյուրենի վրձնով:

Տղամարդիկ կառուցել են Սեն Սեսիլ-դը-լա-Մեր տաճարը: 1882-ին հիմնել են Բուվիլի նավատերերի և առևտրականների միությունը՝ «մեկ հզոր հանգույցում միավորելու համար բարի կամքի տեր բոլոր անհատներին, համագործակցելու հանուն համազգային զարթոնքի և ձախողման մատնելու համար քաոսի խմբակցություններին...»: Նրանց ջանքերով է Բուվիլը դարձել Ֆրանսիայի ամենահարմար առևտրային նավահանգիստը աճուխի ու փայտանյութի բեռնաթափման համար: Նրանց շնորհիվ են նավամատույցները երկարել ու ընդարձակվել: Նրանք են ծովային կայանատեղին հասցրել ցանկալի մեծության և շարունակաբար խորացնելով ծովի հատակը՝ տեղատվության ժամանակ խարիսխ գցելու խորությունը հասցրել 10,7 մետրի: Նրանց ճիգերով է, որ ձկնորսական նավերի ընդհանուր ջրատարողությունը, որ 1869-ին հինգ հազար տոննա էր, քսան տարում հասել է տասնութ հազար տոննայի: Չընկրկելով և ոչ մի զոհողության դիմաց՝ նրանք, հանուն աշխատավոր դասակարգի լավագույն ներկայացուցիչների վերելքի, սեփական նախաձեռնությամբ հիմնել են տեխնիկական ու մասնագիտական կրթության բազմաթիվ կենտրոններ, որոնք ծաղկել ու բարգավաճել են նրանց բարձր հովանու ներքո: Նրանք են 1898-ին ճնշել նավահանգիստների հայտնի գործադուլն ու 1914-ին իրենց զավակներին տվել հայրենիքին:

Կանայք՝ այդ առաջամարտիկների արժանավոր ուղեկիցները, հիմնել են քաղաքի օթևանների, մանկամսուրների ու մանածագործական խմբակների մեծագույն մասը: Բայց նրանք առաջին հերթին կողակիցներ ու մայրեր են եղել: Այդ կանայք հրաշալի երեխաներ են մեծացրել, նրանց բացատրել են իրենց պարտականություններն ու իրավունքները, փոխանցել իրենց կրոնը, սովորեցրել հարգել այն բոլոր ավանդույթները, որոնց վրա կառուցվել է Ֆրանսիան:

Դիմանկարներում գերակշռում էր մուգ շագանակագույնը: Վառ գույները պարկեշտության նկատառումներով չեզոքացվել էին: Այնուամենայնիվ, Ռընոդայի մոտ, ով գերադասում էր ծերունիների նկարել, մազերի ու այտամորուսների սպիտակը հստակ առանձնանում էր մուգ ֆոնից: Նրա կտավներում հատկապես ձեռքերն էին լավ պատկերված: Բորդյուրենի կտավներում, ում վարպետությունը

ավելի քիչ էր, ձեռքերն ավելի վատ էին ստացվել, բայց օձիքները ճերմակ մարմարի պես շողում էին:

Շատ շոգ էր. հսկիչը հանդարտ խոռռացնում էր: Հայացքս սահեցրի պատերի երկայնքով, դեմքեր ու աչքեր տեսա. այստեղ-այնտեղ լույսի բիծն ինչ-որ դեմք էր կլանում: Արդեն ուղղվել էի դեպի Օլիվիե Բլևինի դիմանկարը, բայց ինձ ինչ-որ բան հետ պահեց. քիվի վերին երկու զարդանախշերի արանքից ինձ իր պայծառ հայացքն էր ուղղել առևտրական Պակոմը:

Պակոմը կանգնած էր, գլուխը մի թեթև հետ էր թեքել, ձեռքին՝ մարգարտագորշ տաբատին սեղմած, բռնած պահում էր ցիլինդրն ու ձեռնոցները: Չկարողացա զերծ մնալ որոշակի հիացմունքից. նրա մեջ միջակության նշույլ անգամ չկար, չկար ոչինչ, որ ենթակա լիներ քննադատության: Փոքրիկ ոտնաթաթեր, նուրբ ձեռքեր, մարտիկի լայն ուսեր, զուսպ նրբագեղություն՝ միախառնված քմահաճության որոշ նշանների հետ: Առևտրականն այցելուներին բարեկիրթ կերպով ի ցույց էր դրել իր պայծառ, առանց կնճիռների դեմքը. շուրթերին նույնիսկ ժպիտի ստվեր էր նշմարվում: Սակայն մոխրագույն աչքերը չէին ժպտում: Երևի մոտ հիսուն տարեկան էր, բայց երեսուն տարեկանի պես երիտասարդ ու թարմ էր: Նա հոյակապ էր:

Ի վերջո հրաժարվեցի մեջը թերություն գտնելու մտքից: Բայց Պակոմն ինձ բաց չէր թողնում: Ես նրա աչքերի մեջ կարդացի իմ հանդարտ ու անբեկանելի դատավճիռը:

Ու հանկարծ հասկացա, թե մեզ ինչն է բաժանում. այն, ինչ ես կարող էի մտածել իր մասին, իրեն բնավ չէր հուզում, իր համար դա ընդամենը հասարակ հոգեբանություն էր, ինչպես, ասենք, վեպերում է լինում: Բայց իր դատողություններն ինձ սրախողխող էին անում՝ հարցականի տակ դնելով ամեն ինչ՝ ընդհուպ մինչև գոյություն ունենալու իմ իրավունքը: Եվ ինքը ճիշտ էր, ես միշտ էլ դա գիտակցել էի. ես գոյություն ունենալու իրավունք չունեի: Ես աշխարհ էի եկել պատահմամբ, այնպես գոյություն ունեի, ինչպես քարը, բույսը, միկրոբը: Իմ կյանքն ընթանում էր ինչպես պատահի՝ ամենատարբեր ուղղություններով: Երբեմն այն ինձ աղոտ ազդանշաններ էր ուղարկում, իսկ երբեմն էլ ոչինչ չէի զգում, բացի խուլ, անիմաստ բզզոցից:

Իսկ այդ անթերի անձնավորության՝ այժմ արդեն հանգուցյալ Ժան Պակոմի՝ Ազգային պաշտպանության կոմիտեի Պակոմի որդու համար ամեն ինչ այլ էր եղել. իր սրտի հարվածներն ու մյուս օրգանների խուլ աղմուկներն իրեն էին հասել որպես առաջնահերթ ու պարզորոշ իրավունքներ: Վաթսուն տարի անընդմեջ ինքն անշեղորեն իրագործել էր ապրելու իր իրավունքը: Իր հոյակապ, մոխրագույն աչքերով երբեք, ոչ մի անգամ կասկածի ստվեր իսկ չէր սահել: Եվ երբեք, ոչ մի անգամ Պակոմը չէր սխալվել:

Ինքը միշտ ու անմնացորդ կատարել էր իր բոլոր պարտականություններն ու պարտքերը՝ որդիական պարտքը, ամուսնական պարտքը, հայրական պարտքը, ղեկավարի պարտքը: Ինչպես նաև անսասան պահանջել էր իր բոլոր իրավունքները. որպես երեխա՝ լավ դաստիարակության ու համերաշխ ընտանիքում մեծանալու իրավունքը, անբիծ անուն ու բարգավաճող գործ ժառանգելու իրավունքը. որպես ամուսին՝ հոգատարությամբ ու քնքուշ գորովանքով շրջապատված լինելու իրավունքը. որպես հայր՝ մեծարված լինելու իրավունքը. որպես ղեկավար՝ ենթակաների անտրտունջ հնազանդությունը վայելելու իրավունքը: Քանզի իրավունքը ոչ այլ ինչ է, եթե ոչ պարտականության հակառակ երեսը: Հավանաբար երբեք էլ առանձնապես չի զարմացել, որ հասել է այդքան աներևակայելի հաջողության (Պակոմներն այսօր Բուվիլի ամենահարուստ ընտանիքներից են): Երբեք ինքն իրեն չի ասել «երջանիկ եմ», իսկ հաճույքներին անկասկած զուսպ ու չափավորված է տրվել՝ ասելով «հանգստանում եմ»: Այդպես հաճույքը, դառնալով հերթական իրավունքը, կորցրել է իր սպառնալից ունայնությունը: Իր ձախ կողմում՝ կապտամոխրագույն մազերից մի քիչ վերև, դարակի վրա շարված գրքեր նկատեցի: Շքեղ կազմեր ունեին. անկասկած դասականներ էին: Պակոմը, անշուշտ, երեկոյան քնելուց առաջ վերընթերցում էր մի քանի էջ իր «ծերուկ Մոնտենից»[1], կամ էլ Հորացիոսից լատիներեն որևէ ներբող էր կարդում: Հավանաբար տեղեկացված լինելու համար երբեմն-երբեմն ինչ-որ ժամանակակից գործեր էլ է ձեռքն առել: Այդպես ծանոթացել է Բարեսի ու Բուրժեի[2] հետ:

---

1 Վերածննդի շրջանի ֆրանսիացի փիլիսոփա *(ծ. թ.)*:

2 Ֆրանսիացի գրող, էսսեիստ, քննադատ *(ծ. թ.)*:

Որոշ ժամանակ անց գիրքը ցած է դրել: Ժպտացել է: Հայացքը, կորցնելով նախանձելի զգոնությունը, գրեթե երազկոտ է դարձել: Ու ասել է. «Ինչքա՜ն ավելի պարզ ու ավելի դժվար բան է սեփական պարտքը կատարելը»:

Ինքն իրեն հասկանալու ուրիշ ոչ մի փորձ երբեք չի արել. ինքն առաջնորդ էր:

Պատերից ուրիշ առաջնորդներ էլ էին կախված. իրականում այստեղ միայն առաջնորդներ էին: Խնդրեմ՝ իր բազկաթոռում նստած այս վիթխարի, vert-de-gris[1] ծերունին էլ էր առաջնորդ: Հագի սպիտակ ժիլետը հաճելիորեն զուգակցվում էր արծաթազօծ մազերի հետ (այս կտավները զուրկ չէին նաև որոշ գեղարվեստականությունից, չնայած առաջին հերթին բարոյախրատական նպատակներով էին նկարվում ու բնօրինակին հավատարիմ մնալու սկզբունքը բարձրացնում էին ընդհուպ մինչև մանրակրկիտ բծախնդրության աստիճանի): Երկար, նեղ ձեռքը հանգչում էր մի փոքրիկ տղայի գլխին: Շալով փաթաթված ծնկներին բաց գիրք էր դրված: Բայց հայացքը հեռուներում էր թափառում: Ծերունին տեսնում էր այն ամենը, որ երիտասարդները չեն տեսնում: Անունը ոսկեզօծ տառերով գրված էր նկարի տակի փայտե շեղանկյուն ցուցանակի վրա. անկասկած պիտի կա՛մ Պակոմ լիներ, կա՛մ Պարոտեն, կամ էլ գուցե Շենյո: Մտքովս էլ չանցավ մոտենալ ու նայել. ինքը մտերիմների, այդ երեխայի, ինքն իր համար պարզապես Պապիկ էր եղել: Եթե հանկարծ հիմա որոշեր, որ եկել է ժամը թոռանը բացատրելու, թե ինչքան լայն է վերջինիս ապագա պարտականությունների շրջանակը, ինքն իր մասին երրորդ դեմքով կխոսեր.

«Զավակս, պապիկին խոստացիր, որ քեզ խելոք կպահես ու հաջորդ տարի լավ կսովորես: Ինչ իմանաս, գուցե հաջորդ տարի պապիկն արդեն այստեղ չլինի»:

Կյանքի մայրամուտին ինքը բոլորի վրա տարածել էր իր ներողամիտ բարությունը: Եթե նույնիսկ ի՛նձ տեսներ (չնայած իր հայացքի համար ես թափանցիկ կլինեի), ես էլ ողորմածություն կգտնեի աչքերում. կմտածեր, որ ես էլ եմ մի ժամանակ տատիկ-պապիկ ունեցել: Ինքը ոչինչ չի պահանջել. այդ տարիքում ցանկություններ

[1] Պղնձից ստացվող կանաչամոխրագույն ներկանյութ *(Ծ. թ.)*:

այլևս չեն ունենում: Ոչինչ, բացի նրանից, որ մարդիկ իրենց ձայնը մի քիչ իջեցնեն, երբ ինքը ներս է մտնում, բացի նրանից, որ իրեն տեսնելիս մարդկանց ժպիտներում քնքշության ու հարգանքի նշաններ հայտնվեն, ոչինչ, բացի նրանից, որ հարսը երբեմն ասի. «Հայրիկն անկրկնելի է. մեզնից բոլորից ավելի երիտասարդ է», բացի նրանից, որ միայն ինքը կարողանա ձեռքերը թոռան գլխին դնելով մեղմել նրա լացուկոծը ու հետո ասի. «Պապիկը գիտի, թե ոնց է պետք երեխային հանգստացնել», ոչինչ, բացի նրանից, որ որդին տարին մի քանի անգամ գա խորհուրդ հարցնելու որոշ նուրբ հարցերի մասին, ոչինչ, բացի նրանից, որ իրեն անխռով, հանդարտ ու անսահման իմաստուն զգա: Ծերունու ձեռքը հազիվ էր դիպչում թոռան գանգուրներին. դա գրեթե օրհնություն էր: Ինչի՞ մասին էր մտածում: Իր պատվավոր անցյալի, որ իրեն իրավունք էր տալիս ամեն ինչի մասին դատել ու ամեն տեղ վերջին խոսքն ասողը լինել: Նախորդ օրն այնքան էլ հեռու չէի ճշմարտությունից. փորձը շատ ավելին էր, քան մահվանից պատսպարվելու վերջին ապաստանը. այն իրավունք էր՝ ծերերի իրավունքը:

Պատից կախված գեներալ Օբրին էլ էր առաջնորդ իր ահռելի սուսերով: Խնդրեմ, ևս մեկ առաջնորդ՝ նախագահ Էբերը. խիստ ուսյալ մի անձնավորություն, Էմպետրազի ընկերը: Երկար ու համաչափ դեմք ուներ անծայրածիր կզակով ու շուրթի տակ ընդգծված փոքրիկ մորուքով. ծնոտն այնպիսի տեսքով էր դուրս ցցել, ասես իրեն խիստ զվարճացնում է այն, որ իր կարծիքը տարբերվում է մյուսների կարծիքներից, ու որ ինքը կարող է սկզբունքորեն հակաճառել ամեն ինչին՝ թեթև բխկալու նման հեշտ: Սագի փետուրը ձեռքին՝ ընկել էր երազների գիրկը. ինքն էլ էր հանգստանում, գրողը տանի, ու հանգստանում էր՝ ոտանավորներ հորինելով: Բայց աչքերն առաջնորդի արծվային աչքեր էին:

Իսկ շարքայիննե՞րն ուր են: Ես սրահի կենտրոնում էի՝ այդ բոլոր խոժոռ հայացքների նշանառության տակ: Ո՛չ պապ էի, ո՛չ հայր, ո՛չ էլ նույնիսկ ամուսին: Ընտրություններին չէի մասնակցում, վճարածս հարկերը չնչին էին. չէի կարող պարծենալ ո՛չ հարկատուի իրավունքներով, ո՛չ քվեարկողի իրավունքներով, ո՛չ էլ նույնիսկ հարգարժանության այն համեստ իրավունքով, որ հնազանդության քսան

տարիներն են տալիս պաշտոնյային: Գոյությունս արդեն սկսում էր ինձ լրջորեն անհանգստացնել: Արդյոք ես ընդամենը տեսի՞լք չէի:

«Հա՛,– հանկարծ մտքովս անցավ,– ախր հենց ե՛ս եմ շարքայինը»: Այդ մտքից ծիծաղս եկավ, ու սկսեցի ծիծաղել բարեհոգի, անչար ծիծաղով:

Ի պատասխան՝ մի հիսունամյա թանձրամարմին պարոն քաղաքավարի ու հմայիչ ժպտաց ինձ: Ուրնոդան նրան առանձնահատուկ սիրով ու խնամքով էր նկարել՝ նրբագույն վրձնահարվածներով պատկերելով նրա մսոտ, բայց փոքրիկ ու նուրբ ականջներն ու հատկապես ձեռքերը՝ նեղ, ջղաձիգ, երկար ու նուրբ մատներով, ինչպես վայել է իսկական գիտնականին կամ արվեստագետին: Դեմքը ծանոթ չէր. երևի հաճախ ուղղակի անցել էի այդ կտավի կողքով ու ուշադրություն չէի դարձրել: Մոտեցա, կարդացի. «Ռեմի Պարոտեն, Փարիզի բժշկական դպրոցի պրոֆեսոր, ծնվ. Բուվիլում՝ 1849թ.»:

Պարոտեն. բժիշկ Ուեյկֆիլդն էր ինձ նրա մասին պատմում: «Կյանքումս ընդամենը մեկ անգամ է եղել, որ հանդիպեմ մեծ մարդու: Այդ մարդը Ռեմի Պարոտենն էր: 1904-ի ձմռանը հաճախում էի իր դասերին (դե գիտեք, որ Փարիզում երկու տարի մանկաբարձություն եմ սովորել): Հենց ինքն է ինձ սովորեցրել, թե ինչ է նշանակում իսկական առաջնորդ լինել: Երդվում եմ՝ Պարոտենի մեջ ինչ-որ արտառոց բան կար: Մեզ ստիպում էր բոցավառվել. մենք իր հետևից աշխարհի ծայրն էլ կգնայինք: Ու այդ ամենով հանդերձ նաև իսկական ջենտլմեն էր. ահռելի մեծ հարստություն ուներ ու դրա զգալի մասը չքավոր ուսանողների օգնությանն էր հատկացնում»:

Երբ առաջին անգամ լսեցի գիտության այդ արքայազնի մասին, ներսումս նույնիսկ ինչ-որ զգացմունքներ արթնացան: Իսկ հիմա կանգնած էի իր դիմաց, ու ինքն ինձ ժպտում էր: Եվ ի՞նչ իմաստուն ու սիրալիր էր ժպտում: Գիրուկ մարմինը հարմար փռված էր մեծ, կաշեպատ բազկաթոռի մեջ: Հավակնություններից զուրկ այդ գիտնականի ներկայությամբ բոլորն իսկույն սկսում էին իրենց հանգիստ ու ազատ զգալ: Թերևս եթե վեհ հայացքը չլիներ, նույնիսկ կթվար, թե ուղղակի պարզամիտի մեկն է:

Պարոտենի հմայքի գաղտնիքը բացահայտելու համար երկար մտածել պետք չէր. մարդիկ իրեն սիրում էին, որովհետև ինքն ամեն ինչ հասկանում էր, իրեն ամեն ինչ կարելի էր ասել: Մեծ հաշվով մի քիչ Ռընանին էր նման, ուղղակի ավելի նրբաճաշակ էր: Նրանցից էր, ովքեր ասում են. «Սոցիալիստնե՞ր: Ես շատ ավելի հեռուն եմ գնում, քան դրանք»: Եթե հանկարծ որոշեիր այդ կործանարար ճանապարհով քայլել իր հետևից, շուտով ստիպված պիտի լինեիր դողալով հրաժարվել քո ընտանիքից, հայրենիքից, սեփականության իրավունքից, ամենասուրբ արժեքներից: Մի պահ նույնիսկ բուրժուա վերնախավի իշխելու իրավունքը կսկսեր կասկածելի թվալ: Բայց մի քայլ էլ, ու հանկարծ ամեն ինչ ինչ-որ հրաշքով կվերականգնվեր ու կշարունակեր նույնը լինել, ինչ նախկինում, սակայն այս անգամ արդեն հիմնավորված անխոցելի փաստարկներով: Ու դու կշրջվեիր ու կտեսնեիր, որ սոցիալիստները մնացել են հեռու հեռվում՝ շատ փոքրիկ, թափահարում են թաշկինակներն ու ձայն են տալիս. «Սպասեք մե՛զ»:

Ասենք՝ Ուեյկֆիլդի պատմածից գիտեի, որ Մետրը սիրում էր, ինչպես ինքն էր ժպիտով ասում, «հոգևոր ծնունդներ ընդունել»: Երիտասարդ մնալով՝ իրեն շրջապատում էր երիտասարդներով. հաճախ էր հյուրընկալում անվանի ընտանիքներից դուրս եկած երիտասարդների, ովքեր իրենց նվիրել էին բժշկությանը: Ուեյկֆիլդը մի քանի անգամ ընթրել էր նրա տանը: Ճաշից հետո անցնում էին ծխարան: Տանտերն այնպես էր վարվում այդ ուսանողների հետ, ովքեր դեռ երեկ իրենց առաջին սիգարետն էին ծխում, ասես նրանք հասուն տղամարդիկ լինեին. սիգարներ էր հյուրասիրում: Հետո մեկնվում էր բազմոցին ու աչքերը կիսափակ սկսում էր միալար ճառել, իսկ շուրջը հավաքված հետևորդների ամբոխն ագահաբար կլանում էր նրա ամեն մի բառը: Հիշողություններ էր արթնացնում, տարբեր պատմություններ էր պատմում՝ վերջում դրանցից նուրբ ու խորին բարոյախրատական դասեր քամելով: Ու եթե այդ բարեկիրթ երիտասարդների մեջ հանկարծ լինում էր մեկը, ով փորձում էր համառել ու ընդդիմանալ, Պարոտենը հատուկ կենտրոնանում էր նրա վրա: Խոսեցնում էր, ուշադիր լսում, մտքեր հուշում, ակնարկում էր, թե ինչի շուրջ արժի մտածել: Հետո մի օր անպայման լինում էր

թվայնացրել է 1915.info կայք

այնպես, որ վեհ գաղափարներով լի, մտերիմների թշնամությունից բորբոքված, միայնակ ու բոլորին դեմ մտածելուց հոգնած այդ երիտասարդը Պարոտենից խնդրում էր առանձին հանդիպել ու երկչոտ կմկմալով՝ նրա առաջ բացում էր իր բոլոր նվիրական մտքերը, բոլոր վրդովմունքները, բոլոր հույսերը: Պարոտենը նրան սեղմում էր կրծքին: Ասում էր. «Հասկանում եմ ձեզ, հենց առաջին օրվանից էլ հասկացել եմ»: Սկսում էին զրուցել, Պարոտենը գնում էր հեռուները, հետո ավելի հեռու, հետո այնքան հեռու, որ երիտասարդն արդեն հազիվ էր կարողանում հետևից հասնել: Մի քանի այդպիսի զրույցներից հետո մարդիկ սկսում էին նկատել, որ ըմբոստ երիտասարդի վիճակը զգալիորեն բարելավվել է: Սկսում էր ավելի լավ հասկանալ ինքն իրեն, ըմբռնում էր իրեն ընտանիքին ու միջավայրին կապող ամուր կապերը, գիտակցում էր ի վերջո վերնախավի հիանալի դերը: Եվ վերջիվերջո, ասես ինչ-որ հրաշքով այդ մոլորված ոչխարը, Պարոտենին քայլ առ քայլ հետևելով, վերադառնում էր իր փարախը՝ պայծառացած ու զղջումով լի: «Նա ավելի շատ հոգիներ է բուժել, քան ես՝ մարմիններ»,- եզրափակում էր Ուեյկֆիլդը:

Ռեմի Պարոտենը սիրալիր ժպտում էր ինձ: Տատանվում էր՝ փորձելով հասկանալ դիրքորոշումս, որպեսզի հետո նրբորեն այն փոխի ու մոլորված ոչխարին վերադարձնի իր գոմը: Բայց ես իրենից չէի վախենում. ես ոչխար չէի: Նայեցի անկնճիռ ու անվրդով ճակատին, փոքրիկ փորիկին, ծնկին հանգչող ձեռքին: Հետո ի պատասխան ժպտացի ու հեռացա:

Նրա եղբայր Ժան Պարոտենը՝ բանկի նախագահը, երկու ձեռքով հենվել էր թղթերով ծանրաբեռնված սեղանին ու իր ողջ տեսքով այցելուներին հասկացնում էր, որ ընդունելությունն ավարտված է: Արտառոց, մի տեսակ վերացարկված հայացք ուներ, աչքերում շողում էր մաքուր իրավունքը: Աչքերի շլացուցիչ փայլը կլանել էր ողջ դեմքը: Այդ հրդեհի տակ հազիվ նշմարեցի միստիկի բարակ, ամուր սեղմված շուրթերը: «Տարօրինակ է,– մտքովս անցավ,– Ռեմի Պարոտենին է նման»: Հետ դարձա Մեծ Պատրոնի մոտ. այդ նմանության լույսի ներքո հանկարծ պարզ երևաց, որ բժշկի մեղմ դեմքին ինչ-որ անպտուղ, ամայի բան կար. ընտանեկան գիծ էր: Վերադարձա Ժան Պարոտենի մոտ:

Այդ մարդը մեն-մի գաղափարի պարզությունն ուներ: Իր մեջ այլևս ոչինչ չէր մնացել, բացի ոսկորներից, մեռած մսից ու Մաքուր Իրավունքից: Մոլագարության ցայտուն օրինակ է, մտածեցի: Երբ Իրավունքը տիրում է մարդուն, դևերին վռնդելու բոլոր կախարդանքներն այլևս անզոր են: Ժան Պարոտենն ամբողջ կյանքը նվիրել էր միմիայն իր այդ Իրավունքի մասին մտածելու գործին: Թեթև գլխացավի փոխարեն, որ ես ամեն անգամ ունենում եմ թանգարան այցելելիս, նա իր քունքերում կսկսեր զգալ բուժվելու ցավագին իրավունքը: Բացառված էր, որ իրեն ստիպեիր երկար մտածել ինչ-որ բանի մասին կամ կարողանայիր ուշադրությունը հրավիրել տհաճ իրականության, իր մոտալուտ մահվան կամ մերձավորների տառապանքների վրա: Անկասկած իր մահվան մահճում, այն ժամին, երբ Սոկրատեսի ժամանակներից սկսած ընդունված է մի երկու վերամբարձ խոսք արտասանել, ինքը կնոջը նույն բանն էր ասել, ինչ իմ քեռիներից մեկն էր ասել իր կնոջը, ով տասներկու անքուն գիշեր չէր հեռացել նրա կողքից. «Իսկ քեզ, Թերեզ, ես շնորհակալություն չեմ հայտնում. դու ընդամենը քո պարտքն էիր կատարում»: Երբ մարդն արդեն այդ աստիճանին է հասել, չես կարող չխոնարհվել իր առջև:

Իր աչքերը, որոնց սևեռել էի ապշահար հայացքս, ինձ հստակ ցույց էին տալիս, որ հեռանալուս ժամանակն է: Բայց ես չէի գնում, վճռականորեն որոշել էի հնարավորինս անպարկեշտ լինել: Ժամանակին Էսկուրիալի գրադարանում երկար դիտել էի Ֆիլիպ 2-րդի դիմանկարներից մեկն ու գիտեի, որ եթե շարունակես ուշադիր նայել հրավունքով բոցկլտացող դեմքին, ինչ-որ պահի կրակը հանգչում է, ու տակը միայն մոխիր է մնում. ինձ հենց այդ մոխիրն էր հետաքրքրում:

Պարոտենը երկար ու լավ էր դիմադրում: Բայց հանկարծ հայացքը մարեց, կտավը սկսեց խամրել: Եվ ի՞նչ մնաց: Մի զույգ կույր աչքեր, սատկած օձի պես բարակ բերան ու երկու այտ: Այդ կլոր ու գունատ մանկական այտերն ասես փռվել էին կտավով մեկ: Բանկի աշխատողները չէին էլ կասկածում դրանց գոյության մասին. իրենք երբեք բավականաչափ երկար չէին մնում Պարոտենի աշխատասենյակում, ներս մտնելիս էլ միշտ պատի նման

բախվում էին այդ զարհուրելի հայացքին: Հենց այդ հայացքն էլ հուսալիորեն պատսպարում էր սպիտակ ու կակուղ այտերը: Քանի՞ տարի է պետք եղել Պարոտենի կնոջը, որ դրանք նկատի: Երկո՞ւ: Հի՞նգ: Պատկերացնում եմ, թե ինչպես մի օր, երբ ամուսինը կողքին քնած էր, ու լուսնի շողը խաղում էր քթի վրա, կամ էլ երբ օրվա շոգ ժամին կիսափակ աչքերով փլված էր բազկաթոռի մեջ ու ծանր մարսում էր սնունդը, իսկ արևն ընկել էր կզակին, նա համարձակվել է նայել ամուսնու դեմքին ու առաջին անգամ տեսել է այդ անպաշտպան, փքված, լպրծուն, մի քիչ անպարկեշտ մարմինը: Անկասկած հենց այդ օրվանից էլ տիկին Պարոտենն իր ձեռքն է առել ղեկավարման բոլոր լծակները:

Մի երկու քայլ հետ գնացի ու հայացքիս մեջ առա այդ բոլոր մեծ մարդկանց՝ Պակոմին, նախագահ Էբերին, երկու Պարոտեններին, գեներալ Օբրիին: Նրանք ցիլինդրներ էին կրում, կիրակի օրերին Տուրնբրիդ փողոցում հանդիպում էին տիկին Գրասիենին՝ քաղաքապետի կնոջը, ում երազում այցելել էր սուրբ Սեսիլը, ողջունում էին խոր, ծիսական խոնարհումով, որի գաղտնիքն այսօր անհետ կորած է:

Նրանց բոլորին խիստ ճշգրիտ էին նկարել, և սակայն նկարչի վրձնի տակ նրանց դեմքերը զրկվել էին մարդկային դեմքին հատուկ խորհրդավոր թուլությունից: Այդ կտավների վրա նույնիսկ ամենադժգույն ու կամազուրկ դեմքերը հախճապակու պես մաքուր էին: Իզուր էի փորձում դրանց մեջ որևէ հարազատություն գտնել ծառերի ու կենդանիների աշխարհի հետ, հողի ու ջրի մասին մտքերի որևէ նշույլ որսալ: Վստահ էի, որ կենդանության օրոք դրա կարիքը չէին ունեցել: Բայց հոգիներն ավանդելուց առաջ իրենց անձը վստահել էին անվանի գեղանկարիչներին, որպեսզի վերջիններս նրանց դեմքերը զգուշությամբ ենթարկեին այն նույն խորացումներին, հորատումներին ու ոռոգումներին, որոնցով այդ մարդիկ կերպարանափոխել էին Բուվիլի շրջակայքի ծով ու դաշտերը: Այդպես Ռընոդայի ու Բորդյուրենի օգնությամբ նրանք ստրկացրել էին Բնությունը իրենց շուրջն ու իրենց ներսում: Այն, ինչ ցուցադրում էին այդ մռայլ դիմանկարները, մարդու կողմից վերաիմաստավորված մարդն էր, ում միակ զարդարանքը մարդու

մեծագույն նվաճումն էր՝ Մարդու և Քաղաքացու Իրավունքների ծաղկեփունջը: Ես առանց որևէ հետին մտքի հիանում էի մարդու իշխանությամբ:

Մի պարոն և տիկին մտան ներս: Լրիվ սև էին հագնված ու աշխատում էին որքան հնարավոր է աննկատ մնալ: Շեմի վրա մի պահ հմայված կանգ առան, տղամարդը մեքենայաբար գլխարկը հանեց:

– Ա՛խ,– խիստ հուզված ասաց տիկինը:

Պարոնն ավելի շուտ ուշքի եկավ ու վերականգնեց սառնասրտությունը: Հետո հարգանքով լի ձայնով ասաց.

– Մի ամբողջ դարաշրջան...

– Այո,– ասաց տիկինը,– տատիկիս դարաշրջանն է:

Մի քանի քայլ առաջ եկան ու բախվեցին Ժան Պարոտենի հայացքին: Տիկինը մնաց բերանը բաց, բայց պարոնի հպարտությունն իսկույն հօդս ցնդեց. հիմա արդեն խիստ ճնշված տեսք ուներ, հավանաբար լավ ծանոթ էր այդ ահարկու հայացքներին ու վաղաժամ ավարտվող ընդունելություններին: Պարոնը թույլ քաշեց տիկնոջ թևից ու ասաց.

– Այս մեկը նայիր:

Ռեմի Պարոտենի ժպիտը միշտ էլ քաջալերել էր նվաստներին: Տիկինը մոտեցավ ու ջանասիրաբար կարդաց.

«Ռեմի Պարոտեն, Փարիզի բժշկական դպրոցի պրոֆեսոր, ծնվ. Բուվիլում՝ 1849թ., հեղինակ՝ Ռընոդա»:

– Գիտությունների ակադեմիայի անդամ Պարոտենը,– ասաց ամուսինը,– պատկերված Ինստիտուտի անդամ Ռընոդայի կողմից: Սա ինքը՝ Պատմությունն է:

Տիկինը գլխով արեց, հետո նայեց Մեծ Պատրոնին.

– Ինչ լավն է,– ասաց,– ինչ խելացի տեսք ունի:

Ամուսինը ձեռքի լայն շարժումով ցույց տվեց ամբողջ սրահը.

– Այս մարդիկ են ստեղծել Բուվիլը,– պարզապես ասաց:

– Ինչ լավ է, որ բոլորին մի տեղ են հավաքել,– ասաց հուզված տիկինը:

Մենք երեք շարքայիններ էինք, ովքեր զինավարժություններ էին անում այս հսկայական սրահում: Ամուսինը, որ հարգանքով լցված՝

լուռ ծիծաղում էր, հանկարծ անհանգիստ հայացք գցեց վրաս ու դադարեցրեց ծիծաղը: Ես շրջվեցի, մի քիչ հեռացա ու կանգ առա Օլիվիե Բլևինի դիմանկարի դիմաց: Համր ուրախությունը պարուրել էր ինձ. փաստորեն, ես ճիշտ էի: Իրոք որ շատ զվարճալի էր:

Կինը քայլեց իմ կողմը:

– Գաստոն,– ձայն տվեց անսպասելիորեն սրտապնդված,– արի այստեղ:

Ամուսինը նույնպես մոտեցավ մեզ:

– Լսիր,– շարունակեց կինը,– այս մեկի անունով փողոց էլ կա՝ Օլիվիե Բլևինի փողոցը: Դե գիտես, էլի, փոքրիկ փողոց է, Կոտո Վերով բարձրանում է համարյա մինչև Ժուքստբուվիլ:

Հետո մի քիչ լռեց ու ավելացրեց.

– Կոշտ մարդու տեսք ունի:

– Դե իհարկե: Ով գիտի՝ լավ տեղն էր դնում ամեն տեսակի խառնակիչներին:

Ակնարկն ինձ էր ուղղված: Պարոնն աչքի պոչով նայեց ինձ ու նորից սկսեց ծիծաղել, այս անգամ արդեն մի քիչ ավելի բարձր, ընդ որում՝ այնքան ինքնագոհ ու կարևոր տեսքով էր ծիծաղում, ասես Օլիվիե Բլևինը հենց ինքը լիներ:

Օլիվիե Բլևինը չէր ծիծաղում: Նա մեր կողմն էր տնկել ամուր սեղմած ծնոտը, ադամախնձորը ցցվել էր դուրս:

Մի պահ հափշտակված լռություն տիրեց:

– Ասես ուր որ է՝ կշարժվի,– ասաց տիկինը:

Ամուսինը պատրաստակամորեն բացատրեց.

– Բամբակի խոշոր առևտրական է եղել: Հետո սկսել է քաղաքականությամբ զբաղվել, պատգամավոր է դարձել:

Ես դա գիտեի: Երկու տարի առաջ աբբա Մորելեի «Բուվիլի անվանի մարդկանց համառոտ հանրագիտարանում» կարդացել էի նրա մասին: Հոդվածը արտագրել ու պահել էի:

«Բլևին, Օլիվիե-Մարսիալ, ավագ Օլիվիե-Մարսիալ Բլևինի որդին, ծնվել ու մահացել է Բուվիլում (1849-1908), իրավաբանական կրթություն է ստացել Փարիզում, դիպլոմը ստացել է 1872-ին: Խորապես տպավորվելով Կոմունայի ապստամբությամբ, որը նրան բազմաթիվ այլ փարիզցիների պես ստիպում է ապաստան գտնել

Վերսալում՝ Ազգային ժողովի պաշտպանության ներքո, նա դեռ այն տարիքում, երբ երիտասարդները միայն վայելքների մասին են մտածում, երդվում է «իրեն նվիրել Կարգի վերահաստատման գործին»: Նա իր խոսքի տերն է լինում. մեր քաղաք վերադառնալուն պես հիմնադրում է հայտնի «Կարգի ակումբը», որտեղ տարիներ շարունակ ամեն երեկո հավաքվում էին Բուվիլի ամենախոշոր առևտրականներն ու նավատերերը: Այդ արիստոկրատական խմբակը, որի մասին կատակով ասում էին, որ այնտեղ ավելի դժվար է մուտք գործել, քան Ժոկեյ-ակումբ, մինչև 1908թ. շարունակում է բարենպաստ ազդեցություն գործել մեր խոշոր առևտրական նավահանգստի ճակատագրի վրա: 1880-ին Օլիվիե Բլևինն ամուսնանում է Մարի-Լուիզ Պակոմի՝ առևտրական Շարլ Պակոմի (տե՛ս համապատասխան հոդվածը) կրտսեր աղջկա հետ: Շարլ Պակոմի մահվանից հետո Բլևինը հիմնում է «Պակոմ-Բլևին և որդի» ընկերությունը: Քիչ ժամանակ անց սկսում է զբաղվել քաղաքականությամբ և իր թեկնածությունն է դնում պատգամավորական ընտրություններում:

«Երկիրը,- ասում է իր հայտնի ելույթում,- տառապում է ծանրագույն հիվանդությամբ. իշխող դասակարգն այլևս չի ցանկանում ղեկավարել: Իսկ ո՞վ պիտի ղեկավարի, պարոնա՛յք, եթե նրանք, ովքեր իրենց ժառանգությամբ, կրթությամբ, փորձով ամենապիտանին էին իշխանության գլուխ կանգնելու համար, հրաժարվում են դրանից համակերպվածության կամ հոգնածության պատճառով: Ես բազմիցս ասել եմ. իշխելն ընտրյալների իրավունքը չէ, այլ նրանց գլխավոր պարտականությունը: Պարոնայք, աղաչում եմ ձեզ, եկեք վերականգնենք իշխանության սկզբունքը»:

Բլևինը, առաջին անգամ պատգամավոր ընտրվելով 1885-ի հոկտեմբերի չորսին, հետագայում շարունակաբար վերընտրվում է: Օժտված լինելով պերճախոսությամբ՝ բազմաթիվ փայլուն ելույթներ է ունենում՝ իրեն հատուկ եռանդով և կտրուկ շեշտադրումներով: 1898-ի սարսափելի գործադուլի սանձազերծման ժամանակ Բլևինը Փարիզում է լինում: Նա հապճեպ վերադառնում է Բուվիլ, որտեղ դառնում է դիմադրության ոգեկոչողը: Այնտեղ նա իր վրա է վերցնում գործադուլ անողների հետ բանակցելու նախաձեռնությունը:

Այդ բանակցությունները, որոնք միտված էին համաձայնության գալու հարցերի լայն շրջանակի շուրջ, ընդհատվում են Ժուքստբուվիլի բախումներով: Ինչպես հայտնի է, բանակի տեղին միջամտությունը հանդարտեցնում է մարդկանց խռովված հոգիները:

Որդու՝ Օկտավի վաղաժամ մահը սոսկալի հարված է հասցնում Օլիվիե Բլևինին: Օկտավը երիտասարդ տարիքում արդեն ընդունվել էր Պոլիտեխնիկական ինստիտուտ, և հայրը նրան նախապատրաստում էր «առաջնորդ դառնալու համար»: Այդպես էլ չկարողանալով ոտքի կանգնել այդ հարվածից հետո՝ Բլևինը կյանքից հեռանում է երկու տարի անց՝ 1908-ի փետրվարին:

Ճառերի ժողովածուներ՝ «Բարոյականության ուժերը» (1894թ., տպաքանակը սպառված է), «Պատժելու իրավունքը» (1900թ., ժողովածուի մեջ ներառված բոլոր ճառերն արտասանվել են Դրեյֆուսի գործի առնչությամբ, տպաքանակը սպառված է), «Կամք» (1902թ., տպաքանակը սպառված է): Բլևինի մահվանից հետո նրա վերջին ճառերն ու մտերիմներին ուղղված որոշ նամակներ ներառվել են «Labor improbus» վերնագրով ժողովածուի մեջ («Պլոն» հրատարակչություն, 1910): Պատկերագրություն՝ Օլիվիե Բլևինի հոյակապ դիմանկարը, որ գտնվում է Բուվիլի թանգարանում. հեղինակ՝ Բորդյուրեն»:

Հոյակապ դիմանկար է փաստորեն: Օլիվիե Բլևինը փոքրիկ, սև բեղ ուներ, դեղնավուն դեմքը մի քիչ հիշեցնում էր Մորիս Բարեի դեմքը: Իրենք անկասկած ճանաչում էին իրար, ի վերջո՝ նույն նստարաններին էին նստում: Բայց Բուվիլի պատգամավորը զուրկ էր Հայրենասերների միության նախագահի անբռնազբոս ու անփույթ կեցվածքից: Բլևինը մահակի կոշտություն ուներ ու այնպիսի տեսքով էր կանգնած, ասես ուզում էր կտավից դուրս ցատկել: Աչքերը փայլում էին. բիբերը սև էին, ծիածանաթաղանթները՝ կարմրավուն: Ամուր իրար էր սեղմել մսեղ շուրթերն ու աջ ձեռքը դրել էր կրծքին:

Մի ժամանակ այդ դիմանկարն ինձ հանգիստ չէր տալիս: Բլևինը մե՛կ չափազանց մեծ էր թվում, մե՛կ չափազանց փոքր: Բայց այսօր արդեն գիտեի՝ ինչն ինչոց է:

Ճշմարտությունը հասկացել էի, երբ մի օր թերթում էի «Բուվիլյան սատիրիկը»: 1905թ. նոյեմբերի 6-ի ամբողջ համարը Բլևինին էր

նվիրված: Կազմի վրա իր ծաղրանկարն էր. Բլևինի փոքրիկ կերպարանքը կախ էր ընկած հայր Կոմբի[1] գիսախռիվ բաշից: Նկարի տակ գրված էր՝ «Առյուծի ոջիլը»: Ու հենց առաջին էջից էլ ամեն ինչ պարզ դարձավ. Օլիվիե Բլևինի հասակը մեկ մետր հիսուներեք սանտիմետր էր եղել: Թերթում ծաղրուծանակի էին ենթարկում նրա կարճ հասակն ու կռկռան ձայնը, որի պատճառով Բլևինի ելույթների ժամանակ ամբողջ Ազգային ժողովը ծիծաղից պայթում էր: Հավատացնում էին, որ կոշիկների մեջ ռետինի կտորներ է դնում, որ ավելի բարձր երևա: Իսկ այ տիկին Բլևինը (օրիորդական ազգանունը՝ Պակոմ), ընդհակառակը, իսկական հաղթանդամ բեռնաձի էր եղել: «Սա հենց այն դեպքն է, երբ մարդու լավագույն կեսը իրենից երկու անգամ մեծ է», ավելացնում էր հոդվածի հեղինակը:

Մեկ ու հիսուներե՛ք: Դե իհարկե, կտավի վրա Բորդյուրենը նրան նախանձելի խնամքով շրջապատել էր այնպիսի առարկաներով, որոնք չէին կարող ավելի փոքրացնել Բլևինին՝ փոքրիկ փափուկ աթոռակ, ցածր բազկաթոռ, մի քանի փոքրիկ գրքույկներով լի գրապահարան, պարսկական միոտանի սեղանիկ: Բայց իրեն՝ Բլևինին, նույն չափի էր նկարել, ինչ կողքին կախված Ժան Պարոտենին, ու նկարներն էլ էր նույն չափի արել: Դրա հետևանքով նկարներից մեկի վրայի միոտանի սեղանիկը գրեթե նույնքան մեծ էր, ինչքան կողքի նկարի ահռելի գրասեղանը, իսկ Բլևինի դիմանկարի փափուկ աթոռակը մյուս նկարում կարող էր Պարոտենի ուսից լինել: Աչքդ ակամա համադրում էր երկու նկարները, ու հենց դրա պատճառով էլ նայելիս ինչ-որ անհանգստություն էիր զգում:

Իսկ հիմա ծիծաղս գալիս էր. մեկ ու հիսուներե՛ք: Եթե հանկարծ ուզենայի Բլևինի հետ խոսել, ստիպված պիտի կռանայի կամ ծնկներս ծալեի: Այլևս չէի զարմանում, որ նկարի վրա քիթն այդքան ինքնամոռաց ցցել էր երկինք. այդ հասակի մարդկանց ճակատագիրը միշտ էլ իրենց գլխից մի քանի մատնաչափ վերևում է որոշվում:

Զմայլվել կարելի էր արվեստի ուժով: Ծվծվան ձայնով այդ թզուկից սերունդներին կփոխանցվեն միայն կտավի վրայի ահեղ դեմքը,

---

[1] Էմիլ Կոմբ, ֆրանսիացի քաղաքական գործիչ *(ծ. թ.)*:

վսեմ կեցվածքն ու ցլի արնաթաթախ աչքերը: Մահը տարել էր Կոմունայից սարսափահար եղած ուսանողին ու կարճլիկ, չարացած պատգամավորին: Բայց Բորդյուրենի շնորհիվ «Կարգի ակումբի» նախագահն ու «Բարոյականության ուժերի» հռետորն այլևս անմահ էին:

– Վա՛յ: Խե՜ղճ տղա:

Տիկինը խեղդված ճիչ արձակեց. Օկտավ Բլևինի՝ «ավագ Բլևինի որդու» դիմանկարի տակ ինչ-որ մեկի աստվածավախ ձեռքն ավելացրել էր հետևյալ տողը.

«Մահացել է Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ 1904թ.»:

– Մահացել է... Ոնց որ Արոնդելների տղան: Ինչ խելացի տեսք ունի: Ով գիտի՝ մայրն ինչքան է լացել: Ասում եմ, էլի, այդ հայտնի ինստիտուտներում շատ են ծանրաբեռնում խեղճ երեխաներին: Ուղեղները նույնիսկ քնած ժամանակ չեն անջատվում: Ինձ պոլիտեխնիկցիների եռանկյունի գլխարկներն են շատ դուր գալիս, մի տեսակ շքեղ են նայվում: Ինչ էին կոչվո՞ւմ, կազարնե՞ր:

– Չէ, կազարները Սեն Սիրում[1] են դնում:

Ես էլ էի վաղամեռիկ պոլիտեխնիկցուն նայում: Հերիք էր մի հայացք գցեիր մոմագույն դեմքին ու պահպանողական բեղիկներին, որպեսզի գլխումդ մոտալուտ մահվան մասին մտքեր արթնանային: Ասենք՝ ինքն էլ էր կանխազգում իր ճակատագիրը. դեպի հեռուներն ուղղված պայծառ աչքերում ինչ-որ համակերպվածություն կար: Բայց միևնույն ժամանակ գլուխը բարձր էր պահում. ինքն այդ համազգեստով ներկայացնում էր ֆրանսիական բանակը:

Tu Marcellus eris! Manibus date lilia plenis[2]...

Կտրված վարդ, վաղամեռիկ պոլիտեխնիկցի. ի՞նչը կարող է ավելի տխուր լինել:

Ես անշտապ քայլում էի երկար ցուցասրահով՝ հընթացս ողջունելով կիսախավարից դուրս եկող ականավոր դեմքերին. պրն Բոսուարը՝ առևտրական դատարանի նախագահը, պրն Ֆաբին՝ Բուվիլի անկախ նավահանգստի կառավարման խորհրդի

---

1 Ֆրանսիայում ռազմական ակադեմիա *(ծ. թ.)*:

2 Հատված Դանթեի «Աստվածային կատակերգությունից» *(ծ. թ.)*:

նախագահը, առևտրական պրն Բուլանժն ու իր ընտանիքը, պրն Ռանըկենը՝ Բուվիլի քաղաքապետը, Բուվիլում ծնված պրն դը Լյուսիենը՝ ԱՄՆ-ում Ֆրանսիայի դեսպանը (նաև՝ պոետ), պրեֆեկտի հագուստով ինչ-որ անծանոթ, մայր Սեն-Մարի-Լուիզը՝ Մեծ որբանոցի վերակացուն, պրն և տկն Թերեզոնները, պրն Թիբու-Գուրոնը՝ աշխատանքային իրավունքի առաջին ատյանի դատարանի խորհրդի նախագահը, պրն Բոբոն՝ ծովային վարչության գլխավոր կառավարիչը, պարոնայք Բրիոնը, Մինետտը, Գրելոն, Լըֆեբրը, դոկտոր Պենը՝ կնոջ հետ, ինքը՝ Բորդյուրենը՝ նկարված իր որդու՝ Պիեռ Բորդյուրենի կողմից: Պայծառ, անվրդով հայացքներ, նուրբ դիմագծեր, նեղ բերաններ: Պրն Բուլանժը խնայող էր ու համբերատար, մայր Սեն-Մարի-Լուիզը ձեռներեց բարեպաշտության մարմնացում էր: Պրն Թիբու-Գուրոնը խստապահանջ էր թե՛ իր, թե՛ ուրիշների նկատմամբ: Տկն Թերեզոնն անխոնջ պայքարում էր ծանր հիվանդության դեմ: Անսահման հոգնություն արտահայտող շուրթերը մատնում էին նրա տառապանքները: Բայց այդ աստվածավախ կինը երբեք, ոչ մի անգամ չի ասել. «Ինձ վատ եմ զգում»: Նա հաղթահարում էր հիվանդությունը, ճաշացանկեր էր կազմում, բարեգործական ընթրիքներ էր կազմակերպում ու նախագահում բարեգործական ընկերություններում: Երբեմն նախադասության կեսից հանդարտ փակում էր աչքերը, ու կյանքն ասես լքում էր նրա դեմքը: Սակայն այդ նվաղումն ընդամենը մի վայրկյան էր տևում. տկն Թերեզոնը կրկին բացում էր աչքերն ու ավարտում նախադասությունը: Եվ մարդիկ աշխատասենյակներում փսփսում էին. «Խե՜ղճ տիկին Թերեզոն: Երբեք ոչ մի բանից չի բողոքում, երբեք»:

Ծայրից ծայր անցա Բորդյուրեն-Ռոնոդա ցուցասրահը: Ապա հետ շրջվեցի: Մնաք բարով, սքանչելի շուշաններ, որ նրբորեն հանգչում եք ձեր փոքրիկ, գեղատեսիլ սրբավայրերում, մնաք բարով, սքանչելի շուշաններ, որ մեր հպարտությունն եք ու մեր գոյության իմաստը, մնաք բարով, Տականքներ:

Այլևս չեմ գրում Ռոլբոնի մասին գիրքս. վերջ, ամեն ինչ վերջացած է, էլ չեմ *կարող* գրել: Ի՞նչ անեմ կյանքիս հետ:

Ժամը երեքն էր: Նստած էի սեղանիս մոտ, կողքիս Մոսկվայից գողացած նամակների կապոցն էր: Գրում էի.

«Ջանասիրաբար տարածվում էին ամենաչարագուշակ բամբասանքները: Մարկիզ դը Ռոլբոնը, ըստ երևույթին, հավատացել էր այդ հնարանքներին, քանի որ սեպտեմբերի 13-ին իր զարմիկին ուղղված նամակում գրում է, որ արդեն կազմել է կտակը»:

Մարկիզն այստեղ էր. քանի դեռ նրան վերջնականապես չէի զետեղել իր պատմական գոյության մեջ, ես նրան էի տրամադրել իմ սեփական մարմինը: Ռոլբոնին զգում էի որպես որովայնիս խորքում ծվարած ինչ-որ թույլ տաքություն:

Ու հանկարծ հասկացա, թե ինձ անդադար ինչ նկատողություն են անելու. Ռոլբոնը բնավ էլ անկեղծ չէր իր զարմիկի հետ, ում, եթե հեղաշրջումը ձախողվեր, ուզում էր Պավել Առաջինի մոտ օգտագործել որպես իր պաշտպանության վկա: Միանգամայն հնարավոր է, որ մարկիզն ուղղակի հորինել էր կտակի պատմությունը դյուրահավատ միամիտի տպավորություն ստեղծելու համար:

Չնչին ու թույլ նկատողություն էր իհարկե. հաստատ չարժեր բանի տեղ դնել: Այնուամենայնիվ, այդքանը հերիք էր, որ ընկնեի մռայլ մտածմունքների մեջ: Հանկարծ աչքիս առաջ եկան «Կամիլի մոտի» գեր մատուցողուհին, պարոն Աշիլի այլայլված դեմքը, սրահը, ուր այնքան հստակ զգացի, որ արկանված ու լքված եմ ներկայի մեջ: Ու հոգնած ասացի ինքս ինձ. «Ինչպես կարող եմ ես, ով նույնիսկ սեփական անցյալը պահելու ուժ չի ունեցել, հուսալ, որ կարող եմ պահպանել ուրիշի անցյալը»:

Գրիչս վերցրի ու փորձեցի շարունակել աշխատանքս. արդեն մինչև կոկորդս կուշտ էի անցյալի, ներկայի ու ամբողջ աշխարհի մասին այդ բոլոր մտածմունքներից: Ուզածս ընդամենը մի բան էր. թողեք հանգիստ գրեմ-վերջացնեմ գիրքս:

Բայց երբ հայացքս նորից ուղղեցի դիմացիս մաքուր թղթերին, դրանց տեսքը ցնցեց ինձ, ու ես, գրիչս օդում սառած, աչքերս սևեռեցի այդ կուրացուցիչ ճերմակ էջերին. որքա՞ն ամուր ու նկատելի էր

այդ թուղթը, որքա՞ն ներկա: Մեջը ներկայից բացի ուրիշ ոչինչ չկար: Հենց նոր վրան գրածս տառերը դեռ չէին էլ չորացել և սակայն արդեն ինձ չէին պատկանում:

«Ձանասիրաբար տարածվում էին ամենաչարագուշակ բամբասանքները...»:

Ես էի հորինել այս նախադասությունը, սկզբում այն իմ մի մասնիկն էր: Իսկ հիմա գրված էր թղթի վրա ու թղթի հետ միավորվել էր իմ դեմ: Այլևս այդ նախադասությունը չէի ճանաչում: Նույնիսկ չէի էլ կարող նորից հորինել: Այն այստեղ էր՝ իմ դիմաց, ու ես ապարդյուն փորձում էի դրա մեջ իր ծագման մասին հուշող ինչ-որ նշաններ գտնել: Ով ասես՝ կարող էր գրած լինել: Բայց *ես ինքս* վստահ չէի, որ այդ նախադասությունը ես եմ գրել: Տառերն այլևս չէին փայլում, արդեն չորացել էին: Այդ մի բանն էլ էր անհետացել. դրանց հպանցիկ փայլից հետք անգամ չէր մնացել:

Տագնապով նայեցի չորս կողմս. միայն ներկա էր, ուրիշ ոչինչ, բացի ներկայից: Թեթև, ամուր, իր ներկայի մեջ քարացած կահույք՝ սեղան, մահճակալ, հայելիով պահարան ու ես ինքս: Իմ առջև բացվում էր ներկայի իրական բնույթը. ներկան այն էր, ինչ գոյություն ուներ, իսկ այն ամենը, որ ներկա չէր, գոյություն չուներ: Անցյալը գոյություն չուներ: Բնավ: Ո՛չ իրերի մեջ, ո՛չ էլ նույնիսկ մտքումս: Ես, իհարկե, արդեն վաղուց հասկացել էի, որ անցյալս կորցրել եմ: Բայց մինչ այս պահը կարծում էի, որ ուղղակի հասանելիությանս սահմաններից դուրս էր եկել: Ինձ համար անցյալն ընդամենը թոշակի անցնելու պես մի բան էր. գոյություն ունենալու մեկ այլ ձև էր, մի տեսակ արձակուրդային, անզբաղ վիճակ: Յուրաքանչյուր իրադարձություն իր դերն ավարտելուց հետո ինքնուրույն ու հլու-հնազանդ տեղավորվում էր ինչ-որ դարակի մեջ ու վերածվում էր պատվավոր իրադարձության, որովհետև մեզ համար տանջալիորեն դժվար է անէություն պատկերացնել: Իսկ հիմա արդեն գիտեի. իրերը հենց այն են, ինչ թվում են, իսկ *դրանց հետևում*... ոչինչ չկա:

Դեռ մի քանի րոպե կլանված մնացի այդ մտքով: Հետո սթափվելու համար կտրուկ թափ տվեցի ուսերս ու թղթերը մոտ քաշեցի:

«...որ արդեն կազմել է կտակը»:

Հանկարծ մի աննկարագրելի նողկանք զգացի, ու գրիչը ձեռքիցս ընկավ՝ թանաքը լղոզելով թղթով մեկ: Ի՞նչ էր եղել: Էլի Սրտխառնո՞ց: Չէ, ուրիշ բան էր. սենյակը դեռ իր սովորական, բարեհամբույր տեսքն ուներ: Ոչ սեղանն էր ավելի ծանր ու խիտ թվում, ոչ էլ գրիչս էր կծկվել ու պրկվել: Ուղղակի վայրկյաններ առաջ մարկիզ դը Ռոլբոնը մահացել էր երկրորդ անգամ:

Քիչ առաջ դեռ այստեղ էր՝ իմ ներսում՝ հանդարտ ու տաք. ժամանակ առ ժամանակ նույնիսկ զգում էի, թե ինչպես է շարժվում: Մարկիզն ինձ համար ողջ էր, շատ ավելի ողջ, քան Ինքնուսը կամ «Ուղևորների ռանդևուի» տիրուհին: Ինքն էլ, իհարկե, իր քմահաճություններն ուներ ու կարող էր օրերով թաքնված մնալ, բայց հաճախ՝ ինչ-որ առեղծվածային լավ եղանակների ժամանակ, խոնավազգայուն բույսի նման քիթը դուրս էր հանում, ու ես տեսնում էի իր գունատ դեմքն ու կապտավուն այտերը: Ու նույնիսկ երբ դուրս չէր գալիս, միևնույն է, շարունակում էր իր ծանրությամբ սեղմել սիրտս, ու ես զգում էի, որ լիքն եմ իրենով:

Իսկ հիմա այլևս ոչինչ չէր մնացել՝ այնպես, ինչպես թանաքի այս չորացած գծերի վրա հետք անգամ չէր մնացել իրենց նախկին թարմ փայլից: Ես էի մեղավոր. ես արտասանել էի հենց այն խոսքերը, որ չէր կարելի արտասանել. ես ասել էի, որ անցյալը գոյություն չունի: Ու հենց նույն ակնթարթին մարկիզ դը Ռոլբոնն անաղմուկ վերադարձել էր իր անէության գիրկը:

Ձեռքս առա նրա նամակներն ու մի տեսակ հուսահատության մեջ ընկած՝ սկսեցի դրանք շոշափել.

«Բայց ախր ինքն է, չէ՞,– ասում էի ինքս ինձ,– ախր հենց ինքն է մեկը մյուսի հետևից գծել այս նշանները: Կռացել է հենց այս թղթի վրա, մատով սեղմել է հենց այս թերթերը, որ փետուրի տակ չշարժվեն»:

Արդեն ուշ էր. այդ բոլոր բառերն այլևս ոչ մի իմաստ չունեին: Այլևս ոչինչ գոյություն չուներ, բացի ձեռքերիս մեջ սեղմած մի խուրձ դեղնած թղթերից: Անշուշտ, դրանց ամբողջ խճճված պատմությունը դեռ մնում էր. 1810-ին ցարական ոստիկանությունը սպանում է Ռոլբոնի զարմիկին, նրա թղթերն առգրավվում են ու փակվում գաղտնի արխիվում, հետո՝ հարյուր տասը տարի անց, խորհրդային

իշխանությունը դրանք հանձնում է Պետական գրադարանին, որտեղից էլ 1923-ին դրանք գողանում եմ: Բայց այդ ամենը ճշմարտանման չէր թվում. ներսումս այլևս ոչ մի իսկական հիշողություն չէր մնացել հենց իմ կատարած այդ գողության մասին: Սենյակումս այդ նամակների ներկայությունը բացատրելու համար հեշտությամբ կարելի էր հարյուրավոր ուրիշ՝ ավելի ճշմարտանման պատմություններ հորինել, բայց այդ կոպիտ թղթերի առաջ դրանք բոլորն էլ օձառի պղպջակների նման սնամեջ ու թեթև էին թվում: Ռոլբոնի հետ հաղորդակցվելու համար հույսս դրանց վրա դնելու փոխարեն ավելի լավ է միանգամից հոգի կանչելով զբաղվեի: Ռոլբոնն այլևս չկար: Բնավ գոյություն չուներ: Եթե անգամ դեռ ինչ-որ ոսկորներ էլ մնում էին, դրանք արդեն գոյություն ունեին ինքնուրույն՝ ամեն ինչից անկախ, ու ոչ ավելին էին, քան աղերի ու ջրի հետ խառնված որոշ քանակությամբ ֆոսֆոր ու կալցիումի կարբոնատ:

Մի վերջին փորձ արեցի. սկսեցի ինքս ինձ կրկնել մադամ դը Ժանլիսի խոսքերը, որոնց օգնությամբ սովորաբար ոգեկոչում էի մարկիզին. «Նրա փոքրիկ, մաքուր, կնճռապատ դեմքը՝ ամբողջությամբ ծածկված ծաղիկի հետքերով, որի վրա մշտապես ինչ-որ աչքի զարնող խարդախություն էր կարդացվում, ինչքան էլ որ մարկիզը փորձեր այն թաքցնել»:

Մարկիզի դեմքը հնազանդորեն հայտնվեց իմ առաջ՝ սուր քիթ, կապտավուն այտեր, ժպիտ: Ես ուզածս պահին կարող էի աչքիս առաջ վերստեղծել նրա դիմագծերը ու հիմա գուցե ավելի հեշտությամբ, քան առաջ: Ուղղակի դա արդեն ընդամենը իմ ներսում ծնված պատկեր էր, հորինվածք: Հառաչեցի ու հետ ընկա աթոռի թիկնակին. զգում էի, որ անդառնալի կորուստ եմ կրել:

Ժամը չորսը խփեց: Արդեն մի ժամ է՝ թևաթափ նստած եմ աթոռին: Սկսում է մթնել: Ուրիշ ոչ մի փոփոխություն սենյակում չկա. սպիտակ թուղթն առաջվա նման սեղանիս վրա է՝ գրիչի ու թանաքամանի կողքին: Բայց ես այլևս երբեք չեմ գրի սկսածս էջի վրա: Այլևս երբեք Մյուտիլենների փողոցով ու Ռըդուտ բուլվարով չեմ քայլի դեպի գրադարան արխիվներում աշխատելու համար:

Ուզում եմ վեր թռչել, դուրս գալ փողոց ու ինչ-որ բանով զբաղվել, ուզում եմ ամեն ինչ անել անջատվելու համար: Բայց եթե հանկարծ մատս անգամ շարժեմ, եթե կատարելապես անշարժ չմնամ, լավ գիտեմ, թե հետս ինչ կլինի: Իսկ ես դեռ *չեմ ուզում*, որ դա տեղի ունենա: Միևնույն է, վաղ թե ուշ վրա է տալու: Չեմ շարժվում. նստածս տեղը մեքենայաբար դիմացիս թղթի վրա կարդում եմ կիսատ թողածս պարբերությունը.

«Ջանասիրաբար տարածվում էին ամենաչարագուշակ բամբասանքները: Մարկիզ դը Ռոլբոնը, ըստ երևույթին, հավատացել էր այդ հնարանքներին, քանի որ սեպտեմբերի 13-ին իր զարմիկին ուղղված նամակում գրում է, որ արդեն կազմել է կտակը»:

«Ռոլբոն» անվամբ մեծ նախաձեռնությունն ավարտված է, այնպես, ինչպես մեծ կիրքն է վերջանում: Ստիպված պիտի ինչ-որ ուրիշ բան գտնեմ: Մի քանի տարի առաջ Շանհայում՝ Մերսիեի գրասենյակում, ասես ուշքի եկա ու արթնացա երազից: Հետո ընկա ուրիշ երազի մեջ. ապրում էի ցարական արքունիքում՝ այնքան ցուրտ պալատներում, որ ձմեռները դռների վերևից սառցալուլաներ էին կախվում: Այսօր արթնանում եմ սպիտակ թղթի դիմաց: Ջահերը, սառցե պարահանդեսները, համազգեստները, գեղեցիկ, դողացող ուսերը, ամեն ինչ կորել է: Դրանց փոխարեն այս գաղջ սենյակում մնացել է *ինչ-որ բան*, մի բան, որ չեմ ուզում տեսնել:

Մարկիզ դը Ռոլբոնն իմ գործընկերն էր. ես իրեն պետք էի, որպեսզի ինքը լիներ, իսկ ինքն ինձ պետք էր, որպեսզի ես չզգամ, որ ես կամ: Ես հումքն էի մատակարարում՝ հենց այն հումքը, որ ստիպված էի վերավաճառել, որովհետև չգիտեի դրա հետ ինչ անեմ, այն է՝ գոյությունը, *իմ* գոյությունը: Նրա գործը վերաներկայացնելն էր: Անդադար աչքիս առաջ լինելով՝ տիրացել էր իմ կյանքին՝ իր սեփական կյանքն իմ միջոցով վերաներկայացնելու համար: Այլևս չէի նկատում, որ գոյություն ունեմ, արդեն ոչ թե իմ մեջ գոյություն ունեի, այլ իր մեջ. իր համար էի ուտում, իր համար էի շնչում, յուրաքանչյուր շարժումս մի ուրիշ՝ ինձնից դուրս իմաստ էր ստանում հենց իմ դիմաց՝ իր մեջ. էլ չէի տեսնում թղթի վրա տառեր գրող ձեռքս, նույնիսկ իմ գրած նախադասությունը չէի տեսնում, այլ դրա փոխարեն թղթից այն կողմ՝ այդ ամեն ինչի հետևում, տեսնում էի

մարկիզին. մարկիզն էր ինձնից պահանջում, որ այդ շարժումն անեի, հենց իր՝ մարկիզի գոյությունն էր այդ շարժումը երկարաձգում ու ամրապնդում: Ես ընդամենը իրեն կյանքի կոչելու միջոց էի, ինքն իմ գոյության իմաստն էր, ինքն ինձ ազատել էր ինքս ինձնից: Հիմա ի՞նչ եմ անելու:

Միայն թե չշարժվեմ, հանկարծ *չշարժվեմ*... Ա՜հ:

Չդիմացա, չկարողացա զսպել ուսերիս շարժումը:

Այն բանը, որ սպասում էր, արթնացավ, լարվեց, փլվեց վրաս, հոսեց ներս, հիմա լեփ-լեցուն եմ դրանով: Առանձնահատուկ ոչինչ չկա. այդ Բանը հենց ես եմ: Ազատված ու անկաշկանդ գոյությունը կրկին հորդում է վրաս: Ես գոյություն ունեմ:

Ես գոյություն ունեմ: Ինչ-որ մեղմ բան է, շատ մեղմ ու շատ դանդաղ: Թեթև է, ասես օդում կախված լինի: Ու շարժվում է: Այստեղ-այնտեղ հպվում է ինձ, հետո հալվում ու անհետանում: Մեղմ, մեղմ: Բերանումս փրփրոտ հեղուկ է հավաքվել: Կուլ եմ տալիս, սահում է կոկորդովս ներս, փաղաքշում ինձ ու տեղնուտեղը կրկին հայտնվում բերանիս մեջ. ես բերանիս մեջ սպիտակավուն հեղուկի անհատնում ջրափոս ունեմ, որ թաքուն շոյում է լեզուս: Այդ ջրափոսն էլ եմ ես: Ու լեզուն էլ: Ու կոկորդն էլ եմ ես:

Նայում եմ սեղանին փռված ձեռքիս: Ձեռքս ապրում է. ձեռքս ես եմ: Բացվում է, մատները տարածվում ու ցցվում են: Ձեռքս մեջքի վրա պառկած է: Ինձ է ցուցադրում իր ճարպոտ փորը: Շուռ եկած կենդանու է նման: Մատները կենդանու թաթերն են: Զվարճանալու համար արագ-արագ շարժում եմ դրանք. ասես մեջքի վրա շուռ եկած խեցգետնի ճանկեր լինեն: Խեցգետինը սատկում է. ճանկերը կծկվում են, խաչվում ձեռքիս փորի վրա: Նայում եմ եղունգերիս՝ իմ միակ հատվածին, որ չի ապրում: Ինչևէ: Ձեռքս շրջվում է, պառկում է փորի վրա, հիմա արդեն մեջքն է ցույց տալիս ինձ: Արծաթագույն, մի քիչ փայլուն մեջք է, լրիվ ձուկ կլիներ, եթե մատներիս վրայի շիկակարմիր մազերը չլինեին: Ես զգում եմ իմ ձեռքը: Բազուկներիս ծայրերին շարժվող այս երկու կենդանիները ես եմ: Ձեռքս մի թաթի եղունգով քորում է մյուս թաթը. զգում եմ դրա ծանրությունը սեղանի վրա, որը ես չեմ: Ծանրության այդ զգացումը երկարում է, երկարում ու ոչ մի կերպ չի անցնում: Անցնելու ոչ մի պատճառ չունի:

Վերջում արդեն անտանելի է դառնում... Ձեռքս հետ եմ քաշում ու դնում եմ գրպանս: Բայց կտորի միջով իսկույն սկսում եմ զգալ ազդրիս տաքությունը: Տեղնուտեղը ձեռքս գրպանից դուրս եմ քաշում ու գցում աթոռի թիկնակին: Հիմա էլ դաստակիս վրա եմ ծանրությունը զգում: Ձեռքս թույլ, հանդարտ ու փափուկ ձգում է ինձ, այն գոյություն ունի: Չեմ դիմադրում. ուր էլ որ դնեմ, մեկ է՝ շարունակելու է գոյություն ունենալ, ու ես էլ շարունակելու եմ զգալ, որ գոյություն ունի: Ես չեմ կարող ազատվել դրանից, ինչպես որ չեմ կարող ազատվել մնացած ամբողջ մարմնիցս՝ վերնաշապիկս կեղտոտող ջերմ գոլորշուց, տաք ճարպից, որ ծուլորեն տարուբերվում է, ասես ինչ-որ մեկն այն գդալով խառնելիս լինի, այս բոլոր զգացողություններից, որ թափառում են ներսումս, գալիս են, գնում, կողերիս վրայով բարձրանում մինչև թևատակս կամ էլ առավոտից երեկո կուչ եկած մնում իրենց սովորական անկյուններում:

Նստածս տեղից վեր եմ թռչում. եթե միայն կարողանամ չմտածել, արդեն իսկ լավ կզգամ: Ամենանողկալին հենց մտքերն են: Նույնիսկ ավելի նողկալի, քան մարմինը: Անվերջ ձգվում են ու ձգվում, ու դրանցից հետո բերանիդ մեջ տարօրինակ համ է մնում: Իսկ հետո գալիս են մտքերի միջի բառերը, այդ բոլոր անավարտ բառերը, որ ասես կրկին ու կրկին վերադարձող նախադասությունների ուրվագծեր լինեն. «Պիտի վերջ... Ես գոյու... Մահ... Մարկիզ դը Ռոլբոնը մահ... Ես չեմ... Ես գոյություն...»: Հոսում են, հոսում են, ու վերջը չի երևում: Ամենավատը հենց սա է, որովհետև այստեղ արդեն ինձ պատասխանատու ու հանցակից եմ զգում: Օրինակ՝ հենց այս տանջալից մտորումը՝ *ես գոյություն ունեմ*. ախր հենց ես եմ այդ միտքը սնում: Ես ինքս: Մարմինը ծնվելուց հետո շարունակում է ինքնուրույն ապրել, իսկ միտքը՝ ոչ, միտքը *ես* եմ շարունակում, *ես* եմ ծավալում: Ես գոյություն ունեմ: Ես մտածում եմ այն մասին, որ ես գոյություն ունեմ: Ա՜հ: Գոյություն ունենալու այս զգացողությունը երկար, ոլորապտույտ ժապավենի է նման, ու հիմա դանդաղ, պարույրը պարույրի հետևից արձակում եմ այդ ժապավենը... Եթե միայն կարողանայի դադարել մտածելուց: Փորձում եմ, ոնց որ թե ստացվում է. գլուխս ասես մառախուղով լցված լինի... և ահա ամեն ինչ նորից է սկսվում. «Մառախուղ... Չմտածել... Չեմ ուզում մտածել... Մտածում եմ,

որ չեմ ուզում մտածել: Չի կարելի մտածել, որ չեմ ուզում մտածել: Որովհետև դա էլ է միտք»: Մի՞թե երբեք չի վերջանալու:

Միտքս *ես* եմ. ահա թե ինչու չեմ կարողանում դադարել մտածելուց: Ես գոյություն ունեմ, որովհետև ես մտածում եմ, ու ես չեմ կարող ինքս ինձ թույլ չտալ, որ մտածեմ: Նույնիսկ հենց այս պահին (սոսկալի է) ես գոյություն ունեմ *միայն այն պատճառով*, որ սարսափում եմ գոյություն ունենալուց: Ես, *ես ինքս* եմ ինձ դուրս քաշում այն անէությունից, դեպի ուր ձգտում եմ. գոյություն ունենալու ատելությունն ու նողկանքը հերթական միջոցներն են, որ ինձ *սփիպում են* գոյություն ունենալ, որ ինձ նետում են գոյության գիրկը: Մտքերը գլխապտույտի նման ծնվում են իմ հետևում, զգում եմ, թե ինչպես են ծագում ծոծրակիս մեջ... Եթե հանձնվեմ, հայտնվելու են դիմացս՝ աչքերիս հենց մեջտեղում, ու ես ամեն անգամ հանձնվում եմ. միտքը մեծանում է, ահագնանում, դառնում ահռելի մեծ ու ծայրից ծայր ինձ լցնելով՝ վերահաստատում է իմ գոյությունը:

Թուքս քաղցրավուն համ ունի, մարմինս գոլ է. ես ինձ նողկալի եմ զգում: Գրչահատս սեղանի վրա է: Բացում եմ: Ինչո՞ւ ոչ: Ամեն դեպքում գոնե ինչ-որ փոփոխություն կլինի: Ձախ ձեռքս դնում եմ թղթերի վրա ու դանակը խրում եմ ափիս մեջ: Հարվածը չափազանց նյարդային է ստացվում. շեղբը սահում է մաշկիս վրայով, ընդամենը մի փոքրիկ քերծվածք եմ ստանում: Արյուն է գալիս: Լավ, բա հետո՞: Ի՞նչ փոխվեց: Այնուամենայնիվ՝ հաճույքով հետևում եմ, թե ինչպես է արյան փոքրիկ լճակը, որ վերջապես դադարել է «ես» լինելուց, տարածվում սպիտակ թղթի վրա ու ծածկում քիչ առաջ գրածս տողերը: Չորս տող սպիտակ թղթի վրա, արյան բիծ, ու խնդրեմ՝ ահա ևս մի գեղեցիկ հիշողություն: Արժի ներքևում գրել. «Այս օրը ես հրաժարվեցի մարկիզ դը Ռոլբոնի մասին գիրք գրելու իմ մտադրությունից»:

Ձեռք կապե՞մ, թե՞ չէ: Չգիտեմ: Նայում եմ արյան միապաղաղ հոսքին: Արդեն սկսում է լերդանալ: Վերջ: Կտրվածքի շուրջ մաշկս ասես ժանգոտած լինի: Իսկ մաշկիս տակ ընդամենը մի թույլ զգացողություն է մնացել՝ հար և նման մյուս բոլոր զգացումներին, ուղղակի գուցե մի քիչ ավելի նողկալի:

Ժամը չորս անց կեսն է խփում: Վեր եմ կենում, սառը վերնաշապիկը կպչում է մարմնիս: Դուրս եմ գալիս: Ինչո՞ւ: Դե, ասենք, որովհետև դուրս չգալու ոչ մի պատճառ չունեմ: Եթե նույնիսկ մնամ ու լուռումունջ կուչ գամ մի անկյունում, մեկ է, ինքս ինձնից ոչ մի տեղ չեմ փախչի: Կշարունակեմ լինել այստեղ, ամբողջ քաշովս կծնշեմ հատակի վրա: Ես կամ:

Ճամփին թերթ եմ առնում: Սենսացիա: Գտնվել է փոքրիկ Լյուսիենի մարմինը: Տպագրական ներկի հոտ. թերթը ճմռթվում է մատներիս արանքում: Մարդասպանը դիմել է փախուստի: Երեխային բռնաբարել են: Հայտնաբերել են դիակը, մատները խրված էին ցեխի մեջ: Ճմռթում եմ թերթը, մատներս խրվում են թերթի մեջ, թանաքի հոտ. Աստված իմ, իրերն ի՞նչ սաստիկ գոյություն ունեն այսօր: Փոքրիկ Լյուսիենին բռնաբարել են: Խեղդել: Դիակը դեռ գոյություն ունի, մարմինը խոշտանգված է: *Ինքն* այլևս գոյություն չունի: Ձեռքերը: Ինքն այլևս գոյություն չունի: Տները: Քայլում եմ տների արանքով, ես կամ տների արանքում, ուղիղ սալահատակի վրա, սալահատակը ոտքերիս տակ գոյություն ունի, տները ծածկում են ինձ, ինչպես ջուրն է ծածկում ինձ ու կարապի պես սպիտակ թղթի լեռը, ես կամ: Ես կամ, գոյություն ունեմ, մտածում եմ, ուրեմն կամ. կամ, որովհետև մտածում եմ, ինչո՞ւ եմ մտածում, էլ չեմ ուզում մտածել, ես կամ, որովհետև մտածում եմ, որ չեմ ուզում լինել, մտածում եմ, որ... որովհետև... թո՛ւ: Փախչում եմ, մարդասպանը փախուստի է դիմել, երեխային բռնաբարել են: Երեխան զգացել է, թե ինչպես է ուրիշի մարմինը մտնում իր մարմնի մեջ: Ես... հիմա ես... բռնաբարել են: Բռնության քաղցր ու արնածոր մղումը հետևից կառչում է ինձ՝ նուրբ, զգուշորեն, ականջներիս հետևում է, ականջներս քարշ են գալիս հետևիցս, շիկակարմիր մազեր, գլխիս մազերը կարմիր են, թաց խոտ, կարմիր խոտ, էլի ե՞ս եմ. թերթն է՞լ եմ ես. բռնել եմ թերթը, գոյություն գոյության հանդեպ, իրերը գոյություն ունեն իրար հանդեպ, գցում եմ թերթը: Տունը ծառս է լինում, տունը գոյություն ունի. քայլում եմ դիմացիս պատի երկայնքով, գոյություն ունեմ պատի երկայնքով, պատի առջև, քայլ, պատը գոյություն ունի իմ առջև, մեկ, երկու, իմ հետևում, պատը իմ հետևում է, մատը քերում է վարտիքիս մեջ, քերում է, քերում է ու

քաշում երեխայի ցեխոտ մատը, մատիս վրայի ցեխը, մատս դուրս է գալիս ցեխոտ առվակից ու նորից ընկնում, կամաց, հանդարտ, փափկում է, արդեն ավելի թույլ է քերում, քան երեխայի մատները, ում խեղդում էին, մարդասպանը, քերում էին ցեխը, հողը, ավելի ու ավելի թույլ, մատս հանդարտ սահում է, գլխիվայր ընկնում ու սկսում շոյել՝ տաք կծկվելով ազդրիս մոտ. գոյությունը փափուկ է ու գլորվում է ու ճոճվում, ես ճոճվում եմ տների միջև, մտածում եմ, ուրեմն ճոճվում եմ, ես կամ, գոյությունը ընկած անկում է, չի ընկնի, կընկնի, մատը քերում է ձեղնահարկի լուսամուտը, գոյությունն անկատարություն է: Տղամարդ: Բարետես տղամարդը գոյություն ունի: Տղամարդը զգում է, որ գոյություն ունի: Չէ, բարետես տղամարդը, որ այգածաղկի պես հպարտ ու նուրբ անցնում է կողքովս, չի զգում, որ գոյություն ունի: Փթթել. կտրված ձեռքս ցավում է, գոյություն ունի, գոյություն ունի, գոյություն ունի: Բարետես տղամարդը գոյություն ունի, Պատվո լեգեոնի շքանշանը գոյություն ունի, բեղը ու վերջ. ինչ երջանիկ պիտի լինես, երբ ընդամենը Պատվո լեգեոնի շքանշան ես ու բեղ, մնացածը ոչ ոք չի տեսնում, ինքը տեսնում է իր բեղի երկու սուր ծայրերը քթի երկու կողմերում. չեմ մտածում, ուրեմն բեղ եմ: Ինքը չի տեսնում ո՛չ իր նիհար մարմինը, ո՛չ իր մեծ ոտքերը, եթե շալվարը քրքրես, հաստատ մի զույգ գորշ, կծկված գնդիկներ ես գտնելու: Ինքը Պատվո լեգեոնի շքանշան ունի, Տականքները գոյություն ունենալու իրավունք ունեն. «Ես գոյություն ունեմ, որովհետև դա իմ իրավունքն է»: Ես գոյություն ունենալու իրավունք ունեմ, ուրեմն իրավունք ունեմ չմտածելու. մատը բարձրանում է: Մի՞թե ես էլ եմ... փարթամ սավանների սպիտակության մեջ շոյելու փարթամ սպիտակ մարմինը, որ անարգել ճկվում է՝ հպվելու անութների ծաղկած խոնավությանը, մարմնի հյութերին ու հեղուկներին, ու թուրմերին, մտնելու ուրիշի գոյության մեջ, կարմիր լորձաթաղանթի մեջ՝ գոյության ծանր, քաղցր, քաղցր բուրմունքի ներքո, զգալու, թե ինչպես գոյություն ունեմ փափուկ ու խոնավ շուրթերի միջև, գունատ արյունից կարմրած շուրթերի միջև, թրթռացող շուրթերի միջև, կիսաբաց, գոյության խոնավությամբ հագեցած, թափանցիկ մաղձով ներծծված, թաց ու մեղրածոր շուրթերի միջև, որ աչքերի պես արցունքակալած են: Իմ միս

ու արյունից մարմինը, մարմինս ապրում է, մարմինս թրթռում է ու հեղուկներ է խառնում, դանդաղ, խառնում է թանձրուկը, մարմինս խառնում է, խառնում է, խառնում է, մարմնիս քաղցր ու փափուկ խոնավությունը, ձեռքիս արյունը, ցավում է, ծվատված մարմինս քաղցր ցավում է, մարմինս խառնում է, քայլում եմ, քայլում եմ, փախչում եմ, ես ծվատված մարմնով մարդասպան եմ, ծվատված այս պատերի գոյությամբ: Մրսում եմ, քայլ, մրսում եմ, մի քայլ, թեքվում եմ ձախ, թեքվում է ձախ, մտածում է, որ թեքվում է ձախ, խելագար, ես խելագարվե՞լ եմ: Ասում է, որ վախենում է խելագարվելուց, գոյությունը, տեսնո՞ւմ ես գոյությունը, կանգնում է, մարմինը կանգնում է, մտածում է, որ կանգնում է, որտեղի՞ց է գալիս: Ի՞նչ է անում: Շարժվում է, սարսափած է, ահավոր սարսափած, մարդասպանը, ցանկությունը որպես մառախուղ, ցանկությունը, նողկանքը, ասում է, որ նողկում է գոյություն ունենալուց, արդյոք նողկա՞նք է զգում, հոգնե՞լ է գոյությունից նողկալուց: Վազում է: Ի՞նչ հույս ունի: Վազում է, փախչել, նետվել ջո՞ւրը: Վազում է, սիրտը, բաբախող սիրտը տոն է: Սիրտը գոյություն ունի, ոտքերը գոյություն ունեն, շունչը գոյություն ունի, գոյություն ունեն վազելով, շնչելով, բաբախելով՝ փափուկ, հանդարտ, շնչակտուր, շնչակտուր եմ լինում, ասում է, որ շնչակտուր է լինում. գոյությունը հետևից կառչում է մտքերիս ու *հեպևից* հանդարտ արձակում է դրանք, ինձ կառչում են հետևից, ինձ հետևից ստիպում են մտածել, այսինքն՝ լինել ինչ-որ բան, հետևում գոյության թեթև պղպջակներ շնչող ինչ-որ բան, ցանկության մառախուղի պղպջակ, հայելու մեջ մեռելի պես գունատ է, Ռոլբոնը մեռել է, Անտուան Ռոկանտենը չի մեռել, ուշաթափվել, ասում է, որ կուզեր ուշաթափվել, վազում է, վազում է, հիմա կհասնի (հետևից) հետևից, *հեպևից*, փոքրիկ Լյուսիենի վրա հարձակվել են հետևից գոյությունը բռնաբարել է հետևից, խնդրում է, որ խղճան իրեն, ամաչում է, որ խնդրում է, որ խղճան իրեն, խնայեն, օգնություն, օգնություն ուրեմն ես գոյություն ունեմ, մտնում է «Մարինյան բար», փոքրիկ պոռնկատան փոքրիկ հայելիները, ինքը գունատ է փոքրիկ պոռնկատան փոքրիկ հայելիների մեջ, բարձրահասակ շիկակարմիր փափկած տղամարդը հայելիների մեջ փլվում է նստարանի վրա, նվագարկիչը նվագում է, գոյություն ունի, ամեն ինչ խառնում է, պտտվում,

Նվագարկիչը գոյություն ունի, սիրտը խփում է. խառնեք, պտտվեք, կյանքի հեղուկներ, պտտվեք, մարմնիս դոնդողներ ու հյութեր, հանդարտ քաղցրություն... Նվագարկիչը:

When the mellow moon begins to beam
Every night I dream a little dream.

Հանկարծ հայտնվում է ցածր ու խռպոտ ձայնը, և աշխարհը՝ գոյությունների աշխարհը, վերանում է: Ձայնը պատկանել է մսից ու արյունից մի կնոջ, ով իր լավագույն զգեստը հագին՝ երգել է սկավառակի դիմաց, ու իր ձայնը ձայնագրել են: Կինը. չէ հա՛, ինքն էլ է գոյություն ունեցել, ինչպես ես, ինչպես Ռոլբոնը. չեմ ուզում իրեն ճանաչել: Բայց սա էլ կա: Սրա մասին չես կարող ասել, որ գոյություն ունի: Պտտվող սկավառակը գոյություն ունի, ձայնից տատանվող օդը գոյություն ունի, սկավառակի վրա հետքեր թողած ձայնը գոյություն է ունեցել: Ես, որ լսում եմ, գոյություն ունեմ: Ամեն ինչ բերնեբերան լիքն է, գոյությունն ամենուր է՝ թանձր ու ծանր, ու փափուկ: Բայց այս ամբողջ փափկությունից այն կողմ՝ անհասանելի, չափազանց մոտ ու, ավա՛ղ, այնքա՜ն հեռու, երիտասարդ, անգութ ու անվրդով, կա այս... այս պիրկ հստակությունը:

Երեքշաբթի

Ոչինչ: Գոյություն ունեի:

Չորեքշաբթի

Արևի օղակն ընկել է թղթե սփռոցի վրա: Օղակի մեջ ճանճ է նստած, թմրած սողում է աջուձախ, տաքանում է ու դիմացի թաթիկները շփում է մեկը մյուսին: Լավություն անեմ, ճզմեմ: Ճանճը չի նկատում, թե ինչպես է ահռելի ցուցամատը կախվում գլխավերևում: Ցուցամատիս մազերը փայլում են արևի տակ:

– Մի՛ սպանեք, պարո՛ն,– գոռում է Ինքնուսը:

Ճզմում եմ. բարակ սպիտակ աղիքները փորիկից դուրս են պրծնում. ես ճանճին ազատեցի իր գոյությունից: Չոր տոնով ասում եմ Ինքնուսին.

– Իրեն լավություն եմ անում:

Ինչո՞ւ եմ այստեղ: Իսկ ինչո՞ւ պիտի այստեղ չլինեի: Կեսօր է, սպասում եմ, որ քնելու ժամը գա (բարեբախտաբար անքնություն չունեմ): Չորս օրից նորից եմ տեսնելու Աննիին. այս պահին ապրելու ուրիշ պատճառ չունեմ: Իսկ հետո՞: Երբ Աննին նորից լքի՞ ինձ: Ես շատ լավ գիտեմ, թե թաքուն ինչ հույս ունեմ. հուսով եմ, որ Աննին այլևս երբեք ինձ չի լքի: Սակայն նաև հասկանում եմ, որ Աննին երբեք չի համաձայնի աչքիս առաջ ծերանալ: Ես մենակ եմ ու թույլ, ես հիմա իր կարիքն ունեմ: Ինչքա՜ն կուզեի, որ ուժերիս ծաղկման շրջանում տեսնեի իրեն. Աննին անողոք է թշվառների հանդեպ:

– Ձեզ ի՞նչ եղավ, պարոն: Վա՞տ եք զգում:

Ինքնուսը գլուխը թեքել է ու ծիծաղկոտ աչքերով նայում է ինձ: Մի քիչ ծանր է շնչում, բերանը կիսաբաց է, ասես հևացող շուն լինի: Պիտի խոստովանեմ, որ առավոտյան գրեթե երջանիկ էի, որ իրեն տեսա. խոսելու կարիք ունեի:

– Ի՜նչ երջանիկ եմ, որ համաձայնեցիք ինձ հետ ճաշել,– ասում է,– եթե մրսում եք, կարող ենք կալորիֆերի կողքին նստել: Այն սեղանի մոտի պարոնայք ուզում են վեր կենալ, արդեն հաշիվն ուզել են:

Ինչ-որ մեկը մտահոգվում է ինձ համար, հարցնում է՝ արդյոք չե՞մ մրսում, ես խոսում եմ ուրիշ մարդու հետ. արդեն տարիներով հետս նման բան չէր եղել:

– Դուրս են գալիս, ուզո՞ւմ եք տեղափոխվենք այնտեղ:

Տղամարդիկ սիգարետներ են կպցրել: Երկուսով դուրս են գալիս, ահա արդեն մաքուր օդում են՝ արևի տակ: Գլխարկները ձեռքներին բռնած՝ քայլում են մեծ ցուցափեղկերի կողքով: Ծիծաղում են, քամին փքում է վերարկուները: Չէ, չեմ ուզում տեղափոխվել: Ինչի՞ս է պետք: Ու բացի այդ, այստեղի լուսամուտից՝ լողախցիկների սպիտակ կտուրների արանքում, երևում է կանաչ ու խիտ ծովը:

Ինքնուսը թղթապանակից մի զույգ ստվարաթղթե մանուշակագույն ուղղանկյուններ է հանել: Արդեն ուզում է տալ գանձապահին: Դրանցից մեկի վրա հասցնում եմ կարդալ.

«Բոտանե» ընկերություն, տնական խոհանոց
Նախաճաշ՝ 8 ֆրանկ
Նախուտեստը՝ ըստ ձեր ճաշակի
Խավարտով միս
Պանիր կամ աղանդեր
20 կտրոնի արժեքը՝ 140 ֆրանկ

Նոր ճանաչեցի դռան կողքի կլոր սեղանի մոտ նստած մարդուն. կոմիվոյաժոր է, հաճախ է կանգ առնում «Պրենտանիա» հյուրանոցում: Ժամանակ առ ժամանակ ուշադիր ու ժպտացող հայացքն ուղղում է վրաս, բայց ինձ չի տեսնում. չափազանց շատ է կենտրոնացած իր ուտելիքի վրա: Դրամարկղի մյուս կողմում երկու կարմրադեմ ու ամրակազմ տղամարդիկ ոստրեներ են վայելում ու վրայից սպիտակ գինի խմում: Նոսր, դեղին բեղիկներով ցածրահասակը ինչ-որ պատմություն է պատմում ու ակնհայտորեն հրճվում իր պատմածից: Մեկ-մեկ դադար է տալիս ու ծիծաղում՝ ցույց տալով շլացուցիչ ատամնաշարը: Մյուսը չի ծիծաղում. կոշտ հայացք ունի: Բայց հաճախ գլխով «հա» է անում: Նուրբ դիմագծերով ու հետ սանրած արծաթագույն մազերով մի նիհար ու թուխ մարդ լուսամուտի մոտ մտածկոտ տեսքով նստած թերթ է կարդում: Կաշվե պայուսակը դրել է կողքին՝ նույն նստարանին: Վիշիի հանքային ջուր է խմում: Ուր որ է՝ այս բոլոր մարդիկ դուրս են գալու և ուտելիքից ծանրացած ստամոքսներով, ծովային քամու բերանն ընկած, վերարկուների կոճակներն արձակած, գլուխները մի քիչ տաք ու մի քիչ էլ թմրած քայլելու են ճաղաշարի կողքով՝ նայելով ծովափի երեխաներին ու ծովի նավերին. իրենք բոլորը գնալու են աշխատանքի: Իսկ ես ոչ մի տեղ էլ չեմ գնալու, ես աշխատանք չունեմ:

Ինքնուսը պարզասրտորեն ծիծաղում է. արևը խաղում է նոսր մազերի մեջ.

– Ուզո՞ւմ եք մի բան ընտրել:

Ինձ է մեկնում ճաշացանկը. ես իրավունք ունեմ ընտրելու մեկ նախուտեստ՝ ըստ իմ ճաշակի. հինգ շերտ երշիկ, բողկ, ծովախեցգետիններ կամ նեխուրի աղցան: Բուրգոնյան խխունջների համար պետք է լրացուցիչ վճարել:

– Ինձ երշիկ, խնդրում եմ,– ասում եմ մատուցողուհուն:

Ինքնուսը ճաշացանկը խլում է ձեռքիցս.

– Ավելի լավ բան չկա՞: Խնդրեմ, բուրգոնյան խխունջներ էլ ունեն:

– Ճիշտն ասած՝ խխունջ շատ չեմ սիրում:

– Հա՛: Ուրեմն գուցե ոստրենե՞ր:

– Ոստրեների համար չորս ֆրանկ ավել պիտի վճարեք,– ասում է մատուցողուհին:

– Շատ լավ, ուրեմն, խնդրում եմ, ոստրեներ բերեք, իսկ ինձ՝ բողկ:

Հետո կարմրելով ինձ բացատրում է.

– Ես բողկ շատ եմ սիրում:

Ես էլ:

– Իսկ ուրիշ ի՞նչ,– հարցնում է:

Աչքի եմ անցկացնում մսով ճաշատեսակների ցուցակը: Շոգեխաշած տավարի մսից չէի հրաժարվի: Բայց կանխազգում եմ, որ ստիպված եմ լինելու տապակած ճուտ ուտել. ցուցակում միակ բանն է, որի համար հարկավոր է փող ավելացնել:

– Պարոնին՝ տապակած ճուտ,– ասում է Ինքնուսը,– իսկ ինձ՝ շոգեխաշած միս, խնդրում եմ:

Շրջում է ճաշացանկը. հետևում գինիների ցուցակն է:

– Գինի խմենք,– ասում է մի քիչ վերամբարձ տոնով:

– Չէ հա՛,– ասում է մատուցողուհին,– ի՞նչ մի քեֆ եք անում այսօր: Ախր դուք երբեք չեք խմում:

– Առիթից առիթ մի բաժակ կարելի է խմել: Մի սափոր Անժուի վարդագույն գինի, խնդրում եմ:

Ինքնուսը մի կողմ է դնում ճաշացանկը, մանր պատառների է բաժանում հացի կտորն ու անձեռոցիկով սրբում է դիմացի սպասքը: Հետո աչքի տակով նայում է թերթ կարդացող սպիտակահեր մարդուն, ապա շրջվում ու ժպտում է ինձ.

– Ես սովորաբար գրքով եմ գալիս այստեղ, չնայած բժիշկս խորհուրդ չի տալիս հաց ուտելիս կարդալ. ասում է՝ շատ արագ եմ կուլ տալիս, չեմ հասցնում լավ ծամել: Բայց ես գազան ստամոքս ունեմ, ինչ էլ ուտեմ՝ մարսում եմ: 1917-ի ձմռանը, երբ գերության մեջ էի, այնքան ահավոր ուտելիք էին տալիս, որ բոլորը հիվանդացել էին: Ես

բնականաբար ձևացնում էի, թե ես էլ եմ մյուսների նման հիվանդ, բայց ինձ ոչ մի բան էլ չէր եղել:

Փաստորեն, ռազմագերի է եղել... Ու ինձ դրա մասին երբեք ոչինչ չի ասել: Զարմանքից չեմ կարողանում ուշքի գալ. ոչ մի կերպ չեմ կարողանում պատկերացնել, որ բացի Ինքնուս լինելուց, ինչ-որ ուրիշ բան էլ է եղել:

– Որտե՞ղ էիք գերության մեջ:

Չի պատասխանում: Պատառաքաղը ցած է դրել ու ինչ-որ առանձնահատուկ ակնապիշ հայացքով նայում է ինձ: Հիմա սկսելու է հոգսերը պատմել. նոր հիշեցի, որ գրադարանում ինչ-որ խնդիրների մեջ էր ընկել: Ես համակ ուշադրություն եմ. այս պահին ամենաուզածս բանը հենց ուրիշների խնդիրներին կարեկցելն է, դրանից գոնե վիճակս մի քիչ կփոխվի: Ես որ ոչ մի խնդիր չունեմ. եկամուտներս հերիքում են, որ կարողանամ առանց աշխատելու ապրել, ոչ ղեկավար ունեմ, ոչ էլ կին ու երեխաներ. ուղղակի գոյություն ունեմ ու վերջ: Ու իմ այդ միակ խնդիրն այնքա՞ն անորոշ ու այնքա՞ն բնազանցական է, որ ամաչում եմ դրանից:

Բայց Ինքնուսը կարծես թե խոսելու մտադրություն չունի: Ինչ էլ տարօրինակ հայացքով է ինձ նայում. այն սովորական հայացքներից չէ, որ ուղղակի տեսնելու համար են գցում. չէ, ավելի շուտ այն հայացքներից է, որոնց միջոցով երկու հոգի հաղորդակցվում են միմյանց հետ: Ինքնուսի հոգին բարձրացել է մինչև նրա գեղեցիկ ու կույր աչքերն ու հիմա դուրս է նայում: Դե թող իմն էլ նույն բանն անի, թող բարձրանա, քիթը կպցնի ապակուն, ու երկուսով քաղաքավարի ողջունեն միմյանց:

Չէ, ես հոգիների հաղորդակցություն չեմ ուզում, դեռ այդքան ցածր չեմ ընկել: Հետ եմ քաշվում: Ինքնուսը, սակայն, առանց հայացքն ինձնից կտրելու ամբողջ մարմնով առաջ է թեքվում սեղանի վրա: Բարեբախտաբար մատուցողը բերում է բողկերը: Ինքնուսը հետ է ընկնում աթոռին, հոգին չքվում է աչքերից, ու սկսում է հլու-հնազանդ ուտել:

– Ձեր խնդիրները հարթվեցի՞ն:

Վեր է թռչում, վախվորած հարցնում.

– Ի՞նչ խնդիրներ, պարոն:

– Դե գիտեք, էլի, վերջերս էիք պատմում:

Թունդ կարմրում է:

– Հա՛,– ասում է չոր ձայնով,– հա՛, հիշեցի: Լրիվ այդ Կորսիկացին է, պարոն: Գիտեք, էլի, գրադարանի Կորսիկացին:

Նորից է հապաղում. կամակոր ոչխարի տեսք ունի:

– Ստոր բամբասանքներ են, չեմ ուզում ձեր գլուխը տանել:

Չեմ շարունակում: Ինքնուսն անհավատալի արագությամբ կլանում է ուտելիքը, չնայած իրեն նայելով՝ երբեք չես ասի: Երբ ոստրեներս բերեցին, արդեն կերել-վերջացրել էր իր բողկերը: Ափսեի վրա միայն մի կույտ կանաչ պոչեր էին մնացել ու մի պտղունց թաց աղ:

Դրսում մի երիտասարդ զույգ կանգնել ու նայում է մուտքի մոտ կանգնած ստվարաթղթե խոհարարի ձախ ձեռքի ճաշացանկին (աջ ձեռքին թավա է): Տատանվում են: Կինը մրսում է, դունչը խրել է մորթե օձիքի մեջ: Տղամարդն առաջինն է կողմնորոշվում, դուռը բացում է ու մի կողմ է քաշվում, որ ընկերուհին անցնի:

Կինը մտնում է ներս: Բարեհամբույր տեսքով նայում է չորս կողմը ու մի քիչ դողացնում է:

– Ինչ տաք է,– ասում է ցածր, կոկորդային ձայնով:

Երիտասարդ տղամարդը դուռը հետևից փակում է.

– Բարև ձեզ,– ասում է:

Ինքնուսը շրջվում է ու քաղաքավարի պատասխանում.

– Բարև ձեզ:

Մյուս հաճախորդները ձայն չեն հանում, բայց անկյունում նստած բարետես պարոնը մի քիչ իջեցնում է թերթն ու ուշադիր զննում է նոր եկածներին:

– Շնորհակալություն, կարիք չկա:

Նախքան իրենց մոտեցած հանդերձապահուհին կհասցներ ձեռքը պարզել, որ օգնի, երիտասարդն ինքնուրույն թեթևորեն հանում է վերարկուն: Պիջակի փոխարեն հագին շղթայով կաշվե բաճկոն է: Հանդերձապահուհին մի քիչ հիասթափված տեսքով շրջվում է դեպի կինը: Բայց տղամարդն այս անգամ էլ է առաջ ընկնում և նուրբ ու արագ շարժումներով օգնում է ընկերուհուն, որ մուշտակը հանի: Դեմ դիմաց նստում են մեր կողքին: Կարծես թե ոչ այնքան վաղուց են ծանոթ: Երիտասարդ կինը հոգնած ու մաքուր դեմք ունի, ոնց որ

թե մի քիչ նեղացած է: Հանկարծ գլխարկը հանում է ու ժպտալով թափ է տալիս սև մազերը:

Ինքնուսն իր բարեհոգի հայացքով երկար դիտում է նրանց, հետո շրջվում է դեպի ինձ ու գորովալից տեսքով աչքով տալիս, ասես ուզում է ասել. «Սիրուն զույգ է, չէ՞»:

Դե, տգեղ չեն: Լուռ նստած են, երջանիկ են, որ միասին են, երջանիկ են, որ իրենց միասին են տեսնում: Երբեմն, երբ ես ու Աննին մտնում էինք Պիկադիլիի ռեստորաններից մեկը, մենք էլ էինք զգում, որ մեզ վրա գորովալից հայացքներ են ուղղված: Աննին դրանից կատաղում էր, բայց պիտի խոստովանեմ, որ ես մի քիչ հպարտություն էի զգում: Բայց ավելի շատ զարմանում էի. ես երբեք այն կոկիկ ու խնամված տեսքը չեմ ունեցել, որ այսքան սազում է այս երիտասարդին, ու ոչ էլ կարող ես ասել, որ այնքան տգեղ էի, որ մարդիկ ինձ նայելով հուզվեին: Ուղղակի մենք երիտասարդ էինք, իսկ հիմա արդեն այն տարիքում եմ, որ ուրիշների երիտասարդությունը պիտի ինձ հուզի: Բայց ես չեմ հուզվում: Կինը քնքուշ, մուգ աչքեր ունի, տղամարդը՝ նարնջագույն երանգի մի քիչ անհարթ մաշկ ու սքանչելի փոքրիկ կամային դունչ: Հուզիչ զույգ են իհարկե, բայց նաև ինչ-որ նողկալի բան կա մեջքերը: Զգում եմ, որ չափազանց հեռու են ինձնից. երկուսով ջերմությունից նվաղել են ու հիմա իրենց սրտի խորքում նույն երազանքն են փայփայում՝ այնքա՜ն քաղցր ու այնքա՜ն փխրուն: Իրենց լավ են զգում, դյուրահավատորեն նայում են այս դեղին պատերին ու մարդկանց, հավանում են աշխարհն այնպիսին, ինչպիսին որ է, հենց այնպիսին, ինչպիսին որ կա, ու յուրաքանչյուրն իր կյանքի իմաստը դեռ տեսնում է մյուսի կյանքի մեջ: Շուտով երկուսով մեկ ընդհանուր կյանք կունենան, դանդաղ, գաղջ, որևէ իմաստից զուրկ մի կյանք, սակայն իրենք դա չեն նկատի:

Զգացվում է, որ մի քիչ քաշվում են իրարից: Ի վերջո՝ երիտասարդն անճարակ ու վճռական շարժումով առաջ է թեքվում ու մատների ծայրով բռնում է ընկերուհու ձեռքը: Կինը խոր շունչ է քաշում, ու երկուսով կռանում են ճաշացանկի վրա: Հա, երջանիկ են: Լավ, բա հետո՞ ինչ:

Ինքնուսը խորամանկ ու մի քիչ խորհրդավոր տեսք է ընդունում.

– Երեկ չէ առաջին օրը ձեզ եմ տեսել:

– Որտե՞ղ եք տեսել:

– Հա հա՛,– պատկառանքով քմծիծաղ է տալիս:

Մի պահ ինձ ստիպում է սպասել, հետո ասում է.

– Թանգարանից էիք դուրս գալիս:

– Հա՛, ճիշտ է,– ասում եմ,– բայց երեկ չէ առաջին օրը չէր, շաբաթ օրն էր:

Երեկ չէ առաջին օրը հաստատ թանգարաններով վազելու սիրտ չունեի:

– «Օրսինիի մահափորձի» հռչակավոր փայտե պատճենը տեսա՞ք:

– Չէ, չգիտեմ դրա մասին:

– Իրո՞ք: Փոքրիկ սրահում է՝ մուտքից ձախ: Կոմունայի անդամներից մեկն է փորագրել, ով մինչև համաներումը թաքնված ապրում էր Բուվիլի ձեղնահարկերից մեկում: Հույս ուներ, որ մի օր նավով Ամերիկա է փախչելու, բայց դե այստեղի նավահանգստի ոստիկանության աչքից անհնար է խուսափել: Մի հիանալի անձնավորություն էր: Իր հարկադիր պարապուրդի երկարուձիգ ժամերին կաղնու փայտից մի հսկայական որմնաքանդակ էր փորագրում: Ոչ մի գործիք չուներ, բացի փոքրիկ ծալովի դանակից ու եղունգի խարտոցից: Բոլոր նուրբ հատվածները, օրինակ՝ ձեռքերն ու աչքերը, խարտոցով էր փորագրում: Որմնաքանդակի լայնությունը մեկուկես մետր է, բարձրությունը՝ մեկ մետր, ու ամբողջ գործը փայտի մի ամբողջական կտորի վրա է փորագրած: Քանդակը յոթանասուն կերպար ունի՝ չհաշված կայսեր կառքին լծված երկու ձիերին: Եվ բոլորի դեմքերը, պարոն, խարտոցով տաշված այդ բոլոր դեմքերն իրենց անկրկնելի դիմագծերն ունեն, ասես իսկական մարդիկ լինեն: Ներեցեք, պարոն, բայց թույլ տվեք ասել, որ արժեր այդ մի ստեղծագործությունը տեսնել:

Բնավ չեմ ուզում ներքաշվել այս խոսակցության մեջ:

– Ուղղակի ուզում էի Բորդյուրենի մի քանի նկարները նորից նայել:

Ինքնուսն անսպասելիորեն տխրում է.

– Մեծ սրահի դիմանկարնե՞րը: Ավա՛ղ, պարոն,– ասում է՝ դողացող ժպիտը շուրթերին,– ես գեղանկարչությունից բան չեմ հասկանում:

Ես, իհարկե, գիտեմ, որ Բորդյուրենը մեծ նկարիչ է, հասկանում եմ, որ, այսպես կոչված, վրձնի վարպետ է, բայց ճիշտն ասած՝ հաճույք, գեղագիտական հաճույք չեմ զգում:

Ես համակրանքով ասում եմ.

– Այ, ինձ էլ քանդակագործությունը չի հուզում:

– Ա՛խ, պարոն, ցավոք սրտի, ինձ էլ: Ու ոչ էլ երաժշտությունը, ոչ էլ պարը: Այնինչ, ես ախր այնքան էլ անկիրթ մարդ չեմ: Չեմ հասկանում՝ ինչն է խնդիրը. ախր բազմաթիվ երիտասարդներ եմ տեսել, ովքեր իմ գիտելիքների կեսն էլ չունեին, բայց հստակ երևում էր, որ կտավի առաջ կանգնած՝ հաճույք էին զգում:

– Հաստատ ուղղակի ձևացնում էին,– ասում եմ քաջալերող ձայնով:

– Գուցե...

Ինքնուսը մի պահ երազների գիրկն է ընկնում.

– Ամենաշատը ոչ թե այն բանից եմ տխրում, որ զուրկ եմ որոշ բնույթի հաճույքներից, այլ որ մարդկային գործունեության մի ամբողջ բնագավառ ինձ անծանոթ է մնում... Չէ՞ որ ես էլ եմ մարդ, և այդ կտավներն ինձ պես *մարդիկ* են նկարել:

Հետո այլայլված ձայնով շարունակում է.

– Պարոն, մի անգամ քաջություն ունեցա մտածելու, որ գեղեցիկն ընդամենը ճաշակի հարց է: Չէ՞ որ յուրաքանչյուր դարաշրջան իր չափանիշներն է ունեցել: Թույլ կտա՞ք, պարոն:

Զարմացած հետևում եմ, թե ինչպես է գրպանից սև կաշվե կազմով մի ծոցատետր հանում: Մի որոշ ժամանակ թերթում է. լիքը դատարկ էջեր կան, բայց մեկումեջ կարմիր թանաքով գրված ինչ-որ տողեր էլ են հանդիպում: Ինքնուսը գույնը լրիվ գցել է: Ի վերջո ծոցատետրը դնում է սփռոցի վրա ու լայն ափով ծածկում բաց էջը: Հետո շփոթված ու այլայլված հազում է.

– Երբեմն ինչ-որ բաներ են գլխիս մեջ ծագում. չեմ համարձակվում դրանք մտքեր անվանել: Զարմանալի բան է. ինձ համար հանգիստ նստած կարդում եմ ու հանկարծ, չգիտեմ ինչպես, մի տեսակ ասես պայծառանում եմ: Սկզբում ուշադրություն չէի դարձնում, բայց հետո որոշեցի ծոցատետր պահել:

Լռում է ու հայացքն ուղղում ինձ. սպասում է:

– Հա՛,– ասում եմ:

– Անշուշտ, այս բոլոր ասույթները դեռ շատ հեռու են վերջնական լինելուց. իմ կրթությունը դեռ ավարտված չէ:

Դողացող ձեռքերով վերցնում է ծոցատետրը, խիստ հուզված է:

– Ի դեպ, այստեղ հենց գեղանկարչությանը նվիրված մի հատված կա: Խիստ երջանիկ կլինեմ, եթե թույլ տաք ձեզ համար ընթերցել:

– Սիրով,– ասում եմ:

Ինքնուսը սկսում է կարդալ.

«Ոչ ոք այլևս չի հավատում այն ամենին, որ 18-րդ դարում ճշմարտություն էր համարվում: Եվ ուրեմն ինչո՞ւ պիտի շարունակենք հաճույք ստանալ այն ստեղծագործություններից, որ այն ժամանակ գեղեցիկ էին համարվում»:

Հետո աղերսալի տեսքով նայում է ինձ.

– Ի՞նչ եք կարծում, պարոն: Արդյոք մի քիչ պարադոքսալ չէ՞: Ուղղակի ինձ թվում էր, որ կարող եմ միտքս սրամտության տեսքով ձևակերպել:

– Դե... Կարծում եմ՝ շատ հետաքրքիր է:

– Ինչ-որ տեղ այս միտքն արդեն հանդիպե՞լ եք:

– Ոչ, իհարկե ոչ:

– Իրո՞ք: Երբե՞ք, ոչ մի տե՞ղ: Այդ դեպքում,– շարունակում է մռայլվելով,– այս միտքը ճիշտ չէ: Եթե ճիշտ լիներ, արդեն ինչ-որ մեկի մտքով անցած կլիներ:

– Սպասեք,– ասում եմ,– հենց նոր հիշեցի, որ պիտի որ ինչ-որ տեղ սրա նման մի բան կարդացած լինեմ:

Աչքերը փայլում են: Արագ հանում է մատիտը.

– Ո՞ր հեղինակի գրքում,– հարցնում է գործնական ձայնով:

– Ռը... Ռընանի:

Յոթերորդ երկնքում է:

– Չէի՞ք բարեհաճի ամբողջ հատվածը մեջբերել ինձ համար,– ասում է՝ մատիտի ծայրը թքոտելով:

– Գիտեք, արդեն չեմ հիշում, շատ վաղուց եմ կարդացել:

– Օ՛, ոչինչ, ոչինչ:

Ծոցատետրում՝ իր ասույթի տակ, գրում է Ռընանի անունը:

– Փաստորեն, իմ միտքը համընկնում է Ռընանի մտքի հետ: Դեռ մատիտով եմ գրել անունը,– ցնծությամբ բացատրում է,– բայց հենց այս երեկոյան կարմիր թանաքով վրայից կանցնեմ:

Մի որոշ ժամանակ հրճվանքով դիտում է իր ծոցատետրը. արդեն սպասում եմ, թե երբ է սկսելու մյուս ասույթները կարդալ: Բայց չէ, խնամքով փակում է ծոցատետրն ու դնում գրպանը: Անկասկած մտածում է, որ մեկ անգամվա համար այսքան երջանկությունը հերիք է:

– Ինչ հաճելի է,– մտերմաբար ասում է,– որ երբեմն կարող ես ուղղակի նստել ու այսպես անկեղծ զրուցել:

Ինչպես և կարելի էր ենթադրել, այդ քարը վերջնականապես է ճզմում մեր մարող խոսակցությունը: Երկար լռություն է տիրում:

Երկու երիտասարդների գալուց հետո ռեստորանի մթնոլորտը փոխվել է: Երկու կարմրադեմ տղամարդիկ լռել են ու առանց քաշվելու զննում են երիտասարդ կնոջ բարեմասնությունները: Բարետես պարոնը թերթը դրել է մի կողմ ու ներողամիտ, գրեթե մեղսակից հայացքով նայում է երիտասարդ զույգին: Մտածում է, որ ծերությունն իմաստուն է, իսկ երիտասարդությունը՝ գեղեցիկ, ու մի թեթև սեթևեթանքով տարուբերում է գլուխը. ինքը շատ լավ գիտի, որ դեռ գրավիչ է, հրաշալի պահպանվել է, որ իր թուխ մաշկով ու սլացիկ կառուցվածքով դեռ կարող է հմայել: Ինքն իր համար ձևացնում է, թե հայրական զգացումներ է տածում: Մատուցողուհու զգացումները շատ ավելի պարզ են. ուղղակի բերանը բաց ցցվել է երիտասարդների դիմաց ու աչքերը չռել նրանց վրա:

Իսկ երիտասարդները կիսաձայն զրուցում են: Նախուտեստն արդեն մատուցել են, բայց իրենք ուտելիքին չեն էլ կպել: Ականջներս լարելով՝ կարողանում եմ խոսակցությունից պատառիկներ որսալ: Ավելի լավ լսում եմ, թե կինն ինչ է ասում իր ցածր ու խոր ձայնով:

– Չէ, Ժան, չէ, էլի:

– Ինչո՞ւ,– կրքոտ անհամբերությամբ շշնջում է երիտասարդը:

– Արդեն ասել եմ:

– Դա պատճառ չէ:

Մի քանի բառ բաց եմ թողնում, հետո կինը ձեռքով մի հմայիչ ու հոգնած շարժում է անում.

– Ես չափազանց հաճախ եմ փորձել: Արդեն դուրս եմ եկել այն տարիքից, երբ դեռ կարող ես կյանքդ նորից սկսել: Հասկացեք ախր, ես ծեր եմ:

Երիտասարդը հեգնանքով ծիծաղում է: Կինը շարունակում է.

– Ես չեմ կարողանա դիմանալ... հիասթափությանը:

– Մի քիչ ինքնավստահ եղեք,– ասում է երիտասարդը,– այն, ինչ դուք հիմա ապրում եք, կյանք չէ:

Կինը հոգոց է հանում.

– Գիտեմ:

– Ժանետին նայեք:

– Դե հա,– ասում է կինն ու մի թեթև ծամածռում դեմքը:

– Իսկ իմ կարծիքով ինքը շատ ճիշտ է վարվել: Գոնե այդքան քաջություն է ունեցել:

– Գիտեք,– ասում է երիտասարդ կինը,– ավելի շուտ ինքն ուղղակի որոշել է առիթը բաց չթողնել: Ես եթե ուզենայի, հարյուրավոր այդպիսի առիթներ կունենայի: Բայց գերադասել եմ սպասել:

– Ու ճիշտ եք արել,– քնքշորեն ասում է երիտասարդը,– ճիշտ եք արել, որ սպասել եք ինձ:

Հիմա արդեն կինն է ծիծաղում.

– Մի քիչ համեստ եղեք: Ես լրիվ ուրիշ բան էի ասում:

Դադարում եմ լսել. արդեն վրաս ազդում են: Իրար հետ քնելու են: Ու դա շատ լավ գիտեն: Երկուսն էլ գիտեն, որ դիմացինն էլ գիտի: Բայց քանի որ երիտասարդ են, առաքինի ու բարեկիրթ, քանի որ ամեն մեկն ուզում է անաղարտ պահել թե՛ իր, թե՛ դիմացինի ինքնագնահատականը, քանի որ սերը վեհ ու պոետիկ մի բան է, որին չի կարելի վախեցնել ու փախցնել, իրենք շաբաթը մի քանի անգամ գնում են պարահրապարակներ ու ռեստորաններ՝ մարդկանց ցուցադրելու համար իրենց չնչին, ծիսական ու մեխանիկական պարը...

Ի վերջո, պետք է, չէ՞, ինչ-որ կերպ ժամանակ սպանեն: Երիտասարդ են, գեղեցիկ կառուցվածք ունեն, դեռ մի երեսուն տարի էլ

գեղեցիկ են մնալու: Ու դրա համար էլ չեն շտապում, ձգձգում են ու ճիշտ են անում: Երբ արդեն իրար հետ քնած կլինեն, ստիպված պիտի լինեն ինչ-որ ուրիշ բան գտնել իրենց գոյության հրեշավոր անհեթեթությունը քողարկելու համար: Եվ սակայն... մի՞թե պարտադիր պիտի ինքդ քեզ խաբես:

Հայացքս սահեցնում եմ սրահի վրայով: Իսկական զավեշտ է: Բոլորը լուրջ տեքստով նստած ուտում են: Չէ, չեն ուտում, վերականգնում են ուժերը, որ հետո կարողանան բարեհաջող իրագործել իրենց վրա դրված պարտականությունները: Յուրաքանչյուրը սևեռված է իր փոքրիկ անձնական խնդիրների վրա, ու դա իրենց թույլ չի տալիս նկատել, որ գոյություն ունեն. չկա մեկը, ով համոզված չլինի, որ ինքն անփոխարինելի է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի համար: Մի՞թե Ինքնուսը վերջերս չէր ասում. «Նուսապիեից լավ ոչ ոք չէր կարող այսպիսի համընդգրկուն աշխատություն ձեռնարկել»: Այս մարդկանցից յուրաքանչյուրը զբաղված է ինչ-որ փոքրիկ բանով, որ ուրիշ ոչ ոք չի կարող իրենցից ավելի լավ անել: Ոչ ոք չի կարող ավելի լավ վաճառել «Սվան» ատամի մածուկը, քան այ այս կոմիվոյաժորը: Ոչ ոք չի կարող ավելի լավ մտնել այս կնոջ փեշի տակ, քան այ այս հետաքրքիր երիտասարդը: Ու ես էլ եմ իրենց մեջ, ու բոլորն ինձ նայելով պիտի որ մտածեն, որ ոչ ոք չի կարող ավելի լավ անել այն, ինչ ես եմ անում: Բայց ես *գիտեմ*: Տեսքիցս չես ասի, բայց ես գիտեմ, որ ես գոյություն ունեմ, ու որ իրենք էլ գոյություն ունեն: Ու եթե տիրապետեի համոզելու արվեստին, կգնայի, կնստեի այն բարետես ու ճերմակահեր պարոնի կողքին ու կբացատրեի, թե ինչ է գոյությունը: Ծիծաղից պայթում եմ՝ պատկերացնելով, թե ինչ տեսք կընդուներ: Ինքնուսը զարմացած ինձ է նայում: Ուզում եմ դադարել ծիծաղելուց, բայց չեմ կարողանում. այնքան եմ հռհռում, մինչև աչքերիցս արցունքներ են գալիս:

– Ուրախ եք, պարոն,– զգույշ նկատում է Ինքնուսը:

– Ուղղակի մտածում եմ,– ծիծաղելով ասում եմ,– որ մենք բոլորս, բոլորս՝ ով ոնց կա, հիմա նստած ուտում-խմում ենք, որ պահպանենք մեր թանկագին գոյությունը, մինչդեռ գոյություն ունենալը ոչ մի, բացարձակապես ոչ մի իմաստ չունի:

Ինքնուսը լրջանում է, փորձում է ինձ հասկանալ: Չափազանց բարձր էի ծիծաղում. նկատում եմ, թե ինչպես են մի քանիսը շրջվում իմ կողմը: Տեղնուտեղը փոշմանում եմ, որ այդքան շատ բան եմ ասել: Ի վերջո դա ոչ մեկի գործը չէ:

Ինքնուսը դանդաղ կրկնում է.

– Գոյություն ունենալը բացարձակապես ոչ մի իմաստ չունի... Դուք անկասկած ուզում եք ասել, որ կյանքն աննպատա՞կ է: Եթե չեմ սխալվում, դրան հոռետեսություն են ասում, չէ՞:

Հետո մի քիչ էլ է մտածում ու մեղմ ասում է.

– Մի քանի տարի առաջ մի ամերիկացի հեղինակի գիրք եմ կարդացել, կոչվում էր «Արդյոք կյանքն այնքան արժի՞, որ ապրենք»: Մի՞թե դուք ձեզ հենց այդ հարցը չեք տալիս:

Բնականաբար՝ ոչ, ես ինձ այդ հարցը չեմ տալիս: Բայց ոչ էլ ուզում եմ ինչ-որ բան բացատրել:

– Իր եզրակացությունում,– մխիթարիչ տոնով ասում է Ինքնուսը,– հեղինակը հանգում էր կամավոր լավատեսության գաղափարին: Կյանքն իմաստ է ստանում, եթե ինքներս ենք որոշում դրան իմաստ հաղորդել: Առաջին հերթին հարկավոր է գործել, ինչ-որ բան ձեռնարկել: Հետո եթե հանկարծ մտածմունքների մեջ ընկնես, միևնույն է, վիճակն արդեն նետված է, ու դու արդեն գործով ես զբաղված: Դուք ի՞նչ եք այդ մասին մտածում, պարոն:

– Ոչ մի բան,– ասում եմ:

Կամ ավելի շուտ մտածում եմ, որ դա հենց այն սուտն է, որով կոմիվոյաժորը, երիտասարդ զույգն ու ճերմակահեր պարոնն անդադար խաբում են իրենք իրենց:

Ինքնուսը մի քիչ չարաճճի ու խիստ վսեմ տեսքով ժպտում է:

– Ես էլ եմ այդպես մտածում: Իմ կարծիքով կյանքի իմաստը փնտրելու համար այդքան հեռու գնալ պետք չէ:

– Իրո՞ք:

– Նպատակ կա, պարոն, կա՛ նպատակ... կան մարդիկ:

Դե իհարկե, լրիվ մոռացել էի, որ Ինքնուսը հումանիստ է: Մի վայրկյան լռում է՝ ուղիղ այնքան, ինչքան պետք է, որ խնամքով ու անխնա ոչնչացնի իր շոգեխաշած միսն ու մի կտոր հաց: «Կան մարդիկ...»: Վերջ, ինքն ամբողջացրեց իր ինքնադիմանկարը: Հա, բայց

լավ չգիտի՝ ոնց է պետք այդ միտքը ճիշտ ասել: Չեմ վիճում, հոգին հասել է աչքերին, գրեթե դուրս է հորդում, բայց այստեղ միայն հոգին դեռ հերիք չէ: Ժամանակին շատ եմ հանդիպել փարիզցի հումանիստների հետ ու հարյուր անգամ լսել եմ, թե իրենք ինչպես են ասում «կան մարդիկ». այ դա լրիվ ուրիշ պատմություն էր: Վիրգանը հատկապես անգերազանցելի էր: Ակնոցը հանում էր՝ իբր թե ձգտելով ցույց տալ իր մերկ, մարդկային բնույթը, ինձ էր սևեռում հուզիչ աչքերը, ծանր, հոգնած հայացքը՝ ասես փորձելով ինձ մերկացնել ու որսալ մարդկային էությունս, հետո մեղեդային շշնջում էր. «Կան մարդիկ, եղբայր, կան մարդիկ», ընդ որում՝ այդ «կան»-ը մի այնպիսի անհեթեթ զորությամբ էր արտասանում, ասես մարդկանց հանդեպ տածած իր հավերժ նոր ու հավերժ հիացական սերը խճճվել էր իր սեփական հսկայական թևերի մեջ:

Ինքնուսի դիմախաղը դեռ սահունության այդ աստիճանին չի հասել. մարդկանց հանդեպ իր սերը պարզամիտ ու բարբարոս է. ինքը գավառական հումանիստ է:

– Մարդիկ,– ասում եմ,– մարդիկ... Ամեն դեպքում ձեր տեսքից չես ասի, որ մարդիկ ձեզ առանձնապես մտահոգում են: Միշտ մենակ եք, միշտ խրված գրքի մեջ:

Ինքնուսը ծափ է տալիս ու սկսում խորամանկորեն ծիծաղել.

– Սխալվում եք: Ա՛խ, պարոն, թույլ տվեք ասել՝ այն էլ ինչպե՞ս եք սխալվում:

Հետո մի պահ հավաքում է ինքն իրեն ու աննկատ մի պատառ էլ է կուլ տալիս: Դեմքն արևածագի պես շողում է: Ինքնուսի հետևում երիտասարդ կինը սկսում է կամաց ծիծաղել: Ընկերը թեքվել է նրա կողմն ու ականջին ինչ-որ բան է փսփսում:

– Բնական է, որ սխալվում եք,– ասում է Ինքնուսը,– պիտի արդեն վաղուց ձեզ ասած լինեի... Բայց ախր ես այնքա՞ն ամաչկոտ եմ, պարոն: Ուղղակի հարմար առիթի էի սպասում:

– Դե, սրանից ավելի հարմար առիթ չի լինի,– քաղաքավարի ասում եմ ես:

– Ես էլ եմ այդպես կարծում: Ես էլ եմ այդպես կարծում: Այն, ինչ հիմա ձեզ կասեմ, պարոն...– Կարմրելով լռում է:– Ձեզ հո չե՞մ ձանձրացնում:

Հավաստիացնում եմ, որ ոչ: Շունչը երջանկացած տեղն է բերում:

– Պարոն, ամեն օր չէ, որ բախտ ես ունենում հանդիպելու ձեզ նման մարդկանց, ում մեջ հայացքների լայնությունը զուգակցվում է խորաթափանց մտքի հետ: Արդեն քանի ամիս է՝ ուզում եմ ձեզ հետ խոսել, բացատրել, թե ինչ էի ու ինչ եմ դարձել...

Դիմացի ափսեն այնքան դատարկ ու մաքուր է, ասես հենց նոր են բերել: Ես հանկարծ բացահայտում եմ, որ իմ ափսեի կողքին մի փոքրիկ անագե սկուտեղ էլ կա, որտեղ շագանակագույն սոուսի մեջ հավի բուդ է լող տալիս: Դա էլ պիտի ուտեմ:

– Քիչ առաջ ասում էի, որ Գերմանիայում գերի եմ եղել: Հենց այնտեղ էլ ամեն ինչ սկսվեց: Պատերազմից առաջ ես մենակ էի, բայց դա չէի գիտակցում: Ծնողներիս հետ էի ապրում. լավ մարդիկ էին, բայց մենք իրար չէինք հասկանում: Հիմա, երբ մտածում եմ այդ տարիների մասին... Ո՞նց էի կարողանում այդպես ապրել: Ես մեռած էի, պարոն, ու նույնիսկ չէի էլ կասկածում այդ մասին: Նամականիշեր էի հավաքում:

Նայում է ինձ ու ընդհատում խոսքը.

– Մի տեսակ գունատվել եք, պարոն: Հոգնած տեսք ունեք: Հուսով եմ՝ ձեզ չեմ ձանձրացնում:

– Չէ, ձեզ հետ շատ հետաքրքիր է:

– Սկսվեց պատերազմը, ու ես կամավոր գնացի բանակ, ես էլ չգիտեմ՝ ինչու: Երկու տարի շարունակ չէի կարողանում պատճառը հասկանալ, որովհետև ռազմաճակատում մտածելու շատ ժամանակ չես ունենում, ու նաև զինվորներն էլ էին շատ կոպիտ: 1917-ի վերջին գերի ընկա: Ինձ հետո պատմում էին, որ գերության մեջ զինվորներից շատերը կրկին գտնում էին իրենց մանկական հավատը: Ես, պարոն,– կարմրած աչքերը կկոցելով՝ ասում է Ինքնուսը,– Աստծուն չեմ հավատում. գիտությունը հերքել է նրա գոյությունը: Բայց համակենտրոնացման ճամբարում սովորեցի հավատալ մարդկանց:

– Ինչո՞ւ, որովհետև քաջությամբ կրում էին իրենց ճակատագի՞րը:

– Այո,– լուրջ տեսքով ասում է,– դա էլ: Չնայած մեզ հետ լավ էին վարվում: Բայց ես ուրիշ բան էի ուզում ասել: Պատերազմի վերջին ամիսներին մեզ արդեն գրեթե չէին ստիպում աշխատել: Երբ անձրև էր գալիս, գերիներին լցնում էին մի մեծ փայտե անգարի մեջ, որտեղ

մենք, գրեթե երկու հարյուր հոգով իրար սեղմված, մնում էինք ոտքի վրա: Դուռը կողպում էին ու մեզ, չորս կողմից ճզմված, թողնում ներսում՝ գրեթե լրիվ մթության մեջ:

Մի պահ տատանվում է:

– Չգիտեմ ինչպես բացատրեմ, պարոն: Այդ բոլոր մարդիկ այդտեղ էին՝ կողքիդ, գրեթե ոչ մի բան չէիր տեսնում, բայց զգում էիր, թե ինչպես են սեղմվում քեզ, լսում էիր՝ ինչպես են շնչում... Մի անգամ, երբ մեզ դեռ նոր էին սկսել անգարում փակել, ներսում այնպիսի նեղվածք էր, որ ինձ թվաց՝ հիմա շունչս կկտրվի: Հետո հանկարծ ներսումս մի այնպիսի անասելի բերկրանք արթնացավ, որ քիչ մնաց՝ ուշքս գնար: Ու այդ պահին զգացի, որ եղբայրների պես սիրում եմ այդ բոլոր մարդկանց: Ուզում էի բոլորին գրկել: Դրանից հետո ամեն անգամ, երբ հայտնվում էի անգարում, նույն բերկրանքն էի ապրում:

Ստիպված պիտի հավը ուտեմ. երևի արդեն լրիվ սառել է: Ինքնուսն արդեն վաղուց է վերջացրել, ու հիմա մատուցողուհին ինձ է սպասում, որ ափսեները փոխի:

– Այդ անգարն ինձ համար սրբավայր էր դարձել: Երբեմն, երբ հաջողացնում էի խուսափել մեր ժամապահների հսկողությունից, լրիվ մենակ սողոսկում էի ներս ու մթության մեջ կանգնած՝ վերհիշում էի այդտեղ ապրածս ուրախություններն ու մի տեսակ էքստազի մեջ ընկնում: Ժամեր էին անցնում, բայց ես ոչինչ չէի նկատում: Մի քանի անգամ նույնիսկ լաց եմ եղել:

Երևի հիվանդ եմ: Ուրիշ ոչ մի կերպ չեմ կարող բացատրել ներսումս մոլեգնող անսանձ կատաղությունը: Հա, հիվանդի կատաղություն է. ձեռքերս դողում են, արյունը խփել է գլխիս, շուրթերս էլ են արդեն սկսում դողալ: Ու լրիվ ընդամենը այն պատճառով, որ հավը սառած էր: Ասենք՝ ես էլ էի սառած, ու ամենացավոտը հենց դա էր: Նկատի ունեմ՝ վերջին երեսունվեց ժամվա ընթացքում ներսումս ամեն ինչ մնացել էր անփոփոխ նույնը՝ կատարելապես սառը, սառցակալած: Կատաղությունը փոթորկի նման անցավ իմ միջով՝ ջղաձգության նման ցնցելով ինձ, ասես գիտակցությունս փորձում էր ինչ-որ ռեակցիա տալ ու պայքարել ջերմաստիճանի անկման դեմ: Ապարդյուն փորձեր: Ես, իհարկե, կարող էի ինչ-որ չնչին առիթ

բռնել ու վերջին հայհոյանքները տեղալով՝ բռունցքներով հարձակվել Ինքնուսի կամ մատուցողուհու վրա: Բայց մեկ է, լրիվ խաղի մեջ մտած չէի լինի: Կատաղությունս այդպես էլ շարունակեց եռալ մակերեսի վրա, ու մի ցավագին պահ ինձ թվաց, թե ես կրակի մեջ կորած սառույցի բեկոր եմ, ինչ-որ օմլետ-անակնկալ: Հետո մակերեսային փոթորիկը հանդարտվեց, ու ականջիս հասավ, թե Ինքնուսն ինչպես է շարունակում պատմել.

– Ամեն կիրակի ժամերգության էի գնում: Ես երբեք էլ հավատացյալ չեմ եղել, պարոն: Բայց արդյոք չե՞նք կարող ասել, որ ժամերգության իրական խորհուրդը մարդկանց հաղորդությունն է միմյանց: Ծեսը մի ֆրանսիացի բանակային քահանա էր մատուցում, ով մի ձեռքը կորցրել էր: Ֆիսհարմոնիա ունեինք: Գլխաբաց կանգնած լսում էինք, ու ես, ֆիսհարմոնիայի հնչյուններով տարված, զգում էի, որ մեկ ամբողջություն եմ կազմում ինձ շրջապատող բոլոր մարդկանց հետ: Ա՜խ, պարոն, ինչքա՜ն էի սիրում այդ ժամերգությունները: Մինչև հիմա էլ դրանց մասին հուշն ինձ երբեմն ստիպում է կիրակի առավոտները եկեղեցի գնալ: Մեր Սեն Սեսիլի երգեհոնահարն ուղղակի հոյակապ է նվագում:

– Երևի հաճախ եք կարոտում այդ կյանքին, չէ՞:

– Այո, պարոն: 1919 թիվն էր՝ գերությունից ազատվելուս տարին: Ամիսներ շարունակ տանջվում էի: Չգիտեի ինչով զբաղվեմ, հալումաշ էի լինում: Հենց մի տեղ ամբոխ էի տեսնում, խցկվում էի մարդկանց մեջ: Մի անգամ,– ժպտալով ավելացնում է,– նույնիսկ անծանոթ մարդու թաղման եմ մասնակցել: Այնքան էի հուսահատված, որ մի օր նամականիշերիս հավաքածուն կրակը նետեցի... Բայց ես գտա իմ ուղին:

– Իրո՞ք:

– Մեկը խորհուրդ տվեց... Պարոն, համոզված եմ, որ կարող եմ վստահել ձեր գաղտնապահությանը: Ես... Դուք գուցեև չեք կիսում իմ համոզմունքները, բայց ախր այնքա՜ն լայն մտահորիզոն ունեք... Ես սոցիալիստ եմ:

Աչքերը խոնարհում է, երկար թարթիչները թրթռում են:

– 1921-ի սեպտեմբերից անդամագրված եմ SFIO սոցիալիստական կուսակցությանը: Հենց սա էլ ուզում էի ձեզ ասել:

Ինքնուսը հպարտություն է ճառագում: Գլուխը հետ է գցել, բերանը բացել ու կիսափակ աչքերով նայում է ինձ. լրիվ սուրբ նահատակի տեսք ունի:

– Շատ լավ է,– ասում եմ,– հրաշալի է:

– Գիտեի, որ կաջակցեք ինձ, պարոն: Ախր ինչպե՞ս կարող ես մեղադրել մի մարդու, ով ասում է. ես այսպես ու այսպես եմ տնօրինել իմ կյանքն ու հիմա կատարելապես երջանիկ եմ:

Ձեռքերը տարածել է ու մատները հատակին ուղղած՝ երկու ափերն այնպես է պարզել ինձ, ասես ուր որ է՝ դրանց վրա մեխերի հետքեր են հայտնվելու: Աչքերն ապակու պես սառել են, բերանի մեջ ինչ-որ մութ ու վարդագույն զանգված է շարժվում:

– Հա՛,– ասում եմ,– դե եթե երջանիկ եք...

– Երջանի՞կ:– Նեղվում եմ հայացքից. կոպերը բարձրացրել է ու հիմա ակնապիշ ինձ է նայում:– Ինքներդ դատեք, պարոն: Քանի դեռ այդ որոշումը չէի ընդունել, մի այնպիսի սարսափելի մենակություն էի զգում, որ արդեն մտածում էի ինքնասպան լինել: Ինձ միայն այն միտքն էր հետ պահում, որ իմ մահն աշխարհում ոչ ոքի, բացարձակապես ոչ ոքի չի հուզելու, ու որ մահվանից հետո ես է՛լ ավելի մենակ եմ լինելու, քան կյանքիս օրոք էի:

Ուղղվում է, թշերը փքվում են:

– Բայց ես այլևս մենակ չեմ, պարոն: Այլևս երբեք մենակ չեմ:

– Այդքան շատ ծանոթներ ունե՞ք,– ասում եմ:

Ժպտում է, ու տեղնուտեղը հասկանում եմ, թե ինչքան միամիտ էի:

– Նկատի ունեմ՝ ինձ այլևս մենակ չեմ զգում: Բայց բնականաբար, դրա համար կարիք չկա, որ ինչ-որ մեկի հետ լինեմ:

– Իսկ սոցիալիստների ձեր շրջանակներում...

– Ա՜հ, այնտեղ բոլորին էլ ճանաչում եմ: Բայց դե մեծ մասին միայն անունով գիտեմ: Պարոն,– ասում է չարաճճի տեսքով,– մի՞թե մարդ իր ընկերներին պիտի անպայման այդքան նեղ սահմաններում ընտրի: Բոլոր մարդիկ էլ իմ ընկերներն են: Երբ առավոտյան աշխատանքի եմ գնում, դիմացս էլ, հետևումս էլ լիքը ուրիշ մարդիկ կան, որ գնում են իրենց գործին: Ես իրենց բոլորին տեսնում եմ, մի քիչ ավելի համարձակ լինեի՝ բոլորին կժպտայի, մտածում եմ, որ ես

սոցիալիստ եմ, որ իրենք բոլորն իմ կյանքի ու իմ ջանքերի նպատակն են, ու որ դեռ այդ մասին չգիտեն: Դա ինձ համար տոն է, պարոն:

Աչքերով հարցախեղդ է անում ինձ. ես, ի նշան համաձայնության, գլխով եմ անում, բայց զգում եմ, որ մի քիչ հիասթափված է, ավելի մեծ խանդավառություն էր ակնկալում: Ի՞նչ կարող եմ անել: Ի՞նչ մեղավոր եմ, որ իր ասած ամեն ինչի մեջ իսկույն փոխառված մտքեր ու մեջբերումներ եմ նկատում: Որ խոսելու ընթացքում ճանաչածս բոլոր հումանիստները գալիս են աչքիս առաջ: Իսկ ես, ավաղ, այնքա՜ն շատ հումանիստների եմ ճանաչել: Արմատական հումանիստն առաջին հերթին պաշտոնյաների բարեկամն է: Այսպես կոչված՝ «ձախ» հումանիստի հիմնական մտահոգությունը մարդկային արժեքների պահպանությունն է. նա ոչ մի կուսակցության մեջ մտած չէ, որովհետև չի ուզում համամարդկայինին դավաճանած լինել, բայց համակրանքն ուղղված է դեպի ընչազուրկները. իր գեղեցիկ դասական մշակույթն ինքը հենց ընչազուրկներին է նվիրում: Որպես կանոն՝ այրի տղամարդ է, գեղեցիկ, միշտ թաց աչքեր ունի, տարեդարձների ժամանակ աչքերը լցնում է: Սիրում է նաև կատուներին, շներին, բոլոր բարձրագույն կաթնասուններին: Կոմունիստ գրողը մարդկանց սիրում է երկրորդ հնգամյա պլանից ի վեր: Նա մարդկանց պատժում է, որովհետև սիրում է նրանց: Բոլոր ուժեղների պես ամոթխած լինելով՝ գիտի թաքցնել իր զգացմունքները, բայց և կարողանում է մի հայացքով կամ ձայնի ելևէջով արդարադատության ջատագովի անողոք բառերի տակ զգացնել տալ մարդկանց հանդեպ տածած իր բուռն, քնքուշ ու եղբայրական սերը: Հումանիստ-կաթոլիկը՝ այդ վերջնեկը՝ ընտանիքի ամենափոքր երեխան, մարդկանց մասին խոսելիս մի հրաշալի տեսք է ընդունում: Չէ՞ որ նույնիսկ ամենահամեստ կյանքը, ասում է նա, թեկուզ լոնդոնյան նավահանգստի բանվորի կամ կոշիկի գործարանում աշխատող աղջկա կյանքը մի իսկական կախարդական հեքիաթ է: Նա ընտրել է հրեշտակային հումանիզմը, և հենց հրեշտակներին ի խրատ էլ գրում է իր բոլոր երկար, թախծոտ ու գեղեցիկ վեպերը, որոնք հաճախ արժանանում են «Ֆեմինա» մրցանակին:

Սրանք առաջին պլանի խոշոր դերերն են: Բայց լիքը ուրիշ դերեր էլ կան՝ ինչքան ուզես. հումանիստ փիլիսոփա, որ հակվում է իր եղբայրների վրա որպես մի ավագ եղբայր և հստակ գիտակցում է իր պատասխանատվությունների շրջանակը. հումանիստ, որ մարդկանց սիրում է այնպիսին, ինչպիսին որ կան, և հումանիստ, որ մարդկանց սիրում է այնպիսին, ինչպիսին որ պիտի լինեին. մեկն ուզում է մարդկանց փրկել՝ նախապես ստանալով վերջիններիս համաձայնությունը, մյուսը մարդկանց փրկում է անկախ իրենց կամքից. մեկն ուզում է նոր առասպելներ ստեղծել, մյուսը բավարարվում է հներով. մեկը մարդու մեջ մահն է սիրում, մյուսը՝ կյանքը. կենսուրախ հումանիստը միշտ էլ մի բառ կգտնի մարդկանց ծիծաղեցնելու համար, իսկ մռայլ հումանիստին ամենաշատը կարելի է հանդիպել թաղումների ժամանակ: Նրանք բոլորն իրար ատում են. բնականաբար որպես անհատների, ոչ թե որպես մարդկանց: Բայց Ինքնուսը ոչ մի բանից տեղյակ չէ. ինքն այդ բոլորին ամփոփել է իր ներսում՝ կատուների նման բոլորին խցկելով մի պարկի մեջ, նրանք այնտեղ իրար ծվեն-ծվեն են անում, իսկ ինքը ոչինչ չի նկատում:

Արդեն առանց նախկին վստահության է նայում ինձ:

– Մի՞թե իմ զգացումները չեք կիսում, պարոն:

– Աստված իմ...

Տեսնելով անհանգիստ, նույնիսկ մի քիչ քինախնդիր տեսքը՝ մի պահ նույնիսկ փոշմանում եմ, որ հիասթափեցրել եմ իրեն: Բայց չէ, սիրալիր տոնով շարունակում է.

– Գիտեմ, դուք էլ ձեր ուսումնասիրություններով եք զբաղված, ձեր գրքերն ունեք. դուք էլ ձեր ձևով եք ծառայում նույն գործին:

Իմ գրքերը, *իմ* ուսումնասիրությունները, տխմար: Ավելի մեծ սխալ չէր էլ կարող անել:

– Դրա համար չեմ գրում:

Ինքնուսի դեմքն ակնթարթորեն փոխվում է. ասես թշնամու հոտ առած լինի, դեռ երբեք այսպիսի արտահայտություն դեմքին չեմ տեսել: Մեր միջև ինչ-որ բան մեռավ:

Ձևացնելով, թե զարմացած է, հարցնում է.

– Բայց... Հարցս անհամեստություն չհամարեք, պարոն, բայց այդ դեպքում ինչո՞ւ եք գրում:

– Դե... Չգիտեմ, ուղղակի, գրելու համար:

– Իսկ անմարդաբնակ կղզում կգրեի՞ք: Մարդիկ միշտ էլ գրում են, որ իրենց կարդան, չէ՞:

Ուղղակի սովորության համաձայն է նախադասությունը հարցական կազմել: Իրականում սա հաստատական նախադասություն է: Ինքնուսին պատող մեղմության ու ամաչկոտության լաքը լրիվ ճաքճքվել-թափվել է. իրեն էլ չեմ ճանաչում: Դիմագծերում ինչ-որ ծանր համառություն է հայտնվել. ինքնագոհության պատն է: Ձարմանքից դեռ ուշքի չեկած՝ արդեն լսում եմ, թե ինչպես է ասում.

– Թող գոնե ասեն՝ գրում եմ մի որոշակի հասարակական դասի համար, գրում եմ ընկերներիս համար... Հարց չկա: Գուցե սերունդների համար եք գրում... Բայց, պարոն, անկախ ամեն ինչից, մեկ է, ինչ-որ մեկի համար եք գրում:

Պատասխանի է սպասում: Ու քանի որ պատասխան չի հետևում, թեթև ժպտում է.

– Գուցե միզանտրո՞պ եք:

Գիտեմ, թե հաշտվելու այս շինծու փորձի տակ ինչ է թաքնված: Մեծ հաշվով ինձնից շատ քիչ բան է պահանջում. ընդամենը ուզում է, որ համաձայնեմ վրաս պիտակ կպցնել: Բայց սա թակարդ է. եթե համաձայնեմ, Ինքնուսը հաղթանակելու է, ու ինձ իսկույն այլափոխելու են, վերաձևակերպեն ու շրջանցեն, որովհետև հումանիզմը վերցնում, միաձուլում ու իրար է խառնում մարդկային բոլոր տեսակետները: Հումանիզմի հետ բացեիբաց վիճել նշանակում է իրենց ջրաղացին ջուր լցնել. հումանիզմն ապրում է իր հակառակորդների հաշվին: Համառ ու սահմանափակ մարդկանց մի ցեղ կա, ավազակների մի տեսակ, ովքեր ամեն անգամ պարտվում են այդ խաղում. հումանիզմը մարսում է նրանց բոլոր ծայրահեղությունններն ու վատթարագույն բռնկումները և վերածում սպիտակ ու փրփրուն ավիշի: Այն արդեն մարսել է անտի-ինտելեկտուալիզմը, մանիշեականությունը, միստիցիզմը, հոռետեսությունը, անարխիզմը, էգոտիզմը. սրանք բոլորն այլևս զարգացման փուլեր են, անավարտ մտքեր, որոնք իրենց արդարացումը միայն ու միայն հումանիզմի մեջ են գտնում: Միզանտրոպիան էլ իր տեղն ունի

այս համերգում. դա ընդամենը մի դիսոնանս է, որ անհրաժեշտ է ընդհանուր ներդաշնակության համար: Միզանտրոպն էլ է մարդ, և հետևաբար հումանիստը պիտի ինչ-որ չափով միզանտրոպ էլ լինի: Բայց սա արդեն գիտնական միզանտրոպ է, ով կարողացել է չափավորել իր ատելությունը. հենց դրա համար էլ սկզբից ատում է մարդկանց, որ հետո կարողանա ավելի լավ սիրել:

Ես չեմ ուզում, որ ինձ ներքաշեն, չեմ ուզում, որ այդ ավշե հրեշն ավելի գիրանա իմ հիանալի կարմիր արյան հաշվին: Այնքան հիմար չեմ լինի, որ ինձ «հակահումանիստ» կոչեմ: Ուղղակի ես հումանիստ *չեմ* ու վերջ:

– Ես հավատում եմ,– ասում եմ Ինքնուսին,– որ մարդկանց ինչ-քան հնարավոր չէ ատել, այդքան էլ հնարավոր չէ սիրել:

Ինքնուսը հովանավորող ու հեռավոր տեսքով ինձ է նայում: Ու մրմնջում է՝ ասես ինքն էլ չգիտակցելով, թե ինչ է ասում.

– Պետք է սիրել նրանց, պետք է սիրել նրանց...

– Ո՞ւմ է պետք սիրել: Այստեղի մարդկա՞նց:

– Իրենց էլ: Բոլորին:

Շրջվում է դեպի երիտասարդություն ճառագող զույգը. ահա թե ում է պետք սիրել: Հետո մի պահ նայում է սպիտակահեր պարոնին: Ապա հայացքը շրջում է ինձ. դեմքին համր հարց եմ կարդում: Գլխով «չէ» եմ անում: Խղճահարությամբ նայում է ինձ:

– Ախր հենց դուք էլ, է,– նյարդայնացած ասում եմ,– դուք էլ իրենց չեք սիրում:

– Մի՞թե, պարոն: Թույլ կտա՞ք չհամաձայնել ձեզ հետ:

Նորից մինչև եղունգների ծայրը հարգալից է դարձել, բայց հայացքի մեջ այնքան հեգնանք կա, ասես հենց հիմա թունդ զվարճանում է: Ատում է ինձ: Իզուր էլ սիրտս փափկեցրել էի այս մոլագարի վրա: Իմ հերթին հարցնում եմ.

– Փաստորեն, սիրում եք ձեր հետևի երկու երիտասարդներին, հա՞:

Նորից է նայում նրանց, մտածում է.

– Ուզում եք ինձ ստիպել, որ ասեմ,– կասկածելով սկսում է,– որ առանց ճանաչելու սիրում եմ նրանց: Շատ լավ, պարոն, խոստովանում եմ, որ չեմ ճանաչում... Եթե, իհարկե, սերը հենց իսկական ճանաչումը չէ,– ավելացնում է ապուշ ծիծաղով:

– Բայց ի՞նչն եք սիրում:

– Տեսնում եմ, որ երիտասարդ են, ու իրենց մեջ սիրում եմ երիտասարդությունը: Ի թիվս այլոց, պարոն:

Հետո լռում ու ականջ է դնում.

– Հասկանո՞ւմ եք՝ ինչ են խոսում:

Ի՞նձ է հարցնում՝ հասկանում եմ, թե չէ: Երիտասարդը, ոգևորված իրեն շրջապատող բարյացակամ մթնոլորտից, բարձր ձայնով պատմում է ֆուտբոլային հանդիպման մասին, որտեղ իրենց թիմը հաղթել է Հավրի ինչ-որ ակումբի:

– Ինչ-որ պատմություն է պատմում ընկերուհուն,– ասում եմ Ինքնուսին:

– Հա՛: Ես այնքան էլ լավ չեմ լսում: Բայց ձայներն ականջիս հասնում են. իրար հաջորդող նուրբ ձայն, հետո բամբ ձայն: Այնքա՜ն... այնքան հաճելի է:

– Իսկ ես, ցավոք սրտի, նաև լսում եմ, թե ինչ են խոսում:

– Եվ ի՞նչ:

– Եվ այն, որ թատրոն են խաղում:

– Իրո՞ք: Գուցե երիտասարդությա՞ն թատրոնը,– հարցնում է հեգնանքով:– Պարոն, թույլ տվեք դա խիստ օգտակար բան համարել: Բայց մի՞թե խաղալը բավական է, որպեսզի կրկին իրենց տարիքին դառնաս:

Ես խուլ եմ իր հեգնանքի հանդեպ. շարունակում եմ.

– Մեջքով եք նստած, չեք լսում՝ ինչ են խոսում... Լավ, իսկ կնոջ մազերն ի՞նչ գույնի են:

Խառնվում է իրար.

– Դե, ես...– թաքուն հայացք է գցում երիտասարդների կողմն ու վերագտնում վստահությունը,– սև են:

– Բա տեսնո՞ւմ եք:

– Ի՞նչը:

– Այն, որ այդ երկուսին հեչ էլ չեք սիրում: Փողոցում որ տեսնեք, երևի չեք էլ ճանաչի: Իրենք ձեզ համար ընդամենը խորհրդանիշներ են: Ձեզ ոչ թե իրենք են հուզում, այլ Մարդու Երիտասարդությունը, Տղամարդու Սերն առ Կինը, մարդկային Ձայնը:

– Ու ի՞նչ: Մի՞թե դրանք չկան:

– Իհա՛րկե չկան: Ո՛չ Երիտասարդություն կա, ո՛չ Հասուն տարիք, ո՛չ Ծերություն, ո՛չ էլ Մահ...

Ինքնուսի՝ սերկևիլի պես դեղին ու կոշտ դեմքին նախատինք է քարացել: Բայց ես շարունակում եմ իմն առաջ տանել.

– Ասենք՝ հենց ձեր հետևի այն ծեր պարոնը, այն մեկը, որ Վիշիի ջուր է խմում: Կարծում եմ՝ նրա մեջ էլ Հասուն Մարդուն եք սիրում. Հասուն Մարդ, ով խիզախորեն քայլում է դեպի սեփական վախճանն ու հետևում իրեն, որովհետև չի ուզում թևաթափ լինել, չէ՞:

1915. ինձ

– Միանգամայն ճիշտ է,– ասում է. ձայնի մեջ մարտահրավեր կա:

– Բա չե՞ք տեսնում, որ տականքի մեկն է:

Ծիծաղում է, կարծում է՝ ցնդել եմ, հպանցիկ հայացք է նետում սպիտակ մազերով շրջանակված գեղեցիկ դեմքին.

– Պարոն, բայց եթե նույնիսկ ընդունենք, որ ինքը հենց այնպիսի տեսք ունի, ինչ ասում եք, ինչպե՞ս կարող եք դատել մարդու մասին՝ ուղղակի նայելով դեմքին: Մարդու դեմքը ոչինչ չի ասում, երբ մարդը հանգստանում է:

Կո՛յր հումանիստներ: Ախր այս դեմքն այնքա՜ն *խոսուն* է, այնքա՜ն հստակ, բայց դե իրենք երբեք թույլ չեն տա, որ դեմքի արտահայտած իմաստը հասնի իրենց քնքուշ ու աբստրակտ հոգիներին:

– Ինչպե՞ս կարող եք,– ասում է Ինքնուսը,– *կանգնեցնել* մարդուն ու ասել, որ ինքը այս *է* կամ այն *է*: Ո՞վ է ի զորու սպառել մարդուն: Ո՞վ կարող է ճանաչել մարդու բոլոր ներքին ունակությունները:

Սպառել մարդո՛ւն: Հպանցիկ ողջունում եմ կաթոլիկ հումանիզմին, ումից Ինքնուսը, ինքն էլ չգիտակցելով, փոխառել է այս ձևակերպումը:

– Գիտեմ,– ասում եմ,– գիտեմ, որ բոլոր մարդիկ էլ հիացմունքի են արժանի: Դուք արժանի եք հիացմունքի: Ես արժանի եմ հիացմունքի: Որպես Աստծու արարածներ, բնականաբար:

Առանց հասկանալու նայում է ինձ, հետո թույլ ժպտում է.

– Դուք անկասկած կատակում եք, պարոն, բայց մարդիկ իրո՛ք արժանի են մեր հիացմունքին: Դժվար է, պարոն, շա՜տ դժվար է մարդ լինելը:

Ինքն էլ չնկատելով՝ հեռացել է Քրիստոսի սիրուց առ մարդիկ: Գլուխը թեքում է ու ընդօրինակման զարմանալի երևույթի շնորհիվ նմանվում Գեհենի աղքատին:

– Կներեք,– ասում եմ,– բայց այդ դեպքում ես այնքան էլ վստահ չեմ, որ մարդ եմ. ինձ դա երբեք էլ առանձնապես դժվար բան չի թվացել: Ինձ թվում էր՝ պիտի ուղղակի ապրես, էլի:

Ինքնուսն անկեղծ ծիծաղում է, բայց աչքերի մեջ դեռ չարություն կա.

– Շա՛տ համեստ եք, պարոն: Ձեր վիճակը, մարդո՛ւ վիճակը տանելու համար ձեզ, ինչպես և բոլորին, շատ մեծ խիզախություն է պետք: Ամեն հաջորդ վայրկյանը կարող է ձեր մահվան վայրկյանը լինել, դուք դա գիտեք, բայց մեկ է, կարողանում եք ժպտալ: Մի՞թե դա հիացմունքի արժանի չէ: Նույնիսկ ձեր ամենաանշան արարքի մեջ էլ,– ավելացնում է թունոտ տոնով,– հսկայական հերոսություն կա:

– Ի՞նչ աղանդեր կուզեք, պարոնայք,– հարցնում է մատուցողուհին:

Ինքնուսը ճեփ-ճերմակ է, կոպերը կիսափակ են քարացած աչքերի վրա: Ձեռքով ինչ-որ թույլ շարժում է անում՝ ասես հրավիրելով, որ ես ընտրեմ:

– Պանիր,– հերոսաբար ասում եմ ես:

– Իսկ պարո՞նը:

Վեր է թռչում.

– Հը՞: Հա՛: Չէ, ես բան չեմ ուզում, արդեն վերջացրել եմ:

– Լուի՛զ:

Երկու հաստլիկները վճարում են ու դուրս են գալիս: Մեկը կաղում է: Ռեստորանի տերը նրանց ճանապարհում է մինչև դուռը. կարևոր հաճախորդներ են, իրենց գինին սառույցի դույլով էին մատուցում:

Ինքնուսին նայելիս մի քիչ խղճի խայթ եմ զգում. ինքն ամբողջ շաբաթ կանխավայելել էր այս ընթրիքը, որի ընթացքում իբր թե պիտի կարողանար ուրիշի հետ կիսել մարդկանց հանդեպ իր սերը: Հազարից մեկ է խոսելու առիթ ունենում: Ու խնդրեմ. ամբողջ հաճույքը փչացրի: Ըստ էության՝ ինքն էլ է իմ չափ մենակ. ոչ ոք իր մասին չի հոգում: Ուղղակի ինքը չի գիտակցում իր մենակությունը:

Դե ինչ արած. Ինքնուսի աչքերը բացելն իմ գործը չէ: Ինձ ահավոր վատ եմ զգում. իրոք կատաղած եմ, բայց իր վրա չէ, այլ Վիրգանի ու մնացած բոլորի, որ թունավորել են այս խեղճուկրակ ուղեղը: Եթե հենց հիմա կարողանայի այդ բոլորին հավաքել դիմացս, իրենց լիքը ասելու բան կունենայի: Բայց Ինքնուսին ոչ մի բան էլ չեմ ասի. իր հանդեպ միայն համակրանք եմ զգում: Ինքն էլ պարոն Աշիլի պես մեկն է, ինքն էլ է մեր կողմից, չիմանալով է դավաճանում, բարի նկատառումներով:

Ինքնուսի ծիծաղի պոռթկումն ինձ դուրս է քաշում մռայլ մտորումներից.

– Կներեք, բայց որ մտածում եմ, թե ինչքան խորն է մարդկանց հանդեպ իմ սերը, ինչ հզոր հոսանքներ են ինձ մղում դեպի մարդիկ, ու հետո նայում եմ, թե ոնց ենք երկուսով այստեղ նստած դատում ու տրամաբանում... ծիծաղս գալիս է:

Լռում եմ, բռնազբոսիկ ժպտում եմ: Մատուցողուհին դիմացս մի կտոր կավճի պես սպիտակ կամամբեր է դնում: Հայացքս սահեցնում եմ սրահով մեկ ու հանկարծ սարսափելի նողկանք եմ զգում: Ի՞նչ գործ ունեմ այստեղ: Ինչո՞ւ եմ խրվել հումանիզմի մասին քննարկումների մեջ: Ինչո՞ւ են այս մարդիկ այստեղ: Ինչո՞ւ են ուտում: Ճիշտ է, իրենք չգիտեն, որ գոյություն ունեն: Ուզում եմ հեռանալ, ուզում եմ գնալ մի տեղ, ուր իրոք *իմ տեղում* կլինեմ, ուր կտեղավորվեմ... Բայց ես տեղ չունեմ. ես ավելորդ եմ:

Ինքնուսը փափկում է: Վախենում էր, որ ավելի բուռն պիտի դիմադրեմ: Հիմա արդեն պատրաստ է ջնջելու-մոռանալու բոլոր ասածներս: Վստահող տեսքով թեքվում է դեպի ինձ.

– Հոգու խորքում դուք էլ եք իրենց սիրում, պարոն, ու այնքան եք սիրում, ինչքան ես: Մենք միայն մեր ասածներով ենք տարբերվում:

Այլևս ի վիճակի չեմ խոսելու, ուղղակի գլխով եմ անում: Ինքնուսի դեմքն ընդհուպ մոտեցել է իմ դեմքին: Ինքնահավան տեսքով ժպտում է հենց երեսիս, ասես մղձավանջ լինի: Ես մի կերպ ծամում եմ հացի կտորը՝ չհամարձակվելով կուլ տալ: Մարդիկ: Պետք է սիրել մարդկանց: Մարդիկ արժանի են հիացմունքի: Հետ տալս գալիս է, ու մեկ էլ հանկարծ՝ ահա, խնդրեմ. Սրտխառնոցը:

Ծանր նոպա է. ոտքից գլուխ դողում եմ: Արդեն մի ժամ է՝ զգում էի՝ ոնց է մոտենում, ուղղակի չէի ուզում խոստովանել: Պանրի համը՝ բերանիս մեջ... Ինքնուսն ինչ-որ բան է բլբլում, ձայնը թույլ բզզում է ականջներիս մեջ: Բայց ես այլևս գաղափար անգամ չունեմ՝ ինչ է խոսում: Մեքենայաբար գլխով եմ անում: Ձեռքս սեղմում է աղանդերի դանակի կոթը: Ես *զգում եմ* այդ սև փայտե կոթը: Իմ ձեռքն է դա սեղմում: Իմ ձեռքը: Անձամբ ես կգերադասեի դանակը հանգիստ թողնել. ի՞նչ իմաստ ունի անընդհատ ինչ-որ բանի դիպչելը: Իրերը դիպչելու համար չեն ստեղծված: Ավելի լավ է սահեմ դրանց արանքով՝ հնարավորինս խուսափելով ինչ-որ բանի դիպչելուց: Երբեմն ինչ-որ բան ձեռքդ ես վերցնում ու հետո շտապում ես ինչքան կարելի է շուտ ազատվել դրանից: Դանակն ընկնում է ափսեի վրա: Ձայնի վրա սպիտականեր պարոնը վեր է թռչում ու նայում է ինձ: Նորից եմ վերցնում դանակը, շեղբը դեմ եմ տալիս սեղանին ու սկսում եմ ծռել:

Փաստորեն, հենց սա է Սրտխառնոցը՝ այս կուրացուցիչ ակներևությունը: Իսկ ես ինչքա՜ն էի գլուխ կոտրում: Ինչե՛ր էի գրում դրա մասին: Հիմա արդեն գիտեմ. ես գոյություն ունեմ, աշխարհը գոյություն ունի, ու ես գիտեմ, որ աշխարհը գոյություն ունի: Վերջ: Բայց ինձ համար մեկ է: Ու տարօրինակ է, որ ամեն ինչ այսքան մեկ է. վախենում եմ դրանից: Սկսած այն չարաբաստիկ օրվանից, երբ ուզում էի քարը շպրտել ջրի մեջ: Արդեն քիչ էր մնում շպրտեի, հետո նայեցի քարին, ու հենց այդ պահից էլ ամեն ինչ սկսվեց. ես զգացի, որ քարը *գոյություն ունի*: Դրանից հետո Սրտխառնոցը մի քանի անգամ էլ կրկնվեց. ժամանակ առ ժամանակ իրերը սկսում են ձեռքիդ մեջ գոյություն ունենալ: Մի անգամ «Ճամփորդների ռանդևուում» եղավ, մի անգամ՝ դրանից առաջ, երբ գիշերով պատուհանից դուրս էի նայում. հետո Հանրային զբոսայգում՝ կիրակի օրը, ու էլի մի քանի անգամ: Բայց այսօրվա պես ուժեղ դեռ երբեք չէր եղել:

– ...Հին Հռոմի՞, պարոն:

Ոնց որ թե Ինքնուսն ինձ ինչ-որ բան է հարցնում: Շրջվում եմ իր կողմն ու ժպտում: Ի՞նչ: Հետը ի՞նչ եղավ: Ինչո՞ւ է աթոռի վրա կծկվել: Փաստորեն, արդեն սկսել եմ մարդկանց վախեցնե՞լ: Զգում էի, որ վերջը սա է լինելու: Ասենք՝ ինձ համար մեկ է: Ի դեպ, այնքան էլ չեն

սխալվում, որ վախենում են. զգում եմ, որ հիմա ամեն ինչի ընդունակ եմ: Օրինակ՝ կարող եմ դանակը խրել Ինքնուսի աչքը: Հետո այս բոլոր մարդիկ ինձ ոտնատակ կտան, ատամներս կոշիկներով փշուր-փշուր կանեն: Բայց ինձ դա չէ, որ հետ է պահում. ի՞նչ տարբերություն՝ բերանիս մեջ արյան համ կլինի, թե պանրի համ: Ուղղակի ստիպված պիտի ձեռքս շարժեմ ու հերթական ավելորդ իրադարձությունը կյանքի կոչեմ. Ինքնուսի ճիչը, դեմքով ներքև ծորացող արյունը, մարդկանց վեր թռչելը, ամեն ինչ արդեն չափից դուրս շատ կլինի: Առանց այդ էլ ինչ գոյություն ունի, արդեն հերիք է:

Բոլորն ինձ են նայում. երիտասարդության երկու ներկայացուցիչներն ընդհատել են իրենց քաղցր զրույցը: Կնոջ բաց բերանը ոնց որ հավի հետույք լինի: Այնինչ կարող էին գոնե տեսնել, որ հիմա բնավ վտանգավոր չեմ:

Վեր եմ կենում, չորս կողմս ամեն ինչ պտտվում է: Ինքնուսն ինձ վրա է չռել իր մեծ աչքերը, որոնք ես չեմ հանի:

– Արդեն դռուրս եք գալիս,– մռթմռթում է:

– Մի քիչ հոգնած եմ: Շնորհակալություն, որ հրավիրեցիք: Ցտեսություն:

Հեռանալիս նկատում եմ, որ ձախ ձեռքով դեռ սեղմում եմ աղանդերի դանակը: Շպրտում եմ ափսեի վրա, չխկոց է գալիս: Քար լռության մեջ հատում եմ սրահը: Ոչ ոք այլևս չի ուտում. բոլորն ինձ են նայում, ախորժակները փակվել են: Եթե հանկարծ քայլեմ դեպի երիտասարդ կինն ու «բո՛» անեմ, հաստատ կսկսի ոռնալ: Բայց չէ, չարժի:

Ամեն դեպքում դուրս գալուց առաջ շրջվում եմ ու դեմքս դարձնում իրենց, որ հիշողությունների մեջ մեխվի:

– Ցտեսություն, տիկնայք և պարոնայք:

Չեն պատասխանում: Հեռանում եմ: Հիմա արդեն դեմքների գույնը տեղը կգա, ու էլի կսկսեն չաչանակել:

Չգիտեմ ուր գնամ: Ցցված մնում եմ ստվարաթղթե խոհարարի կողքին: Շրջվելու կարիք չունեմ, որ իմանամ՝ հիմա բոլորը պատուհաններից ինձ են նայում. զարմանքով ու զզվանքով նայում են մեջքիս, մտածում, որ մի ժամանակ ես էլ էի իրենց պես մեկը, ես էլ էի մարդ ու հիմա դավաճանել եմ իրենց: Ես հանկարծ կորցրի

մարդկային տեսքս, ու իրենք տեսան խեցգետնի, որ հետ-հետ սողալով փախչում էր այդ չափազանց մարդկային սրահից: Իսկ հիմա ինքնակոչ ներխուժողը քողազերծ եղած դիմել է փախուստի, ու ներկայացումը շարունակվում է: Մեջքովս զգում եմ այդ բոլոր տագնապահար աչքերի ու մտքերի խլրտոցն ու նյարդայնանում եմ դրանից: Անցնում եմ փողոցը: Մյուս մայթը ձգվում է ծովափի ու լողախցիկների երկայնքով:

Ծովափին լիքը մարդ կա, զբոսնում են ու դեպի ծովը պարզում իրենց գարնանային, պոետիկ դեմքերը. պատճառն արևն է, իրենց համար հիմա տոն է: Անցած գարնան արդուզարդով ու բաց գույնի զգեստներով կանայք, որ երկարուկ ու սպիտակ սահում են կողքովս, ասես լայքե ձեռնոցներ լինեն. քոլեջ կամ Առևտրի դպրոց գնացող տղաներ, շքանշաններով զարդարված ծերուկներ: Ոչ ոք իրար չի ճանաչում, բայց իրար այնպես են նայում, ասես հանցակիցներ լինեն, որովհետև շատ լավ եղանակ է, ու իրենք բոլորը մարդիկ են: Պատերազմ հայտարարելու օրերին էլ մարդիկ գրկում են անծանոթներին, իսկ ամեն հաջորդ գարնան գալուց ժպտում են իրար: Դանդաղ քայլելով ինչ-որ հոգևորական է անցնում, խորացել է իր աղոթագրքի մեջ: Երբեմն-երբեմն բարձրացնում է գլուխն ու հավանությամբ նայում ծովին. ծովն էլ է աղոթագիրք, քանզի խոսում է Աստծու մասին: Թեթև գույներ, թեթև բույրեր, գարնանային հոգիներ: «Ինչ լավ եղանակ է, ծովն ինչ կանաչ է, ես այս չոր սառնությունն ավելի շատ եմ սիրում, քան խոնավությունը»: Պոետնե՛ր: Եթե հանկարծ ձեռքս գցեմ մեկնումեկի վերարկուին ու ձայն տամ՝ «Օգնիր ինձ», կմտածի՝ «Սա՞ ինչ խեցգետին էր» ու կփախչի՝ վերարկուն թողնելով ձեռքիս մեջ:

Մեջքս դարձնում եմ մարդկանց ու երկու ձեռքով հենվում եմ ճաղաշարին: *Իսկական* ծովը սև ու սառն է, ու մեջը կենդանիներ են վխտում. իսկական ծովը գալարվում է այս բարակ, կանաչ թաղանթի տակ, որ ստեղծված է մարդկանց խաբելու համար: Ինձ շրջապատող ոգեղեն էակները խայծը կուլ են տվել. իրենք բարակ թաղանթից այն կողմ ոչ մի բան չեն տեսնում, չէ՞ որ միայն դա է ապացուցում Աստծու գոյությունը: Բայց ես, ե՛ս տեսնում եմ, թե սրա տակ ինչ կա: Իմ հայացքի տակ փայլուն լաքն ամենուր հալվում է,

թավշափայլ, աստվածային, դեղձի պես փափուկ մաշկը պատռվում է, ճաքճքում ու ճեղք է տալիս: Մոտենում է Սեն Էլեմիր գնացող տրամվայը. պտտվում եմ, ու ոստրեների պես գունատ ու կանաչ իրերը պտտվում են ինձ հետ: Իզուր էլ ինձ գցեցի մեջը, շատ իզուր, մեկ է, ոչ մի տեղ գնալ չեմ ուզում:

Լուսամուտներից այն կողմ ինչ-որ կապտավուն առարկաներ են ցնցվում ու անցնում, ամեն ինչ փայտացած է, փխրուն: Մարդիկ, պատեր, տներից մեկը բաց պատուհաններից ի ցույց է դնում իր մութ խորքը. լուսամուտների ապակիների պատճառով սև գույնը խամրում է ու կապտում, կապտում է դեղին աղյուսե այս մեծ շենքը, որ տատանվելով, ճոճվելով առաջ է գալիս ու հանկարծ կտրուկ կանգ առնում՝ քիթը խրելով հողի մեջ: Մի տղամարդ է բարձրանում ու նստում դիմացս: Դեղին շենքը կրկին շարժվում է, հանկարծ հայտնվում է ապակիների դիմաց, այնքան մոտ է, որ միայն մի փոքր մասն է երևում. մթնել է: Ապակիները ցնցվում են: Շենքը բարձրանում է, ճնշում իր մեծությամբ, այնքան բարձր է, որ վերջը չի երևում, հարյուրավոր բաց պատուհաններ ի ցույց են դրել շենքի մութ խորքը. հիմա գրեթե քսվելով սահում է վագոնի երկայնքով, ցնցվող ապակիների ու շենքի արանքում գիշեր է իջել: Շենքն անվերջ ձգվում է ու ձգվում, ցեխի պես դեղին է, իսկ պատուհանները երկնագույն են: Ու հանկարծ անհետանում է, մնում հետևում, պայծառ, մոխրագույն լույսը լցվում է վագոնն ու անդրդվելի արդարությամբ տարածվում ամենուր. երկինքն է: Պատուհաններից այն կողմ երկնքի նորանոր շերտեր են հայտնվում, որովհետև բարձրանում ենք Էլիֆար բլուրը, ու երկու կողմից էլ ազատ տեսարան է բացվում, աջից՝ մինչև ծովը, ձախից՝ մինչև օդանավակայանի տարածքը: Ծխելն արգելվում է, նույնիսկ եթե «Ժիտան» ես ծխում:

Ձեռքս հենում եմ նստարանին ու տեղնուտեղը հետ քաշում. դա էլ գոյություն ունի: Այս իրը, որի վրա նստած եմ, որին հենում եմ ձեռքս, կոչվում է նստարան: Հատուկ այնպես են սարքել, որ կարողանաս վրան նստել. վերցրել են կաշի, զսպանակներ, կտոր, գործի են անցել՝ մտքներին ունենալով նստելու տեղ սարքել, ու երբ վերջացրել են, այ *սա* է ստացվել: Հետո բերել-դրել են այստեղ՝ այս վագոնի մեջ, ու հիմա վագոնն ապակիները զնգացնելով

գլորվում է, ճոճվում ու իր մեջ տանում այս կարմիր իրը: Կախարդվածի նման շշնջում եմ. ախր ուղղակի նստարան է: Բայց բառը մնում է շուրթերիս վրա, հրաժարվում է գնալ ու կպչել առարկային: Առարկան մնում է նույնը՝ այն, ինչ կա՝ իր կարմիր թավշով, հազարավոր փոքրիկ կարմիր թաթիկներով, չոր, մեռած թաթիկներով: Ահռելի, վերև ցցված որովայն՝ փքված, արնածոր, վրան վխտացող մեռած թաթիկներով, որովայն, որ հիմա լողում է այս վագոնում, այս մոխրագույն երկնքում... Չէ, սա նստարան չէ: Նույն հաջողությամբ կարող էր, ասենք, սատկած ու ջրից ուռած էշ լիներ ու լողար մեծ, պղտոր գետի հոսանքն ի վար, հեղեղի բերած ջրերով ներքև, իսկ ես նստած լինեի էշի փորին ու ոտքերս կախած լինեի ջրի մեջ: Իրերն ազատագրվել են իրենց անուններից: Իրերն այստեղ են՝ անհեթեթ, համառ ու հսկայական, ու դրանց նստարաններ կոչելը կամ էլ դրանց մասին առհասարակ ինչ-որ բան ասելը հիմարություն է թվում. ես Իրերի մեջ եմ՝ անանվանելիների մեջ: Ես միայնակ եմ, անպաշտպան ու համր, իրերը շրջապատել են ինձ, իրերն իմ տակ են, իմ հետևում, ինձ վրա: Ու ոչինչ չեն պահանջում, ոչինչ չեն պարտադրում, ուղղակի կան: Նստարանի բարձիկի ու փայտե պատի արանքում մի փոքրիկ, մութ շերտ կա, սև գծիկ, որ խորհրդավոր ու չարաճճի տեսքով սահում է ամբողջ նստարանի երկայնքով, ոնց որ ժպիտ լինի: Ես շատ լավ գիտեմ, որ այդ ստվերը ժպիտ չէ, և սակայն գոյություն ունի, անցնում սպիտակավուն պատուհանների տակով, անցնում ապակիների զրնգոցի ներքո, համառում պատուհանից այն կողմ կանգ առնող ու էլի շարժվող կապույտ պատկերների ներքևում, համառում է՝ ասես ժպիտի մասին աղոտ հիշողություն կամ կիսամոռացված բառ լինի, որի մենակ առաջին վանկն ես հիշում ու լավագույն դեպքում կարող ես ընդամենը աչքերդ թեքել ու փորձել մտածել ուրիշ բանի մասին, ասենք՝ դիմացիս նստարանին կիսապառկած հենց այս մարդու: Կապույտ աչքեր ունի ու կավագույն գլուխ: Մարմնի ամբողջ աջ կեսը փափկել է, աջ ձեռքը սոսնձվել է մարմնին, աջ կողմը հազիվ-հազ է ապրում, զոռով, ժլատությամբ, ասես կաթվածահար եղած լինի: Բայց ձախ կողմում ինչ-որ մի չնչին, մակաբույծ գոյություն դեռ մնացել է ու հիմա խոցի նման արագ տարածվում է մարմնով մեկ.

ձեռքը սկսում է ցնցվել, հետո բարձրացնում է. ծայրի ափը փայտացած է: Հետո ափն էլ է սկսում ցնցվել ու երբ հասնում գանգի բարձրությանը, մատներից մեկը ձգվում է ու սկսում եղունգով քորել մազոտ կաշին: Բերանի աջ կողմում մի տեսակ վավաշոտ ծամածռություն է հայտնվում, ձախ կողմը մնում է մեռած: Ցնցվում են ապակիները, ցնցվում է ձեռքը, եղունգը քորում է ու քորում, բերանը ժպտում է սառած աչքերի տակ, ու մարդն առանց նկատելու դիմանում է իր աջ կողմը փքած այդ փոքրիկ գոյությանը, որ կայանալու համար գողացել է նրա աջ ձեռքն ու աջ այտը: Հսկիչը փակում է դիմացս.

– Կանգառին սպասեք:

Բայց ես իրեն մի կողմ եմ հրում ու տրամվայից թռչում եմ դուրս: Էլ չէի կարողանում դիմանալ: Էլ չէի դիմանում, որ իրերն այդքան մոտ են: Ինչ-որ դռնակ եմ հրում, մտնում ներս, թեթև գոյությունները վեր են ցատկում, թռչում վերև ու նստում են ճյուղերի վրա: Հիմա արդեն գիտեմ որտեղ եմ՝ Հանրային զբոսայգում: Փլվում եմ նստարանին՝ ծառերի մեծ, սև բների մեջ, երկինք ձգվող սև ու կնճռոտ ձեռքերի մեջ: Ծառը սև եղունգով քորում է ոտքերիս տակի հողը: Ո՞նց կուզեի թուլանալ, մոռանալ, քնել: Բայց չեմ կարող, խեղդվում եմ. գոյությունն ամեն տեղից լցվում է մեջս՝ աչքերիցս, քթիցս, բերանիցս...

Ու հանկարծ, շատ հանկարծ քողը միանգամից պատռվեց, ու ես հասկացա, ես *տեսա*:

Երեկոյան վեցը

Չեմ կարող ասել, որ ինձ թեթևացած կամ բավարարված եմ զգում, ընդհակառակը, ասես ճզմված լինեմ: Բայց փոխարենը հասել եմ նպատակիս՝ իմացել եմ այն, ինչ ուզում էի իմանալ, հասկացել եմ, թե հետս հունվարից ի վեր ինչ է կատարվում: Սրտխառնոցս չի անցել, ու չեմ էլ կարծում, թե շուտով կանցնի, բայց ես էլ դրանով չեմ տառապում, դա ո՛չ հիվանդություն է, ո՛չ էլ ինչ-որ անցողիկ նոպա. Սրտխառնոցը ես եմ:

Մի խոսքով, մի քիչ առաջ Հանրային զբոսայգում էի: Շագանակենու արմատը հենց իմ նստարանի տակ խրվում էր հողի մեջ: Չէի էլ հիշում, որ դա արմատ է: Բառերն անհետացել էին, ու դրանց հետ վերացել էին իրերի նշանակությունները, օգտագործման ձևերը, բոլոր այդ թույլ ուղեցույցները, որ մարդիկ էին գծել իրերի մակերեսներին: Մի քիչ կորացած, գլուխս կախ նստած էի, մեն-մենակ էի այդ ամբողջ սև, հանգուցավոր ու վայրի զանգվածի դիմաց և վախենում էի դրանից: Ու հետո հանկարծ պայծառացա:

Շունչս կտրվեց: Մինչև վերջերս երբեք չէի հասկացել, թե ինչ է նշանակում «գոյություն ունենալ»: Մյուսների պես էի՝ նրանց պես, ովքեր գարնանային շորեր հագած զբոսնում էին ծովափին: Իրենց պես ասում էի՝ «Ծովը կանաչ *է*, վերևի այն սպիտակ կետը ճայ *է*», բայց չէի զգում, որ այդ ամեն ինչը գոյություն ուներ, որ ճայը «գոյություն ունեցող ճայ» էր: Որպես կանոն՝ գոյությունը քողարկվում է: Գոյությունն այստեղ է՝ մեր շուրջը, մեր մեջ, գոյությունը հենց *մենք* ենք, չես կարող երկու բառ իրար կապել ու դրա մասին ոչինչ չասել, բայց մեկ է, երբեք դրան չես դիպչում: Երբ ինձ թվում էր, թե մտածում եմ դրա մասին, թերևս ոչ մի բան էլ չէի մտածում, գլուխս դատարկ էր կամ էլ մեջն ընդամենը մի բառ կար՝ լինել: Կամ էլ մտածում էի... Ո՞նց ասեմ: *Պատկանելիություններով* էի մտածում, ինքս ինձ ասում էի, որ ծովը պատկանում է կանաչ բաների դասին, կամ էլ կանաչը ծովի հատկություններից մեկն է: Նույնիսկ երբ նայում էի իրերին, կիլոմետրերով հեռու էի այն մտքից, որ դրանք գոյություն ունեն. ուղղակի դեկորացիաներ էին թվում: Ձեռքս էի վերցնում, օգտագործում էի, կանխատեսում էի, թե ինչ դիմադրություն կարող են ունենալ: Բայց այդ ամեն ինչը մակերեսի վրա էր տեղի ունենում: Եթե ինձ հարցնեին, թե ինչ բան է գոյությունը, հանգիստ խղճով կպատասխանեի՝ ոչինչ, ընդամենը դատարկ ձև, որ դրսից գալիս-միանում է իրերին ու դրանց բնույթի մեջ բացարձակապես ոչինչ չի փոխում: Ու մեկ էլ հանկարծ՝ ահա, խնդրեմ, այստեղ է՝ պարզից էլ պարզ. գոյությունը գցեց իր քողը: Այն թոթափեց վերացական կարգի իր անվնաս տեսքը. հիմա դա իրերի բուն խմորն էր, արմատը գոյությամբ էր հունցված: Կամ ավելի շուտ արմատը, զբոսայգու ցանկապատը, նստարանը, ցանցառ խոտը, ամեն ինչ անհետացավ.

իրերի բազմազանությունը, դրանց անհատականությունն ընդամենը երևութական էր, ամեն ինչ ծածկող լաք: Լաքը թափվել էր, ու մնացել էին կակուղ ու հրեշավոր զանգվածները՝ մերկ ինչ-որ զարհուրելի ու անպարկեշտ մերկությամբ:

Վախենում էի ամենաչնչին շարժում իսկ անելուց, բայց առանց շարժվելու էլ ծառերի հետևում տեսնում էի երաժիշտների տաղավարի կապույտ ձողերն ու լապտերները, իսկ դափնու թփերի մեջ՝ Վելլեդային: Այդ բոլոր իրերը... Ո՞նց ասեմ: Իրերն ինձ նեղում էին. ուզում էի, որ դրանք մի քիչ ավելի թույլ գոյություն ունենային, ավելի չոր ու ավելի վերացական լինեին, ավելի զուսպ: Շագանակենին դեմ էր առել աչքերիս: Բունը մինչև կեսը ծածկված էր կանաչ ժանգով, սև ու այտուցված կեղևն ասես խաշած կաշի լիներ: Մասկըրեի շատրվանի թույլ աղմուկը հոսում էր ականջներիս մեջ, բույն էր դնում ներսումս ու ականջներս լցնում հառաչանքներով. կանաչ ու նեխած հոտը խցանել էր քիթս: Ամեն ինչ հանդարտ ու նուրբ տեղի էր տալիս գոյությանը, ինչպես հոգնած կանայք են տրվում ծիծաղին ու տամուկ ձայնով ասում. «Ինչ լավ ծիծաղեցինք»: Իրերը մեկնվում էին իրար դիմաց ու միմյանց վստահում իրենց թշվառ գոյության գաղտնիքը: Հասկացա, որ անգոյության ու այս նվաղկուն առատության միջև արանք չկար: Եթե գոյություն ունես, ուրեմն պիտի գոյություն ունենաս *այդ աստիճանի*՝ բորբոսնելու աստիճանի, այտուցվելու աստիճանի, անպարկեշտության աստիճանի: Մի ուրիշ աշխարհում շրջաններն ու մեղեդիները պահում են իրենց հստակ ու պիրկ գծագրությունները: Բայց գոյություն ունենալ՝ նշանակում է ճկվել: Ծառեր, գիշերային կապույտ սյուներ, շատրվանի ուրախ խռխռոց, վառ հոտեր, սառն օդում լողացող ջերմության թանձրուկներ, նստարանին նստած ու իր ճաշը մարսող կարմրահեր մարդ... Այս ամբողջ քնկոտության, այս ընդհանուր մարսողության մեջ ինչ-որ աղոտ երգիծանք կար: Երգիծանք... Չէ, գործը դրան չէր հասնում, գոյություն ունեցող ոչ մի բան չի կարող երգիծական լինել, բայց այդ ամենի մեջ ինչ-որ հեղհեղուկ, գրեթե անորսալի նմանություն կար վոդևիլային որոշ իրավիճակների հետ: Մենք կաշկանդված գոյությունների կույտ էինք ու նեղում էինք ինքներս մեզ, մեզնից ոչ ոք պատճառի նշույլ անգամ չուներ այստեղ լինելու. գոյություն

ունեցող յուրաքանչյուր ոք՝ շփոթված ու անհանգիստ, իրեն ավելորդ էր զգում մյուսների հանդեպ: *Ավելորդ*. սա միակ հարաբերությունն էր, որ ես կարողացա գտնել ծառերի, ցանկապատի ու քարերի մեջ: Իզուր էի փորձում *հաշվել* շագանակենիները, դրանց *տեղավորել* տարածության մեջ Վելլեդայի արձանի նկատմամբ, *համեմատել* դրանց բարձրությունը սոսիների բարձրության հետ. ամեն ինչ խույս էր տալիս այն հարաբերություններից, որոնցով փորձում էի դրանց կապել, մեկուսանում էր, դուրս հորդում սեփական սահմաններից: Զգում էի, որ այդ բոլոր հարաբերությունները (չափերը, քանակները, ուղղությունները, այն ամենը, որ համառորեն փորձում էի պահել, որպեսզի հետաձգեմ մարդկային աշխարհի փլուզումը) կամայական են. դրանք այլևս իրերին չէին վերաբերում: Դիմացիս ձախ կողմի շագանակենին *ավելորդ* է: Վելլեդան *ավելորդ* է...

Ու ես էլ՝ անուժ, նվաղած, կերածը մարսող, մռայլ մտքերի մեջ կորած, ես էլ էի *ավելորդ*: Բարեբախտաբար, ես ինքս դա չէի զգում, ավելի շուտ հասկանում էի, բայց մեկ է, նեղված էի, որովհետև վախենում էի, որ հանկարծ կսկսեմ զգալ (մինչև հիմա էլ վախեցած եմ. վախենում եմ, որ հանկարծ հետևից կմոտենա, ծոծրակիցս կբռնի ու ալիքի նման տակնուվրա կանի ինձ): Աղոտ երազում էի կյանքս վերջ տալու մասին, որ այս ապարդյուն գոյություններից գոնե մեկը վերացնեմ: Բայց նույնիսկ մահս ավելորդ կլիներ: Ավելորդ կլիներ դիակս, քարերին թափված արյունս այս բույսերի մեջ՝ ծիծաղկոտ զբոսայգու խորքում: Ու քայքայված մարմինս էլ ավելորդ կլիներ իրեն ընդունած հողի մեջ, ու ի վերջո հղկված, կրծած, ատամների պես մաքուր ու փայլուն ոսկորներս էլ, մեկ է, ավելորդ կլինեին: Ես առհավետ ավելորդ էի:

Այս պահին գրչիս տակ ծնվում է Աբսուրդ բառը. մի քիչ առաջ զբոսայգում բառը չէի գտնում, բայց ոչ էլ փնտրում էի, որովհետև կարիքը չունեի. առանց բառերի էի մտածում, մտածում էի իրերի *մասին*, *իրերով*: Աբսուրդը գլխիս մեջ առաջացած միտք չէր, ոչ էլ ինչ-որ ձայն, այլ ոտքերիս տակի երկար, սատկած օձը, հենց այդ փայտե օձը: Օձ կամ մագիլ, կամ արմատ, կամ անգղի ճիրան, միևնույն էր: Եվ առանց հստակ ձևակերպելու հասկանում էի, որ գտել եմ Գոյության բանալին, իմ Սրտխառնոցների, իմ սեփական կյանքի

բանալին: Իրականում դրանից հետո ինչ էլ որ կարողացել եմ որսալ, հանգում է այդ նույն առանցքային աբսուրդին: Աբսուրդ՝ էլի բառ: Ես պայքարում եմ բառերի դեմ. այնտեղ հենց բուն իրի հետ գործ ունեի: Բայց հիմա ուզում եմ այստեղ ամրագրել այդ աբսուրդի բացարձակ բնույթը: Մարդկանց փոքրիկ, գունավոր աշխարհում շարժումը կամ իրադարձությունը կարող է միայն հարաբերականորեն աբսուրդ լինել՝ կախված ուղեկցող հանգամանքներից: Օրինակ՝ խելագարի խոսքերն աբսուրդ են այն իրադրության նկատմամբ, ուր ինքն այդ պահին գտնվում է, բայց ոչ երբեք իր զառանցանքի նկատմամբ: Բայց ես քիչ առաջ փորձառեցի բացարձակը՝ բացարձակը կամ աբսուրդը: Աշխարհում չկար ոչինչ, ինչի նկատմամբ այդ արմատն աբսուրդ չլիներ: Ի՞նչ անեմ, որ կարողանամ դա բառերով նկարագրել: Աբսուրդ՝ քարերի նկատմամբ, դեղնած խոտի խրձերի նկատմամբ, չորացած ցեխի, ծառի, երկնքի, կանաչ նստարանների նկատմամբ: Անդրդվելի աբսուրդ. դա ոչ մի բացատրություն չուներ, նույնիսկ բնության խոր ու թաքուն զառանցանքը չէր կարող դա բացատրել: Բնականաբար ամեն ինչ չէ, որ գիտեի. ասենք՝ չէի տեսել, թե ինչպես է սերմը ծիլ տալիս կամ էլ ծառը աճում: Բայց այդ խորդուբորդ, ահռելի թաթի դիմաց գիտելիքն ու տգիտությունը հավասարապես անկարևոր էին. բացատրությունների ու դատողությունների աշխարհը և գոյության աշխարհը տարբեր բաներ են: Շրջանագիծն աբսուրդ չէ, այն շատ լավ բացատրվում է ուղղի պտույտով իր ծայրերից մեկի շուրջը: Բայց ախր շրջանագիծը գոյություն չունի: Իսկ այդ արմատը, ընդհակառակը, հենց այնքանով գոյություն ուներ, ինչքանով որ չէի կարողանում դրան բացատրություն տալ: Հանգուցավոր, անհաղորդ, անանուն՝ արմատը հմայում էր ինձ, մտնում էր աչքս, ինձ անդադար հանգեցնում էր իր սեփական գոյությանը: Իզուր էի կրկնում «Արմատ է», բառերն այլևս չէին աշխատում: Ախր պարզ տեսնում էի, որ անհնար է արմատի՝ ջրմուղ պոմպի գործառույթից հասնել *դրան*՝ փոկի այդ կոշտ ու խիտ կաշվին, այդ ճարպոտ, կոշտուկավոր, համառ կերպին: Գործառույթը ոչինչ չէր բացատրում, ընդամենը թույլ էր տալիս ընդհանուր գծերով հասկանալ, թե ինչ բան է արմատը, բայց ոչ երբեք *հենց այդ արմատը*: Այդ արմատն իր գույնով, ձևով, քարացած շարժումով

ավելի... ցածր էր, քան ցանկացած բացատրություն: Դրա որակներից յուրաքանչյուրը փախչում էր արմատից, հոսում դուրս ու կիսով չափ քարանալով՝ դառնում էր գրեթե շոշափելի մի իր. դրանցից յուրաքանչյուրն ավելորդ էր արմատի մեջ, ու հիմա արդեն ինձ թվում էր, որ ծառի ամբողջ բունն էլ է ինքն իրենից մի քիչ դուրս գալիս, ինքն իրեն ժխտում ու կորցնում ինչ-որ մի տարօրինակ ավելցուկի մեջ: Կրունկով քերեցի այդ սև ճիրանը, ուզում էի մի քիչ քերթել: Հենց այնպես արեցի ինչ-որ մարտահրավերից դրդված, ուզում էի այդ դաբաղված կաշվի վրա տեսնել վարդագույն ճանկռվածքի աբսուրդը. ուզում էի *խաղալ* աշխարհի աբսուրդի հետ: Բայց երբ ոտքս քաշեցի, տեսա, որ կեղևը սև է մնացել:

Սև՞: Զգացի, որ բառը սմքում է, դատարկվում, արտառոց արագությամբ կորցնում է իմաստը: Սև՞: Արմատը սև *չէր*, այդ փայտի կտորի վրայինը սևություն չէր, չէ, ուրիշ... ուրիշ բան էր: Սևը, ինչպես և շրջանագիծը, գոյություն չունի: Նայեցի արմատին. արդյո՞ք *ավելի քան* սև էր, թե՞ *գրեթե* սև: Բայց հետո տեղնուտեղը թարգեցի նման հարցեր տալը, որովհետև զգում էի, որ արդեն գիտելիքների տարածք եմ մտնում: Ախր առաջ էլ էի նույնքան մանրամասն ուսումնասիրել անանվանելի իրերը, ապարդյուն փորձել էի ինչ-որ բան մտածել դրանց *մասին* ու զգացել, թե ինչպես են իրերի սառն ու անհաղորդ որակները խույս տալիս ու սահում մատներիս արանքով: Ասենք՝ հենց Ադոլֆի տաբատակալները այն երեկո «Ճամփորդների ռանդևուում»: Դրանք մանուշակագույն *չէին*: Վերնաշապիկի վրայի այդ երկու անսահմանելի բծերը նորից եկան աչքիս առաջ: Ու քարն էլ՝ հենց այն տխրահռչակ քարն էլ, որից ամբողջ պատմությունը սկսվեց, դա էլ էր... արդեն լավ չէի հիշում, թե ինչ էր հրաժարվում լինել, բայց պասիվ դիմադրությունը մտքիցս դուրս չէր գալիս: Կամ էլ Ինքնուսի ձեռքը. մի օր գրադարանում ձեռքը սեղմեցի, ու հետո ինձ անընդհատ թվում էր, որ դա այնքան էլ ձեռք չէր: Այն ժամանակ մտքովս անցավ, որ մեծ, սպիտակ որդ էր, բայց չէ, որդ էլ չէր: Հետո՝ «Մաբլի» սրճարանում գարեջրի գավաթի պղտոր թափանցիկությունը: Պղտոր. ահա թե ինչպիսին էին այդ բոլոր ձայները, հոտերը, համերը: Մեկ-մեկ վախեցած նապաստակների նման անցնում էին քթիդ տակով, շատ ուշադրություն չէիր էլ դարձնում, ու թվում էր,

թե իրոք պարզ ու վստահություն ներշնչող բաներ են, թվում էր, թե աշխարհում իսկական կապույտ կա, իսկական կարմիր, իսկական նուշի հոտ կամ մանուշակագույն: Բայց հենց մի վայրկյան դրանց կասեցնում էիր, հարմարավետության ու անվտանգության զգացումը վերածվում էր ինչ-որ խոր տագնապի. գույները, համերը, հոտերը երբեք իսկական չէին, երբեք հենց իրենք ու միմիայն իրենք չէին: Ամենապարզ, ամենաանտրոհելի որակն անգամ ինքն իր ներսում ավելորդ է հենց իր նկատմամբ: Թվում էր՝ ոտքերիս տակի սևը բնավ էլ սև չէր, այլ ավելի շուտ ինչ-որ մեկի շփոթված ջանքն էր պատկերացնելու սևը՝ առանց երբեք սև տեսած լինելու, ինչ-որ մեկի, ով չէր կարողացել ժամանակին կանգ առնել ու պատկերացրել էր մի անըմբռնելի էակ գույներից անդին: Դա *նման էր* գույնի, բայց նաև... սալջարդի էր նման, ինչ-որ արտազատումների, ճարպոտ քրտնքի ու էլի ուրիշ բաների, օրինակ՝ հոտի. հալվում-վերածվում էր խոնավ հողի հոտի, տաք ու թաց փայտի հոտի, լաքի պես տարածվում էր ջղուտ փայտի վրա ու դառնում սև հոտ, դառնում ծամծմած ու քաղցրավուն փայտանյութի համ: Ես ոչ միայն *տեսնում* էի այդ սևը, այլև... Տեսողությունն աբստրակտ հորինվածք է, զտված ու պարզեցված գաղափար, մարդկային գաղափար: Այդ սևը, այդ տձև ու կակուղ իրողությունը հեռվից արդեն բերնեբերան լցնում էր քո ամբողջ տեսողությունը, հոտառությունն ու համի զգացողությունը: Բայց առատությունը փոխվում էր շփոթմունքի և ի վերջո դառնում էր ոչինչ, որովհետև ավելորդ էր:

Ապշեցուցիչ պահ էր: Տեղումս քարացած ու սառած՝ սուզվել էի ինչ-որ հրեշավոր էքստազի մեջ: Բայց այդ էքստազի գագաթնակետում մի նոր բան էլ էր ի հայտ եկել. ես հասկացել էի Սրտխառնոցն ու տիրապետել էի դրան: Ճիշտն ասած՝ դեռ չէի էլ փորձում ձևակերպել իմ բացահայտումները: Բայց կարծում եմ՝ հիմա արդեն կկարողանամ դրանք հեշտությամբ բառերի վերածել: Այստեղ ամենաէականը դիպվածն է: Ուզում եմ ասել, որ ըստ սահմանման՝ գոյությունն անհրաժեշտություն չէ: Գոյություն ունենալ՝ նշանակում է *լինել այստեղ*, այդքան բան. գոյությունները հայտնվում են, *հանդիպում են* իրար, բայց այդ ամեն ինչում ոչ մի *օրինաչափություն* չկա: Կարծում եմ՝ որոշ մարդիկ դա հասկացել են: Ուղղակի փորձել

են հաղթահարել այդ դիպվածականությունը՝ հորինելով ինչ-որ մի անհրաժեշտ ու ինքնաբավ էություն: Սակայն ոչ մի անհրաժեշտ էություն չի կարող բացատրել գոյությունը. դիպվածը թվացյալ բան չէ, ոչ էլ ինչ-որ խաբուսիկ երևույթ, որ կարող ես ցրել. դա հենց բացարձակն է և հետևաբար իսպառ զուրկ է պատճառականությունից: Ոչինչ պատճառ չունի՝ ո՛չ այգին, ո՛չ քաղաքը, ո՛չ էլ ես ինքս: Ու հենց դա գիտակցում ես, սիրտդ տակնուվրա է լինում, շուրջդ ամեն ինչ սկսում է պտտվել ու լողալ, ինչպես այն երեկո «Ճամփորդների ռանդևուում». հենց սա՛ է Սրտխառնոցը, հենց սա՛ են Կոտո Վեր բլրի ու մնացած բոլոր Սրիկաները փորձում թաքցնել իրենց այդ իրավունքի գաղափարի տակ: Խղճուկ սուտ. իրավունք չունի և ոչ ոք, իրենք էլ են կատարելապես զուրկ որևէ պատճառից, ինչպես և մնացած բոլորը, ու իրենք էլ չեն կարողանում իրենց ավելորդ չզգալ: Հոգու խորքում՝ թաքուն, *իրենք էլ են ավելորդ*, և ուրեմն՝ իրենք էլ են տձև, կակուղ ու վիատ:

Ինչքա՞ն տևեց այդ դյութանքը: Ես շագանակենու արմատն *էի*: Կամ ավելի շուտ իմ ամբողջ էությամբ դրա գոյության գիտակցումն էի: Դեռ առանձին էի դրանից, որովհետև գիտակցում էի դա, և սակայն արդեն կորել էի մեջը, ոչ այլ ինչ էի, քան հենց միայն դա: Նեղված գիտակցություն, որը, սակայն, իր ողջ երերուն ծանրությամբ հենվել էր այդ անհաղորդ փայտի կտորի վրա: Ժամանակը փոքրիկ, սև ջրափոսի նման կանգ էր առել ոտքերիս տակ. անհնար էր, որ այդ պահից *հետո* ինչ-որ ուրիշ բան տեղի ունենար: Ուզում էի պոկվել այդ սոսկալի վայելքից, բայց պատկերացնել անգամ չէի կարողանում, որ հնարավոր է. ես մեջն էի. ծառի բունը *չէր անցնում*, մնում էր նույն տեղում՝ աչքերիս մեջ, ինչպես շատ մեծ պատառն է խրվում-մնում կոկորդումդ: Ո՛չ ընդունել էի կարողանում, ո՛չ էլ մերժել: Ի՞նչ ջանքերի գնով կարողացա աչքերս բարձրացնել: Ու բարձրացրի՞ արդյոք: Ավելի շուտ՝ թերևս ինչ-որ մի պահի ոչնչացրի ինքս ինձ ու հաջորդ պահին վերածնվեցի՝ գլուխս արդեն ուրիշ կողմ թեքած ու աչքերս բարձրացրած վերև: Անցումը իրոք չեմ հիշում: Բայց հանկարծ անհնար դարձավ մտածել արմատի գոյության մասին: Լրիվ ջնջվել էր. իզուր էի ինքս ինձ կրկնում, որ արմատը գոյություն ունի, դեռ այստեղ է՝ նստարանի տակ, աջ ոտքիս մոտ է

ախր, մեկ է, այլևս ոչ մի բան նշանակություն չուներ: Գոյությունը թույլ չի տալիս հեռվից մտածել իր մասին. չէ, ինքը պիտի միանգամից տիրանա քեզ, լցվի վրադ, ահռելի, անշարժ գազանի նման ծանրանա սրտիդ, հակառակ դեպքում ոչ մի բան էլ չի լինի:

Ու ոչ մի բան էլ չկար, աչքերս դատարկվել էին, ու ես ասես կախարդված լինեի իմ այդ ազատագրումից հետո: Հետո հանկարծ աչքերիս առաջ ինչ-որ շարժում սկսվեց, ինչ-որ թույլ ու անորոշ տատանումներ. քամին թափ էր տալիս ծառի գագաթը:

Շարժվող բան տեսնելուց նույնիսկ մի քիչ ուրախացա. գոնե ինչ-որ փոփոխություն էր սառած աչքերը վրաս հառած այդ բոլոր անշարժ գոյություններից հետո: Նայում էի, թե ոնց են ճյուղերը ճոճվում, ու ինքս ինձ ասում էի. շարժումը երբեք լրիվ գոյություն չունի, շարժումն անցում է, միջանկյալ փուլ երկու գոյությունների արանքում նոսրացած ժամանակ: Արդեն պատրաստվում էի հետևել, թե ինչպես է շարժումը դուրս գալիս անէությունից, աստիճանաբար հասունանում ու ծաղկում. վերջապես հաջողացնելու էի տեսնել, թե ինչպես է ծնվում գոյությունը:

Բայց երեք վայրկյան էլ պետք չեղավ, որ բոլոր հույսերս հօդս ցնդեն: Ես ոչ մի կերպ չէի կարողանում այդ տատանվող ու կուրորեն չորս կողմը խարխափող ճյուղերի վրա որսալ դեպի գոյություն «անցումը»: Ախր այդ անցման գաղափարն էլ են մարդիկ հորինել: Ու դա չափազանց հստակ գաղափար է: Այդ բոլոր չնչին շարժումներն առանձնանում էին, ծագում միայն իրենք իրենց համար, ամեն կողմից վխտում ճյուղերի ու ոստերի վրա, պտտվում այդ չոր ձեռքերի շուրջը, դրանց պարուրում փոքրիկ մրրիկների մեջ: Անշուշտ, շարժումը մեկ այլ բան է, քան ծառը: Բայց միևնույն է, դա էլ էր բացարձակը: Դա էլ էր իր: Աչքս ուր գցում էի՝ բերնեբերան լիքն էր: Ճյուղերի ծայրին գոյություններն էին վխտում՝ գոյություններ, որ անդադար նորանում էին, բայց երբեք չէին ծնվում: Գոյություն ունեցող քամին եկել ու հսկայական ճանճի պես նստել էր ծառի վրա, ու ծառը դողում էր: Բայց դողը ծնվող որակ չէր, ունակությունից գործողության անցում չէր. դողը իր էր. դող-իրը հոսում էր ծառի մեջ, տիրանում, ցնցում էր ծառին ու հանկարծ թողնում-գնում էր հեռու՝ պտտվելու ինքն իր շուրջը: Ամեն ինչ լիքն էր, ամեն տեղ

գործողություն էր, նոսրացած ժամանակ չկար, ամեն ինչ, նույնիսկ ամենաանշան ցնցումը գոյությունից էր կազմված: Ու ծառի շուրջն իրար անցած այդ բոլոր գոյությունները ոչ մի տեղից չէին գալիս ու ոչ մի տեղ չէին գնում: Ինչ-որ մի պահի դրանք հանկարծ արդեն գոյություն ունեին ու հաջորդ պահին արդեն գոյություն չունեին. գոյությունը հիշողություն չունի, անցածներից ոչինչ չի պահում, նույնիսկ հուշ: Գոյությունն ամենուր ու առհավետ է և ավելորդ է՝ ընդմիշտ ու ամեն տեղ. գոյությունը սահմանափակված է միայն գոյությամբ: Փլվեցի նստարանին, ինձ խլացած ու ճզմված էի զգում ծագում չունեցող գոյերի այդ առատությունից. ամենուր ամեն ինչ բողբոջում ու փթթում էր, ականջներիս մեջ բզզում էր գոյությունը, նույնիսկ մարմինս էր տրոփում ու բացվում՝ տրվելով տիեզերական ծաղկունքին. նողկալի էր: «Բայց ինչո՞ւ,– մտքովս անցավ,– ինչո՞ւ են գոյություններն այսքան շատ, եթե մեկ է, բոլորն իրար նման են»: Ի՞նչ օգուտ այսքան շատ միանման ծառերից: Քանի՜, քանի՜ գոյություններ են ձախողվել, հետո համառորեն վերսկսվել ու էլի ձախողվել մեջքի վրա շուռ եկած միջատի անճարակ ջանքերի պես: (Ես այդ ջանքերից մեկն էի): Այդ առատությունը շռայլության տպավորություն չէր թողնում, լրիվ հակառակը: Մռայլ էր, տկար, ինքն իրենից նեղված: Ծառեր՝ ահռելի, անճարակ մարմիններ... Սկսեցի բարձր ծիծաղել, որովհետև հանկարծ հիշեցի, թե գրքերում ինչպես են նկարագրում այդ բոլոր սքանչելի գարունները՝ ճայթյուններով, պոռթկումներով ու անզուսպ ծաղկունքով լի: Որոշ հիմարներ էլ ճառում էին կամքի ուժի ու կյանքի համար պայքարելու մասին: Մի՞թե դրանք երբեք ո՛չ կենդանի են տեսել, ո՛չ էլ ծառ: Ու ինձ դեռ ուզում էին համոզել, որ քրքրված կեղևով այս սոսին կամ այ այն կիսափտած կաղնին դեպի երկինք խոյացող երիտասարդ ու թարմ ուժեր են: Բա այս արմա՞տը: Ոչ մի կասկած չկար, որ դա էլ պիտի աչքիս ինչ-որ անկուշտ ճիրան թվար, որ հողը ծվեն-ծվեն էր անում ուտելիք կորզելու համար:

Անհնար է իրերին այդ հայացքով նայել: Այ խարխլվածությունը կամ թուլությունը՝ ուրիշ բան: Ծառերը լողում էին: Խոյանում էին դեպի երկի՞նք: Փլուզվում էին ավելի շուտ. վայրկյան առ վայրկյան սպասում էի, որ ծառերի բներն ուր որ է հոգնած առնանդամների

նման կնճռոտվելու են, կծկվեն ու ճմռթված, փափուկ ու սև կույտի պես փլվեն հողին: Հարցն այն էր, որ *դրանք չէին ուզում գոյություն ունենալ*, բայց և չէին կարողանում գոյություն չունենալ: Դրա համար էլ հանդարտ, առանց խանդավառության իրենց գործն էին բզբզում. բուսահյութը դանդաղ, դժկամորեն բարձրանում էր երակներով, արմատները դանդաղ խորանում էին հողի մեջ: Բայց այնպիսի տեսք ունեին, ասես ամեն հաջորդ պահի կարող է ամեն ինչի վրա թքեին ու վերանային: Հոգնած, ծեր ծառերն իրենց կամքին հակառակ շարունակում էին գոյություն ունենալ, որովհետև չափազանց թույլ էին մեռնելու համար, որովհետև իրենց մահը լոկ դրսից կարող էր գալ. միայն երաժշտության մեղեդիներն են, որ մահը հպարտությամբ կրում են իրենց մեջ՝ որպես ներքին անհրաժեշտություն. սակայն մեղեդիները գոյություն չունեն: Գոյություն ունեցող ամեն ինչ ծնվում է առանց պատճառի, հարատևում է, որովհետև թույլ է և մեռնում է պատահականորեն: Հետ ընկա ու աչքերս փակեցի: Բայց տագնապահար պատկերները տեղնուտեղը առաջ խոյացան ու գոյությամբ լցրին փակ աչքերս. ամեն ինչ լցված է գոյությամբ, ու մարդը դրանից ոչ մի տեղ չի կարող փախչել:

Տարօրինակ պատկերներ էին: Աչքիս ինչ ասես՝ երևում էր: Բայց իսկական իրեր չէ, ուրիշ՝ դրանց նման բաներ: Աթոռներ ու սաբոներ հիշեցնող փայտե առարկաներ, բույսերի նման ինչ-որ ուրիշուրիշ բաներ: Երկու դեմքեր էլ կային. անցած կիրակի «Վեզըլիզ» գարեջրատանը կողքիս ընթրող զույգն էր: Ճարպոտ, տաք, զգայական, աբսուրդ, կարմիր ականջներով: Կնոջ ուսերն ու կուրծքն էի տեսնում: Մերկ գոյություն: Այդ երկուսը (այդ մտքից հանկարծ սոսկացի) հիմա էլ էին շարունակում Բուվիլում ինչ-որ տեղ գոյություն ունենալ. ինչ-որ տեղ, ինչ-որ հոտերի մեջ այդ փափուկ կուրծքը, ժանյակների մեջ հարմար տեղավորված, շարունակում էր քսվել թարմ գործվածքին, իսկ կինը շարունակում էր զգալ, որ իր կուրծքը գոյություն ունի կրծկալի մեջ, շարունակում էր մտածել. «Ծիծիկներս, սիրուններս», շարունակում էր խորհրդավոր ժպտալ և ուշադիր հետևել, թե ինչպես է կուրծքը փթթում ու իրեն խուտուտ տալիս... Ու հետո գոռացի, վեր թռա ու հասկացա, որ աչքերս լայն բաց են:

Մի՞թե այդ ամբողջ հրեշավոր իրողությունը երազ էր: Ախր այստեղ էր, լպրծուն ու թանձր մուրաբայի պես լողզվել էր զբոսայգու վրա, լցվել ծառերի մեջ: Ու զբոսայգու հետ ես էլ էի մեջը: Վախեցած էի, բայց նախևառաջ կատաղություն էի զգում, որովհետև ամեն ինչ այնքա՜ն անտեղի էր, այնքա՜ն անիմաստ. ատում էի այդ զզվելի մարմելադը: Բայց չէ՞ որ դա կար, կա՛ր: Հասնում էր երկինք, տարածվում ամենուր, ամեն ինչ լցնում իր լպրծուն թուլությամբ, անհատակ խորությունն աչքիս առաջ էր, շատ ավելի հեռու էր ձգվում, քան զբոսայգու սահմանները, քան շենքերը, քան Բուվիլը, ու ես էլ Բուվիլում չէի, ոչ մի տեղ չէի, լողում էի: Բնավ զարմացած չէի, որովհետև շատ լավ գիտեի, որ դա հենց Աշխարհն էր՝ մերկ Աշխարհը, որ հանկարծ որոշել էր ինքն իրեն բացահայտել, ու հիմա կատաղությունից շնչահեղձ էի լինում այդ աբսուրդ ու ահռելի էակի առաջ: Նույնիսկ չէի էլ կարողանում ինքս ինձ հարցնել՝ որտեղի՞ց էր այդ ամենը դուրս եկել, ո՞նց էր եղել, որ գոյություն էր ունեցել մի ողջ աշխարհ, այլ ոչ թե ոչինչ: Իմաստ չուներ. աշխարհն ամենուր էր՝ դիմացս, հետևս: Ու դրանից *առաջ* ոչինչ չէր եղել: Ոչինչ: Չէր եղել գոնե մի պահ, որ աշխարհը գոյություն չունենար: Ու ինձ հենց դա էլ բարկացնում էր. չէ՞ որ այդ սորուն թրթուրը գոյություն ունենալու *ոչ մի պատճառ* չուներ: *Բայց և չէր կարող* գոյություն չունենալ: Անընկալելի էր. անէությունը պատկերացնելու համար ես արդեն իսկ պիտի լինեի այստեղ՝ աշխարհի մեջ, աչքերս լայն բաց ու կենդանի. անէությունն էլ էր ընդամենը գլխիս միջի միտք, գոյություն ունեցող միտք, որ լողում էր այս ահռելի տարածության մեջ. անէությունը գոյությունից *առաջ* չէր եղել, այլ հերթական գոյությունն էր, ինչպես և մնացած ամեն ինչը, ու հայտնվել էր շատ ու շատ ուրիշ բաներից ավելի ուշ: Գոռում էի՝ «Նողկալի է, նողկալի՜», ինձ թափ էի տալիս, որ ազատվեմ այդ լպրծուն նողկանքից, բայց չէ, պինդ էր բռնել ու սարսափելի շատ էր, տոննաներով, տոննաներով գոյություն, անվերջ ու անսահման, շնչահեղձ էի լինում այդ ահռելի անձկության խորքում: Հետո հանկարծ զբոսայգին միանգամից դատարկվեց, ասես գետնի տակն անցավ, աշխարհն անհետացավ այնպես, ինչպես հայտնվել էր, կամ էլ արթնացավ.

ամեն դեպքում էլ աշխարհը չէի տեսնում, շուրջս մնացել էր միայն դեղին հողն ու դրա միջից դուրս ցցված մեռած ճյուղերը:

Վեր կացա, դուրս եկա: Դռնակին հասնելով՝ շրջվեցի: Ու հենց այդ պահին զբոսայգին ինձ ժպտաց: Հենվեցի ցանկապատին ու երկար նայեցի այգուն: Ծառերի ու դափնու թփերի ժպիտն *ինչ-որ բան էր նշանակում*. փաստորեն, հենց դա էր գոյության իսկական գաղտնիքը: Հիշեցի, որ մի անգամ կիրակի օրով՝ երևի մի երեք շաբաթ առաջ, արդեն նկատել էի, որ իրերն ինչ-որ դավադիր, հանցակից տեսք ունեն: Այդ տեսքն ո՞ւմ էր ուղղված, ի՞նձ: Անձկությամբ զգում էի, որ ոչ մի կերպ չեմ կարող հասկանալ: Ոչ մի կերպ: Եվ սակայն դա այստեղ էր, սպասում էր, ասես հայացք լիներ: Այ այնտեղ էր՝ շագանակենու բնի վրա... հենց *ինքը*՝ շագանակենին էր: Իրերն ասես ճանապարհի կեսին կանգ առած մտքեր լինեին, որ մոռացել էին իրենք իրենց, մոռացել էին, թե ինչ էին ուզում մտածել, ու մնացել էին օդում կախված՝ ինչ-որ տարօրինակ, փոքրիկ իմաստի հետ, որ իրենց մեջ չէր տեղավորվել: Ու այդ փոքրիկ իմաստն ինձ նյարդայնացնում էր. ես *չէի կարող* դա հասկանալ, եթե նույնիսկ հարյուր տարի հենված մնայի այդ ցանկապատին. գոյության մասին ես արդեն իմացել էի ամեն ինչ, որ կարող էի իմանալ: Դուրս եկա, վերադարձա հյուրանոց ու, խնդրեմ, գրեցի սա:

Գիշերով

Որոշել եմ. գիրքս էլ չեմ գրում, ուրեմն Բուվիլում մնալու էլ ոչ մի պատճառ չունեմ. տեղափոխվում եմ Փարիզ: Ուրբաթ օրը կնստեմ ժամը հինգի գնացքը, շաբաթ կտեսնեմ Աննիին. ինձ թվում է՝ մի քանի օր միասին կլինենք: Հետո հետ կգամ այստեղ, մի երկու գործ կկարգավորեմ ու ճամպրուկներս կհավաքեմ: Ամենաուշը մարտի 1-ին վերջնականապես հաստատված կլինեմ Փարիզում:

Ուրբաթ

«Ճամփորդների ռանդևուում» եմ: Քսան րոպեից գնացքս շարժվում է: Պատեֆոն: Արկածի սուր զգացում:

Շաբաթ

Աննին բացում է դուռը, հագին երկար, սև շրջազգեստ է: Բնականաբար ո՛չ ձեռքն է մեկնում, ո՛չ էլ բարևում է: Աջ ձեռքս վերարկուիս գրպանում է: Շտապում է ձևականություններից ազատվել ու նեղացկոտ տոնով արագ-արագ ասում է.

– Ներս արի ու ուր ուզում ես՝ նստիր, բացի պատուհանի մոտի բազկաթոռից:

Ինքն է, լրիվ ինքն է: Ձեռքերն ազատ կախ են ընկած, դեմքին այն նույն խոժոռ արտահայտությունն է, որի պատճառով մի ժամանակ անընդհատ ոնց որ անցումային տարիքի աղջիկ լիներ: Բայց հիմա այլևս նման չէ փոքրիկ աղջկա: Լցվել է, փարթամ կուրծք ունի:

Դուռը փակում է, մտածկոտ ձայնով ինքն իրեն ասում.

– Չգիտեմ, մահճակալին նստեմ, ինչ անեմ...

Ի վերջո նստում է գորգով ծածկված ինչ-որ սնդուկի վրա: Քայլվածքը փոխվել է. հիմա փառահեղ ծանրությամբ է շարժվում, որը սակայն զուրկ չէ նրբագեղությունից. զգացվում է, որ նեղվում է իր նորահայտ գիրությունից: Եվ սակայն, անկախ ամեն ինչից, հաստատ ինքն է՝ նույն Աննին:

Աննին ծիծաղում է:

– Ինչո՞ւ ես ծիծաղում:

Սովորության համաձայն միանգամից չի պատասխանում, այլ կռվարար տեսք է ընդունում:

– Չես ասո՞ւմ՝ ինչու:

– Որովհետև ինչ ներս ես մտել, լայն ժպիտը դեմքիցդ չի իջնում: Ոնց որ աղջկադ հենց նոր ամուսնացրած հայր լինես: Դե լավ, հերիք է ոտքի վրա մնաս: Վերարկուդ մի տեղ դիր ու նստիր: Հա, այդտեղ, եթե ուզում ես:

Լռություն է տիրում, ու Աննին չի էլ փորձում լռությունը խախտել: Ի՞նչ մերկ է սենյակը: Մի ժամանակ Աննին ուր էլ գնար՝ հետն անպայման մի ահռելի ճամպրուկ էր քարշ տալիս՝ լիքը լցված ամեն տեսակի շալերով, տուրբաններով, գլխաշորերով, ճապոնական դիմակներով ու գույնզգույն նկարներով: Հյուրանոցում տեղավորվելուն պես, նույնիսկ եթե ընդամենը մի գիշեր պիտի մնար, առաջին հերթին բացում էր ճամպրուկը, հանում էր իր այդ բոլոր գանձերն ու միայն իրեն հայտնի ինչ-որ փոփոխական ու բարդ հաջորդականությամբ ամեն ինչ կախում պատերին, գցում լամպերի վրա կամ էլ փռում հատակին. կես ժամ էլ պետք չէր լինում, որ ամենահասարակ սենյակն այնքան հագեցած ու զգայական անհատականություն ստանար, որ գրեթե անտանելի էր: Գուցե ճամպրուկը կորել էր, կամ էլ թողել էր պահասենյակում... Լոգարանի դուռը կիսաբաց այս սառը սենյակում ինչ-որ չարագուշակ բան կա: Բուվիլի իմ սենյակին է նման, ուղղակի ավելի շքեղ է ու տխուր:

Աննին էլի է ծիծաղում: Ես այդ բարձր, մի քիչ ռնգային ծիծաղը լավ եմ ճանաչում:

– Հա, հեչ չես փոխվել: Ի՞նչ ես իրար խառնվել, ի՞նչ ես փնտրում:

Ժպտում է, բայց ինձ ուղղված հայացքի մեջ այնքան հետաքրքրություն կա, որ գրեթե թշնամանքի է հասնում:

– Ուղղակի մտածում էի, որ այս սենյակին նայելով չես ասի, որ այստեղ դու ես ապրում:

– Իրո՞ք,– պատասխանում է անորոշ տեսքով:

Ու կրկին լռություն: Հիմա նստած է մահճակալին, հագի սև շրջազգեստի պատճառով խիստ գունատ է թվում: Մազերը չի կտրել: Շարունակում է անվրդով տեսքով նայել ինձ, հոնքերը մի քիչ բարձրացրել է: Փաստորեն, ինձ ասելու բան չունի՞: Ուրեմն ինչո՞ւ է կանչել: Լռությունն անտանելի է դառնում:

Հանկարծ խեղճ-խեղճ ասում եմ.

– Ուրախ եմ, որ քեզ տեսա:

Վերջին բառը կոկորդիս է կանգնում. ավելի լավ է՝ ընդհանրապես ձայն չհանեի: Հաստատ կատաղելու է: Ճիշտն ասած՝ գալուց առաջ էլ էի մտածում, որ առաջին տասնհինգ րոպեն անտանելի է լինելու: Առաջ էլ, երբ ինչ-որ ընդմիջումից հետո նորից էի հանդիպում

Աննիին, թեկուզ եթե ընդամենը քսանչորս ժամ իրար տեսած չլինեինք կամ էլ նույնիսկ քնելուց հետո հաջորդ առավոտը լիներ, երբեք չէի կարողանում գտնել այն բառերը, որոնց ինքը սպասում էր, որոնք կսազեին իր զգեստին, եղանակին, նախորդ օրը մեր փոխանակած վերջին բառերին: Հիմա՞ ինչ է ուզում: Գաղափար անգամ չունեմ:

Հայացքս բարձրացնում եմ: Աննին ինչ-որ տարօրինակ քնքշությամբ ինձ է նայում:

– Փաստորեն, ընդհանրապես չե՞ս փոխվել: Էլի նույն հիմա՞րն ես:

Դեմքը բավարարվածություն է արտահայտում: Բայց ի՞նչ հոգնած տեսք ունի:

– Դու ուղեսյուն ես,– ասում է,– ճամփի եզրին կանգնած ուղեսյուն: Դու անխռով բացատրում ես ու ամբողջ կյանքումդ էլ շարունակելու ես բացատրել, որ մինչև Մըլյուն քսանութ կիլոմետր է, իսկ մինչև Մոնտարժի՝ քառասուներկու: Այ հենց դրա համար էլ այդքան շատ ես ինձ պետք:

– Պե՞տք եմ: Չորս տարի է՝ քեզ պետք եմ, ու գոնե մի անգամ չե՞նք հանդիպել: Փաստորեն, լավ էլ թաքցնում էիր զգացմունքներդ, էլի:

Ժպտալով եմ խոսում, թե չէ հանկարծ կարող է մտածել, որ ոխ եմ պահել: Բայց զգում եմ, որ ահավոր կեղծ եմ ժպտում. նեղվում եմ:

– Չէ, բայց ի՞նչ հիմար ես: Բնականաբար՝ ինձ պետք չի քեզ տեսնել, եթե դա նկատի ունես: Մանավանդ որ գիտես, քո մեջ առանձնապես ոչ մի աչք շոյող բան էլ չկա: Ինձ պետք է, որ դու գոյություն ունենաս ու չփոխվես: Դու ոնց որ այն պլատինե մետրը լինես, որ Փարիզում են պահում, թե չգիտեմ որտեղ: Չեմ կարծում, որ ինչ-որ մեկը երբևէ ուզել է այդ մետրը տեսնել:

– Հենց դա էլ քո սխալն է:

– Ինչ որ է, ես որ չեմ ուզել: Բայց ինձ լավ եմ զգում, երբ գիտեմ, որ դա գոյություն ունի ու հավասար է Երկրի միջօրեականի մեկ քառորդի ուղիղ տասը միլիոներորդ մասին: Ամեն անգամ դրա մասին եմ մտածում, երբ բնակարանումս ինչ-որ բան են չափում, կամ էլ մետրով կտոր եմ առնում:

– Հա՞,– սառը ասում եմ ես:

– Բայց գիտես, չէ՞, որ շատ հանգիստ կարող էի քո մասին այնպես մտածել, ինչպես ուղղակի ինչ-որ աբստրակտ հատկության

կամ էլ որևէ սահմանի մասին կմտածեի: Պիտի շնորհակալ լինես, որ ամեն անգամ դեմքդ եմ հիշում:

Խնդրեմ, էլի հետ եկանք այն նույն ալեքսանդրյան բանավեճերին, որոնց մի ժամանակ ստիպված էի մասնակցել, մինչդեռ հոգուս խորքում լրիվ ուրիշ՝ պարզ ու հասարակ ցանկություններ ունեի, օրինակ՝ ասել, որ սիրում եմ իրեն կամ էլ գրկել: Բայց հիմա ոչ մի ցանկություն էլ չունեմ: Միայն, երևի, ուզում եմ լռել, նայել իրեն ու լուռ գիտակցել այս արտառոց իրադարձության ողջ կարևորությունը. Աննին իմ առջև է: Իսկ ի՞նքը: Մի՞թե իր համար այս օրը մյուսներից ոչ մի բանով չի տարբերվում: Ձեռքերը չեն դողում: Պիտի որ ասելու ինչ-որ բան ունենար, երբ ինձ գրում էր կամ էլ ուղղակի հերթական քմահաճույքն էր: Հիմա դրա ժամանակն արդեն վաղուց անցել է:

Հանկարծ Աննին այնպիսի ակնհայտ քնքշանքով է ինձ ժպտում, որ աչքերս լցվում են:

– Քո մասին շատ ավելի հաճախ էի մտածում, քան պլատինե մետրի: Օր չկար, որ քո մասին չմտածեի: Ու քեզ շատ հստակ էի հիշում, ընդհուպ մինչև ամենաչնչին մանրամասնություններդ:

Վեր է կենում, գալիս է մոտս ու ձեռքերը դնում ուսերիս:

– Ինձնից ես բողոքում. դե հիմա փորձվիր ասել, որ դեմքս հիշում էիր:

– Արդար չես,– ասում եմ,– շատ լավ գիտես, որ վատ հիշողություն ունեմ:

– Փաստորեն խոստովանում ես՝ ինձ լրիվ մոռացել էիր: Փողոցում որ տեսնեիր, կճանաչեի՞ր:

– Բնականաբար: Բայց խոսքը դրա մասին չէ:

– Գոնե հիշո՞ւմ էիր՝ մազերս ինչ գույնի են:

– Իհա՛րկե: Շեկ են:

Ծիծաղում է:

– Ինչ էլ հպարտությամբ ես ասում: Հիմա, որ աչքիդ առաջ են, ասածիդ արժանիքն այնքան էլ մեծ չի թվում:

Ձեռքով շոյում է մազերս:

– Իսկ քո մազերը շիկակարմիր են,– ծաղրանմանակում է ինձ,– կյանքում չեմ մոռանա. առաջին անգամ, որ քեզ տեսա, գլխիդ ինչ-որ փափուկ, բաց մանուշակագույն գլխարկ էր, որ ուղղակի

ահավոր էր նայվում կարմիր մազերիդ վրա: Աչքերս ցավում էին նայելիս: Գլխարկդ հիմա ո՞ւր է: Ուզում եմ տեսնել՝ էլի նույն վատ ճաշա՞կն ունես:

– Էլ չեմ դնում:

Աչքերը լայն բացում է ու մի թեթև սուլում.

– Մենակ թե չասես, որ ինքնուրույն ես գլխի ընկել: Հա՞: Դե շնորհավոր: Դե բա իհարկե: Բայց դե վաղուց պիտի հասկացած լինեիր: Քո մազերը ոչ մի բանի հետ չեն սազում. ո՛չ գլխարկների հետ են նայվում, ո՛չ բազկաթոռի բարձերի, ո՛չ էլ նույնիսկ պատերի պաստառների, եթե հանկարծ հայտնվում ես դրանց ֆոնին: Կամ էլ պիտի գլխարկդ մինչև ականջներդ քաշես, ոնց որ այն անգլիական ֆետրը, որ Լոնդոնից էիր գնել: Մազերդ այնպես էիր մեջը խցկում, որ չէր էլ հասկացվում՝ գլխիդ ընդհանրապես գոնե մի հատիկ մազ մնացե՞լ է, թե՞ չէ:

Հետո ավելացնում է մի այնպիսի վճռական տոնով, որով սովորաբար վերջակետ են դնում հին վեճերին.

– Քեզ բացարձակապես չէր սազում:

Չեմ էլ հիշում՝ ինչ գլխարկի մասին է խոսում:

– Իսկ ես, ինչ է, ասում էի, որ սազո՞ւմ է:

– Այն էլ ո՞նց էիր ասում: Միայն դրա մասին էիր խոսում: Ու թաքուն քեզ էիր նայում հայելիների մեջ, երբ քեզ թվում էր, թե չեմ նկատի:

Անցյալի այդ իմացությունը ոչնչացնում է ինձ: Աննիին նայելով նույնիսկ չես էլ ասի, թե մտքում ինչ-որ հուշեր է արթնացնում. ձայնի մեջ նման զբաղմունքներին հատուկ նուրբ հեռավորության նշույլ անգամ չկա: Ոնց որ այսօրվա մասին խոսի կամ ամենաշատը՝ երեկվա. մտքում վառ է պահել անցյալի իր բոլոր կարծիքները, կամակորությունները, կռիվները: Իսկ ինձ համար, ընդհակառակը, ամեն ինչ թաղված է ինչ-որ պոետիկ մշուշի մեջ. հիմա պատրաստ եմ ցանկացած զիջման:

Հանկարծ առանց որևէ ինտոնացիայի ասում է.

– Տեսնում ես, իսկ ես լցվել եմ, ծերացել, պիտի հետևեմ ինձ:

Ճիշտ է ասում: Ու ի՞նչ հոգնած տեսք ունի: Ուզում եմ պատասխանել, բայց տեղնուտեղը ավելացնում է.

– Թատրոնում էի խաղում, Լոնդոնում:

– Կանդլերի հե՞տ:

– Չէ՛, իհարկե ոչ: Էլի լրիվ դու ես: Գլուխդ մտցրել էիր, իբր պիտի Կանդլերի հետ խաղամ: Քանի՞ անգամ պիտի ասեմ, որ Կանդլերը դիրիժոր է: Չէ, փոքրիկ թատրոն է՝ Սոհո Սքուեյրի վրա: Կայսր Ջոնս ենք խաղացել, Շոն Օ'Ռեյսիի ու Սինի պիեսներից, Բրիտանիկուս:

– Բրիտանիկո՞ւս,– զարմացած ասում եմ:

– Հա, պատկերացնո՞ւմ ես, Բրիտանիկուս էլ: Հենց դրա համար էլ իրենց մոտից դուրս եկա: Բրիտանիկուս բեմադրելու միտքը ես իրենց տվեցի, իսկ իրենք ուզում էին ինձ ստիպել, որ Յունիի դերը խաղամ:

– Իրո՞ք:

– Իսկ ես բնականաբար կարող եմ միայն Ագրիպին խաղալ:

– Բա հիմա՞ ինչ ես անում:

Սխալ հարց տվեցի: Դեմքը միանգամից անկյանք է դառնում: Բայց առանց հապաղելու պատասխանում է.

– Էլ չեմ խաղում: Հիմա ճամփորդում եմ: Մեկը կա, ինձ ամեն ինչով ապահովում է:

Ժպտում է.

– Դե լա՛վ, այդքան մտահոգ տեսք մի ընդունիր, ողբերգություն չէ: Միշտ էլ ասել եմ, որ ինձ համար մեկ է, որ ինձ պահեն: Համ էլ ծեր է, ինձ չի խանգարում:

– Անգլիացի՞ է:

– Ախր քեզ համար ի՞նչ տարբերություն,– ջղայնացած ասում է:– Հերիք է իր մասին խոսենք: Մեկ է՝ ինքը ո՛չ քեզ համար որևէ նշանակություն ունի, ո՛չ էլ ինձ: Թեյ ուզո՞ւմ ես:

Մտնում է լոգարան: Լսում եմ՝ ոնց է այնտեղ գնում-գալիս, ինքն իր հետ խոսելով ինչ-որ տարաներ է չխկչխկացնում. նյարդային, անհասկանալի մռթմռթոց է: Մահճակալի կողքի սեղանիկին, ինչպես միշտ, Միշլեի «Ֆրանսիայի պատմության» մի հատորն է: Մահճակալի վրա, նոր եմ նկատում, լուսանկար է կախել, ընդամենը մի լուսանկար. Էմիլի Բրոնտեի դիմանկարի վերարտադրությունն է, բանաստեղծուհու եղբայրն է նկարել:

Աննին հետ է գալիս ու միանգամից ասում.

– Դե հիմա արի քո մասին խոսենք:

Հետո էլի անհետանում է լոգարանում: Այ սա, ինչքան էլ վատ հիշողություն ունենամ, լավ եմ հիշում. միշտ էլ այսպիսի ուղիղ հարցեր էր տալիս, ու ես դրանցից ահավոր նեղվում էի, որովհետև այդ հարցերի մեջ միաժամանակ և՛ անկեղծ հետաքրքրություն էի զգում, և՛ ամեն ինչ արագ վերջացնելու ցանկություն: Ամեն դեպքում այս հարցից հետո էլ ոչ մի կասկած չի մնում. ինչ-որ բան է ուզում ինձնից: Հիմա դեռ նախնական բանակցությունների փուլում ենք. ազատվում ենք այն ամենից, որ կարող է խանգարել, վերջնականապես կարգավորում ենք երկրորդական հարցերը («Դե հիմա արի քո մասին խոսենք»): Շուտով կսկսի իր մասին խոսել: Ու հանկարծ զգում եմ, որ Աննիին որևէ բան պատմելու նվազագույն ցանկություն անգամ չունեմ: Ինչո՞ւ պատմեմ: Սրտխառնոցը, վախը, գոյությունը... Ավելի լավ է պահեմ մեջս:

– Դե շուտ արա,– ձայն է տալիս միջնորմի մյուս կողմից: Թեյնիկը ձեռքին վերադառնում է:– Ի՞նչ ես անում: Փարիզո՞ւմ ես ապրում:

– Բուվիլում:

– Բուվիլո՞ւմ: Ինչո՞ւ: Հույս ունեմ չես ամուսնացել, չէ՞:

Վեր եմ թռչում.

– Ամուսնացե՞լ:

Ահավոր տհաճ է, որ Աննիի մտքով կարող է այդպիսի բան անցնել: Իրեն հենց այդպես էլ ասում եմ.

– Աբսուրդ բաներ ես ասում: Լրիվ նույն նատուրալիստական ֆանտազիաներից է, որոնց համար ինձ մի ժամանակ մեղադրում էիր: Գիտես, էլի, երբ պատկերացնում էի, իբր դու այրի ես ու երկու որդու մայր: Ու պատմում էի, թե մենք ինչ ենք դառնալու: Ատում էիր դրանք:

– Իսկ քեզ դուր էր գալիս,– անվրդով պատասխանում է:– Ասում էիր, որ ինքնահաստատվես: Համ էլ հիմա որ խոսում ենք, վրդովվում ես, բայց այնքան դավաճան ես, որ մի օր թաքուն կամուսնանաս էլ: Մի ամբողջ տարի վրդովվում ու հայտարարում էիր, որ երբեք չես գնա «Կայսերական մանուշակները» նայելու: Հետո մի օր հիվանդացա, ու գնացիր, մեր թաղի փոքրիկ կինոյում մենակդ նայեցիր:

– Բուվիլում եմ,– արժանապատվությամբ ասում եմ,– որովհետև մարկիզ դը Ռոլբոնի մասին գիրք եմ գրում:

Աննին ջանասիրաբար հետաքրքրված տեսք է ընդունում ու նայում է ինձ:

– Մարկիզ դը Ռոլբոնի՞: Այն, որ 18-րդ դարում էր ապրում:

– Հա:

– Հա էլի, կարծեմ պատմել ես,– ասում է անորոշ տոնով:– Փաստորեն, պատմակա՞ն գիրք է:

– Հա:

– Հա հա՛:

Եթե մի հարց էլ տա, ամեն ինչ կպատմեմ: Բայց էլ ոչինչ չի հարցնում: Անկասկած կարծում է, որ իմ մասին ինչ իմացավ, հերիք է: Աննին շատ լավ է կարողանում լսել, բայց միայն այն ժամանակ, երբ ինքն է ուզում: Նայում եմ իրեն. հայացքն իջեցրել է, մտածում է՝ ինչ պիտի ասի, ոնց է սկսելու: Ի՞նչ անեմ, հիմա էլ ե՞ս սկսեմ իրեն հարցեր տալ: Չեմ կարծում, որ ուզում է: Կխոսի, երբ կհամարի, որ արդեն ժամանակն է: Սիրտս շատ ուժեղ խփում է:

Հանկարծ ասում է.

– Փոխվել եմ:

Ահա և սկիզբը: Բայց հետո լռում է: Թեյ է լցնում սպիտակ ճենապակե բաժակների մեջ: Սպասում է, որ ես խոսեմ. ուրեմն հիմա պիտի ինչ-որ բան ասեմ: Բայց ոչ թե ցանկացած բան, այլ հենց այն, ինչ ինքն է ակնկալում: Տանջանքների մեջ եմ: Մի՞թե իրոք փոխվել է: Դե հա, լցվել է, հոգնած տեսք ունի, բայց ինքը, իհարկե, լրիվ ուրիշ բան նկատի ուներ:

– Չգիտեմ: Չեմ կարծում: Առաջվա նման ես ծիծաղում, առաջվա նման գալիս ու ձեռքերդ դնում ես ուսերիս, էլի ինքդ քեզ հետ խոսում: Միշլեի «Պատմությունն» ես դեռ կարդում: Ու լիքը ուրիշ բաներ...

Օրինակ՝ իր այդ անկեղծ հետաքրքրությունն իմ անփոփոխ էության հանդեպ ու կատարյալ անտարբերությունն այն ամեն ինչի նկատմամբ, որ կյանքում կարող է հետս պատահել. հետո՝ այդ տարօրինակ ու շինծու սեթևեթանքները, որ միաժամանակ և՛ մանրախնդիր են, և՛ հմայիչ. հետո այն, թե ոնց է հենց ամենասկզբից բացառում քաղաքավարության ու ընկերության բոլոր ձևականությունները՝ այն ամենը, որ կոչված է հեշտացնելու մարդկանց շփումը, ու զրուցակիցներին ստիպում անդադար նոր բաներ հայտնագործել:

Ուսերն է թոթվում.

– Չէ, փոխվել եմ,– ասում է չոր ձայնով,– լրիվ եմ փոխվել: Էլ նույն մարդը չեմ: Ինձ թվում էր՝ պիտի առաջին հայացքից նկատեիր: Իսկ դու եկել, Միշլեի «Պատմությունից» ես խոսում:

Գալիս-կանգնում է դիմացս.

– Դե հիմա արի տեսնենք՝ արդյոք այս մարդն իրո՞ք այնքան խելացի է, ինչքան ձևացնում է: Դե հասկացիր. ո՞նց եմ փոխվել:

Վարանում եմ. Աննին ոտքը հատակին է խփում. դեռ ժպտում է, բայց արդեն անկեղծ նյարդայնացած է:

– Առաջ մի բան կար, որ քեզ տանջում էր: Ամեն դեպքում պնդում էիր, որ տանջում է: Իսկ հիմա չկա, վերացել է: Պիտի որ նկատած լինեիր: Քեզ հիմա ինձ հետ ավելի հանգիստ չե՞ս զգում:

Չեմ համարձակվում պատասխանել, որ ոչ. հիմա էլ լրիվ առաջվա նման քարացած նստած եմ աթոռի եզրին ու ամեն վայրկյան մտածում եմ, թե ոնց անեմ, որ ծուղակներից խուսափեմ կամ զայրույթի անբացատրելի բռնկումների առիթ չտամ:

Նորից է նստում.

– Մի խոսքով,– համոզված գլխով է անում,– եթե չես հասկանում, ուրեմն լիքը բան ես մոռացել: Ավելի շատ, քան մտածում էի: Դե լա՛վ, առաջվա զանցանքներդ էլ գոնե չես հիշում: Գալիս էիր, խոսում էիր, գնում էիր ու լրիվ սխալ ժամանակ: Պատկերացրու, իբր ոչինչ չի փոխվել: Կմտնեիր, պատերին դիմակներ ու շալեր կլինեին, ես նստած կլինեի մահճակալին ու քեզ կասեի (գլուխը հետ է գցում, ռունգերը լայնացնում է ու թատերական ձայնով՝ ասես ինքն իրեն ծաղրելով, ասում է). «Դե՞: Ի՞նչ ես սպասում: Նստի՛ր»: Ու բնականաբար խնամքով կխուսափեի զգուշացնելուց, որ «բացի պատուհանի մոտի բազկաթոռից»:

– Ծուղակներ էիր լարում ինձ համար:

– Ծուղակներ չէին... Ու դու բնականաբար կգնայիր-կնստեիր հենց այդ բազկաթոռին:

– Ու ինձ ինչ կլինե՞ր,– ասում եմ՝ շրջվելով ու հետաքրքրությամբ զննելով բազկաթոռը:

Սովորական բազկաթոռ է, կոկիկ ու հարմար տեսք ունի:

– Ոչ մի լավ բան,– կարճ պատասխանում է Աննին:

Չեմ շարունակում. Աննին միշտ էլ իրեն տաբուներով է շրջապատել:

– Ինձ թվում է,– հանկարծ ասում եմ,– որ ինչ-որ բան գլխի եմ ընկնում: Չնայած շատ տարօրինակ կլիներ: Սպասիր, թող հասկանամ. իրականում այս սենյակը լրիվ դատարկ է: Պիտի արժանին մատուցես ինձ, միանգամից նկատել եմ: Լավ, ուրեմն կմտնեի ներս ու պատերին կտեսնեի այդ բոլոր դիմակները, շալերը և այլն: Հյուրանոցը միշտ էլ վերջանում էր քո դռան մոտ: Քո սենյակը մի ուրիշ երևույթ էր... Դու եկած չէիր լինի դուռը բացելու: Երբ քեզ տեսնեի, մի անկյունում կուչ եկած կլինեիր, գուցե հենց հատակին՝ այն կարմիր գորգիկի վրա, որ միշտ ամեն տեղ հետդ էիր տանում, ու անողոք, սպասող հայացքով կնայեիր ինձ... Մի բառ էլ չէի հասցնի ասել, ինչ-որ շարժում անել կամ շունչս տեղը բերել, երբ արդեն կսկսեիր հոնքերդ կիտել, ու ես ինձ խորապես մեղավոր կզգայի՝ ինքս էլ չիմանալով, թե ինչու: Հետո կշարունակեի ամեն րոպե նորանոր սխալներ գործել ու վերջում լրիվ կխրվեի մեղավորության մեջ...

– Քանի՞ անգամ է այդպես եղել:

– Հարյուր անգամ:

– Ամենաքի՛չը: Իսկ հիմա ինչ, ավելի ճարպի՞կ ես, ավելի նրբանկա՞տ:

– Չէ:

– Ուրախ եմ, որ խոստովանում ես: Եվ ի՞նչ:

– Եվ այն, որ այդ ամենն այլևս չկա...

– Հա հա՛,– թատերական ձայնով ծիծաղում է,– չի համարձակվում հավատալ:

Հետո նուրբ շարունակում է.

– Դե ինչ, կարող ես հանգիստ հավատալ. այդ ամենն այլևս չկա:

– Էլ ոչ մի կատարյալ ակնթա՞րթ:

– Այո:

Ապշահար եմ: Շարունակում եմ պնդել.

– Այսինքն՝ դու էլ... Ուզում ես ասել՝ վե՞րջ, էլ ոչ մի... ողբերգությո՞ւն: Քո այդ ակնթարթային ողբերգությունները, որտեղ դիմակները, շալերը, կահույքը, ես ինքս, ամեն ինչ մեր փոքրիկ դերերն ունեինք, իսկ գլխավոր դերը քո՞նն էր:

Ժպտում է:

– Երախտամոռ: Ես իրեն երբեմն նույնիսկ ավելի մեծ դեր էի տալիս, քան ինքս ինձ, իսկ ինքը չէր էլ կասկածում: Մի խոսքով՝ հա. վերջ: Զարմացա՞ծ ես:

– Հա՛: Այն էլ ո՞նց եմ զարմացած: Ինձ թվում էր՝ այդ ամեն ինչը քո անբաժան մասն է, որ քեզ դրանից զրկելը նույնն է, ինչ սիրտդ տեղից պոկելը:

– Ինձ էլ էր թվում,– ասում է առանց որևէ ափսոսանքի:

Հետո ավելացնում է մի այնպիսի հեգնանքով, որից ներսումս շատ տհաճ նստվածք է մնում.

– Բայց դե, ինչպես տեսնում ես, առանց դրա էլ եմ կարողանում ապրել:

Մատները միահյուսել է ու մի ծունկն առել է ափերի մեջ: Աղոտ ժպիտով շուրջն է նայում, ժպիտից ամբողջ դեմքը երիտասարդացել է: Ոնց որ փոքրիկ, թմբլիկ աղջիկ լինի, խորհրդավոր ու բավարարված:

– Հա, ուրախ եմ, որ դու չես փոխվել: Եթե քեզ տեղափոխեին, ուրիշ գույնի ներկեին, դնեին ուրիշ ճանապարհի վրա, ես կողմնորոշվելու համար էլ ոչ մի կայուն բան չէի ունենա: Դու անհրաժեշտ ես ինձ. ես փոխվում եմ, իսկ դու, ինչպես և պայմանավորվել էինք, մնում ես նույնը, ու ես իմ փոփոխությունները քեզնով եմ չափում:

Մեկ է, ինձ մի քիչ վիրավորված եմ զգում:

– Ու շատ սխալվում ես,– կտրուկ առարկում եմ:– Վերջերս ես, ընդհակառակը, հենց շատ եմ փոխվել ու հիմա հոգուս խորքում...

– Օ՛,– պատասխանում է ոչնչացնող արհամարհանքով,– ինտելեկտուալ փոփոխությունն՝ե՛ր: Ես մինչև ուղնուծո՛ւծս եմ փոխվել:

Մինչև ուղնուծուծս... Ի՞նչն էր, որ ձայնի մեջ ինձ այդպես ցնցեց: Ամեն դեպքում հանկարծ տակնուվրա եմ լինում. ես դադարում եմ փնտրել կորած Աննիին: Հիմա ինձ հենց այս աղջիկն է հուզում, հենց այս թմբլիկ, կործանված տեսքով աղջիկը, ես հենց իրեն եմ սիրում:

– Մի տեսակ արդեն համոզված եմ, որ... Ֆիզիկապես եմ համոզված... Զգում եմ, որ կատարյալ ակնթարթներ չկան: Ասենք՝ երբ քայլում եմ, ոտքերիս մեջ եմ զգում: Անընդհատ եմ զգում, նույնիսկ քնած ժամանակ: Գլխիցս չեմ կարողանում հանել: Ու այնպես էլ չէ,

որ ինչ-որ հայտնություն եմ ունեցել. չէ, չեմ կարող ասել, որ այսինչ օրվա այսինչ ժամից հետո կյանքս կտրուկ փոխվեց: Բայց հիմա ինձ անընդհատ այնպես եմ զգում, ասես հենց երեկ ամեն ինչ հանկարծ հասկացած լինեմ: Ապշած եմ, տեղս չեմ գտնում, չեմ կարողանում վարժվել:

Աննին այս խոսքերն արտասանում է հանդարտ ձայնով: Ձայնի մեջ հպարտության նշույլներ կան այդքան շատ փոխված լինելու համար: Աննկարագրելի նրբագեղությամբ ճոճվում է իր սնդուկի վրա: Ներս մտնելուցս հետո դեռ ոչ մի անգամ այսքան նման չի եղել առաջվա Աննիին, այն Աննիին, որ Մարսելում էր: Կրկին նվաճել է ինձ, կրկին սուզվել եմ իր տարօրինակ տիեզերքի մեջ՝ զվարճալիից անդին, ձևականություններից անդին, խորամանկություններից անդին: Նույնիսկ սկսել եմ նորից զգալ այն նույն թույլ տենդը, որ միշտ զգում էի իր ներկայությամբ, ու նույն դառնահամը՝ բերանիս մեջ:

Աննին ձեռքերն ազատում է ու ծունկը բաց է թողնում: Լռում է: Հաշվենկատ լռություն է. այդպես օպերայում է նվագախմբի յոթ տակտերի ընթացքում բեմը դատարկ մնում, ոչ ավել, ոչ պակաս: Թեյ է խմում: Հետո բաժակը ցած է դնում ու ձգվում՝ բռունցքներով հենվելով սնդուկի եզրին:

Հանկարծ երեսին հայտնվում է Մեդուզայի այն հոյակապ դեմքը, որ մի ժամանակ այնքան շատ էի սիրում. ատելությամբ լեցուն, աղճատված, թունոտ: Աննին երբեք դեմքի արտահայտությունը չի փոխում. ինքը դեմքն է փոխում, այնպես, ինչպես անտիկ դերասաններն էին դիմակները փոխում՝ ակնթարթորեն: Ու իր դիմակներից յուրաքանչյուրը նախատեսված է մի որոշակի մթնոլորտ ստեղծելու համար, ընդգծելու համար այն, ինչ շուտով լինելու է: Դիմակը հայտնվում է ու, քանի դեռ ինքը խոսում է, մնում է անփոփոխ: Հետո ընկնում, անջատվում է իրենից:

Հայացքը հառել է ինձ, բայց ոչինչ չի տեսնում: Հիմա կխոսի: Սպասում եմ, որ պիտի իր դիմակի արժանապատվության մակարդակին վայել մի ողբերգական ճառ լսեմ, հուղարկավորության երգ եմ ակնկալում:

Ընդամենը մի կարճ նախադասություն է ասում.

– Ես կենդանի դիակ եմ:

Ձայնն ընդհանրապես չի համապատասխանում դեմքին: Չէ, ողբերգական չէ... Զարհուրելի է: Ցամաք հուսահատություն կա մեջը, առանց արցունքների, առանց խղճահարության: Հա, Աննիի ներսում ինչ-որ բան անվերադարձ ցամաքել է:

Դիմակը ցած է ընկնում. ժպտում է.

– Բայց բնավ տխուր չեմ: Մի ժամանակ հաճախ էի դրանից զարմանում, բայց իզուր. ինչո՞ւ պիտի տխուր լինեմ: Առաջ լավ էլ կարողանում էի ուժգին կիրք ապրել: Մորս կրքոտ ատում էի: Իսկ քեզ, օրինակ,– մարտահրավերով նետում է,– կրքոտ սիրում էի:

Սպասում է պատասխանի: Ոչինչ չեմ ասում:

– Բայց այդ ամեն ինչը բնականաբար վերջացած է:

– Ի՞նչ գիտես:

– Գիտեմ: Գիտեմ, որ այլևս երբեք չի լինի ոչ ոք ու ոչ մի բան, որ ինձ կիրք կներշնչի: Գիտես, սիրելը մի ամբողջ նախաձեռնություն է: Պիտի եռանդ ունենաս, վեհանձնություն, կուրացած լինես... Ամենասկզբում նույնիսկ մի պահ կա, երբ ստիպված ես ցատկել անդունդի վրայով. եթե կանգ առնես ու մտածես, հաստատ չես ցատկի: Ես գիտեմ, որ այլևս երբեք չեմ ցատկելու:

– Ինչո՞ւ:

Վրաս հեգնական հայացք է գցում ու չի պատասխանում:

– Հիմա հանգուցյալ կրքերովս շրջապատված եմ ապրում: Փորձում եմ վերագտնել այն նույն հոյակապ կատաղությունը, որ տասներկու տարեկանում ինձ ստիպեց չորրորդ հարկից ցած նետվել, երբ մայրս ինձ ծեծել էր:

Հետո առանց որոշակի կապի, վերացած տեսքով ավելացնում է.

– Ու համ էլ չեմ կարողանում առարկաներին երկար նայել: Նայում եմ, որ իմանամ՝ ինչ է, հետո ստիպված եմ լինում հայացքս արագ փախցնել:

– Բայց ինչո՞ւ:

– Նողկալի են:

Մի՞թե հենց նույն... Ամեն դեպքում նման է: Մի անգամ Լոնդոնում արդեն պատահել է, որ երկուսս էլ գրեթե միաժամանակ միևնույն բանը մտածենք նույն բաների մասին: Ինչքա՜ն կուզեի, որ...

Բայց Աննիի միտքը շատ է գալարվում այս ու այն կողմ. երբեք չես կարող վստահ լինել, որ իրեն մինչև վերջ հասկացել ես: Պիտի ամեն ինչ վերջնականապես պարզեմ:

– Լսիր, քեզ մի բան էի ուզում ասել: Գիտես, ես երբեք էլ լավ չեմ հասկացել, թե այդ կատարյալ ակնթարթներն ինչ էին: Այդպես էլ չբացատրեցիր ինձ:

– Հա, գիտեմ: Ու դու էլ ոչ մի ջանք չէիր թափում հասկանալու համար: Գերանի պես անշարժ ցցված մնում էիր կողքիս:

– Ավա՛ղ: Գիտեմ, թե դա ինչ է վրաս նստել:

– Դու լրիվ արժանի էիր այն ամեն ինչին, որ քեզ հետ եղավ, դու հենց շատ մեղավոր էիր: Նյարդայնացնում էիր ինձ քո այդ կայուն տեսքով: Այնպիսի տեսք ունեիր, ոնց որ ամեն վայրկյան ասեիր՝ տեսե՛ք, թե ես ինչ նորմալ մարդ եմ, ու ինչքան ուժ ունեիր՝ առողջություն էիր ճառագում, վրայիցդ ուղղակի բարոյական առողջություն էր թափվում:

– Բայց ախր հարյուր անգամ խնդրել եմ՝ բացատրես, թե դա...

– Հա, բայց ի՞նչ տոնով,– կատաղած ասում է,– դու բարեհաճո՛ւմ էիր հետաքրքրվել, այդքան բան: Այնպիսի իմիջիայլոց ու սիրալիր ձևով էիր հարցնում, ոնց որ այն պառավներից լինեիր, որ փոքր ժամանակ ինձ հարցնում էին, թե ինչ եմ խաղում: Գիտես,– երազկոտ ձայնով ավելացնում է,– գուցե ամենաշատը հենց քեզ էլ ատում էի:

Իր վրա ջանք է գործադրում, հավաքում է իրեն ու ժպտում. այտերը դեռ վառվում են: Անչափ գեղեցիկ է:

– Ուզում եմ քեզ բացատրել, թե դա ինչ է: Հիմա արդեն բավականաչափ ծեր եմ, որ առանց բարկանալու կարողանամ քեզ նման բարի պառավներին պատմել իմ մանկության խաղերի մասին: Դե խոսի՛ր, ի՞նչ էիր ուզում իմանալ:

– Թե դրանք ինչ էին:

– Քեզ պատմել եմ, չէ՞, արտոնյալ իրավիճակների մասին:

– Չեմ կարծում:

– Պատմել եմ,– վստահ ասում է:– Էքսում էինք, բայց հրապարակի անունն արդեն չեմ հիշում: Սրճարանի այգում էինք նստած, արևի տակ՝ նարնջագույն հովանոցների ստվերում: Մոռացել ես.

նստած լիմոնադ էինք խմում, ու ես էլ շաքարի փոշու մեջ սատկած ճանճեր գտա:

– Հա՛, հա էլի...

– Հենց այդ սրճարանում էլ հետդ խոսել եմ արտոնյալ իրավիճակների մասին: Միշլեի «Պատմության» մեծ վերահրատարակության հետ կապված եմ խոսել, որ փոքր ժամանակ ունեի: Այդ մեկը շատ ավելի մեծ էր, քան սա, ու էջերն էլ գունատ-մոխրագույն էին, ոնց որ սնկի ներսը, ու դրանցից հենց սնկի հոտ էլ գալիս էր: Հորս մահից հետո քեռի Ժոզեֆը թաթը դրեց դրանց վրա ու բոլոր հատորները տարավ: Հենց այդ օրն էլ իրեն ասացի, որ ինքը ծեր խոզ է, մայրս ինձ ծեծեց, ու ես ինձ պատուհանից գցեցի դուրս:

– Հա, հա... Պիտի որ պատմած լինես այդ «Ֆրանսիայի պատմության» մասին... Ձեղնահարկում էիր կարդում, չէ՞: Տե՛ս, հիշում եմ: Տեսա՞ր, որ արդար չէիր, երբ մի քիչ առաջ ինձ մեղադրում էիր, որ ամեն ինչ մոռացել եմ:

– Լռիր: Մի խոսքով, ինչպես հենց նոր հաջողացրիր հիշել, ես այդ ահռելի հատորները բարձրացնում էի ձեղնահարկ: Դրանց մեջ շատ քիչ նկարներ կային, երևի ամեն հատորում՝ մի երեք-չորս հատ: Բայց ամեն մեկը մի ամբողջ էջ էր զբաղեցնում, ու էջերի հետևը սպիտակ էր թողած: Դա ինձ վրա է՛լ ավելի մեծ տպավորություն էր թողնում, երբ հաշվի էի առնում, որ մյուս էջերի վրա տեքստը երկու սյունակով էին շարել, որ տեղ խնայեն: Մի բացառիկ սիրով էի սիրում այդ փորագրանկարները. բոլորը հատ-հատ անգիր գիտեի ու հատորներից որևէ մեկը վերընթերցելիս արդեն հիսուն էջ առաջ սպասում էի դրանց: Ամեն անգամ հրաշք էր թվում, երբ նորից էի տեսնում: Ու մի նուրբ պահ էլ կար. այն տեսարանը, որ դրանցում պատկերած էր լինում, երբեք ոչ մի կապ չէր ունենում կողքի էջերի հետ. այդ իրադարձությունը գտնելու համար պիտի դեռ մի երեսուն էջ էլ առաջ անցնեիր:

– Աղաչում եմ, արի կատարյալ ակնթարթների մասին խոսենք:

– Հիմա արտոնյալ իրավիճակների մասին եմ խոսում: Փորագրանկարներում հենց դրանք էին պատկերված: Ես էի դրանց անունն արտոնյալ դրել: Մտածում էի, որ հաստատ շատ կարևոր նշանակություն ունեն, եթե որոշել են հենց դրանք պատկերել

այդքա՜ն սակավաթիվ նկարներում: Բոլորի միջից հենց դրանք էին ընտրել, հասկանում ես, չնայած որ լիքը ուրիշ դրվագներ կային, որ նկարչի համար շատ ավելի հետաքրքիր կարող էին լինել, կամ էլ շատ ավելի մեծ պատմական նշանակություն ունեին: Օրինակ՝ ամբողջ 17-րդ դարի համար ընդամենը երեք նկար կար՝ Հենրի 2-րդի մահը, դուքս Գիզի սպանությունն ու Հենրի 4-րդի մուտքը Փարիզ: Ու ես որոշել էի, որ այդ իրադարձություններն ինչ-որ յուրահատուկ բնույթ ունեն: Փորագրանկարներն էլ էին հաստատում միտքս. պատկերները կոպիտ ու պարզունակ էին, ձեռքերն ու ոտքերը երբեք լավ չէին նստում իրանների վրա: Բայց դրանք լի էին վեհությամբ: Օրինակ՝ դուքս դը Գիզի սպանության ժամանակ բոլոր ականատեսները ձեռքերի ափերն առաջ էին պարզել, գլուխները շրջել էին ու իրենց սարսափն ու վրդովմունքն էին արտահայտում. շատ գեղեցիկ էր, ոնց որ իսկական երգչախումբ լիներ: Ու չկարծես, թե հետաքրքիր կամ զվարճալի մանրամասնությունները բաց էին թողած: Գետնին ընկնող պաժեր էլ կային, այս ու այն կողմ փախչող փոքրիկ շնիկներ էլ, գահի աստիճաններին նստած ծաղրածուներ էլ: Բայց այդ բոլոր դետալներն այնպիսի վեհ ու այնքան անշնորհք ձևով էին նկարված, որ կատարելապես համահունչ էին ընդհանուր պատկերին. երևի ուրիշ ոչ մի կտավ չեմ տեսել, որ այդքան ամբողջական ու միատարր լիներ: Հենց այդտեղից էլ ամեն ինչ ծնվեց:

– Արտոնյալ իրավիճակնե՞ր:

– Դե, գոնե դրանց մասին պատկերացումը: Դրանք այն իրավիճակներն էին, որ ինչ-որ մի հազվագյուտ ու թանկարժեք որակ ունեին, ոճ ունեին, եթե քեզ այդպես ավելի է դուր գալիս: Ասենք՝ երբ ութ տարեկան էի, ինձ թվում էր, որ թագավոր լինելն արտոնյալ իրավիճակ է: Կամ՝ մեռնելը: Ծիծաղում ես, բայց այնքան շատ մարդիկ կային պատկերված իրենց մահվան պահին, ու այնքան շատերն էին այդ պահին վերամբարձ խոսքեր արտասանել, որ ես անկեղծ համոզված էի, որ... մի խոսքով՝ կարծում էի, որ հոգեվարքի ժամանակ մարդը բարձրանում է ինքն իրենից վեր: Ճիշտն ասած՝ մի անգամ հանգուցյալի սենյակում լինեիր, արդեն հերիք էր. մահն արտոնյալ իրավիճակ էր, ու ինչ-որ բան

տարածվում էր դրանից ու հաղորդվում բոլոր ներկաներին: Ինչ-որ մի վեհություն: Երբ հայրս մահացավ, ինձ տարան իր սենյակ, որ մի վերջին անգամ իրեն տեսնեի: Աստիճաններով բարձրանալիս ինձ խիստ դժբախտ էի զգում, բայց և միևնույն ժամանակ ասես հարբած լինեի ինչ-որ մի կրոնական բերկրանքով. ես վերջապես հայտնվել էի արտոնյալ իրավիճակում: Հենվել էի պատին, աշխատում էի ինձ այնպես պահել, ինչպես հարկն էր: Բայց մահճակալի մոտ ծնկի եկած մայրս ու հորաքույրս իրենց հեկեկոցներով ամեն ինչ փչացնում էին:

Վերջին բառերը բարկացած է ասում, ասես դեռ տանջվում է այդ հիշողությունից: Ընդհատում է խոսքը. հայացքը մի կետի հառած, հոնքերը բարձրացրած՝ առիթից օգտվում է, որ մի անգամ էլ վերապրի այդ տեսարանը:

– Որոշ ժամանակ անց ես ավելի լայն տարածեցի այդ ամենը. նախ՝ արտոնյալ իրավիճակների թվին ավելացրի մի նոր իրավիճակ՝ սերը (ուզում եմ ասել՝ սեր անելու գործողությունը): Ի դեպ՝ եթե առաջ երբեք չէիր հասկանում, թե ինչու եմ մերժում քո... քո որոշ խնդրանքները, հիմա ամենալավ առիթն է, որ հասկանաս. ես ուզում էի ինչ-որ բան պահպանել, զերծ պահել: Հետո որոշեցի, որ արտոնյալ իրավիճակները պիտի որ շատ ավելի շատ լինեն, քան ես կարող եմ հաշվել, ու ի վերջո՝ ընդունեցի, որ դրանք անվերջ շատ են:

– Հա, բայց դրանք ի՞նչ էին ի վերջո:

– Ախր արդեն ասացի,– զարմացած ասում է,– արդեն տասնհինգ րոպե է՝ բացատրում եմ:

– Կարճ ասած՝ առաջին հերթին պետք էր, որ մարդն ինչ-որ ուժեղ կի՞րք զգար, ասենք՝ ատելությամբ կամ սիրով տարված լիներ, թե՞ պետք էր, որ իրադարձությունն արտաքուստ մեծ երևար. ուզում եմ ասել՝ այն, ինչ մենք ենք կարող տեսնել, էլի...

– Երկուսն էլ... Նայած,– պատասխանում է դժկամությամբ:

– Իսկ կատարյալ ակնթարթնե՞րը: Դրա՞նք ինչ կապ ունեն այդ ամենի հետ:

– Դրանք հետո են գալիս: Նախ նախանշաններն են հայտնվում: Հետո դանդաղ ու փառահեղ արտոնյալ իրավիճակը մտնում է

մարդկանց կյանք: Ու այստեղ արդեն հարց է առաջանում՝ ուզո՞ւմ ես արդյոք դա վերածել կատարյալ ակնթարթի:

– Հա,– ասում եմ,– հասկացա: Յուրաքանչյուր արտոնյալ իրավիճակում որոշակի գործողություններ կան, որ պիտի անես, որոշակի կեցվածքներ պիտի ընդունես, որոշակի խոսքեր ասես, իսկ մնացած բոլոր կեցվածքներն ու խոսքերը խստիվ արգելված են: Ճի՞շտ է:

– Գուցե...

– Մի խոսքով՝ իրավիճակը հումք է. այն դեռ մշակել է պետք:

– Հենց այդ է,– ասում է,– նախ պիտի գլխովին սուզված լինես ինչ-որ բացառիկ բանի մեջ ու քեզ այնպես զգաս, ասես այդտեղ կարգուկանոն ես հաստատում: Հետո, եթե բոլոր պայմանները պահպանվում են, ակնթարթը կատարյալ է դառնում:

– Կարճ ասած՝ մի տեսակ արվեստի գործ է:

– Մի անգամ էլ ես արդեն ասել,– ջղայնացած ասում է:– Ո՛չ, դա... պարտականություն էր: Դու *պարտավոր* էիր արտոնյալ իրավիճակները վերածել կատարյալ ակնթարթների: Դա բարոյականության հարց էր: Հա, ինչքան ուզում ես՝ ծիծաղիր. հենց բարոյականության:

Ես չեմ ծիծաղում:

– Լսիր,– հանկարծ ասում եմ,– ես էլ եմ ուզում սխալներս խոստովանել: Ախր ես երբեք էլ քեզ լավ չեմ հասկացել, երբեք էլ անկեղծ չեմ փորձել քեզ օգնել: Եթե միայն իմանայի...

– Շնորհակալություն, շատ շնորհակալություն,– հեգնանքով ասում է:– Հուսով եմ՝ չես սպասում, որ պիտի երախտագետ լինեմ քո այդ ուշացած զղջումների համար: Բայց դե չեմ էլ ջղայնանում քեզ վրա. քեզ երբեք ոչ մի բան հստակ չեմ բացատրել, ինձ միշտ մի տեսակ կաշկանդված էի զգում, ոչ ոքի հետ չէի կարողանում այդ մասին խոսել, նույնիսկ քեզ հետ, հատկապես քեզ հետ: Այդ պահերին միշտ ինչ-որ բան շատ կեղծ էր հնչում: Ոնց որ մոլորված լինեի: Ու չնայած դրան՝ անընդհատ այն տպավորությունն ունեի, որ ինչ կարող էի՝ արել եմ:

– Բայց ի՞նչ էր պետք անել: Ո՞նց պիտի ինձ պահեի:

– Չէ, բայց ի՞նչ հիմարն ես: Ո՞նց կարող եմ օրինակներ բերել. ամեն ինչ իրավիճակից է կախված:

– Բայց գոնե ասա՝ ինչ էիր ուզում անել:

– Չէ, չեմ ուզում: Բայց ուզո՞ւմ ես մի ուրիշ պատմություն պատմեմ: Վրաս շատ էր ազդել, երբ դեռ դպրոցում էի: Կար-չկար մի թագավոր, ով ճակատամարտում պարտվել ու գերի էր ընկել: Ու հիմա նստած էր հաղթողի ճամբարի մի անկյունում: Առջևով տանում են իր շղթայված որդուն ու դստերը: Արքան չի լացում, ոչինչ չի ասում: Հետո առջևով, էլի շղթայված, տանում են իր ծառաներից մեկին: Ու արքան սկսում է հեծեծալ ու մազերը պոկել: Մյուս օրինակները կարող ես ինքդ հորինել: Բայց դե արդեն հասկացար. որոշ դեպքերում չի կարելի լաց լինել, որովհետև արածդ տականքություն կլինի: Բայց եթե ոտքիդ գերան է ընկել, ինչ ուզում ես արա՝ տնքա, հեկեկա, ցատկոտիր մի ոտքիդ վրա: Անընդհատ ստոյիկ լինելը հիմարություն է, իզուր տեղը քեզ կմսխես:

Ժպտում է.

– Իսկ երբեմն պիտի *ավելի քան* ստոիկ լինես: Հաստատ չես հիշում, չէ՞, թե քեզ առաջին անգամ ոնց համբուրեցի:

– Այն էլ ոնց եմ հիշում,– հաղթական ձայնով ասում եմ,– Քյու Գարդենզում էինք՝ Թեմզայի ափին:

– Բայց դու այդպես էլ չիմացար, որ ես եղինջի վրա էի նստած: Փեշս վերև էր թռել, եղինջը լրիվ դաղել էր ազդրերս ու ամենաչնչին շարժումից է՛լ ավելի էր վառում: Ու այդտեղ արդեն ստոիկ լինելը չէր հերիքի: Դու ինձ բացարձակապես չէիր հուզում, շուրթերդ համբուրելու առանձնապես ոչ մի ցանկություն չունեի. այդ համբույրը, որ ուզում էի քեզ նվիրել, շատ ավելի մեծ կարևորություն ուներ, դա երաշխիք էր, համաձայնագիր: Հիմա հասկանո՞ւմ ես՝ ինչքան անպատեհ էր այդ ցավը. այդ պահին ես ազդրերիս մասին մտածելու իրավունք չունեի: Քեզնից պարզապես թաքցնելը, որ տանջվում եմ, հերիք չէր. պետք էր ընդհանրապես չտանջվել:

Հպարտությամբ ինձ է նայում, ասես ինքն էլ է դեռ զարմացած իր արարքից.

– Այդ ամբողջ քսան րոպեների ընթացքում, այդ ողջ ընթացքում, երբ ապարդյուն փորձում էիր հասնել իմ համբույրին, չնայած արդեն վաղուց որոշել էի, որ քեզ համբուրելու եմ, այդ ողջ ընթացքում, երբ ստիպում էի ինձ համոզել, որովհետև համբույրը պետք էր

բոլոր կանոնների համաձայն տրվեր, ես ինձ լրիվ ցավազրկել էի: Այնինչ Աստված է վկա, որ ես շատ զգայուն մաշկ ունեմ. բայց *ոչինչ* չէի զգում, մինչև վեր չկացանք:

Վերջ, հենց այդ է, որ կա: Ոչ արկածներ կան, ոչ էլ կատարյալ ակնթարթներ... Մենք կորցրել ենք նույն պատրանքներն ու անցել ենք նույն ճանապարհներով: Մնացածն արդեն գլխի եմ ընկնում. կարող եմ նույնիսկ խոսքը շարունակել ու ինքս ավարտել այն, ինչ իրեն մնում է ասելու:

– Ու մի խոսքով, մի օր հասկացար, որ միշտ էլ լինելու են արցունքոտ աչքերով գեղեցիկ կանայք, կամ ինչ-որ կարմրահեր մեկը, կամ էլ ինչ-որ մի ուրիշ բան, որ կփչացնի քո ստեղծած ամբողջ պատկերը, չէ՞:

– Բնականաբար,– ասում է առանց խանդավառության:

– Հարցը դա՞ չէր:

– Ա՛հ: Գիտե՞ս, ինչ-որ կարմրահեր մեկի անշնորհքությունների հետ ի վերջո գուցեև կկարողանայի համակերպվել: Ի վերջո ինձ միշտ էլ հետաքրքրել է, թե ոնց են ուրիշներն իրենց դերը խաղում... Չէ, հարցն ավելի շուտ այն էր, որ...

– Որ արտոնյալ իրավիճակներ չկա՞ն:

– Հենց այդ է: Ես կարծում էի՝ ատելությունը, սերը կամ մահն իջնում են մեզ վրա այնպես, ինչպես կրակի լեզուները Հոգեգալստյան օրը: Կարծում էի, որ կարելի է ատելություն կամ մահ ճառագել: Ո՞նց էի սխալվում: Հա, ախր ես իրոք հավատում էի, որ գոյություն ունի «Ատելություն», որ գալիս-իջնում է մարդկանց վրա ու մարդկանց բարձրացնում է իրենցից վեր: Բայց իրականում ամեն ինչ միայն ինձնից է՝ ես ատում եմ, ես էլ սիրում: Իսկ այդ եսը միշտ նույնն է, նույն խմորն է, որ անընդհատ ձգվում է ու ձգվում... Ու բոլորն այնքան նման են իրար, որ նույնիսկ զարմանում ես՝ ոնց է մարդկանց մտքով անցել ինչ-որ անուններ ու տարբերություններ հորինել:

Լրիվ ինձ նման է մտածում: Ինձ արդեն թվում է, որ մենք իրարից երբեք չենք բաժանվել:

– Ուշադիր լսիր,– ասում եմ,– արդեն քանի րոպե է՝ անընդհատ մի բան եմ մտածում, ու դա ինձ շատ ավելի է դուր գալիս, քան ուղեսյան դերը, որ մեծահոգաբար տվել ես ինձ. մտածում եմ, որ միասին

ու նույն կերպ ենք փոխվել: Ու գիտե՞ս, դա ինձ ավելի հաճելի է, քան թե տեսնելը՝ ոնց ես անընդհատ ավելի ու ավելի հեռանում, ու դատապարտված մնալ անվերջ նշելու քո մեկնակետը: Այն ամենը, ինչ պատմեցիր, ես էի ուզում քեզ պատմել, ճիշտ է՝ ուրիշ բառերով: Մենք մեր ժամանման կետում հանդիպել ենք իրար: Բառեր չեմ գտնում ասելու՝ ինչքան ուրախ եմ դրա համար:

– Հա՞,– ասում է քնքուշ, բայց կամակոր տեսքով,– բայց ես ամեն դեպքում կգերադասեի, որ դու չփոխվեիր. այդպես ավելի հարմար է: Ես քեզ նման չեմ, ինձ համար տհաճ է իմանալը, որ ինչ-որ մեկը նույն բաներն է մտածել, ինչ ես: Չնայած դու, մեկ է, հաստատ սխալվում ես:

Պատմում եմ, թե հետս ինչ է կատարվել, խոսում եմ գոյության մասին՝ երևի մի քիչ շատ երկարացնելով: Կլանված, աչքերը լայն բաց, հոնքերը բարձրացրած լսում է:

Երբ վերջացնում եմ, թեթևացած տեսք է ընդունում:

– Հա, բայց դու բացարձակապես նույն բանը չես մտածում, ինչ ես: Դու հիմա բողոքում ես, որովհետև ուզում ես, որ շուրջդ ամեն ինչ ծաղիկների պես դասավորվի ու փնջվի, իսկ դու քեզ մատդ մատիդ խփելու նեղություն էլ չտաս: Իսկ ես երբեք այդքան շատ բան չեմ ուզել. ես գործել էի ուզում: Գիտես, երբ խաղում էինք, իբր արկածախնդիրներ ենք, դու միշտ այն մեկն էիր, ում գլխին արկածներ էին գալիս, իսկ ես այն մեկն էի, ով այդ արկածները բերում էր: Ասում էի. «Ես գործողության մարդ եմ»: Չես հիշո՞ւմ: Դե ինչ, իսկ հիմա պարզապես կասեմ. անհնար է գործողության մարդ լինել:

Երևի տեսքիցս այնքան էլ չի երևում, որ կարողացել է ինձ համոզել, որովհետև սկսում է տաքանալ ու ավելի մեծ եռանդով է շարունակում.

– Համ էլ լիքը ուրիշ բաներ էլ կան, որ քեզ չեմ ասել, թե չէ ստիպված պիտի շատ երկար բացատրեի: Օրինակ՝ նույնիսկ այն պահերին, երբ գործում էի, պիտի կարողանայի ինքս ինձ ասել, որ իմ արարքները կարող են... ճակատագրական հետևանքներ ունենալ: Չեմ կարողանում լավ բացատրել...

– Ու ոչ էլ կարիք կա,– բավականին մանրախնդիր տեսքով ասում եմ,– ես դա էլ եմ մտածել:

Թերահավատորեն ինձ է նայում:

– Քեզ որ լսեմ, ամեն ինչի մասին լրիվ նույն բանն ես մտածել, ինչ ես. շատ զարմանալի է:

Չեմ կարող համոզել, ընդամենը ավելի կբարկացնեմ: Ձայնս կտրում եմ: Ուզում եմ իրեն գիրկս առնել:

Հանկարծ տագնապահար տեսքով ինձ է նայում.

– Դե եթե դու էլ ես այդ ամեն ինչի մասին մտածել, ասա՝ ի՞նչ կարող ենք անել:

Գլուխս կախում եմ:

– Ես... ես կենդանի դիակ եմ,– ծանր կրկնում է Աննին:

Ի՞նչ կարող եմ ասել: Մի՞թե ես գիտեմ, թե մենք ինչու ենք ապրում: Ես իր նման հուսահատ չեմ, որովհետև երբեք էլ առանձնապես մի մեծ բան չեմ ակնկալել: Ավելի շուտ զարմացած եմ այս կյանքից, որ ինձ տրված է... տրված է *ոչ մի բանի* համար: Գլուխս չեմ բարձրացնում, չեմ ուզում այս պահին Աննիի դեմքը տեսնել:

– Ճամփորդում եմ,– շարունակում է մռայլ ձայնով,– նոր եմ Շվեդիայից վերադարձել: Ութ օր կանգ առա Բեռլինում: Այն մեկը, ով ինձ պահում է...

Գրկեմ... Ինչի՞ համար: Մեկ է, ոչ մի բանով չեմ կարող օգնել: Ինքն էլ է ինձ նման միայնակ:

Արդեն ավելի ուրախ ձայնով ասում է.

– Ի՞նչ ես քթիդ տակ մռթմռթում:

Հայացքս բարձրացնում եմ: Քնքշորեն ինձ է նայում:

– Հեչ: Բան էի մտածում:

– Օ՛, խորհրդավոր անձնավորություն: Դե կամ բարձր ասա, կամ լռիր. ընտրիր, երկուսից մեկը:

Պատմում եմ «Ճամփորդների ռանդևուի» ու հին ռեգթայմի մասին, որ ամեն անգամ խնդրում եմ դնել, այն տարօրինակ երջանկության մասին, որ լսելիս զգում եմ:

– Մտածում էի՝ գուցե այդտե՞ղ է հնարավոր գտնել կամ գոնե փնտրել...

Ոչինչ չի պատասխանում, ինձ թվում է՝ ասածս իրեն այնքան էլ չի հետաքրքրել:

Բայց ամեն դեպքում մի քիչ հետո շարունակում է խոսել, ու արդեն չգիտեմ՝ իր սեփական մտքերն է զարգացնում, թե իմ ասածներին է պատասխանում:

– Հա, կտավներից ու արձաններից օգուտ չկա. դրանց գեղեցկությունն *իմ առջև* է: Բայց այ երաժշտությունը...

– Բայց ախր թատրոնում...

– Թատրոնում ի՞նչ: Հիմա էլ որոշել ես արվեստի բոլոր տեսակները հերթով թվե՞լ:

– Մի ժամանակ ասում էիր, որ ուզում ես թատրոնում խաղալ, որովհետև բեմի վրա պարտավոր ես կատարյալ ակնթարթներ իրականացնել:

– Հա, ու հենց իրականացնում էի, բայց ուրիշների համար: Իսկ ես փոշու մեջ էի, միջանցիկ քամու ու կուրացնող լույսերի տակ, ստվարաթղթե դեկորացիաների միջև: Խաղընկերս էլ սովորաբար Թորնդայկն էր: Պիտի որ Ջովենթ Գարդենում տեսած լինես ոնց է խաղում: Ամեն անգամ վախենում էի, որ չեմ դիմանա ու հենց դեմքին ծիծաղից կպայթեմ:

– Ու քո դերերը քեզ երբեք չեն գրավե՞լ:

– Մի քիչ, երբեմն-երբեմն. շատ՝ երբեք: Մեզ համար ամենակարևոր բանը հենց մեր դիմացի այդ մութ անդունդն էր, որի խորքում ինչ-որ մարդիկ էին նստած, ում մենք չէինք տեսնում. այ հենց իրենց համար էլ մենք իրականում խաղում էինք այդ կատարյալ ակնթարթը: Բայց դե, հասկանում ես, իրենք դրա մեջ չէին ապրում. ամեն ինչ ծավալվում էր իրենց դիմաց: Ու քեզ ինչ է, թվում է՝ մենք՝ դերասանն՝ներս էինք դրա մեջ ապրում: Չէ, ու վերջիվերջո այդ կատարյալ պահը ոչ մի տեղ էլ չկար՝ բեմեզրի ո՛չ այս կողմում էր, ո՛չ էլ այն, գոյություն չուներ: Եվ սակայն բոլորը դրա մասին էին մտածում: Դե ես էլ, ճուտիկս, ոնց հասկանում ես,– ասում է մեղրածոր, գրեթե գռեհիկ տոնով,– ամեն ինչ ուղարկեցի գրողի ծոցը:

– Իսկ ես փորձում էի իմ այդ գիրքը գրել...

Ինձ ընդհատում է.

– Ես անցյալում եմ ապրում: Մտքումս վերստեղծում եմ այն ամենը, որ հետս պատահել է, ու հետո սկսում եմ վերադասավորել: Հեռվից ամեն ինչ այնքան էլ ցավոտ չի թվում, ու արդեն գրեթե

կարողանում ես հավատալ: Մեր այս ամբողջ պատմությունն էլ է բավականին գեղեցիկ: Մի թեթև շտկում եմ, ու դառնում է կատարյալ ակնթարթների մի շարան: Հետո փակում եմ աչքերս ու փորձում եմ պատկերացնել, որ մեջն եմ ապրում: Ուրիշ գործող անձինք էլ ունեմ: Ուղղակի պիտի կարողանաս կենտրոնանալ: Գիտե՞ս՝ վերջերս ինչ էի կարդում: Լոյոլայի[1] «Հոգևոր վարժությունները»: Ինձ շատ օգնեց: Մի այսպիսի ձև կա. նախ շարում ես դեկորացիաները, հետո կյանքի ես կոչում գործող անձանց: Ու ի վերջո՝ կարողանում ես *տեսնել*,– ավելացնում է գրեթե մոլագարի տեսքով:

– Ինձ դա բացարձակապես հերիք չէր լինի,– ասում եմ:

– Քեզ թվում է՝ ի՞նձ է հերիքում:

Մի պահ լուռ ենք մնում: Մթնում է. արդեն հազիվ եմ նշմարում դեմքի գունատ բիծը: Սև հագուստը ձուլվում է սենյակ լցված խավարի հետ: Մեքենայաբար վերցնում եմ բաժակս, որտեղ դեռ մի քիչ թեյ է մնացել, ու մոտեցնում եմ շուրթերիս: Թեյը սառն է: Ուզում եմ ծխել, բայց չեմ համարձակվում: Ցավագին զգում եմ, որ մենք իրար ասելու էլ ոչ մի բան չունենք: Դեռ երեկ այնքա՞ն հարցեր ունեի իրեն տալու. ո՞ւր էր այսքան ժամանակ, ի՞նչ էր անում, ո՞ւմ է հանդիպել: Բայց այդ ամենն ինձ համար հետաքրքիր կլիներ միայն այն դեպքում, եթե Աննին առաջվա պես դեռ կարողանար ամբողջ հոգով տրվել դրան: Իսկ հիմա հետաքրքրությունս մարել է. այդ բոլոր երկրները, բոլոր քաղաքները, որտեղ ինքը եղել է, բոլոր տղամարդիկ, ովքեր իրեն սիրահետել են, ու ում գուցե սիրել է, այդ ամեն ինչն իրեն էլ չի գրավել, հոգու խորքում ինքն այդ ամեն ինչի հանդեպ կատարելապես անտարբեր է եղել. արևի հպանցիկ շողքեր՝ մութ ու սառը ծովի մակերեսին: Աննին իմ դիմաց է, մենք չորս տարի է՝ իրար չենք տեսել ու իրար ասելու էլ ոչ մի բան չունենք:

– Իսկ հիմա,– հանկարծ ասում է Աննին,– դու պիտի գնաս: Մեկին սպասում եմ:

– Սպասում ես...

– Չէ, մի գերմանացի է, նկարիչ:

---

[1] 16-րդ դարի իսպանացի աստվածաբան, ճիզվիտների միաբանության հիմնադիրը *(ծ. թ.)*:

Սկսում է ծիծաղել: Խավար սենյակում այդ ծիծաղը տարօրինակ է հնչում:

– Ի դեպ, խնդրեմ, ահա մեկը, ով մեզ նման չէ. դեռ նման չէ: Ինքը գործում է, մսխում է ինքն իրեն:

Դժկամությամբ վեր եմ կենում:

– Քեզ էլ ե՞րբ կտեսնեմ:

– Չգիտեմ, վաղը երեկոյան Լոնդոն եմ գնում:

– Դյեպո՞վ:

– Հա, իսկ հետո երևի գնամ Եգիպտոս: Գուցե եկող ձմեռ նորից Փարիզով անցնեմ. քեզ կգրեմ:

– Վաղն ամբողջ օրն ազատ եմ,– երկչոտ ասում եմ Աննիին:

– Հա, բայց ես լիքը գործեր ունեմ,– պատասխանում է չոր ձայնով:- Չէ, չեմ կարող քեզ տեսնել: Քեզ Եգիպտոսից կգրեմ: Ուղղակի հասցեդ տուր:

– Լավ:

Կիսախավարի մեջ ինչ-որ ծրարի պատառի վրա խզբզում եմ հասցես: «Պրենտանիա» հյուրանոցում պիտի խնդրեմ, որ երբ Բուվիլից գնամ, նամակներս ուղարկեն իմ նոր հասցեին: Հոգուս խորքում գիտեմ, որ Աննին ինձ չի գրի: Այս անգամ գուցե տասը տարի հետո իրեն կրկին տեսնեմ: Գուցե հիմա վերջին անգամ եմ տեսնում: Ոչ թե պարզապես ընկճված եմ, որ լքում եմ Աննիին, այլ սոսկալի վախ եմ զգում, որ էլի վերադառնալու եմ իմ մենակությանը:

Վեր է կենում. դռան մոտ թեթև համբուրում է շուրթերս:

– Ուզում եմ շուրթերդ հիշել,– ասում է ժպիտով:– Պիտի հիշողություններս թարմացնեմ իմ «Հոգևոր վարժությունների» համար:

Ձեռքից բռնում եմ ու քաշում մոտիկ: Չի դիմադրում, բայց դեմքը շրջում է:

– Չէ: Ինձ դա այլևս չի հետաքրքրում: Չի կարելի նորից սկսել... Ու ի դեպ, եթե հարցը մարդկանցից օգուտ քաղելն է, առաջին իսկ պատահած սիրունատես տղան նույնքան արժի, ինչքան դու:

– Լավ, բա հիմա ի՞նչ ես անելու:

– Ախր արդեն ասացի. գնում եմ Անգլիա:

– Չէ, ուզում եմ ասել...

– Ոչ մի բա՛ն:

Ձեռքերը դեռ բաց չեմ թողել, կամաց ասում եմ.

– Ուրեմն քեզ նորից գտա, որ էլի լքեմ:

Հիմա արդեն հստակ տեսնում եմ դեմքը: Հանկարծ դժգույն ու ձգված է դառնում: Ծեր կնոջ դեմք է, զարհուրելի մի դեմք. համոզված եմ, որ այս մեկն ինքը չէր ուզում ցույց տալ. հայտնվել է անկախ իր կամքից ու գուցե հենց կամքին հակառակ:

– Չէ,– դանդաղ ասում է,– չէ: Դու ինձ նորից չես գտել:

Ձեռքերն ազատում է: Բացում է դուռը: Միջանցքը հեղեղված է լույսով:

Աննին սկսում է ծիծաղել:

– Խե՜ղճ: Բախտը չի բերում: Կյանքում առաջին անգամ իր դերը լավ է խաղում, ու ոչ մի շնորհակալություն: Դե վերջ, գնա՛:

Լսում եմ՝ ինչպես է դուռը հետևիցս փակվում:

Կիրակի

Առավոտյան նայեցի գնացքների ժամանակացույցը. եթե Աննին չէր խաբում, ուրեմն մեկնում է հինգն անց երեսունութին Դյեպի գնացքով: Բայց գուցե իր այդ տղամարդն իրեն մեքենայո՞վ է տանելու: Ամբողջ առավոտ թափառում էի Մենիլմոնտանի փողոցներով, հետո՝ կառամատույցներում: Ընդամենը մի քանի քայլ, մի քանի պատ էր ինձ բաժանում Աննիից: Հինգն անց երեսունութ մեր երեկվա զրույցը հիշողություն կդառնա, ու պարարտ կինը, ում շուրթերը թեթև հպվեցին շուրթերիս, անցյալում կմիանա Լոնդոնի ու Մեկնեսի նիհարիկ աղջկան: Բայց քանի դեռ Աննին այստեղ էր, քանի դեռ հնարավոր էր իրեն տեսնել, համոզել, ընդմիշտ տանել ինձ հետ, ոչինչ դեռ անցյալում չէր: Ինձ դեռ մենակ չէի զգում:

Ուզում էի դադարել Աննիի մասին մտածելուց, որովհետև մարմինն ու դեմքը պատկերացնելիս ամեն անգամ ընկնում էի ծայրահեղ նյարդային վիճակի մեջ. ձեռքերս ցնցվում էին, մարմնովս սառը դող էր անցնում: Սկսեցի թերթել բուկինիստների կրպակների գրքերն ու հատկապես անպարկեշտ հրատարակությունները, որովհետև ամեն դեպքում դրանք կարողանում են շեղել:

Երբ Օրսեյի կառամատույցի ժամացույցը ժամը հինգը խփեց, դեռ «Ճիպոտով բժիշկը» վերնագրով գրքույկի նկարներն էի նայում: Բավականին միատեսակ նկարներ էին. մեծ մասի մեջ մորուքավոր մեկը մտրակ էր թափ տալիս ահռելի ու մերկ գավակների վրա: Հենց հասկացա, որ արդեն հինգն է, գիրքը շպրտեցի մյուսների վրա, ինձ գցեցի տաքսու մեջ ու սլացա Սեն Լազար կառամատույց:

Մի քսան րոպե զբոսնեցի կառամատույցի վրա, հետո տեսա իրենց: Աննիի հագին հաստ մորթե մուշտակ էր, որ իրեն տիկնոջ տեսք էր տալիս: Ու քողով էր: Տղամարդն ուղտի բրդից վերարկու էր հագել: Թուխ մաշկով էր, դեռ երիտասարդ, շատ բարձրահասակ ու շատ գեղեցիկ: Հաստատ արտասահմանցի էր, բայց անգլիացի չէր. կարող է եգիպտացի լիներ: Առանց ինձ տեսնելու բարձրացան գնացք: Չէին խոսում: Հետո տղամարդն իջավ ու թերթ գնեց: Աննին իջեցրեց կուպեի պատուհանն ու ինձ տեսավ: Երկար ինձ էր նայում առանց զայրույթի, ոչինչ չարտահայտող աչքերով: Հետո տղամարդն էլ բարձրացավ վագոն, ու գնացքը շարժվեց: Այդ պահին հստակ աչքիս առաջ եկավ Պիկադիլիի այն ռեստորանը, ուր մի ժամանակ ընթրում էինք, հետո ամեն ինչ վերացավ: Սկսեցի քայլել: Երբ զգացի, որ հոգնել եմ, ինչ-որ սրճարան մտա ու քնեցի: Մատուցողն արթնացրեց, ու հիմա դեռ քունը գլխիս եմ սա գրում:

Կեսօրի գնացքով հետ կգնամ Բուվիլ: Երկու օրը լրիվ հերիք է, որ ճամպրուկներս հավաքեմ ու բանկում գործերս կարգավորեմ: Կարծում եմ՝ «Պրենտանիա» հյուրանոցում կուզեն, որ մի տասնհինգ օրվա համար էլ վճարեմ, որովհետև իրենց չէի զգուշացրել, որ գնում եմ: Ու նաև պիտի վերցրածս գրքերը վերադարձնեմ գրադարան: Այսպես թե այնպես՝ մինչ շաբաթվա վերջը վերադառնում եմ Փարիզ:

Ու ի՞նչ կտա ինձ այդ փոփոխությունը: Քաղաքը միշտ էլ քաղաք է. մեկը գետով բաժանված է երկու մասի, մյուսը շրջափակված է ծովով, բայց մնացած ամեն ինչով բոլորն էլ նույնն են: Մարդիկ որևէ լերկ, անպտուղ հող են ընտրում ու սկսում են վրան ահռելի ու սնամեջ քարեր շարել: Այդ քարերի մեջ հոտեր են պարփակված, օդից ծանր հոտեր: Երբեմն այդ հոտերը պատուհանից լցվում են դուրս ու մնում փողոցներում, մինչև քամին սրբի: Պարզ եղանակին աղմուկները քաղաքի մի ծայրից մտնում, մյուսից դուրս են գալիս՝ անցնելով

բոլոր պատերի միջով, իսկ երբեմն էլ մնում ու պտտվում են արևից շիկացող ու սառնամանիքին ճաքճքող այդ քարերի մեջ:

Վախենում եմ քաղաքներից: Բայց դրանցից դուրս գալ էլ չի կարելի: Եթե շատ հեռանաս, կընկնես Բուսականության օղակի մեջ: Բուսականությունը կիլոմետրերով տարածվել ու հիմա դանդաղ սողում է դեպի քաղաքները: Ու սպասում է: Երբ քաղաքը մեռնի, Բուսականությունը կներխուժի, կմագլցի քարերի վրա, կճզմի, կթափանցի դրանց մեջ ու կպատառոտի իր երկար, սև շոշափուկներով. կկուրացնի բոլոր անցքերն ու ամեն տեղ կկախի իր կանաչ թաթերը: Քանի դեռ քաղաքները ողջ են, պիտի մնաս ներսում. չի կարելի միայնակ խորանալ դռանը չոքած այդ գիսախռիվ թավուտի մեջ. թող իր համար առանց վկաների ալեկոծվի ու ճռռա: Քաղաքներում, եթե գիտես քեզ ոնց պահես ու ոնց ընտրես այն ժամերը, երբ գազանները մարսում են իրենց սնունդը կամ քնած են օրգանական աղբի կույտերի տակ թաղված իրենց որջերում, կարող ես հանդիպել միայն հանքանյութերի, որ ամենաքիչ սու՝ ն են գոյություն ունեցող ամեն ինչից:

Վերադառնում եմ Բուվիլ: Բուսականությունը միայն երեք կողմից է պաշարել Բուվիլը: Չորրորդ կողմում ահռելի անդունդ է՝ լցված ինքն իրեն շարժվող սև ջրով: Տների միջև քամին է սուլում: Հոտերն այստեղ ավելի քիչ են դրսում մնում, քան ուրիշ քաղաքներում. քամին քշում է ծովի վրա, ու դրանք մառախուղի ծվենների պես սահում են ջրի մակերեսին: Անձրև է գալիս: Չորս կողմից ցանկապատված տարածքում մարդիկ թույլ են տվել, որ բույսեր աճեն: Բայց դրանք կռտած, ընտելացրած բույսեր են, այնքան են ճարպակալել, որ արդեն անվտանգ են: Ահռելի սպիտակավուն տերևներ ունեն, որ ականջների նման ներքև են կախված: Երբ շոշափում ես, ոնց որ կռճիկ լինի: Երկնքից թափվող այդ ամբողջ ջրի պատճառով Բուվիլում ամեն ինչ սպիտակ ու ճարպոտ է: Ես վերադառնում եմ Բուվիլ: Սոսկալի է:

Կտրուկ արթնանում եմ: Կեսգիշեր է: Աննին արդեն վեց ժամ է՝ Փարիզից դուրս է եկել: Նավն արդեն ծովում է: Աննին իր նավախցիկում քնած է, իսկ տախտակամածի վրա այդ թխամաշկ, գեղեցիկ տղամարդը սիգարետ է ծխում:

1916.ին տ

Երեքշաբթի, Բուվիլում

Ուրեմն սա՞ է ազատությունը: Ներքևում այգիները վիատ իջնում են դեպի քաղաք, ու ամեն մի պարտեզում մի տուն կա: Տեսնում եմ ծանր ու անշարժ ծովը, Բուվիլն եմ տեսնում: Լավ եղանակ է:

Ազատ եմ. կյանքս այլևս ոչ մի իմաստ չունի, փորձածս բոլոր իմաստները ձախողվել են, իսկ ուրիշ իմաստներ պատկերացնել այլևս չեմ կարող: Դեռ բավական երիտասարդ եմ, դեռ բավարար ուժ ունեմ վերսկսելու համար: Բայց ի՞նչը վերսկսեմ: Հիմա նոր եմ հասկանում, թե իմ ամենաուժեղ սարսափների ու սրտխառնոցների ժամանակ քանի՛ անգամ եմ հուսացել, որ Աննին ինձ կփրկի: Անցյալս մեռած է, մարկիզ դը Ռոլբոնը մեռած է, իսկ Աննին վերադարձավ, միայն որպեսզի ինձ զրկի ցանկացած հույսից: Ես մենակ եմ պարտեզներով շրջապատված այս սպիտակ փողոցում: Մենակ ու ազատ: Բայց այս ազատությունը մի քիչ մահվան է նման:

Այսօր կյանքս վերջանում է: Վաղն արդեն լքած կլինեմ ոտքերիս տակ փռված այս քաղաքը, ուր այնքա՜ն երկար եմ ապրել: Քաղաքը հիշողությանս մեջ կդառնա ընդամենը անվանում՝ կարճլիկ, բուրժուական, մաքուր ֆրանսիական անվանում՝ շատ ավելի անշուք, քան, օրինակ, Ֆլորենցիան կամ Բաղդադը: Կգա մի օր, երբ ինքս ինձ կհարցնեմ. «Լավ, բայց ախր ինչո՞վ էի ամբողջ օրը զբաղվում, երբ Բուվիլում էի»: Ու այս արևից, այս ցերեկվանից ոչինչ չի մնա, նույնիսկ ոչ մի հիշողություն:

Ամբողջ կյանքս հետևումս է: Տեսնում եմ կյանքս ամբողջությամբ, տեսնում եմ, թե ինչ ձև ունի, տեսնում եմ այն բոլոր հանդարտ շարժումները, որ ինձ հասցրել են այստեղ: Ասելու բան էլ չկա. պարտված խաղ է, այսքան բան: Երեք տարի առաջ հանդիսավոր մտա Բուվիլ: Առաջին ձեռքս տանուլ տվեցի: Որոշեցի երկրորդը խաղալ ու դա էլ տանուլ տվեցի, հետո պարտվեցի ամբողջ խաղը: Ու միաժամանակ հասկացա, որ միշտ ես պարտվում: Միայն Տականքներն են կարծում, թե հաղթել են: Սրանից հետո Աննիի նման եմ անելու. ապրելու եմ կենդանի դիակի պես: Ուտել, քնել: Քնել, ուտել: Դանդաղ, հանդարտ գոյություն ունենալ՝ ծառերի պես, ջրափոսի պես, տրամվայի կարմիր նստարանների պես:

Սրտխառնոցը թողնում է, որ մի քիչ շունչ քաշեմ: Բայց գիտեմ, որ հետ է գալու. դա իմ սովորական վիճակն է: Ուղղակի այսօր մարմինս չափազանց հոգնած է, որ կարողանա դրան դիմանալ: Հիվանդներն էլ են երբեմն երջանիկ թուլության պահեր ունենում, երբ կարողանում են մի քանի ժամով մոռանալ իրենց ցավի մասին: Հիմա ձանձրանում եմ, այսքան բան: Մեկ-մեկ այնքան ուժեղ եմ հորանջում, որ այտերովս արցունքներ են հոսում: Խոր, խորագույն ձանձրույթ է, գոյության ամենախորքային բնույթը, հենց այն նյութը, որից ես կազմված եմ: Չէ, թևաթափ չեմ լինում, հակառակը. առավոտյան լողացել, սափրվել եմ: Բայց երբ վերհիշում եմ անձնական խնամքի այդ բոլոր փոքրիկ գործողությունները, չեմ հասկանում՝ ոնց կարող էի դրանք անել. ախր շատ անիմաստ են: Հաստատ սովորության ուժն է իմ փոխարեն ամեն ինչ արել: Սովորությունները որ հաստատ չեն մեռել, դրանք դեռ իրար են խառնվում, շարունակում են հանդարտ ու նենգորեն դավեր նյութել, դայակների պես լողացնում ու չորացնում են ինձ, շորեր են հագցնում: Գուցե հենց իրենք էլ ինձ բերել են այս բլրի գագաթը: Արդեն չեմ էլ հիշում՝ ոնց եմ եկել: Պիտի որ Դոտրիի աստիճաններով բարձրացած լինեմ. չեմ էլ պատկերացնում՝ ոնց եմ հատ-հատ հաղթահարել բոլոր երկու հարյուր աստիճանները: Դրանից ավելի դժվար բան մեկ էլ պատկերացնելն է, որ մի քիչ հետո նույն ճամփով հետ եմ իջնելու: Չնայած մեկ է, գիտեմ. շուտով հայտնվելու եմ Կոտո Վեր բլրի ստորոտում, գլուխս բարձրացնելու եմ ու տեսնեմ, թե ինչպես են հեռվում վառվում ահա այս տների պատուհանները, որ հիմա այնքան մոտ են: Հեռվում: Գլխավերևումս: Իսկ այս պահը, որից հիմա չեմ կարողանում պոկվել, որ ինձ կաշկանդում ու շրջափակում է չորս կողմից, այս պահը, որից ես կազմված եմ, աղոտ երազ է դառնալու:

Նայում եմ ներքև՝ Բուվիլի գորշ կայծերին: Ասես արևի տակ փայլող խեցիների կամ թեփուկների կույտ լինի, ոսկորների փշուրներ ու խիճ: Փլատակների մեջ թաղված ապակու կամ փայլարի բեկորները մերթընդմերթ թույլ առկայծում են: Խեցիների արանքներով հոսող այս բոլոր առվակները, խրամատներն ու ակոսները մի ժամից փողոցներ կդառնան, ու ես կքայլեմ այդ փողոցներով՝ պատերի

միջև: Ես էլ կլինեմ այն փոքրիկ, սև կերպարանքներից մեկը, ում հիմա հազիվ եմ նշմարում Բուլիբե փողոցում:

Ինչ հեռու եմ ինձ զգում իրենցից այս բլրի գագաթին: Ոնց որ ուրիշ տեսակի պատկանելիս լինեմ: Իրենք աշխատանքային օրից հետո դուրս են գալիս գրասենյակներից, գոհ տեսքով աչքի են անցկացնում շենքերն ու պուրակները, մտածում են, որ սա *իրենց* քաղաքն է՝ «մեր գեղեցիկ բուրժուական քաղաքը»: Ոչնչից չեն վախենում, զգում են, որ տանն են: Ուրիշ ջուր չեն տեսել, բացի ծորակներից հոսող ընտելացված ջրից, ուրիշ լույս չեն տեսել, բացի անջատիչը սեղմելուն պես լամպերից հորդող լույսից, ուրիշ ծառ չեն տեսել, բացի նեցուկներին հենված խառնածին, պատվաստած ծառերից: Օրական հարյուր անգամ իրենք իրենց ապացուցում են, որ ամեն ինչ հստակ մեխանիզմով է տեղի ունենում, որ աշխարհը ենթարկվում է հաստատուն ու անփոփոխ օրենքների: Բոլոր մարմինները դատարկության մեջ ընկնում են նույն արագությամբ, Հանրային զբոսայգին ձմռանն ամեն օր փակվում է ժամը տասնվեցին, իսկ ամռանը՝ ժամը տասնութին, արծիծը հալվում է 335 աստիճանում, վերջին տրամվայը քաղաքապետարանի մոտից շարժվում է ժամը քսաներեք անց հինգին: Իրենք հավասարակշռված են, մի քիչ մռայլ, մտածում են Վաղվա օրվա մասին, այսինքն, կարճ ասած, հերթական այսօրվա. քաղաքներն ընդամենը մեկ օր ունեն, որ ամեն առավոտ վերսկսվում է լրիվ նույն կերպ: Հա, կիրակիներն են մի քիչ փորձում զուգել-զարդարել ու վերջ: Տխմարնե՛ր: Զզվելս գալիս է, որ մտածում եմ՝ պիտի նորից նայեմ դրանց բութ, ինքնագոհ դեմքերին: Օրենքներ են ընդունում, պոպուլիստական վեպեր են գրում, ամուսնանում, նույնիսկ այնպիսի ծայրահեղ հիմարության են հասնում, որ երեխաներ են ունենում: Եվ սակայն մեծ ու թափառող բնությունն արդեն սողոսկել է իրենց քաղաք, թափանցել ամենուր՝ իրենց տների մեջ, գրասենյակների մեջ, նույնիսկ հենց իրենց մեջ: Ու չի շարժվում, հանդարտ սպասում է, իսկ իրենք արդեն բերնեբերան լի են բնությամբ, բնություն են շնչում ու չեն տեսնում, իրենց թվում է, թե բնությունը դրսում է՝ քաղաքից քսան լյո հեռու: Բայց ես *տեսնում եմ* բնությունը, *տեսնում եմ*... Ես գիտեմ, որ իր հնազանդությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ծուլություն, գիտեմ, որ ինքն օրենքներ չունի. այն, ինչ

մարդկանց կայունություն է թվում... Ընդամենը սովորություններ են, ու ինքը կարող է հենց վաղն էլ բոլոր սովորությունները փոխել:

Իսկ եթե ինչ-որ բան պատահի՞: Եթե հանկարծ բնությունը սկսի տեղից շարժվե՞լ: Մարդիկ հանկարծ կնկատեն, որ բնությունն այստեղ է՝ իրենց կողքին, ու սրտները կճաքի: Ի՞նչ օգուտ կլինի այդ ժամանակ իրենց բոլոր ամբարտակներից ու պատնեշներից, իրենց բոլոր էլեկտրակայաններից, հալոցներից ու ցցահար մեքենաներից: Ախր երբ ասես՝ կարող է պատահել, նույնիսկ հենց հիմա. բոլոր նախանշանները կան: Ասենք՝ որևէ ընտանիքի հայր մի օր զբոսնելիս կտեսնի, թե ինչպես փողոցով ինչ-որ կարմիր լաթի կտոր է գալիս իր կողմը՝ ասես քամու բերանն ընկած: Ու երբ լաթը կողքին կլինի, կտեսնի, որ փոշու մեջ կորած ու նեխած մսեղիքի կտոր է, որ սողալով ու ցատկոտելով քարշ է գալիս փողոցներով. բզկտված մարմնի պատառ, որ թավալվում է կեղտաջրերի մեջ ու բաբախելով արյան շիթեր է ցայտեցնում չորս կողմը: Կամ օրինակ՝ ինչ-որ մայր կնայի իր զավակի այտին ու կասի. «Արի տեսնեմ, վրադ դռուրս է տվել», ու կտեսնի, թե ինչպես է այտը փքվում, ճաք տալիս, բացվում, ու ճեղքի խորքում հայտնվում է երրորդ՝ ծիծաղող աչքը: Կամ ամբողջ մարմնի վրա ինչ-որ նուրբ շոշափյուն կզգան, ինչպես գետի մեջ եղեգներն են շոյում լողորդներին: Ու կհասկանան, որ իրենց հագուստները կենդանացել են: Իսկ մեկ ուրիշը կզգա, որ ինչ-որ բան ներսից քերծում է բերանը: Կմոտենա հայելուն, բերանը կբացի ու կտեսնի, որ լեզուն վերածվել է ահռելի հազարոտնուկի, ոտքերն է խլրտացնում ու ճանկռում է քիմքը: Կուզենա թքել դուրս, բայց հազարոտնուկն արդեն իր մարմնի մի մասը կլինի, ստիպված պիտի լինի ձեռքերով պոկել: Ու լիքը բաներ կհայտնվեն, որոնց համար հարկավոր կլինի նոր անուններ գտնել, օրինակ՝ քարե աչք, ահռելի եռաեղջյուր ձեռք, ոտնաթաթ-հենակ, ծնոտ-սարդ: Ու նա, ով պառկել է քնելու իր տաքուկ, հարմարավետ սենյակի փափուկ անկողնում, կարթնանա ու կտեսնի, որ լրիվ մերկ պառկած է կապտավուն հողի վրա, իսկ շուրջը կարմիր-սպիտակ առնանդամների խշշացող անտառ է, որ Ժուքստբուվիլի ծխնելույզների պես ցցված են դեպի երկինք, լխկած ամորձիներն էլ սոխի մազմզոտ գլուխների նման կիսով չափ դուրս են պրծել հողից: Առնանդամների վրա թռչուններ կպտտվեն ու

կտուցներով ծվեն-ծվեն կանեն դրանք, մինչև արյուն հոսի: Ու վերքերից դանդաղ ու ծանր սերմնահեղուկ կծորա, արյան հետ խառնված սերմնահեղուկ՝ մածուցիկ, գաղջ, մանր պղպջակներով: Կամ էլ ոչ մի նման բան չի պատահի, ոչ մի ակնհայտ փոփոխություն էլ չի լինի, բայց մարդիկ մի օր առավոտյան կբացեն իրենց պատուհանների խլափեղկերն ու կցնցվեն ինչ-որ զարհուրելի իմաստից, որ ծանր նստած կլինի իրերի վրա ու ասես դարանակալ՝ մի բանի կսպասի: Ուրիշ ոչ մի բան. բայց եթե նույնիսկ կարծ էլ տևի, մարդիկ կսկսեն հարյուրներով ինքնասպան լինել: Ու թող լինե՛ն: Թող գոնե մի բան մի քիչ փոխվի, հետո կերևա. ավելին չեմ էլ ակնկալում: Հետո հանկարծ մենակության մեջ խրվածներ էլ կհայտնվեն: Սարսափելի հրեշավոր ու լրիվ մեն-մենակ մարդիկ փողոցներում աջուձախ կվազեն ու սառած աչքերով կանցնեն առջևովս՝ փախչելով իրենց ցավերից, բայց ցավը կրելով իրենց մեջ, ու կիսաբաց բերաններից դուրս կպրծնի ու թևերը թափ կտա միջատ-լեզուն: Ու այդ ժամանակ ես ծիծաղից կպայթեմ, եթե նույնիսկ մարմինս ծածկված լինի պղտոր, կեղտոտ քոսով, իսկ միսս բողբոջի ու բացվի մանուշակների ու յուղածաղիկների պես: Կհենվեմ պատին ու կողքովս վազողների հետևից կգոռամ. «Բա էլ ո՞ւր մնաց ձեր գիտությունը: Բա ի՞նչ եղավ ձեր հումանիզմը: Ո՞ւր մնաց ձեր արժանապատվությունը, մտածող եղեգնե՛ր»: Ու չեմ վախենա, համենայնդեպս ոչ ավելի, քան հիմա եմ վախենում: Մի՞թե դա էլ նույն գոյությունը չի լինի, գոյության էլի մի քանի տարատեսակ: Մարդկանց դեմքերը դանդաղ կլանող այդ բոլոր երրորդ աչքերը, իհարկե, ավելորդ կլինեն, բայց ոչ ավելի, քան մյուս երկուսը: Ես հենց գոյությունից եմ վախենում:

Մթնում է, քաղաքում վառվում են առաջին լույսերը: Աստվա՛ծ իմ: Ի՜նչ *բնական* տեսք ունի քաղաքը՝ անկախ իր բոլոր երկրաչափական ձևերից, ի՜նչ ծանր է իջել երեկոն քաղաքի վրա: Ախր այստեղից այնքան... այնքան ակնհայտ է. մի՞թե իրոք մենակ ես եմ տեսնում: Մի՞թե ոչ մի ուրիշ Կասանդրա չկա, որ հիմա իր բլրի գագաթից նայում է, թե ինչպես է ոտքերի տակ փռված քաղաքը կուլ գնում բնությանը: Չնայած ի՞նձ ինչ: Ի՞նչ կարող եմ իրեն ասել:

Մարմինս դանդաղ պտտվում է դեպի արևելք, մի թեթև ճոճվում է ու ճամփա ընկնում:

Ամբողջ քաղաքը ոտքի տակ տվեցի Ինքնուսին գտնելու համար: Տուն որ հաստատ չէր գնացել: Հիմա պիտի որ աջուձախ թափառելիս լիներ ամոթից ու սարսափից ճնշված. խե՜ղճ, մարդկանց կողմից մերժված հումանիստ: Ճիշտն ասած՝ բացարձակապես չզարմացա, երբ այս ամբողջ պատմությունը պատահեց. արդեն վաղուց զգում էի, որ իր այդ նրբիկ ու երկչոտ գլխի վրա սկանդալ է հասունանում: Ախր ինքն էլ համարյա մեղք չուներ. դեռահաս տղաների հանդեպ իր այդ սիրո մեջ գրեթե ոչ մի զգայական բան չկար, ավելի շուտ հումանիզմի դրսևորման հերթական ձև էր: Բայց անխուսափելիորեն ինքն էլ պիտի մի օր իրեն մենակ զգար: Ինչպես պրն Աշիլը, ինչպես ես. ինքն էլ է իմ ցեղից ու լեփ-լեցուն է բարի կամքով: Բայց Ինքնուսն այսուհետ դատապարտված է մենակության ու արդեն առհավետ: Ամեն ինչ՝ մշակույթի մասին իր բոլոր երազները, մարդկանց միջև համաձայնության բոլոր երազանքները, մի ակնթարթում կործանվեցին: Սկզբում վրա կհասնի վախը, սարսափը, անքուն գիշերները, հետո կսկսեն իրար հաջորդել աքսորի երկարուձիգ օրերը: Երեկոները հետ կգա շրջելու Հիպոտեկային բանկի բակում. հեռվից կնայի գրադարանի լուսավոր պատուհաններին, ու սիրտը կդողա, երբ կհիշի երկար դարակներին շարված գրքերը, դրանց կաշվե կազմերը, էջերի հոտը: Հիմա արդեն փոշմանում եմ, որ չուղեկցեցի, բայց դե ինքը չուզեց. աղաչում էր, որ իրեն մենակ թողնեմ: Սկսում է սովորել, թե ինչ բան է մենակությունը: Այս տողերը «Մաբլի» սրճարանում նստած եմ գրում: Այնպես ներս մտա, ասես ինչ-որ ծես էի կատարում. ուզում էի երկար նայել կառավարչին, գանձապահուհուն ու ամբողջ ուժգնությամբ զգալ, որ իրենց վերջին անգամ եմ տեսնում: Բայց հիմա չեմ կարողանում Ինքնուսին գլխիցս հանել, անընդհատ աչքիս առաջ են գալիս աղճատված, հանդիմանանքով վառվող դեմքն ու արյունոտված օձիքը: Ի վերջո խնդրեցի, որ ինձ թուղթ տան, ու հիմա կպատմեմ, թե իր հետ ինչ պատահեց:

Ցերեկվա երկուսի կողմերը գնացի գրադարան: Մտածում էի. «Սա էլ գրադարանը: Վերջին անգամ եմ այստեղ մտնում»:

Սրահը գրեթե դատարկ էր: Տեսքից սիրտս ցավում էր, որովհետև գիտեի, որ այլևս երբեք այստեղ չեմ վերադառնալու: Գոլորշու պես թեթև էր, գրեթե անիրական, լրիվ շիկակարմիր. մայր մտնող արևը կարմիր էր ներկել ընթերցողուհիների սեղանը, դուռը, գրքերի կողերը: Մի պահ հմայվեցի, ու թվաց, թե ոսկեզօծ տերևներով լի թավուտ եմ մտել: Ժպտացի: «Ինչքա՞ն վաղուց չէի ժպտացել», մտքովս անցավ: Կորսիկացին ձեռքերը դրել էր մեջքի հետևն ու պատուհանից դուրս էր նայում: Տեսնես ի՞նչ էր տեսնում: Էմպետրազի գա՞նգը: «Իսկ ես էլ ո՛չ Էմպետրազի գանգը կտեսնեմ, ո՛չ ցիլինդրը, ո՛չ էլ ռեդինգոտը: Վեց ժամից Բուվիլից դուրս եկած կլինեմ»: Նախորդ ամիս վերցրածս երկու հատորները դրեցի գրադարանավարի օգնականի սեղանին: Կանաչ ստացականը պատռեց, կեսը մեկնեց ինձ.

– Խնդրեմ, պարոն Ռոկանտեն:

– Շնորհակալություն:

Մտածեցի. «Հիմա իրենց այլևս ոչինչ պարտք չեմ: Այստեղ այլևս ոչ ոքի ոչինչ պարտք չեմ: Մի քիչ հետո կգնամ ու «Ճամփորդների ռանդևուի» տիրուհուն էլ մնաս բարով կասեմ: Ես ազատ եմ»: Մի պահ տատանվում էի, թե ինչ անեմ այս վերջին րոպեներին. գուցե գնամ, երկար զբոսնեմ Բուվիլում, նորից տեսնեմ Վիկտոր-Նուար բուլվարը, Տուրնբրիդ փողոցը: Բայց այդ թավուտն այնքա՞ն հանդարտ էր, այնքա՞ն մաքուր, որ թվում էր՝ գրեթե գոյություն չունի, թե Սրտխառնոցն այն խնայել է: Գնացի, նստեցի վառարանի կողքին: Սեղանին «Բուվիլի օրաթերթ» կար: Ձեռքս պարզեցի, վերցրի:

Շունը փրկել է տիրոջը

Երեկ երեկոյան պրն Դյուբոսկը Նոժիի տոնավաճառից հեծանվով տուն էր վերադառնում...

Աջ կողմումս մի գեր տիկին նստեց: Ֆետրե գլխարկը դրեց կողքին: Քիթն այնպես էր դեմքին ցցված, ասես խնձորի մեջ խրած դանակ լիներ: Քթի տակի փոքրիկ, անպարկեշտ անցքն արհամարհական ծամածռել էր: Պայուսակից մի կազմած գիրք հանեց,

արմունկները դրեց սեղանին ու գլուխը հենեց պարարտ ձեռքերին: Դիմացիս ծերուկը քնած էր: Դեմքը ծանոթ էր. ինքն էլ էր այն երեկոյան գրադարանում, երբ այդքան ուժեղ վախեցել էի: Ինձ թվում է՝ ինքն էլ էր վախեցած: Մտածում էի. «Ինչ հեռու է այդ ամենը»:

Չորս անց կես Ինքնուսը մտավ ներս: Ուզում էի ձեռքը սեղմել ու իրեն էլ մնաս բարով ասել: Բայց ինչպես երևում էր, մեր վերջին զրույցից հետո մեջը դեռ վատ հիշողություններ էին մնացել. հեռվից ինձ զուսպ ողջունեց, գնաց ուրիշ կողմ ու իր փոքրիկ սպիտակ տոպրակը, որի մեջ, ինչպես միշտ, պիտի որ մի կտոր հաց ու մի շերտ շոկոլադ լիներ, բավականին հեռու դրեց ինձնից: Մի քիչ հետո վերադարձավ ինչ-որ պատկերազարդ գրքով ու դրեց տոպրակի կողքին: Մտածում էի. «Վերջին անգամ եմ իրեն տեսնում»: Վաղը, վաղը չէ մյուս օրը, մյուս բոլոր երեկոներին ինքը վերադառնալու է այս սեղանի մոտ, ուտելու է իր հացով շոկոլադն ու համբերատար շարունակելու է առնետի պես գիրք կրծել, հերթով ընթերցելու է Նադոյի, Նոդիեի, Նիսի, Նոդոյի գործերը՝ ժամանակ առ ժամանակ գրքից կտրվելով ու փոքրիկ ծոցատետրի մեջ ավելացնելով հերթական ասույթը: Իսկ ես քայլելու եմ Փարիզում, Փարիզի փողոցներում, նոր դեմքեր եմ տեսնելու: Ինչե՞ր են հետս պատահելու, քանի դեռ ինքը նստած կլինի այստեղ, քանի դեռ լամպը կլուսավորի իր խոշոր, մտածկոտ դեմքը: Ճիշտ պահին զգացի, որ քիչ էր մնում՝ նորից տրվեի գալիք արկածների պատրանքին: Ուսերս թափ տվեցի ու շարունակեցի կարդալ:

Բուվիլը և իր արվարձանները

Մոնիսփրե

Ժանդարմերիայի գործունեությունը 1931 թվին: Ավագ սերժանտ Գասպարը՝ Մոնիսփրեի բրիգադի հրամանատարը, և իր երեք ենթակաները՝ պրն Լագուտը, Նիզանը, Պիերպոն և Գիլը, 1931 թվին սփիպված չեն եղել ձեռքերը ծալած նստել: Մեր ժանդարմներն արձանագրել են սպանության 7 դեպք, 82 իրավախախտում, 159 օրինազանցություն, ինքնասպանության 6 դեպք և 15 ավտովթար, որոնցից 3-ը՝ մահացու վախճանով:

Ժուքստբուվիլ

Ժուքստբուվիլի շեփորահարների խմբակ: Այսօր տեղի է ունենալու նվագախմբի գլխավոր փորձը, բաժանվելու են տարեկան համերգի հրավիրատոմսեր:

Կոմպոստել

Քաղաքապետին շնորհվել է Պատվո լեգեոնի շքանշան:

Բուվիլի զբոսաշրջիկ (հիմնադիր՝ Բուվիլի սկաուտ, 1924)

Ամենամսյա ժողովը տեղի կունենա այս երեկո՝ ժամը քսանն անց քառասունհինգին, Ֆերդինանդ-Բիրոն 10 հասցեում գտնվող վարչության A սրահում: Օրակարգ՝ վերջին արձանագրության ընթերցում, նամակներ, ամենամյա ճաշկերույթ, 1932-ի բաժանորդավճարների հանգանակություն, մարտ ամսվա այցելությունների ծրագիր, այլ հարցեր, նոր անդամագրություններ:

Կենդանիների պաշտպանություն (Բուվիլյան կազմակերպություն)

Հաջորդ հինգշաբթի՝ ժամը 15-7-ը, Բուվիլի Ֆերդինանդ-Բիրոն փողոցի 10 հասցեի C սրահում տեղի կունենա քննարկում հանրային հերթապահությունների մասին: Նամակներն ուղղել նախագահին վարչության պաշտոնական հասցեով կամ Գալվանի պող. 154:

Պահապան շների Բուվիլյան ակումբ... Պատերազմի հաշմանդամների Բուվիլի ասոցիացիա... Տաքսու սեփականատերերի արհմիության պալատ... Մանկավարժական համալսարանների Բարեկամների Բուվիլի կոմիտե...

Երկու տղա պայուսակները ձեռքներին ներս մտան: Դպրոցականներ են: Կորսիկացին շատ է սիրում դպրոցականներին, որովհետև կարող է հայրական վերահսկողություն կիրառել վերջիններիս նկատմամբ: Երբեմն հավեսի համար թույլ է տալիս, որ մի քիչ շուռումուռ գան աթոռների վրա, շատախոսեն, հետո հանկարծ անաղմուկ հայտնվում է հետևներում ու սկսում նախատինքներ տեղալ. «Բա չեք ամաչո՞ւմ, մեծ տղաներ եք, ո՞նց եք ձեզ պահում:

Եթե հենց հիմա չուղղվեք, պարոն գրադարանավարը կբողոքի դպրոցի վերահսկիչին»: Իսկ եթե հանկարծ սկսում են հակաճառել, մի զարհուրելի հայացք է գցում վրաները. «Ձեր ազգանունն՞ը»: Բացի դրանից, ինքը նաև ուղղորդում է այդ աշակերտների ընթերցանությունը. գրադարանում որոշ գրքերի վրա կարմիր խաչով նշան է արված. Դժոխքն է՝ Ժիդի, Դիդրոյի, Բոդլերի գործերը, որոշ բժշկական աշխատություններ: Երբ որևէ դպրոցական փորձում է այդ գրքերից մեկնումեկը վերցնել, Կորսիկացին նրան ձեռքով կանչում է մոտը, տանում մի անկյուն ու սկսում հարցաքննել, հետո՝ մի քանի վայրկյան անց, արդեն չի դիմանում, պայթում է ու սկսում սրահով մեկ թնդալ. «Ախր ձեր տարիքի տղաների համար լիքը գրքեր կան, որ հազար անգամ ավելի հետաքրքիր են: Ուսուցողակա՞ն գրքեր: Տնայիններն արե՞լ եք: Որերո՞րդ դասարանում եք: Երկրո՞րդ: Ու ժամը չորսից հետո արդեն անելու բան չունե՞ք: Ձեր ուսուցիչը հաճախ է այստեղ լինում, հետը կխոսեմ»:

Տղաները եկան-կանգնեցին վառարանի մոտ: Կրտսերը գեղեցիկ, թուխ մազեր ուներ, գրեթե չափից դուրս նուրբ մաշկ ու փոքրիկ, չար ու հպարտ բերան: Ընկերը՝ ամրակազմ, թանձրամարմին մեկը, ում դեմքին արդեն բեղի նշույլներ էին երևում, կողքինին արմունկով հրեց ու ականջին ինչ-որ բան քչփչաց: Փոքրիկ թխահերը չպատասխանեց, բայց դեմքին մի աննշմարելի ժպիտ հայտնվեց՝ մեծամիտ ու ինքնահավան: Ապա երկուսով գրադարակներից մեկի վրայից անփութորեն ինչ-որ բառարան վերցրին ու գնացին դեպի Ինքնուսը, ով հոգնած հայացքով հետևում էր նրանց: Իրենց այնպես էին պահում, ասես Ինքնուսին բանի տեղ չեն դնում, բայց գնացին-նստեցին հենց կողքին. կրտսերն Ինքնուսի ձախ կողմում նստեց, իսկ թանձրամարմինը՝ կրտսերի: Հետո երկուսով տեղնուտեղը սկսեցին իրենց բառարանը թերթել: Ինքնուսը ցրված հայացքը սահեցրեց սրահով մեկ, հետո էլի խորացավ իր ընթերցանության մեջ: Դեռ երբեք ոչ մի ընթերցասրահ ավելի խաղաղ տեսք չէր ունեցել. ոչ մի ձայն չէի լսում, բացի գեր տիկնոջ կցկտուր շնչառությունից, ոչինչ չէի տեսնում, բացի in-octavo հատորների վրա հակված գլուխներից: Եվ սակայն հենց այդ պահին հասկացա, որ ինչ-որ վատ բան է հասունանում: Հայացքները ջանասիրաբար խոնարհած

այդ բոլոր մարդիկ կարծես ինչ-որ թատրոն էին խաղում. դրանից մի քանի վայրկյան առաջ զգացի, թե ինչպես մեր վրայով ասես դաժանության շունչ անցավ:

Կարդացել-վերջացրել էի, բայց վարանում էի դուրս գալ. նստած սպասում էի՝ ձևացնելով, թե թերթ եմ կարդում: Հետաքրքրությունս ու անհանգստությունս ամենաշատն այն բանից էլ էին աճում, որ մյուսներն էլ էին սպասում: Ինձ թվում էր՝ հարևանուհիս սկսել էր գիրքն ավելի արագ-արագ թերթել: Անցավ մի քանի րոպե, հետո ականջիս շշուկներ հասան: Գլուխս զգույշ բարձրացրի: Տղաները փակել էին բառարանը: Փոքրիկ թխահերը չէր խոսում, թեքվել էր աջ, դեմքին հարգանք ու հետաքրքրություն էր տպված: Շիկահերը կիսով չափ թաքնվել էր ընկերոջ ուսի հետևում, ականջները սրել ու լուռ խնդմնդում էր: «Բա ո՞վ է խոսում»,- մտածեցի:

Խոսողը Ինքնուսն էր: Կռացել էր իր փոքրիկ հարևանի վրա, աչքերը հառել աչքերին ու ժպտում էր: Տեսնում էի, թե ոնց են շուրթերը շարժվում, ոնց են ժամանակ առ ժամանակ թրթռում երկար թարթիչները: Դեմքն այնպես էր երիտասարդացել, որ չէի ճանաչում. այդ պահին գրեթե հմայիչ էր: Բայց պարբերաբար ընդհատում էր շշուկն ու անհանգիստ հետ էր նայում: Տղան այնպիսի տեսք ուներ, ասես կլանում էր Ինքնուսի ամեն մի բառը: Այդ փոքրիկ տեսարանի մեջ ոչ մի արտառոց բան չկար, ու արդեն ուզում էի վերադառնալ ընթերցանությանս, երբ տեսա, թե ինչպես փոքրիկ տղան սկսեց մեջքի հետևում ձեռքը դանդաղ սահեցնել սեղանի եզրով: Ինքնուսի աչքերից թաքուն՝ ձեռքը մի քիչ էլ սողաց առաջ, սկսեց չորս կողմը խարխափել, հետո գտավ թանձրամարմին շիկահերի ձեռքն ու ուժեղ կսմթեց: Վերջինս այնքան կլանված էր վայելում Ինքնուսի խոսքերը, որ չնկատեց ընկերոջ ձեռքն ինչպես մոտեցավ: Շիկահերը վեր թռավ՝ անակնկալից ու հիացմունքից բերանն անասելիորեն լայն բացած: Փոքրիկ թխահերի դեմքը պահպանում էր լրիվ նույն՝ հարգալից հետաքրքրասիրության արտահայտությունը: Դժվար էր հավատալ, որ այդ չարաճճի ձեռքն իրոք իրենն էր: «Ի՞նչ են ուզում գլխին խաղալ»,- մտածեցի: Պարզ տեսնում էի, որ ինչ-որ վատ բան է հասունանում, ու նաև հասկանում էի, որ դեռ ժամանակ կա միջամտելու ու թույլ չտալու, որ տեղի ունենա: Բայց չէի կարողանում

հասկանալ՝ ինչն է պետք կանխել: Մի պահ մտքովս անցավ՝ վեր կենամ, մոտենամ, թփթփացնեմ Ինքնուսի ուսին ու հետը խոսակցություն սկսեմ: Բայց հենց նույն պահին հայացքս որսաց, տեղնուտեղը ձայնը կտրեց ու շուրթերը նյարդայնացած սեղմեց իրար: Ես շփոթվեցի, աչքերս արագ փախցրի ու ձևի համար նորից սկսեցի թերթս կարդալ: Այնինչ գեր տիկինն արդեն մի կողմ էր հրել գիրքը, գլուխը բարձրացրել էր ու կախարդվածի նման նայում էր: Հստակ զգում էի, որ շուտով ողբերգությունը պայթելու է. իրենք բոլորն *ուզում էին*, որ պայթի: Ես ի՞նչ կարող էի անել: Հայացքս գցեցի Կորսիկացու վրա. արդեն պատուհանից դուրս չէր նայում ու կիսով չափ շրջվել էր մեր կողմը:

Անցավ քառորդ ժամ: Ինքնուսը նորից սկսել էր շշնջալ: Չէի համարձակվում նայել, բայց շատ լավ պատկերացնում էի քնքուշ, երիտասարդ տեսքն ու իրեն ուղղված բոլոր ծանր հայացքները, որ ինքը չէր նկատում: Մի պահ ականջիս հասավ ծիծաղը. զրնգուն, մանկական ծիծաղ էր: Սիրտս ճմլվեց. այնպիսի տպավորություն էր, թե կեղտոտ ջահելները որոշել են կատու խեղդել ջրի մեջ: Հետո հանկարծ շշուկները կտրվեցին: Լռությունը ողբերգական թվաց. վրա էր հասել ավարտը՝ մահապատիժը: Գլուխս կախեցի թերթիս վրա ու ձևացրի, թե կարդում եմ, բայց չէի կարդում. հոնքերս բարձրացրել էի ու հայացքս ինչքան կարող էի՝ վերև էի հառել՝ փորձելով տեսնել, թե աչքիս առաջ ինչ է տեղի ունենում այդ լռության մեջ: Գլուխս մի թեթև թեքեցի ու հաջողացրի աչքի պոչով մի բան նկատել. ձեռք էր՝ այն նույն փոքրիկ սպիտակ ձեռքը, որ քիչ առաջ սահում էր սեղանի երկայնքով: Հիմա արդեն հանգիստ պառկած էր՝ ափը դեպի վեր, թուլացած, նուրբ ու զգայական. արևի տակ պառկած լողորդուհու նվաղուն մերկությունն ուներ: Հետո ինչ-որ մուգ, մազմզոտ բան սկսեց անվստահ մոտենալ դրան: Հաստ մատ էր՝ ծխախոտից դեղնած մաշկով. փոքրիկ ձեռքի կողքին այդ մատը նման էր տղամարդու առնանդամի՝ իր ողջ անշնորհք տգեղությամբ: Մի պահ անշարժ ցցված մնաց դեպի փխրուն ափը, հետո հանկարծ սկսեց երկչոտ շոյել: Զզարմացա, ավելի շուտ կատաղած էի Ինքնուսի վրա. ապուշը չկարողացավ, էլի, իրեն զսպել. ախր ո՞նց կարող էր չհասկանալ, թե ինչ վտանգի մեջ է: Հիմա իրեն ընդամենը

մի շանս էր մնում՝ մի չնչին շանս. եթե տեղնուտեղը երկու ձեռքերն էլ դներ սեղանին՝ գրքի երկու կողմերում, ու տեղում քարանար, գուցե այդ անգամ կհաջողացներ խուսափել իր ճակատագրից: Բայց *գիտեի*, որ իր այդ շանսը բաց է թողնելու. մատը շարունակում էր նրբորեն ու երկչոտ սահել անշարժ մարմնի վրայով՝ հազիվ հպվելով մաշկին, չհամարձակվելով սեղմել. թվում էր՝ ինքն էլ է գիտակցում իր սեփական տգեղությունը: Գլուխս կտրուկ բարձրացրի, էլ չէի կարողանում դիմանալ այդ կամակոր հետ-առաջ շարժմանը. փորձում էի Ինքնուսի հայացքը բռնել, բարձր հազում էի, որ զգուշացնեմ: Բայց Ինքնուսն աչքերը փակ ժպտում էր: Մյուս ձեռքն անհետացել էր սեղանի տակ: Տղաներն այլևս չէին ծիծաղում, այլ սարսափելի գունատվել էին: Փոքրիկ թխահերը շուրթերը վախեցած սեղմել էր իրար, ասես չէր սպասում, որ իրադարձություններն այդքան արագ կզարգանային: Եվ սակայն ձեռքը չէր քաշում, առաջվա նման անշարժ թողել էր սեղանին, ուղղակի մատներն էր մի քիչ կծկել: Ընկերն ապուշի նման բացել էր բերանն ու սարսափած տեսք էր ընդունել:

Ու հենց այդ պահին էլ Կորսիկացին սկսեց գոռալ: Այդ ընթացքում հաջողացրել էր աննկատ մոտենալ ու հիմա կանգնած էր Ինքնուսի աթոռի հետևում: Դեմքը բոսորագույն էր դարձել, այնպիսի տեսք ուներ, ասես ուր որ է՝ ծիծաղից կպայթի, բայց աչքերը շանթ ու որոտ էին արձակում: Նստածս տեղը վեր թռա, բայց ինձ նույնիսկ մի տեսակ թեթևացած զգացի. սպասումը շատ տանջալից էր: Ուզում էի, որ ամեն ինչ ինչքան հնարավոր է շուտ վերջանար. թող Ինքնուսին դուրս շպրտեին, եթե ուզում էին, միայն թե ամեն ինչ ավարտվեր: Կավճի պես սպիտակած տղաները պայուսակները ճանկեցին ու մի ակնթարթում չքվեցին:

– Ես ձեզ տեսա՛,– գոռում էր կատաղությունից հարբած Կորսիկացին,– էս անգամ ամեն ինչ տեսել եմ, փորձվեք մենակ ասել, որ սուտ եմ ասում: Դե հիմա փորձվեք ասել, որ սուտ եմ ասում: Ձեզ թվում էր՝ չէի տեսնում ձեր էդ խաղերը: Ինձ կույրի տե՞ղ եք դրել, ինչ է: Էսքան ժամանակ ինքս ինձ ասում էի. համբերի՛ր, մի քիչ էլ համբերիր, ոչինչ, մի օր կբռնացնես, ու վրան շատ թանկ կնստի: Հա, էս ամեն ինչը ձեզ վրա շա՜տ թանկ է նստելու: Ձեր անունն էլ

գիտեմ, ձեր հասցեն էլ, հասկացա՞ք, արդեն ամեն ինչ ճշտել եմ: Ձեր ղեկավարին էլ գիտեմ՝ պարոն Շյուիեին: Ո՞նց պիտի վաղն առավոտյան զարմանա, երբ պարոն գրադարանավարից նամակ ստանա: Հը՞: Ձայններդ կտրե՛ք,– աչքերը չռած գոռում էր:– Հույս չունենաք, թե էսքանով ամեն ինչ կպրծնի: Ձեր նմաններին Ֆրանսիայում դատո՛ւմ են: Պարոնն ինքնակրթությա՛մբ էր զբաղվում: Պարոնը լայնացնում էր մտահորիզո՞նը: Պարոնն ինձ տեղ ու դադար չէր տալիս, անընդհատ էս մի բանը ճշտիր, էն մի գիրքը բեր: Բայց չէ՛, ինձ չեք խաբի:

Ինքնուսը կարծես ոչ էլ առանձնապես զարմացած էր: Ով գիտի՝ արդեն տարիներով սպասում էր այդ հանգուցալուծմանը: Երևի արդեն մի հարյուր անգամ պատկերացրել էր, թե ինչ կլինի, երբ մի օր Կորսիկացին հետևից անշշուկ մոտենա իրեն, ու ականջների մեջ հանկարծ ինչ-որ կատաղած ձայն թնդա: Ու չնայած դրան՝ ամեն երեկո վերադառնում էր այստեղ, շարունակում էր իր տենդագին ընթերցանությունն ու ժամանակ առ ժամանակ գողեգող շոյում էր որևէ փոքրիկ տղայի ձեռքը կամ ոտքը: Դեմքին ավելի շուտ համակերպվածություն էր կարդացվում:

– Չեմ հասկանում ինչ եք խոսում,– սկսեց կմկմալ,– արդեն քանի տարի է՝ գալիս եմ այստեղ...

Ձևացնում էր, թե վրդովված ու ապշած է, բայց բացարձակապես համոզիչ չէր: Մեկ է, գիտեր, որ անխուսափելին արդեն տեղի էր ունեցել, ու որ այլևս ոչինչ ի զորու չէր իրադարձությունների ընթացքը կասեցնելու. իրեն մնում էր միայն որպե առ որպե ապրել հաջորդող ամեն ինչը:

– Դրան մի՛ լսեք, ես ամեն ինչ տեսել եմ,– ասաց հարևանուհիս: Տեղից ծանրումեծ վեր էր կացել:– Հա՛, ու առաջին անգամը չի, որ տեսնում եմ. անցած երկուշաբթի էլ՝ մոտավորապես այս ժամերին, էլի նույն բանը նկատեցի, բայց ձայն չհանեցի, որովհետև աչքերիս չէի հավատում: Մտքովս էլ չէր անցնի, որ գրադարանի նման լուրջ տեղում, ուր մարդիկ գալիս են կրթվելու համար, կարող են այնպիսի բաներ կատարվել, որ ուղղակի նայում ու կարմրում ես: Ես երեխաներ չունեմ, բայց ցավակցում եմ այն մայրերին, ովքեր իրենց երեխաներին ուղարկում են այստեղ պարապելու ու կարծում են, թե փոքրիկներն այս սրահում ապահով ու անվտանգ են,

մինչդեռ սրա նման անօրեն հրեշները երեխաներին խանգարում են դասերն անել:

Կորսիկացին մոտեցավ Ինքնուսին.

– Լսեցի՞ք՝ տիկինն ինչ է ասում,– գոռաց ուղիղ դեմքին,– հերի՛ք է ձևեր թափեք: Արդեն տեղում բռնացրել ենք, կեղտոտ տականքի մեկը:

– Պարո՛ն, բարեհաճեք մնալ քաղաքավարության սահմաններում,– արժանապատվորեն ասաց Ինքնուսը:

Դա էլ իր դերն էր: Գուցեև շատ կուզեր ամեն ինչ խոստովանել, փախչել, բայց չէ, ինքն էլ պետք է իր դերը մինչև վերջ խաղար: Չէր նայում Կորսիկացուն, աչքերը համարյա լրիվ փակել էր: Ձեռքերը կախ էր գցել. սարսափելի գունատվել էր: Հետո հանկարծ արյունը խփեց դեմքին:

Կորսիկացին կատաղությունից շնչահեղձ էր լինում:

– Քաղաքավարությա՞ն: Անասո՛ւն: Ձեզ թվում է՝ ոչ մի բան չեմ տեսե՞լ: Ասում եմ՝ հետևո՛ւմ էի ձեզ: Արդեն քանի՛ ամիս է՝ աչքս ձեր վրա էի պահում:

Ինքնուսն ուսերը թոթվեց ու ձևացրեց, թե նորից խորասուզվում է իր գրքի մեջ: Դեմքը լրիվ բոսորագույն էր դարձել, աչքերից արցունքներ էին կաթում, բայց իր ողջ տեսքով ցույց էր տալիս՝ իբր կենտրոնացել ու գերագույն հետաքրքրությամբ բյուզանդական ինչ-որ խճանկարի մի վերարտադրություն է ուսումնասիրում:

– Ու դեռ շարունակում է կարդալ: Ա՛յ քեզ լկտիություն,– ասաց տիկինը՝ նայելով Կորսիկացուն:

Վերջինս տատանվում էր: Այդ պահին գրադարանավարի օգնականը՝ մի համեստ, հավասարակշռված երիտասարդ, ում Կորսիկացին ահուսարսափի մեջ էր պահում, դանդաղ վեր կացավ իր գրասեղանի հետևից ու ձայն տվեց. «Պաոլի՛, ի՞նչ է եղել»: Մի վայրկյան անորոշություն տիրեց, ու ես արդեն սկսել էի հուսալ, որ ամեն ինչ այդպես էլ կավարտվի: Բայց Կորսիկացին երևի կողքից նայեց ինքն իրեն ու հասկացավ, որ ծիծաղելի դրության մեջ է հայտնվել: Նյարդայնացած, չիմանալով, թե էլ ինչ ասի իր այդ համր զոհին, ողջ հասակով մեկ ձգվեց ու բռունցքն օդի մեջ թափ տվեց: Ինքնուսը

վախեցած շրջվեց հետ: Բերանը բաց նայում էր Կորսիկացուն. աչքերի մեջ զարհուրելի սարսափ կար:

– Եթե խփեք, կբողոքեմ,– մի կերպ արտաբերեց,– թողեք, ես իմ ոտքով դուրս կգամ:

Ես էլ էի վեր թռել, բայց արդեն ուշ էր. Կորսիկացին մի կարճ, վավաշոտ տնքոց արձակեց ու հանկարծ ինչքան ուժ ուներ՝ բռունցքով իջավ Ինքնուսի քթին: Մի պահ աչքիս առաջ միայն Ինքնուսի աչքերն էին՝ իր այդ չքնաղ, ցավից ու ամոթից չռված աչքերը, իսկ ներքևում՝ վերնաշապիկի թևք ու մուգ բռունցք: Երբ Կորսիկացին բռունցքը հետ քաշեց, Ինքնուսի քթից սկսեց արյուն չռռալ: Հենց արդեն ուզում էր ձեռքերով դեմքը ծածկել, Կորսիկացին մի հատ էլ խփեց, այս անգամ՝ բերանի անկյունին: Ինքնուսը փլվեց աթոռին՝ երկչոտ ու քնքուշ աչքերն ուղիղ դիմացը հառած: Արյունը քթից հոսում էր շորերին: Աջ ձեռքով կուրորեն շոշափում էր սեղանը՝ փորձելով գտնել իր տոպրակը, իսկ ձախով համառորեն շարունակում էր սրբել քթից վազող արյունը:

– Ես գնացի,– ասաց՝ կարծես ինքն իր հետ խոսելով:

Կողքիս կինը գունատվել էր, բայց աչքերը փայլում էին:

– Կեղտոտ սրիկա,– ասաց,– տեղն է դրան:

Ջղայնությունից դողում էի: Շրջանցեցի սեղանը, Կորսիկացու վզից բռնեցի ու հանեցի օդ: Սկսեց ոտքերն օդում թափ տալ: Ուզում էի շպրտել սեղանին: Լրիվ կապտել էր, թպրտում էր, փորձում էր դեմքս ճանկռել, բայց կարճ ձեռքերը չէին հասնում: Ես ոչ մի բառ չէի ասում, բայց ձեռքերս քոր էին գալիս, ուզում էի քիթը ջարդել, դեմքն այլանդակել: Գլխի ընկավ ու արմունկով դեմքը ծածկեց. ես ինձ բավարարված զգացի, որովհետև տեսա, որ վախենում է: Հանկարծ սկսեց խռխռալ.

– Բաց թողեք, անասունի՛ ծնունդ: Դուք է՞լ եք դրա նմաններից:

Մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչու բաց թողեցի: Հետևանքների՞ց վախեցա: Թե՞ Բուվիլում անցկացրածս ծույլ տարիների ընթացքում փալաս էի դարձել: Առաջ առանց ատամները փշրելու բաց չէի թողնի: Շրջվեցի դեպի Ինքնուսը, ով վերջապես կարողացել էր ոտքի կանգնել: Բայց ինքը, հայացքիցս խուսափելով, գլուխը կախ քայլեց վերարկուի հետևից: Ձախ ձեռքով դեռ շարունակում էր քիթը

սրբել՝ ասես փորձելով արյունը կանգնեցնել: Բայց մեկ է, արյունը շարունակում էր ֆշշալ. վախեցա, որ հանկարծ չվատանա: Առանց ինչ-որ մեկին նայելու մռթմռթաց.

– Արդեն քանի տարի է՝ գալիս եմ այստեղ...

Բայց թզուկի ոտքերը հենց կպան գետնին, կրկին սկսեց իրեն դրության տերն զգալ...

– Ռադներդ քաշե՛ք էստեղից,– ասաց Ինքնուսին,– ու ոտքներդ էլ էստեղ չտեսնե՛մ, թե չէ արդեն ոստիկանություն կկանչեմ, որ դուրս շպրտեն:

Աստիճանների ներքևում հասա Ինքնուսի հետևից: Նեղված էի, ամաչում էի իր ամոթից, չգիտեի՝ ինչ ասեմ: Այնպիսի տեսք էր ընդունել, իբր չի նկատում իմ ներկայությունը: Վերջապես հաջողացրել էր թաշկինակը հանել ու հիմա մեջն ինչ-որ բան էր թքում: Քթից եկող արյունն արդեն մի քիչ կտրվել էր: Անճարակ առաջարկեցի.

– Եկեք ձեզ տանեմ դեղատուն:

Չպատասխանեց: Ընթերցասրահից ուժեղ ժխոր էր գալիս: Ով գիտի՝ բոլորը սկսել էին միանգամից խոսել: Լսվեց կնոջ սուր ծիծաղը:

– Էլ երբեք չեմ կարողանա այստեղ գալ,– ասաց Ինքնուսը:

Շրջվեց ու մոլորված նայեց աստիճաններին, ընթերցասրահի մուտքին: Շարժումից արյունը ծորաց օձիքի ու վզի արանքը: Բերանն ու այտերն արյան մեջ կորած էին:

– Եկեք,– ասացի՝ ձեռքից բռնելով:

Ցնցվեց ու կտրուկ ընկրկեց:

– Բա՛ց թողեք ինձ:

– Բայց ձեզ չի կարելի մենակ թողնել: Ինչ-որ մեկը պիտի օգնի, որ լվացվեք, գնաք բժշկի մոտ...

Կրկնեց.

– Բաց թողեք ինձ, պարոն: Խնդրում եմ, բաց թողեք:

Հիստերիայի եզրին էր. թողեցի, որ գնա: Մայր մտնող արևը մի ակնթարթ լուսավորեց կորացած մեջքը, հետո նա կորավ: Դռան շեմին արյան աստղաձև բիծ էր մնացել:

Ամպոտ եղանակ է, արևը մայր է մտնում. գնացքս երկու ժամից շարժվում է: Վերջին անգամ անցա Հանրային զբոսայգով ու հիմա զբոսնում եմ Բուլիբե փողոցում: *Գիտեմ*, որ սա Բուլիբե փողոցն է, բայց չեմ ճանաչում: Մի ժամանակ ամեն անգամ այստեղ գալիս թվում էր, թե խրվում եմ առողջ բանականության թանձրուկի մեջ: Հողին կպած, անկյունավոր Բուլիբե փողոցն իր անճարակ լրջությամբ, իր խորդուբորդ, գուդրոնած ճանապարհով հիշեցնում էր այն պետական մայրուղիները, որ անցնում են հարուստ, բայց փոքրիկ քաղաքների միջով ու կիլոմետրից ավելի ձգվում են երկ-հարկանի մեծ տների երկայնքով. ես սրան ասում էի գյուղական փողոց ու հիանում տեսքով, որովհետև մի տեսակ անսպասելի ու անտեղի էր նայվում առևտրային նավահանգստում: Տներն այսօր էլ են տեղում, բայց կորցրել են իրենց գյուղական տեսքը. սովորական շինություններ են, ոչ ավել, ոչ պակաս: Մի քիչ առաջ Հանրային զբոսայգում էլ էի նույն բանը զգում. բույսերը, խոտը, Օլիվիե Մասկըրեի շատրվանը, ամեն ինչ համառորեն հրաժարվում էր ինչ-որ բան արտահայտելուց: Հասկանում եմ. քաղաքն ավելի շուտ է լքել ինձ, քան ես՝ իրեն: Բուվիլից դեռ չեմ գնացել, բայց արդեն այստեղ չեմ: Բուվիլը լուռ է: Տարօրինակ է, որ պիտի դեռ երկու ժամ էլ մնամ մի քաղաքում, որ արդեն առանց ինձ բանի տեղ դնելու սկսել է սեղան-աթոռները դասավորել ու կտորներով ծածկել, որ այս երեկո կամ վաղն առավոտ կարողանա թարմ-թարմ ի ցույց դնել նոր եկածներին: Ինձ ավելի մոռացված եմ զգում, քան երբևէ:

Մի քանի քայլ էլ եմ անում ու կանգ եմ առնում: Ըմբոշխնում եմ իմ այս կատարյալ մոռացությունը: Հիմա երկու քաղաքների միջև եմ. մեկն ինձնից անտեղյակ է, մյուսն այլևս չի ճանաչում: Ո՞վ է ինձ հիմա հիշում: Գուցե մի պարարտ, երիտասարդ կին՝ Լոնդոնում... Ու դեռ հարց է՝ արդյոք *իմ* մասի՞ն է մտածում: Բացի դրանից, դեռ այն մի տղամարդն էլ կա՝ եգիպտացին: Գուցե հենց նոր մտել է իր սենյակ, գուցե հիմա գրկում է իրեն: Չէ, չեմ խանդում. գիտեմ, որ ինքը կենդանի դիակ է: Եթե նույնիսկ ամբողջ սրտով էլ սիրեր իր այդ եգիպտացուն, մեկ է, մեռածի սեր էր լինելու: Իր վերջին կենդանի սերն իմն է եղել: Բայց ամեն դեպքում դեռ կա մի բան, որ

եգիպտացին կարող է իրեն տալ՝ հաճույք: Ու եթե ինքն այս պահին նվաղում ու սուզվում է զգացողությունների փոթորկի մեջ, ուրեմն իր մեջ մեզ իրար կապող այլևս ոչ մի բան չի մնացել: Ինքը հաճույք է ապրում, իսկ ես ոչ ավելին եմ իր համար, քան եթե երբեք հանդիպած չլինեինք. մի ակնթարթում դատարկեց ինձ իր միջից, ու աշխարհի մյուս բոլոր գիտակցություններն էլ են ինձ իրենց միջից դատարկել: Տարօրինակ զգացողություն է: Եվ սակայն ես շատ լավ գիտեմ, որ գոյություն ունեմ, գիտեմ, որ *ես* այստեղ եմ:

Ասում եմ «ես», բայց այդ բառն ինձ դատարկ է թվում: Այնքան եմ մոռացվել, որ նույնիսկ ինքս ինձ էլ չեմ կարողանում զգալ: Մեջս մնացած միակ իրական բանը գոյությունն է, որ զգում է, որ ինքը գոյություն ունի: Երկար, անձայն հորանջում եմ: Ոչ ոք չկա: Անտուան Ռոկանտենը ոչ ոքի համար գոյություն չունի: Ձվարճալի է: Ի՞նչ է առհասարակ այդ Անտուան Ռոկանտենը: Աբստրակտ մի բան: Գիտակցությանս մեջ մի աղոտ հիշողություն է առկայծում ինքս իմ մասին: Անտուան Ռոկանտեն... Հետո հանկարծ Ես-ը սկսում է խամրել, ավելի ու ավելի է խամրում ու վերջ, անհետանում է:

Պատերի միջև մնում է միայն գիտակցությունը՝ պայծառ, անշարժ ու ամայի. գիտակցությունը հավերժացնում է ինքն իրեն: Այն այլևս անմարդաբնակ է: Դեռ քիչ առաջ ինչ-որ մեկն ասում էր *ես*, ասում էր *իմ* գիտակցությունը: Ո՞վ: Առաջ դրսում խոսուն փողոցներն էին ծանոթ գույներով ու հոտերով: Հիմա ուրիշ ոչ մի բան չի մնացել, բացի անանուն փողոցներից ու անանուն գիտակցությունից: Ահա թե ինչ է մնում՝ պատեր ու պատերի արանքում՝ մի փոքրիկ, կենդանի ու անդեմ թափանցիկություն: Գիտակցությունը գոյություն ունի որպես ծառ, որպես խոտի ցողուն: Նիրհում է, ձանձրանում: Փոքրիկ, հպանցիկ գոյությունները բույն են դնում իր մեջ, ինչպես թռչունները ծառի ճյուղերին: Բույն են դնում ու անհետանում: Պատերի միջև՝ գորշ երկնքի տակ, մոռացված, լքված գիտակցություն: Եվ ահա թե որն է իր գոյության իմաստը. ինքը գիտակցում է, որ ավելորդ է: Նոսրանում է, ցրվում, փորձում կորսվել մուգ պատի վրա, լապտերի կողքին կամ հեռվում՝ երեկոյի աղջամուղջի մեջ: Բայց *երբեք* չի կարողանում ինքն իրեն մոռանալ,

քանի որ միշտ գիտակցում է, որ ինքը գիտակցություն է, որ փորձում է մոռանալ ինքն իրեն: Դա է իր ճակատագիրը: Կա մի խեղդված ձայն, որ ասում է. «Գնացքը երկու ժամից շարժվում է», ու կա այդ ձայնի գիտակցումը: Գիտակցվում է նաև մի որոշակի դեմք: Այդ դեմքը՝ արյունոտված, կեղտոտ, դանդաղ անցնում է, ու խոշոր աչքերում արցունքներ են: Հետո անհետանում է, դրա տեղը գրավում է արյունոտ գլխով մի կորացած կերպարանք, որ դանդաղ քայլերով հեռանում է, ու ամեն քայլին թվում է, թե ուր որ է՝ կանգ կառնի, բայց երբեք կանգ չի առնում: Գիտակցվում է մութ փողոցում դանդաղ քայլող այդ կերպարանքը: Քայլում է, բայց չի հեռանում: Մութ փողոցը վերջ չունի, ձգվում է, ձգվում ու հեռվում կորչում է անէության մեջ: Այդ փողոցը պատերի միջև չէ, ոչ մի տեղ չկա: Ու գիտակցվում է մի խեղդված ձայն, որ ասում է. «Ինքնուսը թափառում է քաղաքում»:

Չէ, ոչ այս նույն քաղաքում, ոչ էլ այս անկենդան պատերի միջև. Ինքնուսը քայլում է մի վայրագ քաղաքում, որը նրան չի մոռացել: Կան մարդիկ, ովքեր մտածում են իր մասին, ասենք՝ Կորսիկացին կամ գեր տիկինը, իսկ գուցեև քաղաքում բոլորը: Ինքը դեռ չի կորցրել, չի կարողանում կորցնել իր ես-ը՝ իր այդ ծվատված, արնահոսող ես-ը, որին մարդիկ չկամեցան վերջ տալ: Շուրթերն ու քիթը ցավում են, մտածում է. «Ցավում է»: Քայլում է, ինքը պիտի քայլի: Եթե նույնիսկ մի ակնթարթ կանգ առնի, գրադարանի բարձր պատերը միանգամից վեր կխոյանան չորս կողմն ու կբանտարկեն իրեն, Կորսիկացին կհայտնվի կողքին, ու տեսարանը նույնությամբ կվերսկսվի՝ ընդհուպ մինչև ամենափոքր մանրամասները, ու տիկինը ծաղրական կճչա. «Դրա նման տականքների տեղը տաժանավայրում է»: Քայլում է, չի ուզում տուն գնալ. Կորսիկացին, տիկինն ու երկու տղաները սենյակում իրեն են սպասում. «Իզուր մի ժխտեք, ամեն ինչ տեսել եմ»: Ու տեսարանը կկրկնվի: Մտածում է. «Աստված իմ, թող արած չլինեի էլի, ախր գոնե թող արած չլինեի, թող գոնե ամեն ինչ ճիշտ չլինի»:

Խռովված դեմքը նորից ու նորից է անցնում գիտակցության առջևով. «Բա որ հանկարծ ինքնասպան լինի»: Բայց չէ, այդ երկչոտ, հալածված հոգին ունակ չէ երազելու մահվան մասին:

Կա գիտակցության գիտակցումը: Ծայրից ծայր տեսնում է ինքն իրեն, խաղաղ է ու դատարկ՝ այս պատերի միջև, ազատագրված է իր ներսում ապրող մարդուց ու հրեշավոր է, քանի որ ինքը ոչ ոք է: Ձայնն ասում է. «Ճամպրուկները գրանցված են: Գնացքը շարժվում է երկու ժամից»: Աջից ու ձախից ձգվում են տների պատերը: Գիտակցվում են խճուղին, երկաթեղենի խանութը, զորանոցի հրակնատները, ու ձայնն ասում է. «Վերջին անգամ»:

Գիտակցվում է Աննին, պարարտ Աննին, ծեր Աննին՝ հյուրանոցի իր սենյակում, գիտակցվում է տառապանքը, տառապանքը գիտակցում է ինքն իրեն երկար պատերի միջև, որ հեռանում են ու այլևս երբեք չեն վերադառնալու. «Տեսնես մի օր վերջանալո՞ւ է, թե՞ չէ»: Պատերի միջև ձայնը ջազ է երգում՝ «Some of these days». փաստորեն՝ սրան վերջ չկա՞. ու մեղեդին հանդարտ վերադառնում է, գաղտագողի մոտենում հետևից ու ձայն է առնում, ու ձայնը երգում է՝ առանց կարողանալու կանգ առնել, ու մարմինը քայլում է, ու այդ ամենը գիտակցվում է, ու, ավա՜ղ, գիտակցությունը գիտակցում է, որ ինքը գիտակից է: Բայց նա, ով պիտի տառապեր, ձեռքերը կոտրատեր ու խղճար ինքն իրեն, չկա: Ոչ ոք չկա: Սա խաչմերուկների մաքուր տառապանք է, մոռացված տառապանք, որ չի կարողանում մոռանալ ինքն իրեն: Ու ձայնն ասում է. «Ահա և «Ճամփորդների ռանդևուն»», ու Ես-ը ներխուժում է գիտակցություն, *ես* եմ՝ Անտուան Ռոկանտենը, ես շուտով մեկնում եմ Փարիզ, ես եկել եմ տիրուհուն մնաս բարով ասելու:

– Եկել եմ մնաս բարով ասելու:

– Գնո՞ւմ եք, պարոն Անտուան:

– Ուզում եմ մի քիչ էլ Փարիզում ապրել:

– Բախտավոր մարդ եք, էլի:

Ո՞նց կարող էի շուրթերս սեղմել այս լայն դեմքին: Նրա մարմինն այլևս ինձ չի պատկանում: Երեկ դեռ կկարողանայի մարմնի գծագրությունը պատկերացնել բրդե սև զգեստի տակ: Այսօր զգեստն անթափանց է: Մի՞թե երազումս եմ տեսել մաշկի տակից թափանցող կապույտ երակներով ծածկված այդ սպիտակ մարմինը:

– Ձեզ կկարոտենք,– ասում է տիրուհին:– Մի բան կխմե՞ք: Հյուրասիրում եմ:

Նստում ենք, բաժակներն իրար ենք խփում: Ձայնը մի քիչ իջեցնում է.

– Արդեն այնքան վարժվել էի ձեզ,– ասում է քաղաքավարի ափսոսանքով,– լավ էինք իրար հետ:

– Մի օր կգամ ձեզ տեսնելու:

– Անպայման, պարոն Անտուան: Հենց Բուվիլում լինեք, մեզ մոտ էլ մտեք: Ասեք. «Գնամ, տիկին Ժաննային բարևեմ, իրեն դուր կգա»: Միշտ էլ հետաքրքիր է իմանալ, թե մարդիկ ինչ եղան, ոնց են ապրում: Չնայած այստեղ բոլորն էլ միշտ վերադառնում են: Դե մերոնք նավաստիներ են, չէ՞, Անդրատլանտյանում են աշխատում: Մեկ-մեկ երկու տարով երեսները չես տեսնի. մե՛կ Բրազիլիայում են, մե՛կ Նյու Յորքում, մե՛կ Բորդո են գնում ապրանքափոխադրումների նավով: Հետո մեկ էլ տեսար՝ էլի այստեղ են: «Բարև ձեզ, տիկին Ժաննա»: Նստում, միասին մի բաժակ խմում ենք: Ձեք հավատա, բայց հատ-հատ հիշում եմ՝ ով ինչ է սիրում խմել: Երկու տարի տեսած չեմ լինում ու հիշում եմ: Մադլենին ասում եմ. «Պարոն Պիեռին չոր վերմուտ բերեք, իսկ պարոն Լեոնին՝ Նուալի չինզանո»: Ասում են. «Ո՞նց եք կարողանում այդքանը հիշել»: Ես էլ ասում եմ. «Դե դա էլ իմ գործն է»:

Սրահի խորքում հաստլիկ մեկն է նստած. արդեն մի որոշ ժամանակ է, ինչ իրար հետ են քնում: Ձայն է տալիս.

– Տիրուհի՛:

Տիկին Ժաննան վեր է կենում.

– Կներեք, պարոն Անտուան:

Մոտենում է մատուցողուհին.

– Լքում եք մեզ, էլի:

– Հա, գնում եմ Փարիզ:

– Փարիզում երկու տարի ապրել եմ,– հպարտ ասում է:– Սիմեոնի մոտ էի աշխատում: Բայց մեր քաղաքին շատ էի կարոտում:

Մի պահ տատանվում է, հետո գլխի է ընկնում, որ ինձ էլ ոչ մի ասելու բան չունի.

– Դե, մնաք բարով, պարոն Անտուան:

Ձեռքը սրբում է գոգնոցի վրա ու մեկնում ինձ.

– Մնաք բարով, Մադլեն:

Գնում է: Մոտ եմ քաշում «Բուվիլի օրաթերթը», հետո հետ եմ հրում. մի քիչ առաջ եմ գրադարանում առաջին տողից մինչև վերջին տողը կարդացել:

Տիրուհին չի վերադառնում. իր թմբլիկ թևիկները տրամադրել է զուգընկերոջը, վերջինս զբաղված է դրանք կրքոտ հունցելով:

Գնացքը քառասունհինգ րոպեից շարժվում է:

Ցրվելու համար սկսում եմ հաշվարկներ անել:

Ամսական հազար երկու հարյուր ֆրանկ. այնքան էլ շատ չէ: Բայց որ մի քիչ ինձ զսպեմ, պիտի որ հերիքի: Երեք հարյուր ֆրանկ՝ սենյակին, օրական տասնհինգ ֆրանկ՝ ուտելուն. տակը մնում է չորս հարյուր հիսուն՝ լվացքի, մանր ծախսերի ու կինո գնալու համար: Սպիտակեղենի ու նոր շորերի կարիք դեռ երկար չեմ ունենա: Երկու կոստյումներս էլ դեռ կարգին տեսք ունեն, չնայած արմունկներն արդեն մի քիչ փայլում են. եթե խնամքով հագնեմ, դեռ մի երեք-չորս տարի էլ կդիմանան:

Աստված իմ, ուրեմն *ես* պիտի այդ սնկի գոյությունը քարշ տա՞մ: Ի՞նչ պիտի անեմ ամբողջ օրը: Կզբոսնեմ: Կգնամ, Տյուիլըրիների այգում կնստեմ մետաղե նստարանին, կամ չէ, ավելի շուտ՝ փայտե նստարանին, դրանք ավելի էժան են: Գրադարաններում գիրք կկարդամ: Բա հետո՞: Շաբաթը մի անգամ՝ կինո: Հետո՞: Գուցե կիրակի օրերին ինձ թույլ տամ սիգա՞ր ծխել: Գուցե գնամ Լյուքսեմբուրգյան այգի՝ թոշակառուների հետ կրոկետ խաղալու: Երեսուն տարեկանում: Խղճում եմ ինձ: Պարբերաբար մտքովս անցնում է՝ իսկ ավելի լավ չի՞ լինի, եթե մի տարում ծախսեմ մոտս մնացած ամբողջ երեք հարյուր հազար ֆրանկը, իսկ հետո... Բայց դա ինձ ի՞նչ կտա: Նոր կոստյումնե՞ր: Կանա՞յք: Ճամփորդությունն՞ե՞ր: Արդեն ամեն ինչ ունեցել եմ, իսկ հիմա՝ վերջ, էլ չեմ ուզում. ինչի՞ն են պետք: Մեկ է, մի տարուց նորից հայտնվելու եմ նույն դատարկ վիճակում, առանց նույնիսկ մի հիշողության, ու վախենալու եմ կյանքիս վերջ տալ:

Երեսուն տարեկա՞ն: Ու տարեկան 14 400 ֆրանկ եկամուտ: Ամեն ամիս կանխիկացվող կտրոններ: Բայց ախր ես ծերուկ չե՛մ: Թող ինձ մի բան տան անելու էլի, ցանկացած բան... Չէ, ավելի լավ է ուրիշ բանի մասին մտածեմ, որովհետև արդեն ինքս իմ դիմաց թատրոն

եմ խաղում: Մեկ է, շատ լավ գիտեմ, որ ոչ մի բան էլ չեմ ուզում անել. ինչ-որ բան անել նշանակում է գոյություն ստեղծել, իսկ գոյություն արդեն առանց դրա էլ չափազանց շատ կա:

Եթե ճիշտն ասեմ, հիմա ուղղակի չեմ կարողանում գրիչը ցած դնել. ոնց որ թե էլի վրա է հասնում Սրտխառնոցը, ու ինձ թվում է, թե գրելով հետաձգում եմ նոպան: Ու հիմա ինչ միտքս գալիս է՝ գրում եմ:

Մադլենն ուզում է ինձ հաճույք պատճառել ու մի ձայնասկավառակ ցույց տալով՝ հեռվից ձայն է տալիս.

– Ձեր սկավառակը, պարոն Անտուան, այն, որ շատ եք սիրում, ուզո՞ւմ եք մի վերջին անգամ էլ լսել:

– Եթե կարելի է, խնդրում եմ:

Քաղաքավարությունից դրդված ասացի, հիմա այնքան էլ հակված չեմ ջազ լսելու: Բայց ամեն դեպքում կլսեմ, որովհետև, ինչպես Մադլենն է ասում, վերջին անգամ եմ այդ սկավառակը լսելու. արդեն շատ հին է, չափազանց հին նույնիսկ գավառական քաղաքի համար. Փարիզում հաստատ չեմ գտնի: Հիմա Մադլենն այն կդնի պատեֆոնի վրա, սկավառակը կսկսի պտտվել, պողպատե ասեղը կցատկոտի ու կխզզա փոքրիկ ակոսների մեջ, ու երբ դրանց պարույրն ասեղին հասցնի մինչև սկավառակի կենտրոնը, ամեն ինչ կվերջանա. «Some of these days» երգող խռպոտ ձայնը կլռի առհավետ:

թվագրել է 1916.ին հետո կամ

Սկսվում է:

Ապշում եմ, թե ոնց են որոշ տխմարներ փորձում սփոփանք փնտրել արվեստի մեջ: Օրինակ՝ հենց Բիժուա մորաքույրս. «Շոպենի պրելյուդներն ինձ այնքա՞ն օգնեցին, երբ խեղճ քեռիդ նոր էր մահացել»: Ու համերգասրահները պայթում են ամեն տեսակի նվաստացածներից ու վիրավորվածներից, ովքեր փակում են աչքերն ու ամեն կերպ աշխատում իրենց գունատ դեմքերը վերածել ընկալող անտենաների: Իրենց թվում է՝ իբր որսած ձայներն ալիք-ալիք տարածվում են իրենց մեջ, տաքացնում ու սնում, իբր իրենց տառապանքները դառնում են երաժշտություն երիտասարդ Վերթերի տառապանքների նման: Հավատում են, որ գեղեցկությունը կարեկցում է իրենց: Ապուշներ:

Դե հիմա թող ինձ ասեն՝ այս երաժշտությունը կարեկցո՞ղ է, թե՞ չէ: Մի քիչ առաջ հաստատ շատ հեռու էի երանության մեջ ընկնելուց: Մակերեսին մեխանիկորեն հաշվարկներս էի անում: Իսկ խորքում ճահճացել էին բոլոր այն տհաճ մտածմունքները, որ չձևակերպված հարցերի կամ համր զարմանքի ձև են առել ու գիշեր-ցերեկ ինձ հանգիստ չեն տալիս: Աննիի մասին, չստացված կյանքիս մասին մտքեր: Իսկ ամենախորքում՝ հատակին, Սրտխառնոցն է՝ լուսաբացի պես վեհերոտ Սրտխառնոցը: Բայց այդ պահին երաժշտությունը դեռ չկար, ու ես մռայլ ու հանդարտ էի: Ինձ շրջապատող բոլոր առարկաները նույն բանից էին կազմված, ինչ ես՝ մի տեսակ այլանդակ տառապանքից: Դրսի աշխարհն ահավոր տգեղ էր. սեղանների վրայի կեղտոտ գավաթները, հայելու ու Մադլենի գոգնոցի վրայի դարչնագույն բծերը, տիրուհու չաղ սիրեկանի սիրալիր տեսքը, աշխարհի գոյությունն անգամ այնքա՞ն տգեղ էր, որ ինձ իմ տեղում էի զգում, իմ ընտանիքում:

Իսկ հիմա նվագում է սաքսոֆոնը: Ու ես ամաչում եմ: Ծնվում է մի փառահեղ, փոքրիկ տառապանք, տառապանք-նմուշ: Սաքսոֆոնի չորս նոտա: Գալիս-գնում են ու կարծես ասում. «Պիտի նույնը անես, ինչ մենք՝ *չափավոր* տառապես»: Դե հա, էլի: Բնականաբար ես էլ կուզեի այդպես տառապել՝ չափավոր, առանց գոհունակության, առանց ինքս ինձ խղճալու, մի տեսակ ցամաք մաքրությամբ: Բայց ես մեղավո՞ր եմ, որ գավաթիս հատակի գարեջուրը գոլ է, որ հայելու վրա դարչնագույն բծեր կան, որ ես ավելորդ եմ, որ նույնիսկ ամենաանկեղծ ու չոր տառապանքս թանձրանում է ու սկսում քարշ գալ, ու վրան չափազանց շատ միս կա ու միաժամանակ չափազանց լայն մաշկ, ինչպես ծովափղերինն է, ու խոշոր աչքերը խոնավ են ու հուզիչ, բայց և գարշելի: Չէ, հաստատ չես ասի, որ ադամանդե այս փոքրիկ ցավը, որ պտտվում է սկավառակի վրա ու շլացնում ինձ, կարող է կարեկցել: Նույնիսկ չի էլ հեգնում. իր համար աշխույժ պտտվում է, մենակ ինքն իրենով է զբաղված. գերանդու նման խրվել է աշխարհի գռեհիկ տնավարության մեջ ու հիմա պտտվում է ու պտտվում, իսկ մեզ բոլորիս՝ Մադլենին, չաղ մարդուն, տիրուհուն, ինձ ու նաև սեղանները, կեղտոտ հայելին, գավաթները, մեզ բոլորիս, որ հանձնվել էինք գոյությանը, որովհետև մենք մերոնցով

էինք, բացառապես մենք մերոնցով, բռնացրել է մեր ամենափնթի վիճակում, ամենաառօրյա դրության մեջ, ու ես ամաչում եմ ինքս ինձնից ու այն ամենից, որ գոյություն ունի դրա *առջև*:

Չէ, *ինքը* գոյություն չունի: Նույնիսկ նյարդայնացնում եմ. եթե հիմա վեր կենամ, սկավառակը ճանկեմ ու երկու կես անեմ, մեկ է, իրեն չեմ հասնի: Ինքը միշտ անհասանելի է, միշտ ինչ-որ բանից այն կողմ է՝ ձայնից, ջութակի նոտաներից: Բարակ, պիրկ՝ հանկարծ թափանցում է գոյության հաստ շերտերի տակից, բայց հենց ուզում ես բռնել, անընդհատ դեմ ես առնում գոյությունների, բախվում ես որևէ իմաստից զուրկ գոյությունների: Ինքը ծածկված է այդ գոյությունների հետևում. ես իրեն նույնիսկ չեմ էլ լսում, այլ լսում եմ այն բոլոր ձայներն ու օդի տատանումները, որոնց միջոցով ինքը բացահայտվում է: Ինքը գոյություն չունի, որովհետև ավելորդ չէ. մնացած ամեն ինչն է ավելորդ իր հանդեպ: Ինքը *կա*:

Ու ես էլ էի ուզում *լինել*: Ավելին ասեմ՝ ուրիշ ոչ մի բան չէի ուզում, բացի դրանից. ահա, խնդրեմ, հասանք պատմության վերջին: Իմ բոլոր նախաձեռնությունների խորքում, որ առաջին հայացքից իրարից անկախ էին թվում, հիմա արդեն նշմարում եմ միևնույն ցանկությունը. դուրս վռնդել գոյությունն իմ ներսից, սրբել ակնթարթների վրայի ճարպը, պրկել ու չորացնել դրանք, մաքրվել, կարծրանալ, որպեսզի ի վերջո կարողանամ սաքսոֆոնի նոտայի պես հստակ ու ճշգրիտ ձայն արձակել:

Սրան կարելի է նույնիսկ առակի տեսք տալ: Կար-չկար մի խեղճ մարդ, ով սխալ աշխարհ էր ընկել: Ինքն էլ մյուսների պես գոյություն ուներ հանրային զբոսայգիների, բիստրոների ու առևտրային քաղաքների աշխարհում, բայց ուզում էր ինքն իրեն համոզել, որ ուրիշ տեղ է ապրում՝ գեղանկարչական կտավների հետևում՝ Տինտորետտոյի դոջերի ու Գոցցոլիի[1] ծանրաբարո ֆլորենտացիների հետ, գրքերի էջերի հետևում՝ Ֆաբրիս դել Դոնգոյի ու Ժյուլիեն Սորելի[2] հետ, ձայնասկավառակների հետևում՝ ջազի երկարուձիգ,

---

1 Վերածննդի շրջանի իտալացի գեղանկարիչներ *(ծ. թ.)*:

2 Ստենդալի «Պարմի մենաստանը» և «Կարմիրն ու սևը» վեպերի հերոսներից *(ծ. թ.)*:

չոր տրտունջների հետ: Երկար ապրեց այդ մարդը հիմարի կյանքով, բայց հետո մի օր հանկարծ ամեն ինչ հասկացավ, աչքերը բացվեցին, ու տեսավ, որ թյուրիմացություն է տեղի ունեցել: Այդ պահին հենց բիստրոյում էլ նստած էր՝ գոլ գարեջրի գավաթի դիմաց: Կորացած նստել էր իր նստարանին ու մտածում էր. «Հիմարի մեկն եմ»: Ու հենց այդ ակնթարթին գոյության մյուս կողմում՝ այդ մյուս աշխարհում, որ կարող ես միայն հեռվից տեսնել, բայց ոչ երբեք մոտենալ, մի փոքրիկ մեղեդի սկսեց պարել ու երգել. «Պիտի նույնը անես, ինչ ես. պիտի չափավոր տառապես»:

Ձայնը երգում է.

Some of these days
You'll miss me honey.

Սկավառակն այդ հատվածում երևի խազած է, որովհետև տարօրինակ աղմուկ է հանում: Ու սիրտս ճմլվում է. ախր սկավառակի վրա ասեղի այդ կարճ հազը բացարձակապես չի ազդում մեղեդու վրա: Ախր մեղեդին այնքա՞ն հեռու է, այնքա՞ն հեռու՝ հետևում ինչ-որ տեղ: Դա էլ եմ հասկանում. սկավառակը քերծվում ու մաշվում է, երգչուհին գուցե արդեն չկա, ու ես էլ շուտով կգնամ, գնացք կնստեմ: Բայց այս բոլոր գոյություններից այն կողմ, որ անվերջ ընկնում են մի ներկայից մյուսի մեջ ու ո՛չ անցյալ ունեն, ո՛չ ապագա, այս բոլոր ձայներից այն կողմ, որ օրեցօր ավելի ու ավելի են քայքայվում, ծվատվում ու ձգվում դեպի մահը, մեղեդին մնում է նույնը՝ երիտասարդ ու պիրկ, որպես անողոք վկա:

Ձայնը լռում է: Սկավառակը մի քիչ էլ է խզզում ու կանգ է առնում: Սրճարանը, վերջապես ազատվելով կպչուն պատրանքից, շարունակում է ծամծմել ու որոճալ գոյություն ունենալու հաճույքը: Տիրուհին կարմրել է, իրար հետևից ապտակներ է հասցնում իր նոր ընկերոջ լայն, սպիտակ այտերին, բայց ապարդյուն, մեկ է, գույնը չեն փոխում: Մեռելի այտեր են: Իսկ ես փայտացել եմ, նստածս տեղում քնում եմ: Տասնհինգ րոպեից արդեն գնացքի մեջ եմ լինելու, բայց դրա մասին չեմ մտածում: Մտածում եմ թավ, սև հոնքերով, մաքուր սափրված մի ամերիկացու մասին, որ շոգից խեղդվում է Նյու Յորքի շենքերից

մեկի քսաներորդ հարկում: Երկինքը Նյու Յորքի վերևում այրվում է, կապույտ երկինքը կրակի մեջ է, ահռելի, դեղին հրդեհը լիզում է տանիքները, բրուկլինցի տղաները մտնում են հրշեջ աղբյուրների շիթերի տակ: Քսաներորդ հարկի կիսախավար սենյակը շիկացել է: Սև հոնքերով ամերիկացին տնքում ու հևում է, այտերը քրտնքի մեջ կորել են: Վերնաշապիկը հագին նստած է դաշնամուրի դիմաց, բերանից ծխի համ է գալիս, գլխում պտտվում է մեղեդու աղոտ ուրվականը՝ «Some of these days»: Մի ժամից Թոմն է գալու՝ տափաշիշը շալվարի հետևի գրպանը դրած. երկուսով կփռվեն մեծ, կաշեպատ բազկաթոռների մեջ, օդի կկոնծեն, երկնային կրակը կոկորդները կխանձի, ու կիզիչ, անվերջ քունը ծանր կիջնի իրենց վրա: Բայց նախ հարկավոր է մեղեդին գրի առնել: «Some of these days»: Քրտնած ձեռքը վերցնում է մատիտը դաշնամուրի վրայից: «Some of these days, you'll miss me honey»:

Այդպես էլ եղել է: Այդպես կամ մի ուրիշ կերպ, կարևոր չէ: Մեղեդին այդպես է ծնվել: Աշխարհ գալու համար ընտրել է ածուխի նման սև հոնքերով այդ Հրեայի հոգնած մարմինը: Թույլ բռնել էր մատիտը, ու քրտինքը մատանիներ հագած մատներից կաթում էր թղթի վրա: Ինչո՞ւ ինձ չի ընտրել: Ինչո՞ւ պիտի կեղտոտ գարեջրով ու ալկոհոլով լի հենց այդ ճարպակալած բթամիտը լիներ, որ հրաշքը տեղի ունենար:

– Մադլեն, նորից կդնե՞ք: Գնալուցս առաջ մի անգամ էլ լսեմ, էլի:

Մադլենը սկսում է ծիծաղել: Պտտում է բռնակը, ու ամեն ինչ նորից է սկսվում: Բայց ես այլևս իմ մասին չեմ մտածում: Մտածում եմ այն մեկի մասին, ով հուլիսյան մի օր իր սենյակի տոթ կիսախավարում նստած ստեղծել է այս մեղեդին: Փորձում եմ անցնել մեղեդու *միջով*, սաքսոֆոնի սպիտակ ու թթվաշ հնչյունների միջով ու մտածել իր մասին: Ինքն է ստեղծել: Հազար ու մի խնդիրներ ուներ, ամեն ինչ թարս էր գնում. պարտքերը խեղդում էին, ու հաստատ ինչ-որ տեղ էլ մի կին կար, ով իր մասին այնպես չէր մտածում, ինչպես ինքը կուզեր, ու համ էլ վրա էր տվել շոգի այդ սարսափելի ալիքը, որ մարդկանց վերածում էր հալած ճարպի լճակների: Մի խոսքով, ոչ մի գեղեցիկ կամ փառահեղ բան չկա: Բայց երբ լսում եմ այս երգն ու մտածում, որ ինքն է ստեղծել, իր տառապանքն ու

քրտինքը... հուզում են ինձ: Բախտը բերել է: Չնայած հազիվ թե հասկացած լինի: Ով գիտի մտածել է. «Բախտս որ մի քիչ բերի, սրա համար մի հիսուն դոլար կստանամ»: Առաջին անգամ այսքան տարվա մեջ ինչ-որ մեկը կարողանում է ինձ հուզել: Ուզում եմ ավելի շատ բան իմանալ այդ մարդու մասին: Հետաքրքիր է, թե այդ ի՞նչ խնդիրներ ուներ, կին կա՞ր, թե՞ մենակ էր ապրում: Չէ, հումանիզմից դրդված չեմ ուզում իմանալ, հակառակը: Ուզում եմ, որովհետև ինքն է ստեղծել այս մեղեդին: Հետը ծանոթանալու ցանկություն չունեմ. ասենք՝ երևի արդեն մեռած էլ կլինի: Ուղղակի կուզեի մի երկու տեղեկություն ճարել իր մասին, որ հետո կարողանամ այս սկավառակը լսելիս ժամանակ առ ժամանակ իր մասին մտածել: Այդ մարդու համար երևի կատարելապես մեկ կլիներ, եթե հանկարծ իրեն ասեին, որ Ֆրանսիայի՝ իր մեծությամբ յոթերորդ քաղաքում ինչ-որ մեկը հիմա գնացքի կայարանից մի քիչ հեռու նստած իր մասին է մտածում: Բայց ես, եթե իր տեղում լինեի, ինձ երջանիկ կզգայի. նախանձում եմ իրեն: Արդեն պիտի գնամ: Ոտքի եմ կանգնում, բայց մի պահ տատանվում եմ, ուզում եմ լսել Նեգրուհու երգը: Մի վերջին անգամ:

Երգում է: Ու արդեն երկուսն են փրկված՝ Հրեան ու Նեգրուհին: Փրկված են: Գուցե իրենք իրենց անհույս կորած էին համարում, կարծում էին, թե՛ խեղդվել են գոյության մեջ, չգիտեմ: Եվ սակայն ոչ ոք չի կարող նույնքան քնքշությամբ մտածել իմ մասին, ինչքան ես եմ իրենց մասին մտածում: Ոչ ոք, նույնիսկ Աննին: Իրենք ինձ համար մի քիչ մեռյալների են նման, մի քիչ՝ վեպի հերոսների. իրենք մաքրագործվել են գոյություն ունենալու մեղքից: Ոչ ամբողջովին իհարկե, բայց գոնե այնքան, ինչքան հասու է մարդուն: Այդ մտքից հանկարծ լրիվ տակնուվրա եմ լինում, որովհետև արդեն նույնիսկ դրա հույսը չունեի: Զգում եմ, որ ինչ-որ բան երկչոտ հպվում է ինձ, ու չեմ համարձակվում տեղիցս շարժվել, որ հանկարծ չվախեցնեմ: Ինչ-որ բան, որ արդեն վաղուց ինձ անծանոթ է. մի անորոշ ուրախության զգացում:

Նեգրուհին երգում է: Փաստորեն հնարավո՞ր է արդարացնել սեփական գոյությունը: Թեկուզ մի քիչ, բայց արդարացնե՞լ: Սարսափելի երկյուղ եմ զգում: Հարցն այն չէ, որ շատ մեծ հույսեր ունեմ:

Ուղղակի նման եմ ձների միջով երկար ճամփա անցնելուց հետո ոտքից գլուխ սառած մեկին, ով հանկարծ հայտնվել է տաք սենյակում: Երևի անշարժ կանգնած կմնար դռան մոտ՝ ցրտից դեռ լրիվ փայտացած, ու ամբողջ մարմնով դանդաղ կդողար ու կցնցվեր:

Some of these days
You'll miss me honey.

Չե՞մ կարող ես էլ փորձել... Անշուշտ, խոսքը մեղեդու մասին չէ... բայց մի՞թե չեմ կարող մի ուրիշ ոլորտում... Պիտի գիրք լինի. ուրիշ ոչ մի բան անել չգիտեմ: Բայց պատմական գիրք չէ. պատմությունը խոսում է գոյություն ունեցածների մասին, իսկ գոյություն ունեցողը երբեք չի կարող արդարացնել մեկ ուրիշ գոյություն ունեցողի գոյությունը: Իմ սխալը հենց այն էր, որ ուզում էի մարկիզ դը Ռոլբոնին վերակենդանացնել: Չէ, ուրիշ տեսակի գիրք պիտի լինի: Հաստատ չգիտեմ ինչ տեսակի, բայց այդ գրքի տպագիր բառերի ու էջերի հետևում պիտի ինչ-որ բան նշմարվի, որը գոյություն չի ունենա, որը վեր կլինի գոյությունից: Ասենք՝ ինչ-որ մի պատմություն, որ չի կարող պատահել, մի որևէ արկած: Պիտի գեղեցիկ ու ամուր լինի, ինչպես պողպատը, ու մարդկանց ստիպի ամաչել իրենց սեփական գոյությունից:

Գնում եմ, ներսումս ամեն ինչ երերում է: Չեմ համարձակվում որոշում կայացնել: Եթե միայն վստահ լինեի, որ տաղանդավոր եմ... Բայց ախր երբեք, երբեք ոչ մի նման բան չեմ գրել: Պատմական թեմաներով հոդվածներ, խնդրեմ, ինչքան ուզես: Գիրք: Վեպ: Ու կլինեն մարդիկ, ովքեր կկարդան այդ վեպն ու կասեն. «Անտուան Ռոկանտենն է գրել. կարմրահեր մարդ էր, ամբողջ օրը սրճարանից սրճարան էր քարշ գալիս», ու կյանքիս մասին կմտածեն այնպես, ինչպես ես եմ մտածում Նեգրուհու կյանքի մասին՝ որպես ինչ-որ թանկարժեք, գրեթե առասպելական մի բանի: Գիրք: Բնականաբար սկզբում ձանձրալի, հոգնեցուցիչ աշխատանք է լինելու, ու դրանով ո՛չ գոյություն ունենալուց կազատվեմ, ո՛չ էլ իմ սեփական գոյությունը զգալուց: Բայց կգա մի օր, երբ գիրքն արդեն գրված կլինի, կմնա իմ հետևում ու, հուսով եմ, գոնե մի քիչ կլուսավորի անցյալս: Ու ես

գուցե կկարողանամ այդ գրքի միջոցով կյանքս առանց նողկանքի վերհիշել: Գուցե մի օր, մտածելով հենց այս ժամի, այս մռայլ ժամի մասին, երբ կորացած սպասում եմ, թե երբ է գնացքս գալու, գուցե կզգամ, որ սիրտս ավելի արագ է խփում, ու ինքս ինձ կասեմ. «Հենց այս օրն էլ, հենց այս ժամին էլ ամեն ինչ սկսվեց»: Եվ անցյալում, միայն ու միայն անցյալում կկարողանամ հաշտվել ինձ հետ:

Մթնում է: «Պրենտանիա» հյուրանոցի երկրորդ հարկի երկու լուսամուտներում լույս է վառվում: Նոր Կառամատույցի շինհրապարակից խոնավ փայտի սուր հոտ է գալիս. վաղը Բուվիլում անձրև է գալու:

Բովանդակություն

Հրատարակչի կողմից 11

ԱՌԱՆՑ ԱՄՍԱԹՎԻ ԹԵՐԹԻԿ 13

Տասն անց կես 14

ՕՐԱԳԻՐ 17

Երկուշաբթի, հունվարի 25, 1932թ. 17

Երեքշաբթի, հունվարի 26 20

Հինգշաբթի առավոտ, գրադարանում 27

Հինգշաբթի, կեսօրից հետո 28

Ուրբաթ 31

Հինգ անց կես 37

Հինգշաբթի, տասնմեկ անց կես 50

Ժամը երեքը 53

Հինգշաբթի, ժամը երեքը 55

Շաբաթ կեսօր 66

Կիրակի 69

Երկուշաբթի 91

Երեկոյան յոթը 93

Երեկոյան ժամը տասնմեկը 95

Պասի նախօրե 96

Չորեքշաբթի 111

Հինգշաբթի 111

Ուրբաթ 112

Շաբաթ երեկո 126

Կեսօրից հետո 127

Երկուշաբթի 146

Երեքշաբթի 157

Չորեքշաբթի 157
Երեկոյան վեցը 189
Գիշերով 201
Ուրբաթ 202
Շաբաթ 202
Կիրակի 227
Երեքշաբթի, Բուվիլում 230
Չորեքշաբթի. վերջին օրս Բուվիլում 235
Մեկ ժամ անց 247

ՆՈԲԵԼՅԱՆ
ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ

ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔ	«Իմ անունը Կարմիր է»
2. ԷԼՖՐԻԴԵ ԵԼԻՆԵԿ	«Դաշնակահարուհին»
3. ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍ	«Թիթեղյա թմբուկը»
4. ՆԱՋԻԲ ՄԱՀՖՈՒՋ	«Ռադոբիս»
5. ՄԱՐԻՈ ՎԱՐԳԱՍ ԼՅՈՍԱ	«Պանտալեոնը և այցելուների ջոկատը»
6. ՊԱՏՐԻԿ ՄՈԴԻԱՆՈ	«Որ չկորչես թաղամասում»
7. ՎԻԼՅԱՄ ԳՈԼԴԻՆԳ	«Ճանճերի Տերը»
8. ԻՄՐԵ ԿԵՐՏԵՍ	«Անբախտություն»

ԺԱՆ-ՊՈԼ ՍԱՐՏՐ

ՍՐՏԽԱՌՆՈՑ

JEAN-PAUL SARTRE

LA NAUSÉE

Թարգմանիչ՝ Հայկ Ֆելեքյան

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Լիանա Չոբանյան
Էջադրող՝ Կարինե Սարգսյան
Շապիկը՝ Սոֆի Հարությունյանի
Կազմի ձևավորումը՝ Վիկտորիա Հարությունյանի

թվագրված է 1915.ին-ից կողմը

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պ. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
Հեռ. / ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am